

ԱՊՀ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻՋԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎ

*Ժողովրդավարության զարգացման, պաշտամենտարիզմի և
քաղաքացիների ընտրական իրավունքների պաշտպանության
մոնիտորինգի միջազգային ինստիտուտի երևանյան մասնաճյուղ*

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԵՎԱՆ
ՀԱՅՐԱՊԵՏ
2021

ՀՏԴ 342.8

ԳՄԴ 67.400.8

Հ 177

Հակոբյան Լ., Վարազյան Լ., Ասատրյան Ա.,

Հ 177 «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի փոփոխությունների քաղաքական-իրավական նշանակությունը:–Եր.: Հայրապետ հրատ., 2021: – 304 էջ:

ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի ժողովրդավարության զարգացման, պառլամենտարիզմի և քաղաքացիների ընտրական իրավունքների պաշտպանության մոնիթորինգի միջազգային ինստիտուտի երևանյան մասնաճյուղը Հայաստանի Հանրապետությունում գործունեություն է ծավալում շուրջ 10 տարի, որի ընթացքում իրականացրել է բազմաթիվ ծրագրեր, որոնք նվիրված են եղել ժողովրդավարության, պառլամենտարիզմի և ընտրական իրավունքի իրականացման խնդիրների վերհանմանն ու այդ իրավունքների իրականացմանը օժանդակելուն (մասնաճյուղի կողմից իրականացված գործունեությանը կարող եք ծանոթանալ www.mimrd.am կայքում):

Սույն գիտական հետազոտությունն ոլորտի հայտնի գիտապրակտիկ մասնագետների կողմից անցկացված հերթական հետազոտությունն է՝ նվիրված ընտրական օրենսդրության, դրանում կատարվող փոփոխությունների ու լրացումների քաղաքական-իրավական նշանակության բացահայտմանը, առկա խնդիրների վերհանմանը և դրանց լուծման ուղիների մշակմանը:

Այն կարող է օգտակար լինել ընտրական իրավահարաբերություններին առնչվող հարցերով հետաքրքրվող իրավաբանների, քաղաքագետների, դիտորդական առաքելություն իրականացնող անձանց, ինչպես նաև բուհերի ուսանողների, ասպիրանտների, դասախոսների և ընտրական հարաբերություններով հետաքրքրվող անձանց համար:

Սույն աշխատությունում արտահայտված կարծիքները կարող են չհամապատասխանել ԱՊՀ ՄԽՎ քարտուղարության պաշտոնական դիրքորոշումներին:

ՀՏԴ 342.8

ԳՄԴ 67.400.8

ISBN 978-9939-887-19-7

© ԱՊՀ ՄԽՎ խորհրդի քարտուղարություն, 2021

Աշխատանքային խմբի ղեկավար

ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական
վեհաժողովի ժողովրդավարության զարգացման,
պառլամենտարիզմի և քաղաքացիների ընտրական
իրավունքների պաշտպանության մոնիթորինգի միջազգային
ինստիտուտի երևանյան մասնաճյուղի տնօրեն

իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ. **Ավետիսյան**

Հեղինակներ

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
իրավաբանական վարչության պետ
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ **Լ. Հակոբյան**

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
իրավաբանական վարչության իրավաբան **Լ. Վարազյան**

Երևանի պետական համալսարանի
Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի դասախոս
իրավ. գիտ. թեկնածու **Ա. Ասատրյան**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇ..... 7

1.1. Ժողովրդավարական ընտրությունների ժամանակակից
միջազգային չափանիշները 7

1.2. Ընտրական օրենսդրության կայունության սկզբունքն ու
դրա իրականացման առանձնահատկությունները ՀՀ-ում. 33

1.3. ՀՀ ընտրական օրենսդրության կայունության
սկզբունքի պահպանման քաղաքական-իրավական
նշանակությունը 44

ԳԼՈՒԽ 2. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 58

2.1. Նախընտրական քարոզչության և ընտրությունների
ֆինանսավորման իրավական կարգավորման միջազգային
և արտասահմանյան փորձը..... 58

2.2. Նախընտրական քարոզչության ներպետական
իրավակարգավորումների նկարագիրը: Արդի
օրենսդրական փոփոխությունները նախընտրական
քարոզչության ոլորտում և դրանց իրավաքաղաքական
հնարավոր ազդեցությունը..... 84

2.3. Ընտրությունների ֆինանսավորման ներպետական
կարգավորումները: Արդի օրենսդրական
փոփոխություններն ընտրությունների ֆինանսավորման
ոլորտում և դրանց իրավաքաղաքական հնարավոր
ազդեցությունը..... 124

**ԳԼՈՒԽ 3. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ
ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ՎԵՐԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋՈՑ..... 144**

3.1. Դիտորդական առաքելության նպատակն ու
գործառույթները 144

3.2. Ընտրությունների նկատմամբ դիտորդություն
իրականացնող հասարակական կազմակերպությունների և
դիտորդների միջազգային փաստաթղթերով ամրագրված
դերը՝ որպես ժողովրդավարական ընտրությունների
ապահովման գրավական 160

3.3. Ընտրական գործընթացում ընտրությունների
դիտարկումն իրականացնող հասարակական
կազմակերպությունների և դիտորդների իրավական
(միջազգային իրավական) կարգավիճակը..... 178

3.4. Ընտրական վարչարարության մեջ հասարակական
կազմակերպությունների և դիտորդների ներգրավումը և
նման ներգրավվածության անհրաժեշտ աստիճանը 222

3.5. Ընտրական օրենսդրության փոփոխությունների
քաղաքական և իրավական հետևանքները դիտորդություն
իրականացնող հասարակական կազմակերպությունների և
դիտորդների՝ ընտրական հանձնաժողովներում
վարչական գործունեությանը մասնակցության հարցի
շրջանակներում 239

**ԳԼՈՒԽ 4. ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ
ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ
ԲՆՈՒՅԹԻ ՎՐԱ..... 250**

4.1. ՀՀ-ում կիրառվող ընտրական համակարգերը և դրանց
փոփոխության հետևանքները 250

4.2. Ընտրությունների արդյունքների ամփոփումը և
մանդատների բաշխման կառուցակարգերն՝ ըստ ՀՀ
օրենսդրության..... 274

4.3. Իշխանության ներկայացուցչական բնույթի խնդիրները
և դրանց լուծման հնարավորությունները ՀՀ ընտրական
օրենսդրության փոփոխությունների շրջանակներում 295

ԳԼՈՒԽ 1.

ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՈՇԵՍ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇ

1.1. Ժողովրդավարական ընտրությունների ժամանակակից միջազգային չափանիշները

ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածը, որպես ուղղակի ժողովրդավարության ձև, նշում է ազատ ընտրություններն ու հանրաքվեն: Ի տարբերություն ժողովրդավարության այլ ձևերի՝ ընտրությունների այս կամ այն կերպ անցկացումը, կարելի է ասել, կանխորոշված է, քանի որ ժողովրդավարական պետություններում ընտրություններն իշխանության այս կամ այն մարմնի ձևավորման կամ այս կամ այն պաշտոնի փոխարինման, որոնք ընտրվում են որոշակի ժամկետով, միակ միջոցն են: Իսկ դա նշանակում է, որ ընտրություններն անցկացվելու են որոշակի պարբերականությամբ՝ չհաշված որոշ բացառություններ, երբ օրենսդրությամբ սահմանված հանգամանքները հիմք են ծառայում այդ ժամկետների որոշակի փոփոխության համար (ընտրություններն անցկացվում են վերը նշված պարբերականությամբ թեկադրված ժամկետներից շուտ կամ ուշ): Այսպիսով, ընտրությունները ժողովրդավարության միակ ձևն է, որին բնութագրական է նման կայուն պարբերականությունը:

Ընտրությունները, որպես ուղղակի ժողովրդավարության ինստիտուտ, վաղուց հետաքրքրություն է ներկայացնում գիտնականների շրջանում: Ընտրությունների ինստիտուտի իրա-

վաքաղաքական հիմքերի ուսումնասիրության զարգացումը կարևորագույն գիտական և գործնական նշանակություն ունի: Այսպես կոչված «անցումային» հասարակություններում այս ինստիտուտի նկատմամբ հետաքրքրությունն արդարացիորեն աճում է մի քանի անգամ ավելի շատ: Վ. Ի. Լիսենկոյի կարծիքով՝ «ընտրական համակարգի բարեփոխումը պետք է դիտարկվի որպես քաղաքական գործընթացի կայունության պահպանման կարևոր իրավաքաղաքական միջոցներից մեկը՝ առավելագույնս աջակցելով քաղաքացիական հասարակության ժողովրդավարական հիմքերի և ինստիտուտների զարգացմանը»¹:

Դժվար է չհամաձայնել այն գնահատականին, որ «ընտրությունները հանդիսանում են ժողովրդավարացման գործընթացի գլխավոր հատկանիշն ու անքակտելի մասը, ժողովրդավարության անբաժան քաղադրիչը: Այլ կերպ ասած՝ թեև ընտրությունները ժողովրդավարության հոմանիշը չեն, սակայն, գոյություն ունեցող ժողովրդավարական համակարգի կարևոր բաղադրիչն են: Ընտրությունները կարևոր ասպեկտ են ցանկացած երկրում ժողովրդավարության ամրապնդման գործում»²:

«Ընտրություններ» հասկացությունը մեկնաբանում են տարբեր մասնագիտություններ ունեցող գիտնականներ՝ փիլիսոփաներ, լեզվաբաններ, քաղաքագետներ, իրավաբաններ

¹ Ֆրոմմ Լուս՝ Зарубежное избирательное право: Учебное пособие. - Издательство НОРМА, 2003, էջ 20:

² Балоч Ш. Современные избирательные тенденции и их влияние на укрепление электорального суверенитета // Сборник материалов международной конференции «Современные избирательные тенденции в условиях многополярного мира». – М.: РЦОИТ, 2018, с. 46.

և այլն: Ընտրությունների ինստիտուտի, ինչպես նաև ընտրական օրենսդրության³ հետ կապված մոտեցումների և հայեցակարգերի պատմական զարգացման վերլուծությունը թույլ տվեցին իրավաբանական գիտության մեջ ձևավորել «ընտրություններ» հասկացության բազմաթիվ մեկնաբանություններ:

Ռ. Պապայանն իր «Ժամանակակից իրավունքի քրիստոնեական ակունքները» աշխատության մեջ խոսում է դեռևս Աստվածաշնչում հիշատակված ներկայացուցչական մարմնի անդամների ընտրովի լինելու մասին⁴:

«Ժամանակակից ժողովրդավար կազմակերպվածություն ունեցող պետություններում, դրանց ցանկացած տարատեսակությամբ հանդերձ, *ընտրությունները* հանդիսանում են իրավաքաղաքական որոշումների ընդունման ինստիտուտ ու

³ Մանրամասն տե՛ս Очерки по истории выборов и избирательного права: Учебное пособие/ Авт. проекта: Ю.А. Веденеев и др.; Авт. коллектив: Ю.А. Веденеев, И.В. Зайцев, В.Е. Кораблин, В.В. Луговой, В.В. Тылкин / Под ред. Ю.А. Веденева и Н.А. Богодаровой; Центр. избират. Комис. Российской Федерации, Рос. Центр обучения избират. технологиям при Центр. избират. комис. Российской Федерации, Калуга: Калужский обл. фонд возрождения историко-культурных и духовных традиций «Символ», 2002. - 692 с., илл.; Институт выборов в истории зарубежных стран. XX век: Материалы к библиографическому указателю/ Авт. проекта и сост.: Ю.А. Веденеев, В.В. Луговой, П.Г. Крученков/ Центр. избират. комис. Российской Федерации, Рос. центр обуч. Избират. технологиям при Центр. избират. комис. Российской Федерации, Калужский обл. фонд возрождения историко-культурных и духовных традиций «Символ». - Калуга, 2003. - 424 с.; Зарубежное избирательное право: Учебное пособие. // Научный редактор: доктор юридических наук В.В. Маклаков, научные консультанты: д.ю.н В.И. Лысенко, д.ю.н А.И. Ковлер, М., Издательство НОРМА, 2003. - 288 с. - (Издательский проект «Зарубежное и сравнительное избирательное право») и др.

⁴ Պապայան Ռ. Ա. Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները/ Գիտ. խմբ. Գ.Գ. Հարությունյան, Մ.Ա.Ս. Էջմիածին, 2002 (680 էջ), էջ 396:

գործընթաց, որի սուբյեկտը հասարակությունն է՝ ի դեմս նրա գործունակ քաղաքացիների, իսկ օբյեկտը՝ պետական իշխանությունը: Սահմանադրական ընտրությունների միջոցով իրականացվում է պետության հրապարակային քաղաքական վերարտադրությունը, այն է՝ օրենսդիրի և գործադիրի գործառույթների և լիազորությունների սոցիալական ռոտացիա կամ վերաբաշխում (վերախմբավորում կամ փոխանցում)՝ իրեն քաղաքականապես և իրավաբանորեն ձևակերպած ուժերի և խմբերի հետաքրքրությունների ներսում:

Այդ իսկ պատճառով սահմանադրական ընտրություններում ցանկացած այլընտրանք՝ որպես հանրային քաղաքական իշխանության կազմակերպման և գործունեության ձևի ու միջոցի և պետական իշխանության մեջ դրա փոխակերպման, հանգեցնում է ժողովրդավարական սահմանադրական իրավակարգի քայքայմանը, իսկ վերջնարդյունքում՝ քաղաքացիներին և նրանց տարածքային, քաղաքական և այլ միավորումներին քաղաքական համակարգի շրջագծից դուրս մղելուն և, որպես հետևանք, հասարակության նկատմամբ պետության քաղաքական գերիշխանության ռեժիմի ձևավորմանը»⁵:

«Քաղաքական-իրավական իմաստով ընտրությունները հանդիսանում են քաղաքացիների ընտրական իրավունքների և պետության ընտրական պարտականությունների կոդիֆի-

⁵ Очерки по истории выборов и избирательного права: Учебное пособие/ Авт. проекта: Ю.А. Веденеев и др.; Авт. коллектив: Ю.А. Веденеев, И.В. Зайцев, В.Е. Кораблин, В.В. Луговой, В.В. Тылкин / Под ред. Ю.А. Веденеева и Н.А. Богодаровой; Центр. избират. Комис. Российской Федерации, Рос. Центр обучения избират. технологиям при Центр. избират. комис. Российской Федерации, Калуга: Калужский обл. фонд возрождения историко-культурных и духовных традиций «Символ», 2002, с. 688.

կացման գործընթաց, որոնք ամրագրում են նրանց փոխհարաբերությունների սահմանները քաղաքացիների հրապարակային համաձայնության հիման վրա ղեկավարվող հասարակության շարժման իրավիճակում»⁶:

Վ. Վ. Մակլակովը «ընտրությունները» տարբերակում է լայն և նեղ իմաստներով: Նրա կարծիքով «ընտրությունները» լայն իմաստով պետական մարմնի ձևավորման կամ պաշտոնատար անձին լիազորություններով օժտելու ընթացակարգն է, որն իրականացվում է ընտրողների քվեարկության միջոցով՝ ներառելով ընտրությունների նշանակումից մինչև մանդատների բաշխումը և քվեարկության արդյունքների բողոքարկումը կատարվող գործողությունների ամբողջությունը: Նեղ իմաստով Վ. Վ. Մակլակովը «ընտրությունները» դիտարկում է որպես մեկ կամ մի քանի անձանց ընտրություն (ցուցակով քվեարկելիս)՝ քվեարկության միջոցով⁷. «Ընտրությունները» հնարավորություն են տալիս «ընտրելու», այսինքն, դա հնարավորություն է՝ ձայնը տալ մեկ կամ մի քանի ներկայացված թեկնածուների կամ թեկնածուների ցուցակների:

Մ. Վ. Բազլայը ընտրությունները սահմանում է որպես պետական իշխանության, տեղական ինքնակառավարման

⁶ Очерки по истории выборов и избирательного права: Учебное пособие/ Авт. проекта: Ю.А . Веденеев и др.; Авт . коллектив: Ю.А. Веденеев, И.В. Зайцев, В.Е. Кораблин, В.В. Луговой, В.В. Тылкин / Под ред. Ю.А. Веденева и Н.А. Богодаровой; Центр. избират. Комис. Российской Федерации, Рос. Центр обучения избират. технологиям при Центр. избират. комис . Российской Федерации, Калуга: Калужский обл. фонд возрождения историко-культурных и духовных традиций «Символ», 2002, с. 689.

⁷ Маклаков В.В. Конституционное право зарубежных стран. Общая часть: [учеб. для студентов юрид. вузов и фак.] / В.В. Маклаков – М.:Волтерс Клувер, 2006, с 454.

մարմինների ձևավորման կամ պաշտոնատար անձին լիազորություններով օժտելու նպատակով՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան իրականացվող քաղաքացիների կամարտահայտման ձև: Այս կամ այն քաղաքական կուսակցությունների կամ միավորումների կողմից առաջադրված թեկնածուների օգտին՝ ազատ քվեարկության միջոցով, ձայների տրամադրումը հնարավորություն է տալիս քաղաքացիներին ժողովրդավարական ճանապարհով որոշել այն անձանց, որոնց վստահում են դեկավարելու երկիրը, և հավանություն են տալիս նրանց քաղաքական ծրագրերին: Ըստ էության՝ ընտրությունների միջոցով ձևավորվում են ոչ միայն իշխանության ներկայացուցչական մարմինները, այլ անուղղակի ձևով նաև գործադիր ու դատական մարմինները, քանի որ համապատասխան պաշտոնատար անձանց նշանակումն իրականացվում է ընտրովի մարմինների կողմից: Ընտրություններն ապահովում են իշխանության մարմինների համակարգի բարձրագույն և սկզբնական լեգիտիմությունը՝ համազգային և տարածաշրջանային մակարդակներում: Միաժամանակ, ընտրությունների միջոցով քաղաքացիներն իրականացնում են պետական գործերի կառավարմանը մասնակցելու իրենց իրավունքը: Քաղաքացիական հասարակությունը, որը հիմնված է մարդկանց բազմակարծության և հետաքրքրությունների վրա, չի կարողանա ապահովել քաղաքացիների կամավոր օրինապաշտությունը, խուսափել սոցիալական սուր բախումներից, եթե պետական իշխանության մարմինները չձևավորվեն քաղաքացիների մասնակցությամբ՝ արդար և ազատ ընտրությունների հիման վրա⁸:

⁸ Арутюнян Г.Г., Баглай М.В. Конституционное право: энциклопедический словарь.- М.: НОРМА, 2006, с. 78.

Իրավաբանական հանրագիտարանում, որի հեղինակային կոլեկտիվի ղեկավարն է Ռ. Լ. Խաչատուրովը՝ Ս. Շ. Ծաղիկյանի ընդհանուր խմբագրությամբ, նշված է. «Ընտրությունները հանդիսանում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման միջոց, որն իրականացվում է քվեարկության միջոցով: ... Ընտրություններն անցկացվում են կառավարման օրենսդիր մարմնի կազմում ընտրություններին մասնակցող անձանց (ընտրազանգվածի) կողմից վարչական մարմնի ղեկավարի կամ ներկայացուցչի պաշտոնում նշանակումն օրինական հաստատելու համար»⁹:

«Ընտրությունները» դա անհատի ազատ ինքնորոշման և ինքնադրսևորման հիման վրա՝ քաղաքացիների ազատ կամարտահայտության միջոցով, ժողովրդի իշխանության անմիջական բարձրագույն արտահայտումն է՝ սահմանում է Գ. Ն. Շեդրոլովան¹⁰: Դրա հետ մեկտեղ հեղինակը կամքը դիտարկում է որպես «ինքնորոշման բանական ունակություն», իսկ ազատությունը՝ որպես «ինքնադրսևորման ունակություն»¹¹:

Բ. Ս. Էբգենը կարծում է, որ. «ավելի լայն սոցիալական համատեքստում ընտրություններն իրենցից ներկայացնում են պլյուրալիստական ժողովրդավարության պայմաններում հասարակության և պետության, քաղաքացու և հանրային իշխա-

⁹ Юридическая энциклопедия / Руководитель авторского коллектива д.ю.н., проф. Р.Л. Хачатуров; Под общей ред. С.Ш. Цагикяна, авт. кол. С.С. Аветисян, Л.А.Акопян, Арустамян Р.С. и др. - Ер.: Российско-армянский университет, 2017, с. 243.

¹⁰ Щедролобова Г.Н. Политико-правовое развитие института выборов в Российской Федерации // Автореф. дисс. на соискание ... канд. юр. наук. М., 2005, с. 12.

¹¹ Տե՛ս նույն տեղում

նության, մեծամասնության և փոքրամասնության միջև անխուսափելի հակասությունների հաղթահարման միջոցն ու ձևը, որը հիմնված է մեծամասնության սկզբունքի վրա, ինչը հանդիսանում է սահմանադրական կարգի կայունության և անխախտելիության գլխավոր պայմանը և դրա էվոլյուցիոն զարգացման պայմանը: Այդ կապակցությամբ էլ հենց էապես մեծանում է ընտրությունների նշանակությունը՝ որպես հասարակության քաղաքացիական ինքնակազմակերպման և նրա քաղաքական կառուցվածքի միջոց, ինչը կանխորոշվում է հենց ժողովրդավարության մրցակցային բնույթով և, Ռուսաստանի սահմանադրական կառուցվածքով պայմանավորված, բազմակուսակցականությամբ»¹²:

Իր դոկտորական ատենախոսության մեջ ընտրությունների էության տարբեր մեկնաբանությունների մասին խոսում է Վ. Վ. Կոմարովան¹³՝ առաջարկելով իր սեփական սահմանումը. «Ընտրությունները, որպես անմիջական ժողովրդաիշխանության բարձրագույն հրամայական ձև, քաղաքացիների քվեարկությունն է՝ հանրային իշխանության ներկայացուցչական մարմինների և պաշտոնատար անձանց ձևավորման նպատակով՝ ընտրություններում քաղաքացիների արտահայտած կամքին և շահերին համապատասխան, իրենց միջավայրից ներկայացուցիչների առանձնացումն է՝ իշխանական գործառույթներ իրականացնելու համար»:

¹² Эбзеев Б.С. Человек, народ, государство в конституционном строе Российской Федерации: монография. - 2-е изд., перераб. и доп. - М., Проспект, 2013, с. 340.

¹³ Մանրամասն տե՛ս Կомарова В.В. Высшее непосредственное выражение власти народа в Российской Федерации (проблемы теории и практики) // Дисс. на соискание ... доктора юр. наук, М., 2006, էջ 233-235.

Հարկ է նշել, որ շատ հեղինակներ իրենց աշխատություններում նշել են «ընտրությունների» հասկացության այն մոտեցումները, որոնք կիրառելի են անցումային հասարակություններ ունեցող երկրներում¹⁴:

Ինչպես նշում են հեղինակներ Վ. Ի. Լիսենկոն և Յ. Ա. Վեդենենը. «ընտրությունների նկատմամբ ավանդական տեսակետը՝ որպես հանրային իշխանության մարմինների ձևավորման ձևական ընթացակարգ, սահմանափակ և ոչ լիարժեք է այն իրավիճակում, երբ ընտրությունները վերածվում են ժողովրդաիշխանության ինստիտուտի, քաղաքացիների քաղաքական իրավասույթեկտության իրականացման միջոցի, պետական կարգի սահմանադրական հիմունքի»¹⁵:

Անցումային հասարակության դարաշրջանը, միանգամայն ճշգրիտ, դիտարկվող թեմայի տեսանկյունից սահմանում է Յու. Ա. Վեդենենը՝ նշելով, որ. «այս պատմական փուլի բովանդակությունը կայանում է նրա անցողիկության մեջ, երբ հին ինստիտուտները պահպանում են իրենց ազդեցությունը ռազմավարական որոշումների մշակման և ընդունման վրա, իսկ նոր ինստիտուտները դեռևս չունեն ապագա զարգացման քաղաքականության աղեկավար ազդեցության և կարգավորման անհրաժեշտ որակներ: Սա նշանակում է իշխանության համակարգում և գործընթացներում արդիականացման և նո-

¹⁴ Տե՛ս, օրինակ, Թովմայան Հ.Վ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացման հիմնահարցերը // Իրավ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2000, էջ 8-9:

¹⁵ Избирательное право и избирательный процесс в Российской Федерации. Учебник для вузов / Отв. ред. А. В. Иванченко. М., Издательство НОРМА, 1999, էջ 11.

րոգման (և վերջիններս ներկայացնող սոցիալական կառավարման տեխնոլոգիաները) ուղիղ հակասական հասարակական միտումների կրողների ներկայություն՝ ավտորիտար (օլիգարխիկ), և ժողովրդավարական (քաղաքացիական), որը դրսևորվում է մշտական ինստիտուցիոնալ ճգնաժամերում և կոնֆլիկտներում: Դրանց լուծումն ու հաղթահարումը հնարավոր է առաջատար սոցիալ-քաղաքական ուժերի և խմբերի միջև ընդունելի փոխզիջում գտնելու ճանապարհով, ինչն էլ իր հերթին ենթադրում է ընդհանուր խնդիրների կոնկրետ շրջանակի, կառուցվածքային մարտահրավերների և սպառնալիքների շուրջ շահերի և դիրքորոշումների համաձայնեցման մեխանիզմի առկայություն»¹⁶:

Հայաստանի նորագույն պատմության մեջ ընտրությունների ինստիտուտի նկատմամբ հետաքրքրությունը, ինչպես և երիտասարդ ժողովրդավարության այլ երկրներում, պարզվեց չափազանց բարձր է¹⁷, ինչը լիովին հասկանալի է և բացատրե-

¹⁶ Очерки по истории выборов и избирательного права: Учебное пособие/ Авт. проекта: Ю.А . Веденеев и др.; Авт . коллектив: Ю.А. Веденеев, И.В. Зайцев, В.Е. Кораблин, В.В. Луговой, В.В. Тылкин / Под ред. Ю.А. Веденева и Н.А. Богодаровой; Центр. избират. Комис. Российской Федерации, Рос. Центр обучения избират. технологиям при Центр. избират. комис . Российской Федерации, Калуга: Калужский обл. фонд возрождения историко-культурных и духовных традиций «Символ», 2002, с. 679.

¹⁷ Տե՛ս, օրինակ, Тохян Ф. Конституционный порядок президентских выборов в современном мире: сравнительно-правовое исследование.- Ер.: Мхитар Говш, 1998. Թովմայան Հ.Վ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացման հիմնահարցերը // Իրավ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2000. Եղյան Ռ.Հ. Հայաստանի Հանրապետության ընտրական համակարգը: Ուսումնական ձեռնարկ / Ռ.Հ. Եղյան; ԵՊՀ. - Երևան. Եր. համալս. հրատ., 2000; Վաղարշյան Ա. Ընտրական իրավունքի սահմանադրական զարգացումը Հայաստանում (դասախոսություն) / Ա.

լի: Չէ՞ որ ձևավորվող հայկական հասարակության օրակարգում դրված խնդիրներից մեկը դա՝ այն ավանդական հայացքների վերախմաստավորումն ու վերագնահատումն էր, որոնց շրջանակներում ընտրությունները դիտարկվում էին որպես ձևական-արարողակարգային միջոցառում:

ՀՀ սահմանադրական դատարանի նախագահը 2006թ. Երևանյան XI-րդ միջազգային խորհրդաժողովում իր բացման խոսքում նշեց՝ «Ըստ միջազգային վերլուծաբանների՝ ԱՊՀ անդամ երկրներում, Եվրամիության անդամ երկրների համեմատ, ընտրական գործընթացների վարկանիշը ոչ միայն 2006 թվականին ավելի քան 3.5 անգամ ցածր է, այլ նաև վերջին

Վաղարշյան. ԵՊՀ, Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոն. - Երևան: Եր. համալս. հրատ., 2000. (24 էջ). Թոխյան Ֆ.Պ. Խորհրդարանական ընտրությունների սահմանադրաիրավական կարգավորման հիմնախնդիրները երիտասարդ ժողովրդավարության երկրներում (ՀՀ օրենսդրության հիման վրա) / Ֆ. Թոխյան, Ռուս-հայկական (սլավոնական) պետ. համալս., խմբ.՝ Ա.Շ. Հարությունյան. - Երևան: ՌՀՀ, 2004. Թադևոսյան Դ.Ս. Ընտրական հանձնաժողովների իրավական կարգավիճակը անցումային պետություններում (իրավահամեմատական վերլուծություն) // Իրավ.գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2009. Այվազյան Ն.Ա., Օհանյան Մ.Ս. Ազատ ընտրություններ և հանրաքվե կազմակերպելու հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում / Ն.Ա. Այվազյան, Մ.Ս. Օհանյան - Եր.: ԵՊՀ հրատ., 2010. Թորոսյան Ս.Լ. Ընտրական համակարգի ձևավորման և զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում // ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» մասն. իրավ. գիտ. թեկն. գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2012. Актуальные проблемы избирательного законодательства Республики Армения и перспективы развития / Шатирян Э., Манасян А., Оганесян А.: Под ред. В.Д. Аветисяна - Ереван: МПА государств-участников СНГ, Изд. Зангак, 2013; Եսայան Ա.Ս. Ընտրական վեճերի իրավական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում // ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» մասն. իրավաբան. գիտ. թեկն. գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2015 և այլն:

տասը տարիների ընթացքում նվազել է 12% - ով (Հայաստանում այդ տվյալները կազմում են համապատասխանաբար՝ 3.62 անգամ և 4.6%)», ինչպես նաև արձանագրեց, որ եթե համաձայնենք այն հայտնի ձևակերպման հետ, որ «ժողովրդավարությունն սկսվում է քվեատուփից», ապա, վերը նշված թվերի առկայության պարագայում, ակնհայտ է, որ Հայաստանում անհրաժեշտ են լուրջ բարեփոխումներ: Եզրակացվել է, որ Հայաստանի Հանրապետությունում դեռևս չի ձևավորվել միջազգային չափանիշներին համարժեք ժողովրդավարական ընտրությունների երաշխավորման համակարգ¹⁸:

Սակայն, հանուն արդարության պետք է նշել, որ Հայաստանի անկախացումից և, հատկապես, 1995 թվականի Սահմանադրության ընդունումից հետո ընտրական օրենսդրության և ընտրական իրավակիրառ պրակտիկայի կատարելագործման աշխատանքներ տարվել են գրեթե անընդհատ: Ընդ որում՝ 1995 թվականի ՀՀ սահմանադրությունը կիրառում է ոչ թե «ընտրություններ», այլ «ազատ ընտրություններ» եզրույթը՝ ժողովրդավարական սահմանադրական արժեք համարելով ոչ թե ուղղակի ժողովրդավարության այդպիսի ձևը, ինչպիսին ընտրություններն են, այլ հենց այդպիսի «որակյալ» գործընթացը՝ ընտրություններ, որոնք կարող են բնութագրվել որպես «ազատ»:

ՀՀ-ում ընտրությունների ինստիտուտի զարգացումը պայմանավորված է ընդհանուր առմամբ ժողովրդավարական ինստիտուտների կայացման և զարգացման ու, մասնավորա-

¹⁸ Арутюнян Г. Вступительное слово Председателя Конституционного Суда РА на XI Ереванской международной конференции // Международный альманах. Конституционное правосудие в новом тысячелетии. Ереван, «Нжар», 2006, էջ 5.

պէս, ժողովրդավարական ընտրությունների բնագավառում եվրոպական արժեքների ներդրման նպատակներով, ինչպես նաև կապված է ազգային օրենսդրությունում միջազգային չափանիշների և միջազգային իրավունքի սկզբունքների, ինչպես նաև ընտրական իրավունքների իրականացման երաշխիքների և ժողովրդավարական ընտրությունների անցկացման նորմատիվ-իրավական ամրագրման հետ: Ընտրությունների ժողովրդավարացման չափանիշների մշակման գործում առանձնահատուկ դեր է խաղում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ նաև՝ ՄԻԵԴ) պրակտիկան և նրա կողմից ձևավորվող նախադեպային իրավունքը: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1952 թվականի Եվրոպական կոնվենցիայի Լրացուցիչ արձանագրությամբ երաշխավորված ազատ ընտրությունների կոնվենցիոն իրավունքի պաշտպանության լույսի ներքո՝ ՄԻԵԴ-ը բազմիցս անդրադարձել է կոնվենցիային մասնակից - պետությունների կողմից նշված իրավունքի պահպանման հարցին՝ մշակելով ընտրությունների ժողովրդավարացման չափանիշներ և զարգացնելով դրանք՝ հաշվի առնելով ժամանակակից աշխարհի նոր իրողություններն ու մարտահրավերները¹⁹: ՄԻԵԴ-ի պաշտոնական կայքում հրա-

¹⁹ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան ունի երկար պատմություն և բավականին լայն է: Առավել նշանակալից և հետաքրքիրներից կարելի է հիշատակել ՄԻԵԴ-ի հետևյալ որոշումները. *Moohan and Gillon v. the United Kingdom* (dec.), nos. 22962/15 and 23345/15, CEDH 2017; *Davydov and Others v. Russia*, no. 75947/11, ECHR 2017 (extracts); *CumhuriyetHalkPartisiv. Turkey*, no. 19920/13, ECHR 2016; *Anchugov and Gladkov v. Russia*, nos. 11157/04 and 15162/05, 4 July 2013; *Sitaropoulos and Giakoumopoulos v. Greece* [GC], no. 42202/07, ECHR 2012; *Paksasv. Lithuania* [GC], no. 34932/04, ECHR 2011 (extracts); *Tănasev. Moldova* [GC], no. 7/08,

պարակված վիճակագրական տվյալների համաձայն՝ 1959-2020թթ. ընթացքում երկրների նկատմամբ կայացվել է 102 որոշում՝ Կոնվենցիայի 1-ին արձանագրության 3-րդ հոդվածի խախտման վերաբերյալ²⁰: Հետաքրքիր է, որ նշված 102 որոշումներից 79-ը ընդունվել են 2018-ից 2020 թվականների ընթացքում:

Ընդհանրապես, ժամանակակից Հայաստանի սահմանադրական զարգացման պատմությունը թվագրվում է մոտ երեք տասնյակ տարի: Պատմական չափանիշներով այդքան էլ երկար ժամանակ չէ, սակայն, այդ ընթացքում Հայաստանում

ECHR 2010; Grosaru v. Romania, no. 78039/01, ECHR 2010; YumakandSadakv. Turkey [GC], no. 10226/03, ECHR 2008; Kovach v. Ukraine, no. 39424/02, ECHR 2008; Georgian Labour Party v. Georgia, no. 9103/04, ECHR 2008; Ždanokav. Latvia [GC], no. 58278/00, ECHR 2006-IV; Campagnano v. Italy, no. 77955/01, ECHR 2006-IV; Sukhovetsky v. Ukraine, no. 13716/02, ECHR 2006-VI; Lykourazos v. Greece, no. 33554/03, ECHR 2006-VIII; Bompard v. France (dec.), no. 44081/02, ECHR 2006-IV; Hirstv. The United Kingdom (no. 2) [GC], no. 74025/01, ECHR 2005-IX; Py v. France, no. 66289/01, ECHR 2005-I (extracts); Aziz v. Cyprus, no. 69949/01, ECHR 2004-V; Boškoski v. the former Yugoslav Republic of Macedonia (dec.), no. 11676/04, ECHR 2004-VI; Vito Sante Santoro v. Italy, no. 36681/97, ECHR 2004-VI; Vito Sante Santoro v. Italy (dec.), no. 36681/97, ECHR 2003-I (extracts); Melnychenko v. Ukraine, no. 17707/02, ECHR 2004-X; Podkolzinav. Latvia, no. 46726/99, ECHR 2002-II; Sadak and Others v. Turkey (no. 2), nos. 25144/94 and 8 others, ECHR 2002-IV; Federación nacionalista Canaria v. Spain (dec.), no. 56618/00, ECHR 2001-VI; Labitav. Italy [GC], no. 26772/95, ECHR 2000-IV; Cherepkov v. Russia (dec.), no. 51501/99, ECHR 2000-I; Salleras Llinares v. Spain (dec.), no. 52226/99, ECHR 2000-XI; Matthews v. the United Kingdom [GC], no. 24833/94, ECHR 1999-I; Hilbe v. Liechtenstein (dec.), no. 31981/96, ECHR 1999-VI; Gitonas and Others v. Greece, 1 July 1997, Reports of Judgments and Decisions 1997-IV; Mathieu-Mohin and Clerfayt v. Belgium, 2 March 1987 and others. Աղբյուրը՝ <https://echr.coe.int/Pages/home.aspx?p=caselaw/reports&c=>, https://www.echr.coe.int/Documents/Case_law_references_ENG.pdf.

²⁰ Տե՛ս https://www.echr.coe.int/Documents/Stats_violation_1959_2020_ENG.pdf.

մոդիֆիկացվեց խորհրդային օրենսդրությունը, այդ թվում՝ ժողովրդավարության տարբեր ինստիտուտների, մասնավորապես, ընտրությունների մասով, ընդունվեց 1995 թվականի Սահմանադրությունը, որն արմատապես տարբերվում էր Խորհրդային Հայաստանի բոլոր նախորդ սահմանադրություններից. 1995-ի Սահմանադրությունը փոխվել է երկու անգամ, ընդ որում՝ այդ երկու անգամ կատարված փոփոխություններն էլ այս կամ այն չափով կրել են հայեցակարգային բնույթ:

Պատմական էքսկուրս կատարելով հայրենական օրենսդրությունում ժողովրդավարության ինստիտուտների իրավական ամրագրման հարցի շուրջ՝ հարկ է նշել, որ յուրաքանչյուր երկրում դա կապված է նաև քաղաքացիական հասարակության ձևավորման խնդրի հետ, քանի որ ժողովրդաիշխանության շատ ինստիտուտներ կապված են պետության և հասարակության զարգացման հետ, ինչը հաշվի առնելով՝ կարելի է արձանագրել, որ խորհրդային ժառանգությունը ժողովրդավարական ինստիտուտների ոլորտում բոլորովին պիտանի չէր 20-րդ դարի 90-ականների սկզբին ձևավորված նոր պայմաններում, ուստի և, Հայաստանի անկախության հռչակումից մինչև երկրում նոր Սահմանադրության ընդունումը, փորձեր արվեցին արդիականացնել խորհրդային օրենսդրությունը: Այսպես՝ 1990 թվականին Հայաստանի անկախության Հռչակագրի ընդունումից հետո, որում ասվում է, որ. «Հայոց պետականության կրողը Հայաստանի Հանրապետության ժողովուրդն է, որն իր իշխանությունը իրագործում է անմիջականորեն և ներկայացուցչական մարմինների միջոցով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրության և օրենքնե-

րի հիման վրա» (3-րդ կետ), իսկ նույն Հոչակագրի 12-րդ կետը սահմանում է, որ Հոչակագիրը հիմք է ծառայում Հայաստանի Հանրապետության սահմանադրության մշակման և գործող օրենսդրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարման, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սահմանադրության մշակման և ընդունման ու օրենսդրության արդիականացման աշխատանքները չափազանց լայնածավալ էին, որի համար շատ ժամանակ էր պահանջվում, գտնվել է ժամանակավոր լուծում, որը, մի կողմից, ապահովում էր ՀՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունվող նոր օրենսդրության կիրառման հնարավորությունները ՀՀ տարածքում, մյուս կողմից՝ թույլ չէր տալիս իրավական կարգավորման մեջ վակուումի առաջացումը՝ ՀՀ տարածքում պահպանելով խորհրդային օրենսդրության գործողությունն այնքանով, որքանով այն չէր հակասում ՀՀ նոր օրենսդրությանը: Այս որոշումը ձևակերպվել է մեկ դրույթից բաղկացած ՀՀ սահմանադրական օրենքի տեսքով՝ «Հայաստանի Հանրապետության Գերագույն Խորհուրդը որոշում է՝

Մինչև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունումը դադարեցվում է գործող Սահմանադրության այն դրույթների գործողությունը, որոնք հակասում են Հայաստանի Հանրապետության անկախության մասին Հոչակագրի հիման վրա Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի ընդունած օրենքներին»:

1978 թվականի Հայկական ԽՍՀ Սահմանադրությունը, որը գործում էր մինչև 1995 թվականի ՀՀ սահմանադրության ընդունումը, ՀՀ նոր օրենսդրությանը չհակասող մասով, 2-րդ հոդվածում սահմանում էր, որ. «Հայկական ԽՍՀ-ում ամբողջ

իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդը պետական իշխանությունն իրականացնում է Հայկական ԽՍՀ քաղաքական հիմքը կազմող ժողովրդական պատգամավորների խորհրդի միջոցով», այսինքն՝ քաղաքական համակարգի հիմքերի շրջանակներում ընդգծել է ներկայացուցչական ժողովրդավարության սկզբունքը:

Հայկական ԽՍՀ Սահմանադրության 88-րդ հոդվածը սահմանել է, որ. «պատգամավորների ընտրություններն ուղղակի են. ժողովրդական պատգամավորների խորհրդի պատգամավորները քաղաքացիների կողմից ընտրվում են անմիջականորեն»: Ընդ որում՝ նույն Սահմանադրության 3-րդ հոդվածով ամրագրվել է ցենտրալիզմի սկզբունքը՝ պետական իշխանության բոլոր մարմինների ընտրովիությունը վարից վեր, վերադաս մարմինների որոշումների պարտադիր լինելը ստորադաս մարմինների համար: Հաշվի առնելով վերոգրյալը՝ ընտրությունների ինստիտուտի օրենսդրական կարգավորման անհրաժեշտությունն ակնհայտ էր, ինչի կապակցությամբ, Հայաստանի Գերագույն խորհուրդն ընդունեց է մի շարք օրենքներ, որոնք կանոնակարգում էին քաղաքացիների կողմից իշխանության անմիջական իրականացման իրենց իրավունքների կարգը, մասնավորապես, ավելի վաղ նշված օրենքներից բացի, ընդունվեցին՝

«Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքը. 1991 թվականի ապրիլի 2,

«ՀՀ նախագահի ընտրությունների մասին» ՀՀ օրենքը. 1991 թվականի օգոստոսի 2,

«ՀՀ Գերագույն խորհրդի մասին» ՀՀ օրենքը. 1991 թվականի նոյեմբերի 18,

«ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընտրություններին մասին» ՀՀ օրենքը. 1995 թվականի մարտի 31:

Նշված օրենքները հետագայում վերանայվել են, համապատասխան, 1995 թվականին արդեն ընդունված ՀՀ սահմանադրության, ինչպես նաև ՀՀ սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելուց հետո: Այսպես՝

1) 1996 թվականի մայիսի 30-ին ընդունվեց «ՀՀ նախագահի ընտրությունների մասին» ՀՀ օրենքը, իսկ 1996 թվականի հունիսի 10-ին ընդունվեց «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» ՀՀ օրենքը,

2) 1999 թվականին Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ կողիֆիկացվեց ընտրական օրենսդրությունը, ընդունվեց ՀՀ առաջին Ընտրական օրենսգիրքը,

3) 2011 թվականին ընդունվեց ՀՀ երկրորդ Ընտրական օրենսգիրքը, ինչով պայմանավորված, ուժը կորցրած ճանաչվեց 1999 թվականի ՀՀ ընտրական օրենսգիրքը,

4) 2015 թվականի սահմանադրական բարեփոխումներից հետո 2016 թվականին ընդունվեց արդեն ՀՀ երրորդ Ընտրական օրենսգիրքը, ինչով պայմանավորված, ուժը կորցրած ճանաչվեց 2011 թվականի ՀՀ ընտրական օրենսգիրքը (հարկ է նշել, որ 2011 թվականի ՀՀ ընտրական օրենսգիրքը մասնակիորեն գործել է նաև 2016 թվականի ՀՀ ընտրական օրենսգրքի ընդունումից հետո):

Այնուամենայնիվ, եթե Հայաստանի օրենսդրությունը վերլուծենք իրավական կարգավորման կամ ընտրությունների կազմակերպման և անցկացման հարցերի օրենսդրական ամրագրման տեսանկյունից, ապա, կարելի է առանձնացնել 4 փուլ՝

1. մինչև 1995 թվականի ՀՀ սահմանադրության ընդունումը,

2. 1995 թվականի սահմանադրության ընդունումից հետո և մինչև ՀՀ սահմանադրության մեջ 2005 թվականին առաջին սահմանադրական փոփոխություններ կատարելը,

3. ՀՀ սահմանադրության մեջ 2005 թվականին առաջին սահմանադրական փոփոխությունները կատարելուց հետո և մինչև ՀՀ սահմանադրության մեջ 2015 թվականին երկրորդ սահմանադրական փոփոխություններ կատարելը,

4. ՀՀ սահմանադրության մեջ 2015 թվականին երկրորդ սահմանադրական փոփոխություններ կատարելուց հետո:

Հայաստանի անկախացումից հետո և մինչև 1995 թվականի ՀՀ սահմանադրության ընդունումը՝ 1991 թվականին, անցկացվել են Հանրապետության նախագահի ընտրություններ, 1995 թվականին՝ Ազգային ժողովի ընտրություններ:

Հայաստանի Հանրապետության 1995 թվականի Սահմանադրությունն իր 2-րդ հոդվածում ամրագրեց. «Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով»: Սահմանադրական փոփոխությունների շրջանակներում՝ ժողովրդաիշխանության սկզբունքը Սահմանադրության մակարդակով պահպանվել է և՛ 2005, և՛ 2015 թվականների սահմանադրական բարեփոխումների արդյունքում: Պահպանվել են նաև ընտրական իրավունքի հիմնական սկզբունքները, սակայն, դրանց այդ ցանկը լրացվել է 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների շրջանակներում: Այսպես՝ Սահմանադրության 1995 և 2005 թվականների խմբագրված տեքստե-

րում, որպես ընտրական իրավունքի սկզբունքներ, նշված են՝ ընդհանուր, հավասար ուղիղ ընտրական իրավունքը՝ գաղտնի քվեարկությամբ, իսկ Սահմանադրության գործող տեքստում, այսինքն՝ 2015 թվականի խմբագրությունում, այդ ցանկին ավելացվել է՝ ազատ ընտրական իրավունքի սկզբունքը:

Քննարկվող հարցի համատեքստում հատուկ պետք է ընդգծել ՀՀ սահմանադրական դատարանի դերը, որը, որպես ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումները քննող մարմին (իսկ ավելի վաղ, մինչև 2005 թվականի սահմանադրական փոփոխությունները, ընտրությունների արդյունքներով վեճերը քննող²¹), ինչպես նաև, որպես սահմանադրական արդարադատության բարձրագույն մարմին, իր որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում՝ մեծապես նպաստել է, իսկ, հաճախ էլ ձևավորել է ժողովրդավարական ընտրությունների սովորույթներն ու ավանդույթները, ինչպես նաև, ըստ էության, մշակել է ՀՀ-ում անմիջական ժողովրդավարության ձևերի իրականացման այն չափանիշները, որոնք ունակ էին այդ պահին ապահովել դրանց առավել ժողովրդավար²², ինչպես նաև սահմա-

²¹ Այդ մասին մանրամասն տե՛ս Թոխյան Ֆ., Թոխյան Պ. Ընտրական իրավունքի դատական պաշտպանության հիմնախնդիրները ՀՀ-ում // Սահմանադրական դատարանի տեղեկագիր, 1(38)2006, էջեր 50-55:

²² Մասնավորապես, իր 2003 թվականի մարտի 24-ի ՍԴՈ-408 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ներկայացվել են ընտրությունների սահմանադրականության չափանիշներ (ՀՀ սահմանադրական դատարանի 2003 թվականի մարտի 24-ի ՍԴՈ-408 որոշման 7-րդ կետ): Դրա մասին մանրամասնորեն տես նաև՝ Тохян Ф. Конституционный контроль за общенациональными выборами в Республике Армения (проблемы теории и практики) // Альманах XI Ереванская международная конференция «Роль конституционных судов в обеспечении демократических выборов», 2006, 2006, с. 115.

նադրական բնույթը²³: Կարելի է նշել քննվող հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի, մեր կարծիքով, շատ կարևոր բազմաթիվ որոշումներ²⁴:

²³ Այսպես, օրինակ, իր 1999 թվականի հոկտեմբերի 16-ի ՍԴՈ-179 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ Սահմանադրությանը չհամապատասխանող է ճանաչել ՀՀ ընտրական օրենսգրքի, «Փախստականների մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքների որոշ դրույթներ և, ըստ էության, ճանաչել է ոչ քաղաքացիների (մասնավորապես՝ փախստականների) իրավունքը մասնակցելու տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին: Իր 2002 թվականի հոկտեմբերի 1-ի ՍԴՈ-389 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ Սահմանադրությանը չհամապատասխանող է ճանաչել ՀՀ ընտրական օրենսգրքի որոշ դրույթներ՝ ճանաչելով ընտրական իրավունքների պաշտպանության քաղաքացիների իրավունքը (մասնավորապես՝ վերականգնվելու ընտրողների ցուցակներում) առանց ժամանակի մեջ սահմանափակումների՝ ընդհուպ մինչև քվեարկության ավարտը (մանրամասն տես նաև՝ Թոխյան Ֆ.Պ. Ընտրական օրենսդրության սահմանադրականության հարցը որոշելու վերաբերյալ գործերով ՀՀ ՍԴ-ի իրավական դիրքորոշումները և դրանց իրավաբանական հետևանքները // Սահմանադրական դատարանի տեղեկագիր, 4(33)2004, էջեր 3-14):

²⁴ ՀՀ սահմանադրական դատարանի 2003 թվականի հուլիսի 7-ի ՍԴՈ-436 որոշումը, ՀՀ սահմանադրական դատարանի 2003 թվականի հուլիսի 18-ի ՍԴՈ-438 որոշումը, ՀՀ սահմանադրական դատարանի 2004 թվականի սեպտեմբերի 24-ի ՍԴՈ-512 որոշումը, ՀՀ սահմանադրական դատարանի 2006 թվականի նոյեմբերի 7-ի ՍԴՈ-664 որոշումը, ՀՀ սահմանադրական դատարանի 2007 թվականի դեկտեմբերի 18-ի ՍԴՈ-721 որոշումը, ՀՀ սահմանադրական դատարանի 2007 թվականի դեկտեմբերի 2-ի ՍԴՈ-722 որոշումը, ՀՀ սահմանադրական դատարանի 2008 թվականի փետրվարի 11-ի ՍԴՈ-734 որոշումը, ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի մայիսի 8-ի ՍԴՈ-803 որոշումը, ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի մայիսի 5-ի ՍԴՈ-1027 որոշումը, ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի մայիսի 31-ի ՍԴՈ-1028 որոշումը, ՀՀ սահմանադրական դատարանի 2013 թվականի հունվարի 25-ի ՍԴՈ-1072 որոշումը, ՀՀ սահմանադրական դատարանի 2013 թվականի մարտի 5-ի ՍԴՈ-1076 որոշումը, ՀՀ սահմանադրական դատարանի 2013 թվականի մարտի 14-ի ՍԴՈ-1077 որոշումը, ՀՀ սահմանադրական դատարանի 2017 թվականի մարտի 7-ի ՍԴՈ-1356 որոշումը, ՀՀ սահմանադրական

Վերոգրյալը վկայում է, որ ընտրությունները՝ որպես անմիջական ժողովրդավարության ինստիտուտներ, որպես իշխանության ձևավորման և հասարակության ու պետության համար կարևորագույն հարցերի լուծման ժողովրդավարական միջոց, ամրագրված են Հայաստանի ազգային օրենսդրությունում՝ Սահմանադրության մակարդակով, սակայն, նշված իրավական ինստիտուտի իրավական կարգավորման առկայությունը և ընտրությունների պարբերական անցկացումը դեռևս չեն երաշխավորում ընտրական գործընթացների ժողովրդավարականությունը: Միջազգային հանրությունը բազմաթիվ չափանիշներ է մշակել ընտրական գործընթացների բնույթն ու ժողովրդավարության աստիճանը որոշելու համար²⁵: Այդպիսիք են, օրինակ, ընտրական իրավունքի այնպիսի սկզբունքների առկայությունը, ինչպիսիք են՝ համընդհանուր ընտրական իրավունքը, հավասար ընտրական իրավունքը, ուղղակի ընտրական իրավունքը, կամարտահայտման ազատությունը, քվեարկության գաղտնիությունը, ընտրությունների պարբերականությունը, կամ այնպիսի պահանջներ, ինչպիսիք են՝ անկախ մարմնի կողմից ընտրությունների կազմակերպումը, ընտրությունների դիտարկման

դատարանի 2017 թվականի ապրիլի 28-ի ՍԴՈ-1364 որոշումը, ՀՀ սահմանադրական դատարանի 2017 թվականի դեկտեմբերի 26-ի ՍԴՈ-1396 որոշումը, ՀՀ սահմանադրական դատարանի 2021 թվականի փետրվարի 12-ի ՍԴՈ-1576 և այլն:

²⁵ Առավել մանրամասն ժողովրդավարական ընտրություններին վերաբերող միջազգային իրավական փաստաթղթերի մասին տես՝ Избирательное законодательство и выборы в современном мире. Ближневосточно-Азиатский регион / В.И. Лысенко; Под общей ред. Э.А. Памфиловой; Центральная избирательная комиссия Российской Федерации. – Вып. 5. – М., 2017, с. 1337-1362.

հնարավորությունը, ընտրական իրավունքների բողոքարկման և պաշտպանության արդյունավետ համակարգը և այլն²⁶:

Անդրադառնալով ընտրությունները որպես «ազատ» որակելուն՝ անհրաժեշտ է վերապահում անել, որ, չնայած այն փաստին, որ ընտրությունների վերաբերյալ միջազգային ակտերն ամրագրում են տվյալ իրավական բնութագիրը²⁷, այնու-

²⁶Տե՛ս, օրինակ, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր՝ ընդունված 1948 թվականի դեկտեմբերի 10-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից (հոդ. 21), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր՝ ընդունված 1966 թվականի դեկտեմբերի 16-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից (հոդ. 25), Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետություններում ժողովրդավարական ընտրությունների, ընտրական իրավունքների և ազատությունների չափանիշների մասին կոնվենցիա՝ ընդունված ԱՊՀ անդամ պետությունների կողմից ընդունվել է 2002 թվականի հոկտեմբերի 7-ին Քիշնևում, Հնարական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագիրք. Ղեկավար սկզբունքներ և բացատրական զեկույց (Վենետիկ, 2002 թվականի հոկտեմբերի 18-19), Եզրակայություն n° 190/2002 CDL-AD (2002) 23 և այլն: Դրա վերաբերյալ մանրամասն տես նաև՝ Геворкян В.В. Развитие института выборов в РФ: конституционно-правовое исследование // Автореф. дисс. ... канд.юр. наук. М., 2011, с. 7.

²⁷ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1948 թվականի դեկտեմբերի 10-ին ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 21-րդ հոդված, 1990 թվականի հունիսի 29-ին ընդունված Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) 1990թ. Կոպենհագենյան փաստաթղթի 5.1.-րդ կետ, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1966 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունված Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 25-րդ հոդված, 1950 թվականի Եվրոպայի Խորհրդի կողմից ընդունված «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի N 1 Արձանագրության 3-րդ հոդված, Միջխորհրդարանական Միության խորհրդի կողմից ընդունված «Ազատ և արդար ընտրությունների չափանիշների մասին» հռչակագրի 1-ին հոդված, ԱՊՀ անդամ պետությունների կողմից 2002 թվականի հոկտեմբերի 7-ին Քիշնևում ընդունված «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետություններում ժողովրդավարական ընտրությունների,

ւամենայնիվ, դրա միանշանակ սահմանումը կամ նշանակությունը՝ որպես ժողովրդավարական ընտրությունների միջազգային չափանիշի, տրված չէ: Արդարացված ենք համարում պրոֆեսոր Գ. Գ. Հարությունյանի այն դիրքորոշումը, որ. «ազատ ընտրությունները ենթադրում են ընտրական գործընթացի վրա որևէ ճնշման բացառում (ազդեցություն, ճնշում, ահաբեկում, սպառնալիք, որը անհատի վարքագիծը կախվածության մեջ է դնում քվեարկության բնույթից կամ ընտրությունների հետևանքներից)»:

Ինչպես նշում է Գ. Վ. Թովմասյանը. «Ընտրությունների իրական ազատության պահպանման համար անհրաժեշտ է այնպիսի քաղաքական, բարոյահոգեբանական մթնոլորտ, որի դեպքում որևէ մեկի մոտ մտահոգություն չի առաջանա՝ տվյալ պահին իշխանության դեկլին գտնվող քաղաքական ուժի դեմ քվեարկելիս, հնարավոր հետապնդումների առնչությամբ: Ընտրությունների ազատությունը կյանքի կոչելու համար լավագույնն այն հասարակությունն է, որտեղ ընտրական իրավունքը դիտարկվում է՝ որպես քաղաքակիրթ աշխարհի մեծագույն, անձեռնմխելի արժեք»²⁸:

Այն միջազգային իրավական ակտերում, որոնք ձևակերպում են պահանջներ, որոնց կատարումն ընտրությունների

ընտրական իրավունքների և ազատությունների չափանիշների մասին» կոնվենցիայի 1-ին և 8-րդ հոդվածներ, 2002 թվականին Վենետիկի հանձնաժողովի կողմից ընդունված «Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագիրք. Ղեկավար սկզբունքներ և բացատրական զեկույց»-ի 1-ին և 3-րդ կետերն այլն:

²⁸ Թովմասյան Ն.Վ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացման հիմնահարցերը // Իրավ. գիտ. Թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2000, էջ 11:

արդյունքները լեգիտիմ ճանաչելու պարտադիր պայման է, ազատ ընտրությունների պահանջը նշվում է արդար և իրական ընտրությունների, ներառական և թափանցիկ, հաշվետու և վստահություն առաջացնող ընտրությունների շարքում²⁹:

Մ. Վ. Բագլայի համոզմամբ. «ազատ են ճանաչվում այնպիսի ընտրությունները, որոնք անցկացվում են այնպիսի մթնոլորտում, որն ապահովում է մարդու բոլոր հիմնական իրավունքների պահպանումը՝ բացառելով ընտրողների վրա ճնշումն ու ահաբեկումը: Առանց խտրականության բոլոր քաղաքացիներին պետք է ապահովվի ընտրություններին մասնակցելու հավասար հնարավորություն: Քաղաքացիները պետք է համոզված լինեն, որ իրենց մասնակցությունը, ինչպես նաև չմասնակցելը ընտրություններին, իրենց համար անբարենպաստ հետևանքներ չի առաջացնի»³⁰:

Ընտրական իրավունքի շատ սկզբունքներ և միջազգային չափանիշներ ուղղված են ընտրությունների այս բնութագրի ապահովմանը: Այսպիսով՝ ազատ ընտրությունների ապահովումը, անկասկած, մշտապես կախված է լինելու նրանից, թե որքան օրինական և օրենքին համապատասխան են կազմակերպվել և անցկացվել ընտրությունները: Դա մեծապես կախված կլինի ընտրական գործընթացի բոլոր մասնակիցների տեղեկացվածության, պատրաստվածության աստիճանից: Ինչպես նշում է Շ. Բալոչը. «Ժողովրդավարությունը կարող է արմատավորվել հասարակության մեջ միայն այն ժամանակ, երբ ժողովրդավարական համակարգի զարգացման մեջ շա-

²⁹ International election principles: democracy & the rule of law/ Jhon Hardin Young editor. - 1st ed., USA, American Bar Association, 2009, p. 10-38.

³⁰ Арутюнян Г.Г., Баглай М.В. Конституционное право: энциклопедический словарь.- М.: НОРМА, 2006, с. 79.

հագրգիռ բոլոր կողմերը գիտակցում են իրենց սահմանադրական և ընտրական իրավունքները: Ընտրողները, հանդիսանալով շահագրգիռ կողմ, պահանջում են լուսաբանում՝ իրենց ընտրական իրավունքների և պարտականությունների ոլորտում, որպեսզի յուրաքանչյուր ընտրող ունենա ազատ ընտրության իրավունք: Այս առումով՝ ԶԼՄ-ները ժամանակակից աշխարհում կարող են նպաստել, որպեսզի ընտրողներն իրականացնեն իրենց իրավունքներն ու պարտականությունները: Դա կօգնի հաղթահարել ճգնաժամը»³¹:

Եվ եթե խոսենք ժողովրդավարական ընտրությունների իրավական հիմքերի մասին, ապա, ընտրական գործընթացների ժողովրդավարականության աստիճանի որոշման վերը նշված չափորոշիչների թվին պետք է դասել նաև ընտրական օրենսդրության կայունությունը:

³¹ Балоч III. Современные избирательные тенденции и их влияние на укрепление электорального суверенитета // Сборник материалов международной конференции «Современные избирательные тенденции в условиях многополярного мира». – М.: РЦОИТ, 2018, с. 48.

1.2. Ընտրական օրենսդրության կայունության սկզբունքն ու դրա իրականացման առանձնահատկությունները ՀՀ-ում

Ընտրական օրենսդրության կայունությունը կարևորագույն պայման է ոչ միայն ընտրական գործընթացների ժողովրդավարական բնույթի ապահովման, այլև այդ գործընթացների և, հատկապես, դրանց արդյունքների որակն ապահովելու համար, քանի որ ընտրական օրենսդրության անկայունությունը, դրա հաճախակի փոփոխությունները, մեր կարծիքով, հանգեցնում են ընտրական գործընթացների նկատմամբ քաղաքացիների հետաքրքրության անկմանը, ինչպես նաև անխուսափելիորեն հանգեցնում են հանրության կողմից ընտրական գործընթացների արդյունքները չճանաչելուն:

ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակն անցկացրել է «ԵԱՀԿ մասնակից - պետությունների ընտրական օրենսդրության և պրակտիկայի վերանայում» (2013թ.), որի շրջանակներում նշել է, որ. «Նորմատիվ - իրավական դաշտի կայունությունը հանդիսանում է ժողովրդավարական ընտրությունների կարևոր սկզբունքը, քանի որ ընտրական գործընթացի մասնակիցներին անհրաժեշտ է ժամանակին տրամադրել տեղեկատվություն՝ ընտրությունները կարգավորող կանոնների մասին»: Վենետիկի հանձնաժողովի 2002 թվականի «Բարենպաստ գործունեության կանոնագրքի» (այսուհետ՝ Կանոնագիրք) II.2.Բ. բաժինն առաջարկում, որ «Ընտրական օրենքի հիմնարար տարրերը ... չպետք է փոփոխության ենթարկվեն ընտրությունից առաջ մեկ տարուց պակաս ժամկետում ...»: ԺՀՄԻԳ - ը

հաճախ է բարձրացրել նորմատիվ-իրավական բազայի կայունության հարցը, մասնավորապես, երբ օրենսդրական բազայի փոփոխություններն ընդունվել են ընտրություններից շատ կարճ ժամանակ առաջ (Ադրբեջան, Նախկին Հարավսլավական Մակեդոնիայի Հանրապետություն, Վրաստան 2012, Ղազախստան 2011, Մոլդովա, Լեհաստան, Ռումինիա 2012, Իսպանիա, ԱՄՆ 2012) կամ նույն ընտրությունների երկու փուլերի միջև (Ուկրաինա 2010): Այդ կապակցությամբ՝ հաճախ առաջարկություններ են արվել, որպեսզի օրենսդրական փոփոխությունները կատարվեն ողջամիտ ժամկետում՝ մինչև ընտրությունների օրը (1.3.5.կետ):

Ընտրական օրենսդրության կայունության մասին Եվրոպական հանձնաժողովի «Հանուն ժողովրդավարության՝ օրենքի միջոցով» (Վենետիկի հանձնաժողով) կողմից ընդունված ընտրական իրավունքի կայունության մասին Մեկնաբանական հայտարարությունում ընտրական օրենսդրության կայունության պահանջները հանգում են այն բանին, որ՝

1) բացառությամբ տեխնիկական հարցերը և կոնկրետ ասպեկտները կարգավորող նորմերի, որոնք կարող են ձևակերպվել ենթաօրենսդրական ակտերի, ընտրական իրավունքի նորմերի կամ հանրաքվեի մասին օրենսդրությունը կազմող նորմատիվ իրավական ակտերի տեսքով, պետք է ամրագրվեն առնվազն սովորական օրենքի տեսքով,

2) ընտրությունների մասին օրենսդրությունը չպետք է վերանայվի ընտրություններից առաջ կամ հանրաքվեի անցկացումից առաջ,

3) ընտրական օրենսդրության մեջ փոփոխություններ կատարելն արգելվում օպտիմալ ժամկետ է համարվում մինչև

ընտրությունների անցկացումը,

4) փոփոխություններ կատարելու սահմանափակումները վերաբերում են ոչ թե ընտրական օրենսդրությանն ընդհանրապես, այլ միայն այն հատվածին, որը վերաբերում է ընտրությունների մասին օրենքի հիմնարար տարրերին,

5) ընտրական օրենսդրության վերանայման սահմանափակման սկզբունքը գերակայող չէ վերը նշված Կանոնագրքերի սկզբունքների նկատմամբ, ուստի, այն պետք չէ վկայակոչել «ընտրությունների ոլորտում Եվրոպական ժառանգության չափանիշներին համապատասխանող իրավիճակը պահպանելու համար կամ միջազգային կազմակերպությունների կողմից առաջարկությունների կատարման հետ կապված խոչընդոտներ ստեղծելու դեպքում»³²:

Այսպիսով՝ նշված պահանջները դիտարկենք մանրամասն:

Ընտրական օրենսդրության նորմերն առնվազն սովորական օրենքի մակարդակով ամրագրելու առաջին պահանջը ժամանակակից ժողովրդավարական երկրներում այսօր շատ հաճախ հանգում է՝ Սահմանադրության մեջ ընտրական իրավունքի հիմնական սկզբունքները, ընտրական իրավունքի հիմունքները, ընտրական իրավահավասարության հիմքերը և ընտրական այլ ռեժիմի սկսման հիմնական հիմքերը կարգավորող նորմերի կամ նույնիսկ հատուկ կառուցվածքային մա-

³² Стабильность избирательного права. Интерпретирующая декларация, утвержденная на 15-м заседании Совета по демократическим выборам (Венеция, 15 декабря 2005 года) и на 65-й пленарной сессии Венецианской комиссии (Венеция, 16-17 декабря 2005 года). **CDL-AD(2005)043**. Источник: Основопологающие документы Венецианской комиссии в области избирательного права и политических партий. - Кишинев: Cudrag, 2016, էջ 45.

սի (գլուխների, բաժինների) առկայությանը, ընտրական իրավունքի սկզբունքների պարտադիր հռչակմանը, երբեմն ընտրությունների կազմակերպման և անցկացման համար պատասխանատու մարմինների կարգավիճակին և այլն: Նշված բնագավառում հայ իրականության արժանիքն ընտրական իրավունքի սկզբունքների (ՀՀ Սահմանադրության 2-րդ և 7-րդ հոդվածներ), սուբյեկտիվ ընտրական իրավունքների և հանրաքվեին մասնակցելու իրավունքի (ինչպես ակտիվ, այնպես էլ պասիվ ընտրական իրավունք) (ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդված) սահմանադրական ամրագրումն է, ինչպես նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանադրական կարգավիճակի ամրագրումը (194-195), որին բարեփոխված Սահմանադրության մեջ նվիրված է առանձին գլուխ (ՀՀ Սահմանադրության 11-րդ գլուխ). առանձին գլուխ նվիրված է նաև հանրաքվեի ինստիտուտին (ՀՀ Սահմանադրության 15-րդ գլուխ): Առանձին, ինչպես կարծում ենք, հարկ է նշել այն փաստը, որ 1999 թվականից Հայաստանում ընտրական օրենսդրությունը կողիֆիկացված է, ինչը հեշտացնում է դրա ըմբռնումն ու իրավակիրառումը: Ավելին՝ 2015 թվականի սահմանադրական բարեփոխումներից հետո ՀՀ սահմանադրությամբ մտցվեց նորմատիվ-իրավական ակտի նոր տեսակ, որը նախկինում տեղ չուներ երկրի իրավական համակարգում՝ այն է՝ սահմանադրական օրենքը: Ընդ որում՝ 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների հիման վրա ընդունված առաջին սահմանադրական օրենքը ՀՀ նոր Ընտրական օրենսգիրքն էր, որն ընդունվեց 2016 թվականի մայիսի 25-ին և ուժի մեջ մտավ 2016 թվականի հունիսի 1-ից³³:

³³ Հարկ է նկատել, որ ՀՀ ընտրական օրենսգրքի հետ մեկտեղ, ՀՀ

Այսպիսով՝ կարելի է արձանագրել, որ Հայաստանում ընտրական գործընթացների ժողովրդավարականության դիտարկվող չափանիշն ապահովված է շատ բարձր «պաշտպանված» մակարդակով:

Անդրադառնալով երկրորդ պահանջին, որ ընտրական օրենսդրությունը չպետք է փոփոխվի անմիջապես ընտրություններից առաջ, պետք է հատուկ ուշադրություն դարձնել այդ առաջարկությունների հոետորաբանությանը: Այսպես՝ Կանոնագրքում Վենետիկի հանձնաժողովն օգտագործում է՝ «պետք է արգելել» եզրույթը, մինչդեռ հանրաքվեների անցկացման ժամանակ առաջարկվող նորմերի Կանոնագրքում կիրառվում է՝ «չպետք է փոխել» բառակապակցությունը: Անվիճելի է պահանջն առ այն, որ ընտրական գործընթացների ժամանակ «խաղի կանոնների» ժամանակին սահմանելն ավելի խիստ պետք է լինի, քան հանրաքվեների ժամանակ: Եվ դա հասկանալի է՝ չէ՞ որ հանրաքվեի ճշգրիտ ժամկետները չափազանց հազվադեպ են հայտնի լինում նախապես:

Ժողովրդավարական սկզբունքների ոլորտում եվրոպական չափանիշները՝ որպես ընտրական օրենսդրության վերանայման սահմանափակման ժամկետ, սահմանում են ընտրությունների կամ հանրաքվեի անցկացումից մեկ տարի առաջ: Հայկական իրականությունը, դիտարկելով տվյալ չափանիշի պրիզմայով, ստիպված ենք լինում անել անմխիթար եզ-

Սահմանադրության 103-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, սահմանադրական են հանդիսանում նաև «Հանրաքվեի մասին» ՀՀ նոր օրենքը, ինչպես նաև սահմանադրական են հանդիսանում «Սահմանադրական դատարանի մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ», «Գուսակցությունների մասին», «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքները և ՀՀ դատական օրենսգիրքը:

րակացություններ:

Եթե ուսումնասիրենք ժամանակակից Հայաստանի ընտրական օրենսդրության զարգացման պատմությունը³⁴, ապա, հնարավոր կլինի առանձնացնել հետևյալ փուլերը՝

1. 1991թ. – ՀՀ անկախության ձեռքբերում, ՀՀ-ում առաջին ընտրական և հանրաքվեի մասին օրենքների ընդունում,

2. 1995թ. – ՀՀ սահմանադրության ընդունում և դրա հիման վրա առաջին ընտրական օրենքների ընդունում,

3. 1999թ. – ՀՀ ընտրական օրենսդրության առաջին կողմֆիկացումը,

4. 2005թ. – ՀՀ սահմանադրությունում առաջին փոփոխությունների կատարում,

5. 2011թ. – ՀՀ երկրորդ Ընտրական օրենսգրքի ընդունում,

6. 2015թ. – ՀՀ սահմանադրությունում երկրորդ փոփոխությունների կատարում և ՀՀ երրորդ Ընտրական օրենսգրքի ընդունում՝ 2016 թվականին սահմանադրական օրենք ընդունելու միջոցով, որն ուժի մեջ մտավ 01.06.2016թ.-ից:

ՀՀ սահմանադրության ընդունումից հետո կարելի է առանձնացնել ընտրական օրենսդրության զարգացման հետևյալ փուլերը՝ 1) 1995-1999թթ.; 2) 1999-2005թթ.; 3) 2005-2011թթ.; 4) 2011-2015թթ.; 4) 2015թ.-ից հետո:

Առաջին Ընտրական օրենսգիրքը (գործել է 28.02.1999թ.-ից մինչև 26.06.2011թ.) փոխվել է ընդհանուր առմամբ 15 ան-

³⁴ Դրա վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս՝ Акопян Л. Правовые регулирования институтов избирательного права в Армении с 1991 г. по 2016 г. // Развитие избирательных систем в Центральной и Восточной Европе с 1991 года. / Гл. ред. Жолт Солноки. Издатель: Ассоциация организаторов выборов стран Европы (АОВСЕ), Будапешт, 2016, с. 78-92.

գամ, իսկ երկրորդ Ընտրական օրենսգիրքը, որը գործել է 2011թ. հունիսի 26-ից մինչև 2016թ. հունիսի 1-ը (մինչև 01.09.2017թ. նշված օրենսգիրքը գործել է մասնակիորեն), փոխվել է 7 անգամ, ընդ որում, տպավորություն է ստեղծվում, որ ձևավորվել է ավանդույթ՝ ընտրական օրենսդրությունը փոխել յուրաքանչյուր համապետական ընտրություններից անմիջապես առաջ:

Ավելին՝ ՀՀ գործող Ընտրական օրենսգիրքը, որն ընդունվել է, կարծես թե, բոլորովին վերջերս՝ 2016 թվականի մայիսի 25-ին, և որի հիման վրա 2017 թվականի ապրիլին, 2018 թվականի դեկտեմբերին և 2021 թվականի հունիսին անցկացվել են լայնածավալ ընտրություններ, ուժի մեջ մտնելու պահից ի վեր՝ առաջին 6 ամիսների ընթացքում, դրանում երկու անգամ կատարվել են փոփոխություններ³⁵, որից հետո Ընտրական օրենսգիրքը փոփոխության է ենթարկվել ևս 9 անգամ, ընդ որում, Ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին սահմանադրական երկու օրենքները դեռևս ուժի մեջ չեն մտել: Հատկանշական է, որ նշված փոփոխություններից վերջին երեքն ընդգրկվել են Ընտրական օրենսգրքի մեջ 2021 թվականին:

Գործող Ընտրական օրենսգիրքը ենթարկվել է դրանում փոփոխություններ կատարելու տարբեր անհաջող փորձերի, ինչպես նաև՝ լայնածավալ փոփոխությունների՝ արդեն «թավշյա հեղափոխությունից» հետո: Մասնավորապես, 2018 թվականի դեկտեմբերի 9-ի արտահերթ խորհրդարանական

³⁵ Ընդ որում, փոփոխություններ կատարելու փորձերը երեքն էին, սակայն Փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 30.06.2016թ. N ՀՕ-120-Ն օրենքը չեղարկվել է:

ընտրություններից անմիջապես առաջ պատրաստվել էր ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ նախագիծ, որը խորհրդարանի կողմից հավանության չարժանացավ (հաշվի առնելով այդ պահին ՀՀ Ազգային ժողովում առկա քաղաքական ուժերի հարաբերակցությունը):

Այսպես, եթե հետևենք ընտրական օրենսդրության փոփոխությունների և անցկացված ընտրությունների ու հանրաքվեների ժամանակազրությանը, ՀՀ սահմանադրության ընդունման պահից մինչ օրս, կստացվի հետևյալ պատկերը՝

Ընտրություններ/ Հանրաքվե	Ընտրությունների/հանրաքվեի քվեարկության օր	Ընտրական օրենսդրության ընդունում կամ դրա վերանայում	Քվեարկության օրվա և օրենքի ուժի մեջ մտնելու օրվա միջև ընկած ժամանակահատվածը
Սահմանադրության ընդունման հանրաքվե	05.07.1995թ.	1991թ. «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքում կատարվել են փոփոխություններ, որոնք ընդունվել և ուժի մեջ են մտել 22.05.95 թ.:	1,5 ամիս
Ազգային ժողովի (ԱԺ) ընտրություններ	05.07.1995թ.	Օրենքն ընդունվել է 04.04.95թ., ուժի մեջ է մտել 05.04.95թ.	3 ամիս
ՀՀ նախագահի ընտրություններ	22.09.1996թ.	Օրենքն ընդունվել է 30.04.96թ., ուժի մեջ է մտել 04.06.96թ.	Մոտավորապես՝ 4 ամիս
ՀՀ նախագահի արտահերթ ընտրություններ	16.03.1998թ.	Օրենքում փոփոխություններ չեն կատարվել	

ԱԺ ընտրություններ	30.05.1999թ.	Օրենսգիրքն ընդունվել է 05.02.99թ., ուժի մեջ է մտել 28.02.99թ.	3 ամիս
ՀՀ նախագահի ընտրություններ	19.02.2003թ.	Օրենսգրքում կատարվել են փոփոխությ յուններ 03.07.02թ., փոփոխությունները ուժի մեջ են մտել 03.08.02թ.	Մոտավ որապես 6 ամիս
Սահմանադրակ ան հանրաքվե	25.05.2003թ.	«Հանրաքվեի մասին» 2001թ. ՀՀ օրենքում կատարվեցին փոփոխություններ, որոնք ընդունվեցին 31.03.03թ. և ուժի մեջ մտան 01.05.03թ.	24 օր
ԱԺ ընտրություններ	25.05.2003թ.	Օրենսգիրքը փոփոխվել է 03.07.02թ., փոփոխությունները ուժի մեջ են մտել 03.08.02թ.	Մոտավ որապես 10 ամիս
Սահմանադրակ ան հանրաքվե	27.11.2005թ.	«Հանրաքվեի մասին» 2001թ. ՀՀ օրենքում կատարվեցին փոփոխություններ, որոնք ընդունվեցին 28.09.05թ. և ուժի մեջ մտան 06.10.05թ., ընդ որում, ՀՀ ՀՕ-ը փոփոխության ենթարկվեց օրենքով, որն ընդունվեց 19.05.05թ. և ուժի մեջ մտավ 01.06.05թ.	Մոտավ որապես 2 ամիս և 6 ամիս
ԱԺ ընտրություններ	25.05.2007թ.	Օրենսգիրքը փոփոխվեց 22.12.06թ., փոփոխությունները ուժի մեջ են մտել 27.01.07թ., այնուհետև, 26.02.07թ. Օրենսգիրքը կրկին փոփոխվեց, իսկ 24.03.07թ. փոփոխությունները ուժի մեջ մտան	4 ամիս և 2 ամիս
ՀՀ նախագահի ընտրություններ	19.02.2008թ.	Օրենսգիրքը փոփոխվել է 16.11.07թ., փոփոխությունները ուժի մեջ են մտել 20.11.07թ., այնուհետև, 18.12.07թ. Օրենսգիրքը կրկին փոփոխվել է, իսկ 01.01.08թ. այդ փոփոխությունները մտել են ուժի մեջ	3 ամիս և մոտավո րապես 2 ամիս
ԱԺ ընտրություններ	06.05.2012թ.	Օրենսգիրքն ընդունվել է 26.05.11թ., ուժի մեջ է մտել 26.06.11թ.	Մոտավ որապես 10 ամիս
ՀՀ նախագահի ընտրություններ	18.02.2013թ.	Օրենսգիրքը փոփոխվել է 20.03.12թ., փոփոխությունները ուժի մեջ են մտել 01.06.12թ.	Մոտավ որապես 9 ամիս
Սահմանադրակ	06.12.2015թ.	«Հանրաքվեի մասին» 2001թ. ՀՀ	Մոտավ

ան հանրաքվե		օրենքում կատարվեցին փոփոխություններ, որոնք ընդունվեցին 10.06.15թ. և ուժի մեջ մտան 18.07.15թ., ընդ որում, ՀՀ լՕ-ը փոփոխվեց օրենքով, որն ընդունվեց 11.11.15թ. և ուժի մեջ մտավ 19.11.15թ.	որապես 5 ամիս և 17 օր
Աժ ընտրություններ	02.04.2017թ.	Օրենսգիրքն ընդունվել է 25.05.16թ., ուժի մեջ է մտել 01.06.17թ., ընդ որում, ՀՀ լՕ-ը փոփոխության է ենթարկվել օրենքներով, որոնք ընդունվել են 30.06.16թ. և 20.10.16թ., ուժի մեջ են մտել համապատասխանաբար 12.07.16թ. և 29.10.16թ.	Մոտավ որապես 5 ամիս (վերջին փոփոխ ությունն էր)
Աժ արտահերթ ընտրություններ	09.12.2018թ.	Օրենսգիրքը փոփոխվել է 04.05.18թ., փոփոխությունները ուժի մեջ են մտել 09.06.18թ., այնուհետև՝ 13.06.18թ. Օրենսգիրքը կրկին փոփոխության է ենթարկվել, իսկ 14.07.18թ. այդ փոփոխությունները մտել են ուժի մեջ	Մոտավ որապես 5 ամիս (վերջին փոփոխ ությունն էր)
Աժ արտահերթ ընտրություններ	20.06.2021թ.	Օրենսգիրքը փոփոխվել է 24.03.21թ., նշված փոփոխությունները դեռ ուժի մեջ չեն մտել, դրանից հետո Օրենսգիրքը փոփոխվել է 01.04.21թ., փոփոխությունները ուժի մեջ են մտել 27.04.21թ., այնուհետև՝ 07.05.21թ. Օրենսգիրքը կրկին փոփոխության է ենթարկվել, իսկ 26.06.21թ. այդ փոփոխությունները մասնակիորեն մտել են ուժի մեջ	Մոտավ որապես 2 ամիս (նախաձ երջին փոփոխ ությունն էրը, իսկ վերջին փոփոխ ությունն էրն ուժի մեջ են մտել քվեարկ ության օրվանի ց 6 օր հետո)

Վերը նշված աղյուսակի տվյալների վերլուծությունը վկայում է այն մասին, որ միայն 1998 թվականի արտահերթ նախագահական ընտրություններին նախորդող ժամանակահատվածում ՀՀ ընտրական օրենսգիրքը փոփոխությունների չի ենթարկվել կամ ընտրական օրենսդրության մեջ փոփոխություններ կատարելու փորձ չի արվել:

1.3. ՀՀ ընտրական օրենսդրության կայունության սկզբունքի պահպանման քաղաքական-իրավական նշանակությունը

Պետք է խոստովանել, որ ընտրական օրենսդրության մեջ կատարվող փոփոխությունների հիմքում ոչ միշտ է ընկած օբյեկտիվ անհրաժեշտությունն ու առավել ևս մտածված կոնցեպտուալ հիմքը: Դա է պատճառը, որ հաճախ կարելի է հանդիպել ընտրական օրենսդրության բնութագրերի, որոնցում վերջինս բնութագրվում է՝ որպես ամենաքաղաքականացվածներից մեկը: «Նույնիսկ երբ գիտակցված մանիպուլյացիայի նպատակ չի դրվում, տպավորություն է ստեղծվում, որ փոփոխությունները թելադրված են իշխանությունների կուսակցությունների քաղաքական անմիջական շահերով»³⁶ (65-րդ կետ): Հայաստանի Հանրապետությունը նույնպես այս ասպեկտում բացառություն չի հանդիսանում:

Ընտրությունների հաջողությունը կամ անհաջողությունը կարող են լրջորեն կանխորոշվել ընտրական օրենսդրության բովանդակությամբ, ընտրական գործընթացի յուրաքանչյուր փուլում սահմանադրաիրավական հարաբերությունների կարգավորմամբ: Ընտրական օրենսդրության անկայունությունը և քաղաքական կանխորոշումը հանգեցնում է նրան, որ քաղաքացիները կորցնում են վստահությունը ոչ միայն նրա, այլև հենց ընտրությունների, ինչպես նաև դրանց հիման վրա

³⁶ Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագիրք. Ղեկավար սկզբունքներ և բացատրական գեկույց՝ ընդունված Վենետիկի հանձնաժողովի կողմից 52-րդ նիստում (Վենետիկ, 2002 թվականի հոկտեմբերի 18-19), Ստրասբուրգ, 2002 թվականի հոկտեմբերի 30-ին, Եզրակացություն n° 190/2002 CDL-AD (2002) 23:

ձևավորված ներկայացուցչական մարմինների նկատմամբ³⁷:

Սակայն, հարկ է նշել, որ նախորդ պարագրաֆում ներկայացված աղյուսակում յուրաքանչյուր դեպքի մանրամասն քննարկման ժամանակ կարելի է արձանագրել, որ ձեռնարկված փոփոխություններն ուղղված են եղել նախորդ ընտրությունների և/կամ հանրաքվեների կազմակերպման և անցկացման շրջանակներում բացահայտված թերությունների շտկմանը, այդ թվում՝ հաշվի առնելով այն դիտողություններն ու դիրքորոշումները, որոնք արտացոլված են Հայաստանում իրականացված դիտորդական առաքելության շրջանակներում ներկայացված միջազգային կազմակերպությունների զեկույցներում:

Առաջին հայացքից, վերը նշված աղյուսակի տվյալների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ժողովրդավարական ընտրությունների և հանրաքվեի այնպիսի չափանիշ, ինչպիսին ընտրական օրենսդրության կայունությունն է, Հայաստանում ապահովված չէ: Սակայն, նման բան կարելի էր արձանագրել միայն այն դեպքում, եթե վերը նշված օրենսդրական փոփոխությունները վերաբերեին ընտրությունների մասին օրենքի «հիմնարար տարրերին» կամ հանրաքվեի մասին օրենսդրության «հիմնական դրույթներին»:

Այսպես՝ ավելի վաղ հիշատակված Կանոնագրքի «Բացատրական զեկույցում» առաջարկված նորմերի 64-66-րդ կետերում, անդրադառնալով ընտրությունների մասին օրենքների «հիմնարար տարրերին», ասվում է, որ. «գործնականում

³⁷ Шустров Д.Г., Малютин Н.С. Концепция корректировки российского конституционно-правового законодательства в вопросе регулирования протестных отношений / Под ред. к.ю.н. С.Н. Шевердяева М., Юридический факультет МГУ, НОЦ КИМС, 2013, с. 29.

պետք է պաշտպանել ոչ այնքան հիմնարար սկզբունքների կայունությունը ..., որքան ընտրական օրենսդրության որոշ կոնկրետ նորմերի կայունությունը, հատկապես այն նորմերի, որոնք կարգավորում են բուն ընտրական համակարգը, ընտրական հանձնաժողովների կազմը և ընտրական տեղամասերի սահմանների որոշումը»: Նշվում է նաև, որ. «մանիպուլյացիա թույլ չտալու եղանակներից մեկն էլ այն է, որ Սահմանադրությունում կամ սովորական օրենքից ավելի բարձր կարգավիճակ ունեցող փաստաթղթում, սահմանվեն առավել սկզբունքային տարրեր (ընտրական համակարգը, ընտրական հանձնաժողովների կազմը, ընտրատարածքների սահմանները կամ դրանց որոշման կարգը)»:

Այսպիսով՝ պետք է հասկանալ, թե արդյո՞ք փոփոխությունները, որոնք ընտրական օրենսդրության մեջ կատարվել են ընտրությունների անցկացումից ոչ շատ առաջ, վերաբերել են ընտրությունների մասին օրենքի վերը նշված «հիմնարար տարրերին»:

Այս մասին ասված է նաև մեր կողմից բերված ընտրական գործընթացների ժողովրդավարության վերջին չափանիշում, որը նշանակում է, որ անթույլատրելի է հղում կատարել ընտրական օրենսդրության վերանայման սահմանափակման սկզբունքի վրա՝ միաժամանակ պահպանելով միջազգային այլ չափանիշներին և ժողովրդավարական ընտրությունների չափորոշիչներին ակնհայտորեն հակասող իրավիճակը:

Սակայն, նույնիսկ այն դեպքում, երբ ընտրություններին նախաշեմին ընտրական օրենսդրության վերանայումը վերաբերում է հիմնական տարրերին, ապա, անգամ այդ դեպքում էլ, պետք է գնահատել նման փոփոխությունների անհրաժեշ-

տության աստիճանը, ընտրական օրենսդրության վերանայման որակական մակարդակը հենց ընտրական գործընթացների ժողովրդավարականության տեսանկյունից, այսինքն՝ այդ վերանայման ազդեցության հնարավորությունները նշված գործընթացների ժողովրդավարականության մակարդակի վրա: Այս տեսանկյունից առավել վառ օրինակ կարող է ծառայել 2015 թվականին Հայաստանի Հանրապետությունում անցկացված սահմանադրական հանրաքվեի հետ կապված իրավիճակը՝ հաշվի առնելով այն փաստը, որ ընտրական օրենսդրության փոփոխությունների և հանրաքվեի անցկացման օրվա միջև ընկած ժամանակահատվածը կազմել է 17 օր: Դիտարկվող դեպքում ընտրական օրենսդրությունը փոփոխվել է այն ժամանակ, երբ սահմանադրական հանրաքվեն արդեն նշանակված է եղել: Այսպես՝ 2015 թվականի դեկտեմբերի 6-ի սահմանադրական հանրաքվեն նշանակվել է ՀՀ նախագահի 08.10.2015թ. ՆՀ-754-Ն հրամանագրով, որն ուժի մեջ է մտել 09.10.2015թ., իսկ 11.11.2015թ. ընդունվել և 19.11.2015թ. (այսինքն՝ հանրաքվեի կազմակերպման և անցկացման ժամանակահատվածում՝ քվեարկության օրվանից 17 օր առաջ) ուժի մեջ է մտել «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որը որոշել է նույնականացման քարտի կիրառմամբ քվեարկությանը մասնակցելու ընտրողների իրավունքը, ինչպես նաև նման քվեարկության կարգը: Խնդիրն իրականում անհետաձգելի էր և խիստ արդիական. փոփոխությունների անհրաժեշտությունը պայմանավորված էր նրանով, որ 2012 թվականի հունիսի 1-ից ուժի մեջ էր մտել

«Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքը, որի 2-րդ հոդվածի համաձայն՝ նույնականացման քարտը ճանաչվում էր Հայաստանի Հանրապետության քաղաքացու ինքնությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը հավաստող փաստաթուղթ, մինչև 2014 թվականի հունվարի 1-ից հետո դադարեցվում է ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի N 821 որոշմամբ նախատեսված անձնագրերի (պայմանական անվանենք դրանք «հին» նմուշի անձնագրեր) տրամադրումը (փոխանակումը), բացառությամբ օենքով սահմանված դեպքերի: Օրենքի անցումային դրույթներով նաև սահմանված է, որ մինչև 01.01.2014թ. (իսկ օրենքով սահմանված դեպքերում նաև 01.01.2014թ.-ից հետո) տրված «հին» նմուշի անձնագրերը համարվում են վավեր մինչև դրանց վավերականության ժամկետի լրանալը: Մինչև անձնագրի վավերականության ժամկետի լրանալը՝ քաղաքացին իրավունք ունի ստանալ նաև նույնականացման քարտ: Քանի որ 2014 թվականի հունվարի 1-ից «հին» նմուշի անձնագրեր փաստացի չեին տրամադրվում, ՀՀ բազմաթիվ քաղաքացիներ արդեն չունեին «հին» նմուշի անձնագրեր, իսկ որպես անձը հաստատող փաստաթուղթ, սկսեցին կիրառվել միայն նույնականացման քարտերը:

06.12.2015թ. հանրաքվեի կազմակերպման և անցկացման պահին գործող ՀՀ ընտրական օրենսգիրքը նույնականացման քարտը չի դիտարկել որպես ընտրողի անձը հաստատող փաստաթուղթ (այն ժամանակ գործող ՀՀ ընտրական օրենսգրքի 64-րդ հոդվածի 3-րդ մասը): Նման կարգավորումը պահպանելիս ընտրական իրավունք և հանրաքվեին մաս-

նակցելու իրավունք ունեցող ՀՀ քաղաքացիների մի մասը կգրկվեին 2015 թվականի հանրաքվեին մասնակցելու հնարավորությունից՝ Ընտրական օրենսգրքի իմաստով անձը հաստատող փաստաթղթի բացակայության պատճառով: Ակնհայտ էր, որ քաղաքացին պետք է հնարավորություն ունենար իրացնելու հանրաքվեին մասնակցելու իր իրավունքը՝ քվեարկությանը մասնակցելու համար ներկայացնելով նույնականացման քարտ, քանի որ այն իրավիճակներում, երբ քաղաքացին չունի «հին» նմուշի անձնագիր, նա ուղղակի կգրկվեր հանրաքվեին մասնակցելու իրավունքից և ընտրական իրավունքից, եթե նրան հնարավորություն չտրվեր քվեարկելու նույնականացման քարտի միջոցով: Նման կարգավորումը կարող էր հանգեցնել հակասահմանադրական դրսևորումների, որոնցից խուսափելու համար էլ 2015 թվականի դեկտեմբերի 06-ի հանրաքվեին ընդառաջ ՀՀ ձեռնարկվեց ընտրական օրենսգրքի վերանայումը:

Այս հարցին անդրադարձել է նաև Վենետիկի հանձնաժողովը ՀՀ ընտրական օրենսդրության նախագծերին վերաբերող իր զեկույցներում: Մասնավորապես, 2016թ. ՀՀ ընտրական օրենսգրքի նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի համատեղ եզրակացության մեջ, մատնանշելով Կանոնագրքում նշված կայունության պահանջները, միաժամանակ ասվում է, որ պակաս կարևոր չէ բավարար ժամանակ ունենալ ընտրական օրենսդրության էական փոփոխությունների վերաբերյալ կոնսենսուսի հասնելու նպատակով մանրակրկիտ, համապարփակ և հանրային

քննարկման համար³⁸:

Նշվածը հաշվի առնելով՝ պետք է նշել, որ Ընտրական օրենսգրքում 2021 թվականին կատարված փոփոխություններն աննախադեպ էին: Խոսքը գնում է միայն այն փոփոխությունների մասին, որոնք արդեն ուժի մեջ էին մտել և կիրառվել էին 2021 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրությունների շրջանակներում:

Առաջին՝ ««Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքն (այսուհետ՝ նաև փոփոխությունների մասին օրենք) ընդունվել է 2021 թվականի ապրիլի 1-ին և ուժի մեջ է մտել 2021 թվականի ապրիլի 27-ին: Ինչպես երևում է, այդ փոփոխությունները կատարվել և ուժի մեջ են մտել քվեարկության օրվանից ընդամենը երկու ամիս առաջ:

Երկրորդ՝ բացի տեխնիկական բնույթի որոշ փոփոխություններից, նշված փոփոխությունների շրջանակներում վերանայվել է ընտրական համակարգը, ինչպես նաև մանդատների բաշխման կարգը՝ խորհրդարանական ընտրությունների ժամանակ:

³⁸ European Commission For Democracy Through Law (Venice Commission) and Osce Office For Democratic Situations And Human Rights (Osce/Odihr) Armenia Preliminary Joint Opinion On The Draft Electoral Code, as of 18 April 2016 (On the basis of comments by Mr Richard Barrett (Member, Ireland) Ms Paloma Biglino Campos (Substitute Member, Spain) Mr Evgeni Tanchev (Member, Bulgaria) Mr Kåre Vollan (Expert, Norway) Mr Vasil Vashchanka (Expert, OSCE/ODIHR) // Venice Commission Opinion No. 835/2016 OSCE/ODIHR Opinion No: ELE-ARM/286/2016 Strasbourg, Warsaw, 13 June 2016, CDL-AD(2016)019, § 18-19. Աղբյուրը՝ [http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI\(2016\)004-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI(2016)004-e).

Ինչպես ասվել է վերևում, Կանոնագրքի «Բացատրական գեկույցում» առաջարկված 64-66-րդ կետերում անդրադարձ է կատարվել ընտրությունների օրենքների «հիմնական տարրերի» հարցին, ասվել է, որ պետք է ապահովել «ընտրական օրենսդրության որոշ կոնկրետ նորմերի կայունությունը, հատկապես այն նորմերի, որոնք կարգավորում են *բուն ընտրական համակարգը, ընտրական հանձնաժողովների կազմը և ընտրական տեղամասերի սահմանների որոշումը*»:

Փոփոխությունների մասին օրենքի նորմերի իրավական կարգավորման վերլուծությունը թույլ են տալիս եզրակացնել, որ Ընտրական օրենսգրքում կատարված այդ փոփոխությունները վերաբերել են հենց «հիմնական տարրին»՝ ընտրական համակարգին: Եվ չնայած Ընտրական օրենսգրքի փոփոխությունների արդյունքում խորհրդարանական ընտրությունների ժամանակ պահպանվել է համամասնական ընտրակարգը, սակայն, վերացվել է տարածքային ցուցակների բաղադրիչը, որոնք ավելի վաղ ներկայացվել էին կուսակցությունների և դաշինքների կողմից՝ գրանցվելու համար ներկայացված համազգային ցուցակի հետ միասին: Այս հարցին անդրադարձել է նաև Վենետիկի հանձնաժողովը՝ ՀՀ ընտրական օրենսգրքի և առնչվող օրենսդրության փոփոխությունների վերաբերյալ Համատեղ հրատապ կարծիքում (այսուհետ՝ նաև 2021 թվականի համատեղ կարծիք)³⁹: Համատեղ կարծիքը շատ իրարա-

³⁹ Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողով (Վենետիկի հանձնաժողով) Հայաստանի ընտրական օրենսգրքի և առնչվող օրենսդրության փոփոխությունների վերաբերյալ համատեղ հրատապ կարծիք. Կարծիք թիվ 1026/2021, ԺՀՄԻԳ Կարծիք թիվ ELE-ARM/409/2021, CDL-PI(2021)006, Ստրասբուրգ, Վարչակազմ, 2021 թվականի ապրիլի 21:

մերժ էր: Մի կողմից՝ Վենետիկի հանձնաժողովը հիշեցնում է ընտրական օրենսդրության կայունությանը ներկայացվող հիմնական պահանջները, մյուս կողմից՝ փորձ է արվում «արդարացնել» Ընտրական օրենսգրքում նման «հրատապ» փոփոխություններ կատարելու քաղաքական իշխանության գործողությունները:

2021 թվականի ապրիլի 1-ի Փոփոխությունների մասին օրենքը, գնահատելով ընտրական օրենսդրության կայունության սկզբունքի տեսանկյունից, Վենետիկի հանձնաժողովն արձանագրել է, որ Փոփոխությունների մասին օրենքն ընդունվել է 2021 թվականի ապրիլի 1-ին, որի շրջանակներում վերացվել են «մեծամասնական թեկնածուների ընտրացուցակները»: Նշվում է նաև, որ նախագիծն ընդունվել է 82 կողմ ձայներով՝ առանց դեմ և ձեռնպահ ձայների, ընդ որում, նշվում է, որ ընդդիմադիր խմբակցությունների պատգամավորները քվեարկությանը չեն մասնակցել: Քննարկվող օրենքի ստորագրման հարցում ամենահետաքրքիրը Հանրապետության նախագահի մոտեցումն էր: Նախագահը նախապես հայտարարել է, որ չի պատրաստվում ստորագրել այդ օրենքը, սակայն չի էլ պատրաստվում դիմել Սահմանադրական դատարան՝ դրա սահմանադրականությունը ստուգելու համար: Պետության ղեկավարի նման դիրքորոշման արդյունքում՝ օրենքի ստորագրման համար սահմանադրորեն սահմանված ժամկետը լրանալուց հետո, օրենքը ստորագրվեց Ազգային ժողովի նախագահի կողմից: Այս կարծիքի մեջ Վենետիկի հանձնաժողովը վկայակոչում է Կանոնագիրքը և Վենետիկի հանձնաժողովի ընտրական օրենսդրության կայունության

վերաբերյալ Մեկնաբանական հայտարարությունը⁴⁰՝ նշելով, որ այս ակտերն ընդգծում են իրավական ընտրական դաշտի կայունության կարևորությունը՝ որպես ցանկացած ընտրական գործընթացի հուսալիության մաս (2021 թվականի Համատեղ կարծիքի 9-րդ կետ)⁴¹: Այնտեղ նաև խոսվում է այն մասին, որ եթե ընտրական օրենսդրության հիմնարար տարրերում փոփոխություններ են մտցվում (օրինակ՝ բուն ընտրական համակարգում, ընտրական հանձնաժողովների կամ ընտրությունները կազմակերպող այլ մարմինների կազմավորմանը վերաբերող կանոններում, ընտրատարածքների սահմաններում և ընտրական տեղամասերը բաշխելու մասին և այլն), դրանք պետք է տեղի ունենան հաջորդ ընտրություններից շատ ավելի շուտ՝ առնվազն մեկ տարի առաջ: Եթե արտահերթ ընտրությունները նշանակվում են ընտրական համակարգում փոփոխություններ կատարելուց հետո, ապա այդ համակարգը պետք է կիրառվի փոփոխություններն ընդունելուց առնվազն մեկ տարի հետո⁴²: Հաճախակի փոփոխությունները խաթարում են ընտրական գործընթացների նկատմամբ վստահությունը:

Ընդ որում՝ 2021 թվականի Համատեղ կարծիքում ասվում է, որ «փոփոխությունները կարող են ընդունելի լինել, եթե

⁴⁰ Code of good practice in electoral matters, II.2.b; Interpretative declaration on the stability of electoral law.

⁴¹ [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI\(2021\)006-arm](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI(2021)006-arm)

⁴² Code of good practice in electoral matters; Interpretative declaration on the stability of electoral law; Joint opinion on the draft laws on amending and completing certain legislative acts (electoral system for the election of the Parliament) of the Republic of Moldova, կետ12: CDL-PI(2021)006

դրանք ավելի շուտ տեխնիկական, քան բովանդակային բնույթի են և հիմնված են հիմնավորված փորձագիտական առաջարկությունների վրա»։ 2021 թվականի Համատեղ կարծիքի 10-րդ կետում Վենետիկի հանձնաժողովը ընդգծեց, որ Կանոնագրքում ամրագրված վերապահումները և բովանդակային փոփոխությունների վերաբերյալ Ընտրական օրենսդրության կայունության վերաբերյալ Մեկնաբանական հայտարարությունը պակաս կարևոր են, եթե փոփոխությունների վերաբերյալ քաղաքական ուժերի միջև առկա է փոխըմբռնում⁴³։ Նման ուշ փուլի փոփոխությունները ենթադրում են նաև, որ դրանք ընտրությունները կազմակերպող մարմիններին և քաղաքական շահագրգիռ կողմերին՝ ընտրությունները պատշաճ կերպով կազմակերպելու և քաղաքացիներին՝ այդպիսի բարեփոխման արդյունքները հասկանալու համար ողջամիտ ժամանակ են թողնում։ Նշված էր, որ Ընտրական օրենսգրքի փոփոխությունները կպարզեցնեն ընտրական համակարգը։ Նաև նշվել էր, որ. «Թեև տարածքային թեկնածուների ցուցակների վերացումը սկզբունքորեն չի փոխում ընտրական համակարգը, այդուհանդերձ, աշխարհագրական ներկայացուցչության առումով, պաշտոնապես փոխվում է ձայները մանդատների վերաձելու ճանապարհը»։ Վենետիկի հանձնաժողովը ընդունում է, որ այս իմաստով, տարածքային թեկնածուների ցուցակների վերացումը ենթադրում է ընտրություններից անմիջապես առաջ «ընտրական համակարգի հիմնարար տարրի

⁴³ Code of good practice in electoral matters; Interpretative declaration on the stability of electoral law; Joint opinion on the draft laws on amending and completing certain legislative acts (electoral system for the election of the Parliament) of the Republic of Moldova, կետ12: CDL-PI(2021)006, 12.

փոփոխություն», միաժամանակ, արդարացնելով նման մոտեցումը՝ նշում է, որ. «ընտրական համակարգի պարզեցումը, ըստ ամենայնի, լայն աջակցություն է ստացել քաղաքական ուժերի և քաղաքացիական հասարակության մեծ մասի կողմից», և հետագայում հույս է հայտնում, որ նման փոփոխությունը չպետք է դժվարություններ ստեղծի ընտրությունները պատշաճ կազմակերպելու համար և՛ քաղաքացիների, և՛ ընտրական գործընթացի այլ շահագրգիռ սուբյեկտների համար ընկալելի լինելու տեսանկյունից:

Այսպիսի «արդարացումը» դժվար թե կարելի է դնել այնպիսի գլոբալ, նշանակալի և էական փոփոխությունների հիմնավորման հիմքում, որոնք ընտրական օրենսդրության մեջ կատարվում են անմիջապես ընտրություններից առաջ: Մեր կարծիքով, հենց Փոփոխությունների մասին օրենքի շրջանակներում դրվեց խիստ արատավոր պրակտիկա: Այսպես՝ այս պրակտիկայի շրջանակներում խորհրդարանում մեծամասնություն ունեցող քաղաքական կուսակցությունը կարող է իրեն թույլ տալ առանց այլ քաղաքական ուժերի մասնակցության, առանց հաշվի առնելու քաղաքացիական հասարակության կարծիքը, ընտրական օրենսդրությունը փոխել հոգուտ իրեն: Մյուս կողմից, ընտրական գործընթացներին, ինչպես նաև ընտրական օրենսդրության փոփոխության գործընթացներին մասնակից ընդդիմադիր կուսակցությունները, պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք կարող են բացարձակ անպատասխանատու դիրքորոշում որդեգրել՝ հրաժարվելով այդ գործընթացներից, այն, ինչ տեղի է ունեցել Փոփոխությունների մասին օրենքի ընդունման շրջանակներում:

Ընտրական օրենսդրության կայունության վերաբերյալ այս մոտեցումը համարում ենք խիստ վտանգավոր, որը կարող է հանգեցնել անդառնալի բացասական հետևանքների: Չնայած Փոփոխությունների մասին օրենքի շրջանակներում իսկապես պարզեցվել է խորհրդարանական ընտրությունների ժամանակ կիրառվող ընտրական համակարգը, այնուամենայնիվ, էական, հիմնարար տարրերի ցանկացած փոփոխություն ենթադրում է նոր, նախկինում չնախատեսված միջոցների ընդունում, նույնիսկ, եթե դրանք ուղղված են պարզեցմանը (օրինակ, «Ընտրություններ» ավտոմատացված համակարգի ծրագրային ապահովման շտկումները, ընտրական հանձնաժողովների նոր նմուշի արձանագրությունների հաստատումը, նոր նմուշի քվեաթերթիկների հաստատումը և նախապատրաստումը և այլն):

Եվ այսպես՝ ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է եզրակացնել, որ միջազգային հանրության կողմից մշակված ժողովրդավարական ընտրությունների չափանիշները հանդիսանում են համամարդկային ժառանգություն և, անկասկած, պետք է պահպանվեն: Միաժամանակ, անթույլատրելի է վերը նշված չափանիշների ապահովման պատրվակով այնպիսի իրավիճակների ստեղծումը, երբ առկա օրենսդրական կարգավորումը կարող է խեղաթյուրել հիմնարար իրավունքների կամ հենց ժողովրդավարական ինստիտուտների իմաստն ու բովանդակությունը: Սակայն, միևնույն ժամանակ, բոլորովին անընդունելի է ընտրական օրենսդրության հաճախակի և ոչ ժամանակին փոփոխությունների արդարացումը՝ քաղաքական ուժերի միջև կոնսենսուսի առկայությամբ: Նման «հիմնա-

վորմամբ» կարելի է հեշտությամբ շրջանցել ժողովրդավարական ընտրությունների ցանկացած միջազգային չափանիշ: Հենց դրանով է, մեր կարծիքով, վտանգավոր Հայաստանում արմատավորված վերևում ներկայացված «ոչ օգտակար» փորձը: Հարկ ենք համարում ընդգծել, որ ընտրական օրենսդրության կայունության միջազգային փաստաթղթերով առաջարկված երաշխիքներն ուղղված են բացառապես ընտրական օրենսդրության չմտածված փոփոխությունների դեմ, որոնք ուղղված են քաղաքական իշխանության պահպանմանը կամ իշխանության մեջ գտնվող քաղաքական ուժերի (այդ թվում՝ ընդդիմադիր) նեղ կուսակցական կարճաժամկետ շահերի սպասարկմանը:

ԳԼՈՒԽ 2.

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

2.1. Նախընտրական քարոզչության և ընտրությունների ֆինանսավորման իրավական կարգավորման միջազգային և արտասահմանյան փորձը

Նախընտրական քարոզչությունը և ընտրությունների ֆինանսավորումն առանցքային դեր են խաղում ընտրական գործընթացներում և հաճախ կանխորոշում են ընտրությունների ելքը: Այդ երկու ինստիտուտների վերաբերյալ առավել խորը և համապարփակ պատկերացում կազմելու համար սույն ուսումնասիրության շրջանակներում կքննարկենք դրանց միջազգային իրավական կարգավորումները և արտասահմանյան երկրների փորձը:

Կատարված ուսումնասիրության արդյունքում նախընտրական քարոզչության համար կարող ենք տալ հետևյալը ընդհանրական բնորոշումը՝ ընտրարշավի ընթացքում իրականացվող գործունեությունն է, որի նպատակն է համոզել ընտրողներին՝ քվեարկել որոշակի թեկնածուի, թեկնածուների ցուցակների, կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի օգտին կամ նրանց դեմ:

Ժամանակային առումով տարբեր երկրներում նախընտրական քարոզչության մեկնարկը տրվում է տարբեր կերպ: Մի դեպքում այն մեկնարկում է ընտրությունների օրվանից օրեն-

քով սահմանված որոշակի քանակի օր առաջ, մեկ այլ դեպքում՝ թեկնածուների գրանցման օրվանից, երրորդ դեպքում՝ ցուցակների պաշտոնական հրապարակման օրվանից, չորրորդ դեպքում՝ ընտրությունների օրվա պաշտոնական հրապարակման օրվանից և այլն: Գործնականում, զրեթե ամենուր, օրենսդրությունը նախատեսում է նախընտրական քարոզչության ավարտ՝ քվեարկության օրվանից մեկ օր (հազվադեպ դեպքերում երկու օր) առաջ, ինչը հիմնավորվում է նրանով, որ ընտրողները պետք է հանգիստ, առանց ավելորդ ճնշման հնարավորություն ունենան քվեարկության նախօրյակին կայացնելու իրենց որոշումը:

Ընտրական իրավունքի միջազգային իրավական ամրագրումներից, նախ, անդրադառնանք Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին⁴⁴, որի 21-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի անմիջականորեն կամ ազատ ընտրված ներկայացուցիչների միջոցով մասնակցելու իր երկրի կառավարմանը:

Հռչակագրի նույն հոդվածի 3-րդ մասում նշվում է, որ ժողովրդի կամքը պետք է լինի կառավարության իշխանության հիմքը: Այդ կամքն իր արտահայտությունը պիտի գտնի պարբերական և չկեղծված ընտրություններում, որոնք պետք է անցկացվեն համընդհանուր և հավասար ընտրական իրավունքի պայմաններում, փակ քվեարկության և/կամ քվեարկության ազատությունն ապահովող այլ հավասարաթեք ձևերի միջոցով:

Միջազգային մակարդակում յուրաքանչյուր քաղաքացու

⁴⁴ Ընդունվել է Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր Ասամբլեայի կողմից 1948 թվականի դեկտեմբերի 10-ին:

ընտրական իրավունքի հետագա ամրագրումը տեղի ունեցավ 1966 թվականին, երբ ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան դեկտեմբերի 16-ին ընդունեց Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը: Դաշնագրի 25-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր քաղաքացի, առանց որևէ խտրականության և առանց անհիմն սահմանափակումների, պետք է իրավունք և հնարավորություն ունենա.

ա/ մասնակցելու պետական գործերը վարելուն՝ ինչպես անմիջականորեն, այնպես էլ ազատորեն ընտրված ներկայացուցիչների միջոցով.

բ/ քվեարկել և ընտրվել իսկական պարբերական ընտրություններում, որոնք անց են կացվում համընդհանուր և հավասար ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ, և ապահովում են ընտրողների կամքի ազատ արտահայտումը. (...):

Ընտրությունների առնչությամբ ծագող հարաբերությունները կարգավորող միջազգային կարևորագույն փաստաթղթերից է՝ Անկախ պետությունների համագործակցության շրջանակներում ընդունված՝ Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետություններում ժողովրդավարական ընտրությունների, ընտրական իրավունքների և ազատությունների չափանիշների մասին կոնվենցիան⁴⁵: Այս Կոնվենցիայի 13-րդ հոդվածը, որն ունի «Ընտրությունների և քարոզչական գործունեության պետական տեղեկատվական աջակցությունը» վերտառությունը, առաջին մասում պարտավորեցնում է կողմերին՝ ապահովել ընտրությունների, թեկնա-

⁴⁵ ԱՊՀ անդամ պետությունների կողմից ընդունվել է 2002 թվականի հոկտեմբերի 7-ին, Քիշնևում:

ծուների վերաբերյալ տեղեկատվության որոնման, հավաքման, տարածման ազատություն, զանգվածային լրատվության և հեռահաղորդակցման միջոցներով ընտրությունների անկողմնակալ տեղեկատվական լուսաբանում:

Զանգվածային լրատվության և հեռահաղորդակցման միջոցները կոչված են՝ բնակչությանը տեղեկացնելու ընտրությունների, թեկնածուների (թեկնածուների ցուցակների) առաջադրման, նրանց նախընտրական ծրագրերի (պլատֆորմների) մասին, ընտրարշավի ընթացքի, քվեարկության և ընտրությունների արդյունքների մասին, իրականացնելու իրենց գործունեությունը Սահմանադրության, օրենքների, պետության միջազգային պարտավորությունների շրջանակներում:

Կոնվենցիան սահմանում է նաև, որ օրենսդրությանը համապատասխան՝ զանգվածային լրատվության և հեռահաղորդակցման միջոցների ներկայացուցիչներն իրավունք ունեն (...).

ներկա գտնվելու հրապարակային քարոզչական միջոցառումներին, լուսաբանելու դրանց անցկացման ընթացքը զանգվածային լրատվության միջոցներով (13-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետ):

Առանց խոչընդոտների նախընտրական քարոզչության կազմակերպման և անցկացման համար կարևոր նորմերաշխիք է պարունակում նույն հոդվածի 4-րդ մասը, համաձայն որի՝ քաղաքացիներին, թեկնածուներին, թեկնածուներ և (կամ) թեկնածուների ցուցակներ առաջադրած քաղաքական կուսակցություններին (դաշինքներին), այլ հասարակական միավորումներին, հասարակական կազմակերպություններին երաշխավորվում է օրենքով թույլատրելի ցանկացած ձևով և օ-

րինական մեթոդով քարոզչական գործունեության անցկացման ազատություն՝ օրենքներով նախատեսված կարգով և ժամկետներում, բազմակարծության, գրաքննության բացակայության պայմաններում:

Ընտրություններին մասնակցող բոլոր թեկնածուների, քաղաքական կուսակցությունների (դաշինքների) համար, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, պետք է ապահովվի զանգվածային լրատվության և հեռահաղորդակցման միջոցներով իրենց նախընտրական քարոզչությունն անցկացնելու, ինչպես նաև իրենց նախընտրական ծրագրերի (պլատֆորմների) դրույթները շարադրելու հնարավորության հավասար պայմաններ:

Քարոզչական գործունեություն իրականացնելու ժամանակ չի թույլատրվում խոսքի ազատության և զանգվածային լրատվության միջոցների ազատության չարաշահում, այդ թվում՝ իշխանությունը բռնի զավթելու, սահմանադրական կարգը բռնի փոխելու և պետության տարածքային ամբողջականությունը խախտելու կոչեր, պատերազմի, ահաբեկչության, ռասայական, ազգային, էթնիկական, կրոնականատելություն և թշնամանք հրահրող կոչեր (13-րդ հոդվածի 5-6-րդ մասեր):

Միևնույն ժամանակ՝ Կոնվենցիան թեկնածուների, քաղաքական կուսակցությունների (դաշինքների) կողմից քարոզչության անցկացման պայմանների և կարգի խախտումների ցանկը, ինչպես նաև ընտրարշավի լուսաբանմանը զանգվածային լրատվության միջոցների այնպիսի մասնակցությունը, որը հիմք կհանդիսանա պատասխանատվության առաջացման համար, թողնում է անդամ - պետությունների ազգային օ-

ընտրությունների կարգավորմանը:

Ինչ վերաբերում է ընտրությունների ֆինանսավորմանը, ապա, Կոնվենցիայի 12-րդ հոդվածը դրույթներ է պարունակում ընտրությունների և թեկնածուների, քաղաքական կուսակցությունների (դաշինքների) ընտրարշավի ֆինանսավորման վերաբերյալ: Մասնավորապես, Կոնվենցիան սահմանում է, որ ընտրությունների հետ կապված միջոցառումների ֆինանսավորումը կատարվում է պետական բյուջեի միջոցների հաշվին: Պետությունները Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված դեպքերում և կարգով ապահովում են բյուջետային միջոցների հատկացումներ ընտրություններին մասնակցող թեկնածուներին, քաղաքական կուսակցություններին (դաշինքներին)` արդար պայմաններով, ինչպես նաև ընտրական մարմինն կից արտաբյուջետային հիմնադրամի կազմավորման կամ ընտրարշավի ֆինանսավորման համար սեփական նախընտրական հիմնադրամի ձևավորման և այդ նպատակով օրենքով նախատեսված չափով և կարգով անձնական միջոցների, ֆիզիկական և (կամ) ազգային իրավաբանական անձանց կամավոր մուծումների օգտագործման հնարավորություն: Թեկնածուների, քաղաքական կուսակցությունների (դաշինքների) կողմից այլ դրամական միջոցների օգտագործումը, բացառությամբ, նշված հիմնադրամներում մուտքագրվածներից, պետք է արգելվի օրենքով և առաջացնի պատասխանատվություն` օրենքներին համապատասխան:

Չի թույլատրվում օտարերկրյա որևէ նվիրաբերություն, այդ թվում` օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից, ընտրություններին մասնակցող թեկնածուներին, քաղաքական կուսակցություններին (դաշինքներին) կամ

այլ հասարակական միավորումներին, հասարակական կազմակերպություններին, որոնք ուղղակի կամ անուղղակի կամ այլ կերպ առնչվում են թեկնածուի, քաղաքական կուսակցության (դաշինքի) հետ կամ գտնվում են նրանց անմիջական ազդեցության կամ հսկողության տակ և նպաստում կամ աջակցում են քաղաքական կուսակցությունների (դաշինքների) նպատակների իրականացմանը:

Բացի այդ՝ Կոնվենցիան պարտավորեցնում է, որ ԱՊՀ անդամ պետություններն ապահովեն ընտրություններին մասնակցող թեկնածուներին, քաղաքական կուսակցություններին (դաշինքներին) նվիրաբերված բոլոր դրամական միջոցների հրապարակայնությունը և թափանցիկությունը, որպեսզի բացառվեն օրենսդրությամբ արգելված նվիրատվությունները ինչպես թեկնածուներին, այնպես էլ ընտրություններին թեկնածուներ (թեկնածուների ցուցակներ) առաջադրած քաղաքական կուսակցություններին (դաշինքներին):

Ընտրություններին մասնակցող թեկնածուները, քաղաքական կուսակցությունները (դաշինքները) օրենքով սահմանված պարբերականությամբ պետք է ընտրական մարմիններ և (կամ) օրենքում նշված այլ մարմիններ ներկայացնեն տեղեկություններ և հաշվետվություններ՝ իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված նվիրաբերությունների, համապատասխան միջոցներ ներդրողների վերաբերյալ, ինչպես նաև ընտրարշավի ֆինանսավորման համար այդ հիմնադրամներից կատարած իրենց բոլոր ծախսերի վերաբերյալ: Ընտրական մարմիններն ապահովում են նշված տեղեկությունների և հաշվետվությունների հրապարակումը՝ օրենքներում նշված զանգվածային լրատվության և հեռահաղորդակց-

ման միջոցներով (12-րդ հոդվածի 5-րդ մաս):

Թեկնածուների, քաղաքական կուսակցությունների (դաշինքների) ընտրարշավի ֆինանսավորման կանոնների և կարգի հսկողության կամ վերահսկողության իրականացման համար կարող է ստեղծվել հատուկ մարմին (մարմիններ), կամ համապատասխան լիազորությունները կարող են դրվել պաշտոնատար անձանց կամ ընտրական մարմինների վրա:

Ինչպես նախընտրական քարոզչության խախտումների, այնպես էլ ընտրությունների ֆինանսավորման խախտումների, թեկնածուների, քաղաքական կուսակցությունների (դաշինքների) ընտրարշավի և ընտրությունների ֆինանսավորման խախտումների դեպքում նախազգուշացման, կանխման կամ խափանման միջոցների սահմանումը Կոնվենցիայով թողնված է անդամ պետությունների ազգային օրենսդրություններին (12-րդ հոդվածի 7-րդ մաս):

Իր հերթին, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիային⁴⁶ կից 1-ին Արձանագրության⁴⁷ 3-րդ հոդվածը, որը կրում է «Ազատ ընտրությունների իրավունք» վերտառությունը, սահմանում է. «Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են անցկացնել ազատ ընտրություններ՝ ողջամիտ պարբերականությամբ, գաղտնի քվեարկությամբ, այնպիսի պայմաններում, որոնք կապահովեն ժողովրդի կամքի ազատ արտահայտումն օրենսդիր իշխանություն ընտրելիս»: Ժամանակի ընթացքում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, մեկնաբա-

⁴⁶ Ստորագրվել է 1950 թվականի նոյեմբերի 4-ին, Հռոմում: Հայաստանի Հանրապետությունը կոնվենցիան վավերացրել է 2002 թվականի ապրիլի 26-ին:

⁴⁷ Ստորագրվել է 1952 թվականի մարտի 20-ին, Փարիզում:

նելով նշված Կոնվենցիան, նշել է, որ խնդրո առարկա հոդվածն իր մեջ ներառում է նաև նախընտրական քարոզչությունը:

Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի վերաբերյալ մի քանի գործով արդեն Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդգծել է ազատ ընտրությունների և արտահայտվելու ազատության միջև սերտ կապը: Դատարանը գտել է, որ այս երկու իրավունքները, հատկապես, քաղաքական բանավեճերի ազատությունը, միասին ժողովրդավարական հասարակության հիմքն են: Երկու իրավունքները փոխկապակցված են և ամրապնդում են միմյանց: Օրինակ, ինչպես նախկինում նշել է Դատարանը, խոսքի ազատությունը ծառայում է որպես անհրաժեշտ «պայմաններից» մեկը «օրենսդիր իշխանություն ընտրելիս ժողովրդի կարծիքի արտահայտման ազատությունն ապահովելու համար»: Այդ իսկ պատճառով, հատկապես, կարևոր է, որ ցանկացած կարծիք կամ տեղեկություն հնարավորություն ունենա ազատորեն շրջանառվելու ընտրություններին նախորդող ժամանակահատվածում (*Bowman v. the United Kingdom*, 1998, § 42):

Մեկ այլ գործով (*Uspaskich v. Lithuania*) դիմումատուն, ով քաղաքական գործիչ էր, գանգատվում էր, որ իր տնային կալանքը (քաղաքական կոռուպցիայի հիման վրա իրականացվող քրեական վարույթի շրջանակներում) խոչընդոտել է իրեն այլ թեկնածուների համեմատ հավասար պայմաններում խորհրդարանական ընտրություններին մասնակցելուն: 1-ին Արձանագրության 3-րդ հոդվածի խախտում չարձանագրելով՝ Դատարանը, մասնավորապես, նշել էր, որ նա ցանկության դեպքում կարող էր իր նախընտրական քարոզարշավը կազ-

մակերպել տանից: Հաշվի առնելով, որ նա ճանաչված քաղաքական գործիչ էր և նրա կուսակիցները անձամբ մասնակցել էին ընտրողների հետ հանդիպումներին՝ տնային կալանքը չէր խոչընդոտել դիմումատուի ընտրություններին մասնակցելուն այն աստիճան, որպեսզի ազդեր վերջնական արդյունքների վրա: Ավելին՝ ներպետական օրենսդրությունը ընտրական վեճերի առնչությամբ անհատական գանգատների համակարգ էր նախատեսում, ինչից դիմումատուն օգտվել էր⁴⁸:

Ընտրական գործընթացների պատշաճ կանոնակարգմանն ուղղված կարևոր փաստաթղթեր է ընդունել նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն (այսուհետ՝ Նախարարների կոմիտե): Մասնավորապես, Զանգվածային լրատվամիջոցների կողմից նախընտրական քարոզարշավի լուսաբանման միջոցների վերաբերյալ Rec(2007)15 հանձնարարականում⁴⁹, Նախարարների կոմիտեն առաջարկում է, որ անդամ երկրների կառավարությունները, եթե դեռ չեն արել, ուսումնասիրեն ուղիները՝ ապահովելու հարգանքը հանձնարարականում նշված սկզբունքների նկատմամբ՝ կապված զանգվածային լրատվամիջոցներում նախընտրական քարոզարշավների լուսաբանման հետ, և, անհրաժեշտության դեպքում, համապատասխան միջոցներ ձեռնարկեն այդ սկզբունքներն իրենց օրենսդրությունում կամ պրակտիկայում իմպլե-

⁴⁸ Նախընտրական քարոզչության հետ կապված՝ տես նաև *TV Vest AS and Rogaland Pensjonistparti v. Norway*, *Vitrenko and Others v. Ukraine*, *Partija "Jaunie Demokrāti" and Partija "Mūsu Zeme" v. Latvia*, *Communist Party of Russia and Others v. Russia*, *Abdalov and Others v. Azerbaijan*, *Oran v. Turkey* վճիռները և այլն:

⁴⁹[https://www.ebu.ch/files/live/sites/ebu/files/Publications/Reference_Texts/CoE%20-%20Media%20Freedom%20and%20Pluralism/REF%20COE-CM-Rec\(2007\)15.pdf](https://www.ebu.ch/files/live/sites/ebu/files/Publications/Reference_Texts/CoE%20-%20Media%20Freedom%20and%20Pluralism/REF%20COE-CM-Rec(2007)15.pdf)

մենտացնելու համար և սահմանադրական իրավունքին համապատասխան:

Սույն թվականի օգոստոսի 19-23-ը տեղի է ունեցել նաև Նախարարների կոմիտեի Ընտրական հաղորդակցության և զանգվածային լրատվամիջոցներով նախընտրական քարոզչության լուսաբանման մասին հանձնարարականի նախագծի⁵⁰ հանրային քննարկումը, որն առաջիկայում հավանության կարժանանա Նախարարների կոմիտեի կողմից:

Նախարարների կոմիտեի մեկ այլ հանձնարարական էլ նվիրված է ընտրությունների ֆինանսավորման առնչությամբ ծագող հարաբերությունների կանոնակարգմանը: Նախարարների կոմիտեի՝ Քաղաքական կուսակցությունների և ընտրարշավների ֆինանսավորման մեջ կոռուպցիայի դեմ պայքարի ընդհանուր կանոնների մասին Rec(2003)4 հանձնարարականին⁵¹ կից հավելվածում կարևոր սկզբունքներ են ամրագրվում ընտրական գործընթացներում թափանցիկության ապահովման և կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման համար: Մասնավորապես, հավելվածի 3-րդ հոդվածը սահմանում է. «Միջոցները, որոնք ձեռնարկվում են պետությունների կողմից քաղաքական կուսակցություններին արված նվիրատվությունները կանոնակարգելու համար, պետք է հատուկ կանոններ նախատեսեն.

- շահերի բախումից խուսափելու համար.
- նվիրատվությունների թափանցիկությունը ապահովելու և գաղտնի նվիրատվություններից խուսափելու համար.

⁵⁰ <https://www.coe.int/en/web/freedom-expression/-/public-consultations-on-the-cm-draft-recommendation-on-electoral-communication-and-media-coverage-of-election-campaigns-19-july-23-august-2021> -

⁵¹ <https://rm.coe.int/16806cc1f1>

- քաղաքական կուսակցությունների գործունեության նկատմամբ նախապաշարմունքներից խուսափելու համար.

- քաղաքական կուսակցությունների անկախությունը ապահովելու համար»:

Հավելվածի 8-րդ հոդվածը նշում է, որ քաղաքական կուսակցությունների ֆինանսավորմանը վերաբերող կանոնները պետք է կիրառվեն *mutatis mutandis* ընտրություններում առաջադրված թեկնածուների նախընտրական քարոզարշավի ֆինանսավորման նկատմամբ:

Պետությունները պետք է քննարկեն նաև այնպիսի միջոցների ընդունման հարցը, որոնք կկանխեն քաղաքական կուսակցությունների ֆինանսավորման չափազանց մեծ կարիքները, օրինակ, սահմանելով նախընտրական քարոզարշավի ծախսերի սահմանափակումներ (հավելվածի 9-րդ հոդված):

Ընտրական իրավունքի և դրա հետ առնչվող նախընտրական քարոզչության և ընտրությունների ֆինանսավորման վերաբերյալ միջազգային փաստաթղթերի վերը նշված թվարկումը, իհարկե, սպառիչ չէ:

Ստորև ներկայացնենք նաև խնդրո առարկա երկու ինստիտուտների արտասահմանյան երկրների կանոնակարգման փորձի որոշ օրինակներ:

Այսպես, **Լեհաստանի** Ընտրական օրենսգրքի⁵² 105-րդ հոդվածի համաձայն՝ նախընտրական քարոզչությունը բնութագրվում է որպես հանրությանն ուղղված հորդոր՝ քվեարկելու որոշակի ձևով կամ ընտրական կոմիտեի թեկնածուի օգտին: Քարոզչությունը կարող է իրականացվել լիազոր մարմնի

⁵² https://www.legislationline.org/download/id/9470/file/POL_Election%20Code.pdf

կողմից ընտրական կոմիտե ստեղծելու մասին ծանուցումն ընդունվելու օրվանից սկսած՝ ընտրական օրենսգրքով սահմանված ձևով և տեղում:

Յուրաքանչյուր ընտրող կարող է քարոզել թեկնածուների օգտին, ներառյալ, ստորագրություններ հավաքել ի աջակցություն թեկնածուների՝ իրավական ներկայացուցիչների նախնական գրավոր թույլտվության հիման վրա (հոդված 106):

Լեհաստանի Ընտրական օրենսգիրքը տալիս է նաև քարոզչության իրականացման ժամանակային սահմանափակումները: Համաձայն 107-րդ հոդվածի՝ չի թույլատրվում քարոզչություն իրականացնել քվեարկության օրը և դրանից 24 ժամ առաջ, ներառյալ հանդիպումներ անցկացնել, երթեր, ցույցեր կազմակերպել, ելույթներ ունենալ կամ քարոզչական նյութեր բաժանել: Այս նույն ժամկետներում քարոզչությունն ընտրական տեղամասում և տեղամասային կենտրոնում արգելվում է:

Լեհաստանի Ընտրական օրենսգիրքն արգելում է քարոզչություն իրականացնել՝

1) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակազմերի շենքերում, դատարաններում,

2) աշխատավայրերում, այն ձևով, որը կարող է խոչընդոտել վերջիններիս բնականոն աշխատանքը,

3) գործարարներում և Ազգային պաշտպանության նախարարությանը ենթակա այլ կազմակերպչական միավորներում, քաղաքացիական պաշտպանության միավորներում և ներքին գործերի նախարարի ենթակայությամբ գործող միավորներում (հոդված 108, 1-ին մաս):

Կրթական հաստատություններում քարոզչությունն ուսանողների շրջանում արգելվում է: Քաղաքացիական կրթության դասերը, ներառյալ, քաղաքացիների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ գիտելիքի տարածումն ուսանողների շրջանում, ժողովրդավարական պետությունում ընտրությունների նշանակության և ընտրությունների կազմակերպման սկզբունքների մասին դասերը չեն կարող դիտարկվել որպես նախընտրական քարոզչություն (հոդված 108, 2-3-րդ մասեր):

Լեհաստանի Ընտրական օրենսգիրքը կարգավորումներ է պարունակում նաև քարոզչական նյութերի, դրանց և դրանց տարածմանը ներկայացվող պահանջների, ինչպես նաև ռադիո և հեռուստահեռարձակողների ծրագրերում նախընտրական քարոզչության վերաբերյալ (հոդված 109-122):

Ուղեկցական ընտրական օրենսգրքի⁵³ 9-րդ բաժինը նվիրված է նախընտրական քարոզչությանը: Մասնավորապես, օրենսգրքի 44-րդ հոդվածը նախընտրական քարոզչությունը բնորոշում է գործունեություն, որն իրականացվում է ընտրությունների ժամանակ և որի նպատակն է հորդորել ընտրողներին քվեարկելու այս կամ թեկնածուի կամ քաղաքական կուսակցության օգտին: Քարոզչությունն սկսվում է թեկնածուների գրանցման համար նախատեսված ժամկետի ավարտի հաջորդ օրը: Չի թույլատրվում իրականացնել նախընտրական քարոզչություն քվերկության օրը և դրան նախորդող օրը:

Չի թույլատրվում քարոզչությունը զուգորդված ընտրողներին ապրանքների, ծառայությունների (բացառությամբ տե-

⁵³ <https://lex.uz/ru/docs/4386846>

ղեկության) բաշխմամբ՝ անվճար կամ արտոնյալ պայմաններով, ինչպես նաև նախընտրական հիմնադրամներից վճարման միջոցով:

Արգելվում է տարածել մոլորեցնող տեղեկություն կամ տեղեկություն, որը վիրավորում է թեկնածուների պատիվը կամ արժանապատվությունը:

Օրենսգիրքն առանձնացնում է նաև այն սուբյեկտների ցանկը, որոնց արգելվում է քարոզչություն իրականացնել: Մասնավորապես դրանք են՝

- Կառավարական և վարչական մարմինների ղեկավարները, տեղական ինքնակառավարման մարմինները,
- Ուղբեկստանի Հանրապետության զինված ուժերի ծառայողները, Ուղբեկստանի Հանրապետության պետական անվտանգության ծառայության, այլ ռազմականացված կազմավորումների, իրավապահ մարմինների աշխատակիցները, իրավապահ մարմինները, դատավորները, ընտրական հանձնաժողովների անդամները, կրոնական կազմակերպությունների պաշտոնատար անձինք:

Կառավարական և վարչական մարմինների, տեղական գործադիր մարմինների պաշտոնատար անձանց արգելվում է նախընտրական քարոզչության ժամանակ օգտագործել իրենց պաշտոնական և ծառայողական դիրքն ի օգուտ որևէ քաղաքական կուսակցության կամ թեկնածուի կամ նրանց դեմ (հոդված 44):

Օրենսգրքի 45-րդ հոդվածը թվարկում է նախընտրական քարոզչության իրականացման ձևերը: Դրանք են՝

- քաղաքական կուսակցության ծրագրի կամ նախընտրական հարթակի վերաբերյալ տեղեկության տարածում՝ կոչ ա-

ներով քվեարկել այդ կուսակցության պատգամավորության թեկնածուների օգտին,

- Ուզբեկստանի Հանրապետության նախագահի թեկնածուի ծրագրի կամ նախընտրական հարթակի վերաբերյալ տեղեկության տարածում՝ կոչ անելով քվեարկել այդ թեկնածուի օգտին,

- թեկնածուի վերաբերյալ տեղեկության տարածում՝ կոչ անելով քվեարկել նրա օգտին:

Քարոզչությունը կարող է իրականացվել հանրային բանավեճերի, քննարկումների, մամուլի ասուլիսների, քաղաքացիների ժողովների, հարցազրույցների, ելույթների, զանգվածային լրատվության միջոցներով տեսանյութերի տարածման միջոցով:

Քարոզչությունն իրականացվում է՝

- զանգվածային լրատվության միջոցներով, հեռահաղորդակցության ցանցերով, ինչպես նաև Ինտերնետ համաշխարհային տեղեկատվական ցանցի միջոցով,

- տպագիր, տեսողական, ատլդիովիզուալ և այլ քարոզչական նյութերի (պաստառներ, թռուցիկներ և այլ նյութեր) տպագրելու և տարածելու միջոցով,

- ընտրողների հետ հանդիպումներ անցկացնելու միջոցով:

Քարոզչության ընթացքում կարող են կիրառվել նաև դրա իրականացման այլ տեսակներ, ձևեր և մեթոդներ, որոնք սույն Օրենսգրքով արգելված չեն (հոդված 45):

Ընդ որում՝ Ուզբեկստանի ընտրական օրենսգիրքը հետագա կարգավորումներ է պարունակում զանգվածային լրատվության միջոցներով քարոզչության իրականացման

կարգի (հոդված 46), տպագիր, տեսողական, աուդիովիզուալ և այլ քարոզչական նյութերի (պաստառներ, թռուցիկներ և այլ նյութեր) տպագրելու և տարածելու միջոցով քարոզչության իրականացման կարգի (հոդված 47) և ընտրողների հետ հանդիպումների միջոցով քարոզչության իրականացման կարգի (հոդված 48) մասին:

Նախընտրական քարոզչությանն է նվիրված **Բոսնիայի և Հերցեգովինայի** ընտրական օրենսգրքի⁵⁴ 7-րդ բաժինը:

Համաձայն օրենսգրքի 7.1 հոդվածի՝ քաղաքական կուսակցությունները, դաշինքները, անկախ թեկնածուների ցուցակները և անկախ թեկնածուները իրավունք ունեն՝

1) իրականացնել նախընտրական քարոզչություն խաղաղ միջավայրում,

2) կազմակերպել և իրականացնել հանրային հանդիպումներ, որոնցում կարող են ազատ արտահայտել իրենց դիրքորոշումը՝ ընտրողների աջակցությունը ստանալու նպատակով, և,

3) տպագրել և տարածել ցուցապաստառներ, պաստառներ և ընտրություններին վերաբերող այլ նյութեր:

Հանրային հանդիպումների համար չի պահանջվում լիազոր մարմնի թույլտվությունը, բայց միջոցառման կազմակերպիչը պետք է հասարակական կարգի և խաղաղության համար պատասխանատու մարմնին նման միջոցառման իրականացումից 24 ժամ առաջ տեղեկացնի դրա մասին: Եթե երկու կամ ավելի կազմակերպիչներ տեղեկացրել են նույն ժամին և նույն տեղում հանրային հանդիպում անցկացնելու մասին, ա-

⁵⁴ https://www.legislationline.org/download/id/7655/file/Bosnia_Herzegovina_election_law_2001_am2016_en.pdf

պա նման միջոցառման անցկացումը թույլատրվում է այն կազմակերպչին ով առաջինն է իրավասու մարմնին գրավոր կերպով տեղեկացրել միջոցառման անցկացման մասին: Զուգահեռաբար իրավասու մարմինը հանրային հանդիպում կազմակերպելու մասին ծանուցումը ստանալուց հետո առավելագույնը 12 ժամվա ընթացքում մյուս դիմումատուներին տեղեկացնում է դրա մասին:

Քաղաքական կուսակցությունների թեկնածուներին և աջակիցներին, անկախ թեկնածուների ցուցակներին, ազգային փոքրամասնությունների և դաշինքների անդամների ցուցակներին, ինչպես նաև անկախ թեկնածուներին և նրանց աջակիցներին, և ընտրական վարչակազմի պաշտոնատար անձանց արգելվում է՝

- կրել կամ ցուցադրել զենք քաղաքական հանդիպումների ժամանակ, ընտրական տեղամասերում կամ դրանց հարակից հատվածներում, կամ ընտրական գործընթացի շրջանակներում քաղաքական կուսակցությունների, դաշինքների, անկախ թեկնածուների ցուցակների և անկախ թեկնածուների գործունեությանը վերաբերող ցանկացած հավաքի ընթացքում,

- խոչընդոտել քաղաքական կուսակցությունների, դաշինքների, անկախ թեկնածուների հավաքները, կամ սպառնալ ալյոց նման հավաքներ կազմակերպել,

- խոչընդոտել լրագրողներին իրենց մասնագիտական իրավունքների շրջանակներում և ընտրական օրենսդրությանը համապատասխան իրենց լիազորություններն իրականացնելիս

- խոստանալ ֆինանսական կամ այլ նյութական աջակ-

ցություն՝ ընտրողների աջակցությունը ստանալու նպատակով, կամ սպառնալ այլ քաղաքական կուսակցությունների, դաշինքների, անկախ թեկնածուների ցուցակների կամ անկախ թեկնածուների աջակիցներին,

- ընտրական իրավունք չունեցող անձին ստիպել քվեարկել

- ստիպել անձին նույն ընտրություններում մեկից ավելի անգամ կամ մեկ այլ անձի փոխարեն քվեարկել, կամ

- անձին սաղրել կամ դրդել բռնության կամ ատելության տարածման, կամ տպագրել կամ օգտագործել պատկերներ, նշաններ, տեսա և ձայնագրություններ, SMS հաղորդագրություններ, ինտերնետ կապեր կամ այլ նյութեր, որոնք կարող են նման ազդեցություն ունենալ (հոդված 7.3):

Քվեարկության օրը և դրան նախորդող օրը քարոզչության արգելքը սահմանված է Բոսնիա և Հերցեգովինայի ընտրական օրենսգրքի 7.4 հոդվածում:

Ինչ վերաբերում է զանգվածային լրատվամիջոցներով իրականացվող քարոզչությանը, ապա, դրան նվիրված է օրենսգրքի մի ամբողջ բաժին (Բաժին 16):

Բուլղարիայի ընտրական օրենսգրքի⁵⁵ 175-րդ հոդվածը սահմանում է նախընտրական քարոզչության սկիզբը: Համաձայն այդ հոդվածի՝ այն սկսվում է քվեարկության օրվանից 30 օր առաջ:

Թեկնածուները և կուսակցությունները, դաշինքները և առաջադրվող կոմիտեները, ովքեր ունեն գրանցված թեկնածուներ ունեն քարոզչական նպատակներով օգտագործելու հա-

⁵⁵ https://www.legislationline.org/download/id/9467/file/BULG_Election%20Code.pdf

մար տեղեկության աղբյուրների հավասար մատչելիության իրավունք (հոդված 176):

Չի թույլատրվում տպագրել կամ հեռարձակել անանուն նյութեր (հոդված 177):

Քաղաքացիները, կուսակցությունները, դաշինքները, առաջադրվող կոմիտեները, թեկնածուները և ընտրական գործակալները պետք է ազատություն ունենան ընտրական հանդիպումների, ինչպես նաև մեղիա ծառայություններ մատուցողների միջոցով բանավոր կամ գրավոր քարոզչություն անելու հարցում: Նախընտրական քարոզչությունն իրականացվում է բուլղարերենով: Նախընտրական հանդիպումները պետք է իրականացվեն հրապարակայնորեն: Դրանց իրականացման ընթացքում կազմակերպիչները և Բուլղարիայի ներքին գործերի նախարարության ստորաբաժանումները պատասխանատու են հասարակական կարգի պահպանման համար: Հանդիպումները կազմակերպվում են Հավաքների, ժողովների և ցույցերի մասին օրենքին համապատասխան (հոդված 181):

Օրենսգրքի 182-րդ հոդվածը նախատեսում է նախընտրական քարոզչության սահմանափակումները: Ըստ այս հոդվածի՝

- չի թույլատրվում քարոզչություն իրականացնել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, պետական և տեղական ձեռնարկություններում, առևտրային ընկերություններում, որոնց կապիտալում 50 տոկոսից ավելի մասնակցություն ունեն պետությունը կամ համայնքները:

- առևտրային միություններում ընտրովի պաշտոն զբաղեցնող անձինք և գործատու կազմակերպությունները չեն կա-

րող քարոզչություն իրականացնել իրենց աշխատավայրերում,

- պետության կամ համայնքների սեփականությունը հանդիսացող տրանսպորտային միջոցները չեն կարող օգտագործվել նախընտրական քարոզչության համար

- չի թույլատրվում քարոզչությունը քվեարկության օրը և դրան նախորդող 24 ժամվա ընթացքում

- արգելվում է քարոզչություն իրականացնել հոգևոր ծառայողներին: Կրոնական ծեսերի իրականացումը քարոզչություն չէ:

Նախընտրական քարոզչության մանրամասները սահմանվում են Բուլղարիայի ընտրական օրենսգրքի հետագա հոդվածներում (տե՛ս 183-199 հոդվածները):

Այբանիայի ընտրական օրենսգրքի⁵⁶ համաձայն նախընտրական քարոզչությունը սկսվում է քվեարկության օրվանից 30 օր առաջ և ավարտվում դրանից 24 ժամ առաջ: Քվեարկության օրը և դրան նախորդող օրը համարվում են լռության օրեր: Լռության օրերին ընտրական սուբյեկտներին չի թույլատրվում որևէ քարոզչություն իրականացնել զանգվածային լրատվության միջոցներով, հավաքներ կազմակերպելով կամ որևէ այլ ձևով (հոդված 77):

Նախընտրական քարոզչության շրջանում յուրաքանչյուր ընտրական սուբյեկտ իրավասու է իրականացնելու քարոզչություն ցանկացած օրինական ձևով:

Ընտրությունների վերաբերյալ հարցումների արդյունքները չի թույլատրվում հրապարակել քվեարկության օրվանից 5 օր ա-

⁵⁶ <https://www.refworld.org/pdfid/4c1f93e32.pdf>

ռաջ և մինչև տեղամասային կենտրոնների փակման ժամը:

Նախընտրական քարոզչության իրականացումը պետական հիմնարկներում արգելվում է (հոդված 78):

Համայնքի ղեկավարը արդար և անաչառ կերպով հատկացնում է տեղեր քարոզչական նյութեր փակցնելու համար: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հատուկ ցուցումով հաստատում է նման տեղեր հատկացնելու չափանիշները: Ցանկացած քարոզչական նյութի փակցնում թույլատրված տեղերից դուրս հանգեցնում է դրանց հեռացմանը տեղական իրավապահ մարմինների կողմից:

Նախքան ընտրությունների ֆինանսավորման արտասահմանյան փորձին անդրադառնալը, նշենք, որ կատարված ուսումնասիրությունը ցույց տվեց, որ գրեթե բոլոր երկրներում ընտրությունների ֆինանսավորման հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորումն ունի հետևյալ ընդհանրությունը: Ընտրությունների կազմակերպումն ու անցկացումը ֆինանսավորվում է պետական կամ տեղական բյուջեների միջոցների հաշվին, իսկ թեկնածուների, կուսակցությունների կամ կուսակցությունների դաշինքների նախընտրական քարոզարշավը ֆինանսավորվում է այդ նպատակով ստեղծվող նախընտրական հիմնադրամներում կուտակվող միջոցների հաշվին: Ստորև ներկայացնենք ընտրությունների ֆինանսավորման արտասահմանյան փորձի մի քանի օրինակներ:

Այսպես՝ **Ռուսաստանի Դաշնության** «Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների ընտրական իրավունքների և հանրաքվեին մասնակցելու իրավունքի հիմնարար երաշխիք-

ների մասին» դաշնային օրենքի⁵⁷ 57-րդ հոդվածի համաձայն Ռուսաստանի Դաշնությունում համապատասխան մակարդակի ընտրությունների նախապատրաստման և անցկացման, ավտոմատացման միջոցների շահագործման և զարգացման, ընտրությունների կազմակերպիչների և ընտրողների կրթության հետ կապված ծախսերն իրականացվում են ընտրական հանձնաժողովների կողմից համապատասխան բյուջեում (դաշնային բյուջե, Ռուսաստանի Դաշնության սուբյեկտի բյուջե և (կամ) տեղական բյուջե) այդ նպատակով առանձնացված միջոցներից:

Ինչ վերաբերում է նախընտրական հիմնադրամների ստեղծման կարգին, ապա, նույն օրենքի 58-րդ հոդվածը սահմանում է, որ թեկնածուները իրենց ընտրարշավը ֆինանսավորելու համար պարտավոր են ստեղծել սեփական նախընտրական հիմնադրամները համապատասխան ընտրական հանձնաժողովին իրենց առաջադրման (ինքնաառաջադրման) մասին գրավոր ծանուցելուց հետո մինչև այդ հանձնաժողովի կողմից իրենց գրանցելու համար փաստաթղթերի ներկայացումը: Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ թեկնածուի կողմից նախընտրական հիմնադրամի ստեղծումը պարտադիր չէ, պայմանով, որ ընտրատարածքում ընտրողների թիվը չի գերազանցում հինգ հազարը և թեկնածուի կողմից իր ընտրարշավի ֆինանսավորում չի իրականացվում: Այդ դեպքում թեկնածուն ծանուցում է համապատասխան ընտրական հանձնաժողովին նշված հանգա-

57

http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_37119/9a2ed64f6cfc4a560564cfc3863011661febabc9/

մանքների մասին: Թեկնածուների ցուցակներ առաջադրած ընտրական միավորումները, իրենց ընտրարշավը ֆինանսավորելու համար պարտավոր են ստեղծել նախընտրական հիմնադրամներ համապատասխան ընտրական հանձնաժողովների կողմից ֆինանսական հարցերով իրենց լիազոր ներկայացուցիչներին գրանցելուց հետո: Միամանդատ (բազմամանդատ) ընտրատարածներում թեկնածուներ առաջադրած ընտրական միավորումը նախընտրական հիմնադրամ չի ստեղծում:

Թեկնածուների, ընտրական միավորումների նախընտրական հիմնադրամները ձևավորվում են՝

ա) թեկնածուի, ընտրական միավորման սեփական միջոցներից,

բ) թեկնածուին առաջադրած ընտրական միավորման կողմից նրան հատկացված միջոցներից,

գ) քաղաքացիների կամավոր նվիրատվություններից,

դ) իրավաբանական անձանց կամավոր նվիրատվություններից:

Ընդ որում, օրենքը սահմանում է, թե ովքեր չեն կարող նախընտրական հիմնադրամներ նվիրատվություններ կատարել (58-րդ հոդվածի 6-րդ մաս):

Օրենքով սահմանվում է նաև նախընտրական հիմնադրամների միջոցների ծախսման կարգը (հոդված 59):

Ֆինանսիայում ընտրությունների ֆինանսավորման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Թեկնածուի նախընտրական ֆինանսավորման մասին» 2009 թվականին ընդունված առանձին օրենքով⁵⁸:

⁵⁸ <https://www.legislationline.org/download/id/6238/file/Finland%20Act%20on%20Candidates%20Election%20Funding%202009%20ENG.pdf>

Համաձայն այդ օրենքի 2-րդ հոդվածի նախընտրական ֆինանսավորման տակ նկատի է ունեցվում ֆինանսավորումը, որը հավաքվել է թեկնածուի ընտրարշավի ծախսերը հոգալու համար, որոնք կատարվել են քվեարկության օրվանից ոչ շուտ քան վեց ամիս առաջ և ոչ ուշ քան երկու շաբաթ հետո, անկախ նրանից, թե երբ են այդ ծախսերը վճարվել:

Թեկնածուի ընտրական ֆինանսները կարող են ձևավորվել

1) թեկնածուի սեփական միջոցներից և ընտրարշավի համար վերցված վարկերից,

2) թեկնածուի, նրան աջակցող խմբի կամ բացառապես թեկնածուին աջակցելու համար գործող այլ միավորի կողմից ստացված նախընտրական ներդրումներից,

3) նախընտրական այլ ներդրումներից:

Մոլդովայի ընտրական օրենսգրքի⁵⁹ 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կուսակցությունների, նախաձեռնող խմբերի և ընտրական քարոզարշավների ֆինանսավորման համար կարող են օգտագործվել միայն Մոլդովայի Հանրապետության քաղաքացիների կողմից, ինչպես Մոլդովայի Հանրապետության տարածքում, այնպես էլ դրա սահմաններից դուրս իրականացվող որպես վարձու աշխատողի եկամուտը, ձեռնարկատիրական, գիտական կամ այլ ստեղծագործական գործունեության եկամուտները: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ընտրություններում կուսակցությունների, նախաձեռնող խմբերի և ընտրական քարոզարշավների/մրցակիցների գործունեության ֆինանսավորումը կամ որևէ այլ կերպ նյութա-

⁵⁹ <https://www.parlament.md/CadrulLegal/Codulelectoral/tabid/153/language/ru-RU/Default.aspx>

կան աջակցությունն արգելվում է՝

ա) օտարերկրյա իրավաբանական անձանց, այդ թվում խառը կապիտալով, օտարերկրյա պետություններին և միջազգային կազմակերպություններին, ներառյալ միջազգային քաղաքական կազմակերպությունները,

բ) Մոլդովայի Հանրապետության մինչև 18 տարեկան քաղաքացիներին և այն քաղաքացիներին, որոնց նկատմամբ ինամակալության տեսքով պաշտպանության դատական միջոց է սահմանվել,

գ) հանրային իշխանության մարմիններին, կազմակերպություններին, ձեռնարկություններին, հանրային հիմնարկներին, այլ իրավաբանական անձանց, որոնք ֆինանսավորվում են պետական բյուջեից կամ ունեն պետական կապիտալ, բացառությամբ այն դեպքերի, երբ ծառայությունների մատուցումը կամ նյութական աջակցությունը ուղղակիորեն նախատեսված է օրենսդրությամբ,

դ) իրավաբանական անձանց, որոնք նախընտրական շրջանի մեկնարկին նախորդող երեք տարվա ընթացքում աշխատանքների, ապրանքների կամ ծառայությունների պետական գնումների պայմանագրեր են կնքել՝ «Պետական գնումների մասին» թիվ 131/2015 օրենքի իմաստով, ինչպես նաև իրավաբանական անձանց՝ օտարերկրյա կամ խառը կապիտալով,

ե) անանուն անձանց կամ երրորդ անձանց անունից,

զ) Մոլդովայի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող ֆիզիկական անձանց,

է) ոչ առևտրային կազմակերպություններին, արհեստակցական միություններին, բարեգործական կամ կրոնական կազմակերպություններին:

2.2. Նախընտրական քարոզչության ներպետական իրավակարգավորումների նկարագիրը: Արդի օրենսդրական փոփոխությունները նախընտրական քարոզչության ոլորտում և դրանց իրավաքաղաքական հնարավոր ազդեցությունը

Սույն պարագրաֆի շրջանակներում անդրադարձ կկատարվի «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի⁶⁰ (այսուհետ՝ Օրենսգիրք) նախընտրական քարոզչությանը վերաբերող կարգավորումներին և զուգահեռաբար կներկայացվի 2021 թվականի մայիսի 7-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքին⁶¹ (այսուհետ՝ Օրենք), որով ծավալուն փոփոխություններ և լրացումներ կատարվեցին ինչպես Օրենսգրքում ընդհանրապես, այնպես էլ Օրենսգրքի նախընտրական քարոզչությանը վերաբերող կարգավորումներում՝ մասնավորապես: Օրենսգրքի 19-րդ հոդվածը, որը կրում է «Նախընտրական քարոզչության հիմնական սկզբունքները» վերտառությունը, սահմանում է, որ նախընտրական քարոզչության ժամանակահատվածը Օրենսգրքով սահմանված այն ժամանակահատվածն է, որի ընթացքում ընտրություններին մաս-

⁶⁰ Ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2016 թվականի մայիսի 25-ին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=153886>:

⁶¹ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=153062>: Օրենքը ուժի մեջ կմտնի 2022 թվականի հունվարի 1-ից, առանձին դրույթներ նաև 2023 թվականի հունվարի 1-ից: Օրենքի որոշ կարգավորումներ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին վերաբերելի մասով ուժի մեջ են մտել 2021 թվականի հունիսի 26-ին:

նակցող կուսակցություններին, թեկնածուներին հավասար հնարավորություններ ապահովելու նպատակով գործում են հանրային ռեսուրսներից օգտվելու, քարոզչություն իրականացնելու և ֆինանսական թափանցիկությունն ապահովելու՝ Օրենսգրքով սահմանված կանոնները:

Ընդ որում՝ ժամանակային առումով Օրենսգիրքը թույլատրում է նախընտրական քարոզչություն իրականացնել ինչպես դրա՝ Օրենսգրքով սահմանված ժամանակահատվածում, այնպես էլ Օրենսգրքով չարգելված ժամանակահատվածում: Սրա վառ դրսևորումը եղավ 2021 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրությունները, որտեղ ընտրություններում մասնակցելու մտադրություն ունեցող և դեռևս պաշտոնապես չգրանցված քաղաքական ուժերը, մինչև նախընտրական քարոզչության պաշտոնական մեկնարկը, փաստացի սկսել էին քարոզչությունը, որն իրականացվում էր մարզային այցելությունների կամ որոշ մասնագիտական խմբերի հետ հանդիպումների ձևով:

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների, թեկնածուների գրանցման համար Օրենսգրքով սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 5-րդ օրը և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ:

Քվեարկության և դրան նախորդող օրը քարոզչությունը հրապարակային ելույթների, հրապարակային միջոցառումների միջոցով, զանգվածային լրատվության միջոցներով, այդ թվում՝ կաբելային (մալուխային) ցանցով, արբանյակային կապով և վերգետնյա եթերային հեռարձակմամբ տեսալսողա-

կան մեղիածառայություն մատուցողների կողմից, ինչպես նաև համացանցում գովազդի միջոցով արգելվում է:

Պետությունն ապահովում է նախընտրական քարոզչության ազատ իրականացումը: Այն ապահովում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինները՝ նախընտրական ժողովներ, թեկնածուների հետ ընտրողների հանդիպումներ և ընտրությունների հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով նրանց դահլիճներ և այլ շինություններ տրամադրելու միջոցով: Դրանք Ազգային ժողովի, համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրություններին մասնակցող կուսակցություններին տրամադրվում են հավասար հիմունքներով, անվճար՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով: Հանրակրթական ուսումնական հաստատությունների բնականոն գործունեությունը չխաթարելու նպատակով Օրենսգիրքը սահմանում է, որ դրանց դահլիճները թեկնածուներին ու ընտրություններին մասնակցող կուսակցություններին կարող են տրամադրվել միայն ժամը 18.00-ից հետո կամ ոչ աշխատանքային օրերին: Միևնույն ժամանակ, Օրենսգիրքը պայման է նախատեսում դրանց հատկացման համար: Մասնավորապես, դրանք նախընտրական քարոզչության նպատակով կարող են հատկացվել միայն այն դեպքերում, եթե տվյալ համայնքում (Երևանի վարչական շրջանում) գոյություն չունեն նախընտրական քարոզչության անցկացման համար համապատասխան այլ դահլիճներ:

Օրենսգրքով սահմանված ժամկետում մարզպետը, Երևանում՝ Երևանի քաղաքապետը Կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացնում այն դահլիճների և այլ շինությունների ցանկը, որոնք ընտրություններին մասնակցող

կուսակցություններին տրամադրվում են անվճար: Այդ ցանկը տեղադրվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում: Տեղեկությունները ներկայացվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով (հոդված 19, 3-րդ մաս):

Օրենսգիրքը սահմանում է, որ ընտրություն նշանակվելուց հետո կարող են կազմավորվել ընտրական շտաբներ՝ զուգահեռաբար ընդգծելով, որ դրանք չեն կարող տեղակայվել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների զբաղեցրած շենքերում (բացառությամբ այն դեպքերի, երբ ընտրական շտաբները զբաղեցնում են այդ մարմիններին չպատկանող տարածք), հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքերում, ինչպես նաև այն շենքերում, որտեղ գործում են ընտրական հանձնաժողովները:

Օրենսգրքի 19-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նախընտրական քարոզչության ժամանակ, ինչպես նաև քվեարկության նախորդ և քվեարկության օրը թեկնածուներին, ընտրություններին մասնակցող կուսակցություններին արգելվում է անձամբ կամ նրանց անունից կամ որևէ այլ եղանակով ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ: Այն բարեգործական կազմակերպությունները, որոնց անվանումները կարող են նմանեցվել (ասոցացվել) ընտրություններին մասնակցող կուսակցությունների անվանումներին, թեկնածուների անուններին, նախընտրական քարոզչության ժամանակ բարեգործություն չեն կարող իրականացնել այն համայնքներում, որտեղ անցկացվում են ընտրություններ, որոնց

մասնակցում են այդ թեկնածուները, կուսակցությունները կամ նրանց առաջադրած թեկնածուները:

Ավելին, Օրենքով շատ կարևոր դրույթով է լրացվել Օրենսգիրքը, համաձայն որի, այն կազմակերպությունները, որոնց անվանումները կարող են ասոցացվել ընտրություններին մասնակցող կուսակցությունների անվանումների հետ, կամ որոնք ղեկավարվում են կուսակցությունների կողմից, ընտրությունների կամ հանրաքվեի նշանակման մասին որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ընտրությունների կամ հանրաքվեի արդյունքների ամփոփումն ընկած ժամանակահատվածում չեն կարող բարեգործություն իրականացնել այն համայնքներում, որտեղ անցկացվում են ընտրություններ: Ընդ որում՝ կազմակերպությունը համարվում է կուսակցության կողմից ղեկավարվող, եթե կազմակերպության ղեկավար մարմնի անդամներն ամբողջությամբ կամ մասամբ համընկնում են կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամների հետ: Այս հոդվածով սահմանված արգելքը տարածվում է նաև այն կազմակերպությունների վրա, որոնց հիմնադիրը (հիմնադիրները) կամ ղեկավարը ընտրություններում առաջադրվել է որպես թեկնածու:

Այս լրացումը կարևոր նշանակություն կարող է ունենալ քաղաքական ուժերի համար նախընտրական քարոզչության հավասար պայմանների ապահովման տեսանկյունից, մանավանդ, որ գործնականում հաճախ ընտրություններում առաջադրված թեկնածուներն ունեն իրենց անվամբ բացված բարեգործական հիմնադրամներ, որոնց գործունեությունն ընտրությունների ժամանակահատվածում խնդրահարույց էր թվում:

Գործող օրենսդրությունը նախընտրական քարոզչության նկատմամբ հսկողության գործառնությունը դնում է ընտրական հանձնաժողովների վրա: Թեկնածուների, ընտրությունների մասնակցող կուսակցությունների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտման դեպքում թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակը գրանցած ընտրական հանձնաժողովը դիմում է իրավասու մարմիններ դրանք կանխելու նպատակով կամ կիրառում նախազգուշացում խախտում թույլ տված թեկնածուի, ընտրությունների մասնակցող կուսակցության նկատմամբ՝ տալով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ, որը չի կարող գերազանցել 3 օրը: Թեկնածուն, ընտրություններին մասնակցող կուսակցությունը պարտավոր են որոշմամբ նշված ժամկետում վերացնել խախտումը (խախտման հետևանքները) և այդ մասին գրավոր տեղեկացնել ընտրական հանձնաժողովին: Նախընտրական քարոզչության սահմանված կարգի հետ կապված խախտումները և դրանց համար տույժերը սահմանված են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի⁶² 5-րդ գլխում:

Իսկ այն դեպքերում, երբ առկա է նախընտրական քարոզչության սահմանված կարգի այնպիսի խախտում, որը կրում է շարունակական բնույթ, և թույլ տրված խախտումը կարող է էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա, կամ թույլ տրված խախտման հետևանքները հնարավոր չէ վերացնել, և թույլ տրված խախտումը կարող է էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա,

⁶² <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=155155>

ապա թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակը գրանցած ընտրական հանձնաժողովը դիմում է դատարան՝ թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու համար: Դատարանը թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած կարող է ճանաչել, եթե հանգում է այն եզրակացության, որ խախտումը կատարվել կամ ուղղորդվել է թեկնածուի կամ ընտրություններին մասնակցող կուսակցության կողմից:

Օրենսգիրքը կարգավորում է նաև *ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող թեկնածուների և ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների* նախընտրական քարոզչության հետ կապված հարաբերությունները՝ սահմանելով, որ վերջիններս իրենց նախընտրական քարոզչությունն իրականացնում են վստահված անձանց միջոցով: Այդ նպատակով ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող թեկնածուներն իրավունք ունեն նախընտրական քարոզչության ընթացքում օրական մինչև 2 ժամ տևողությամբ համապատասխանաբար ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրերում հանդիպումներ ունենալու մինչև 3 վստահված անձանց հետ (19-րդ հոդվածի 9-րդ մաս):

Օրենքով ՀՀ ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածում կարևոր լրացումներ արվեցին, որոնք կնպաստեն նախընտրական քարոզչության հետագա, էլ ավելի քաղաքակիրթ իրականացմանը:

Որքան էլ զարմանալի է, մինչև Օրենքի ընդունումը

(2021թ. մայիսի 7), Օրենսգրքում բացակայում էր նախընտրական քարոզչության սահմանումը: Ըստ կատարված լրացման՝ նախընտրական քարոզչությունն է համարվում ցանկացած գործողություն, որը նպատակ ունի համոզելու ընտրողներին՝ քվեարկելու կամ չքվեարկելու որոշակի թեկնածուի կամ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին (19-րդ հոդվածի 1.1 մաս):

Հավասարության և արդարության լավագույնս պահպանման նպատակով՝ Օրենսգրքում նաև սահմանվեց, որ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում կուսակցության (կուսակցությունների դաշինքի) կամ թեկնածուի կողմից համերգների, ներկայացումների, մարզական միջոցառումների, ֆիլմերի ցուցադրության և այլ միջոցառումների ֆինանսավորումը կարող է իրականացվել միայն նախընտրական հիմնադրամի միջոցների հաշվին:

Օրենքի ընդունմամբ Օրենսգրքում կատարվեց մեկ այլ կարևոր լրացում ևս: Մասնավորապես, տրվեց քաղաքական գովազդի սահմանումը, որը բնորոշվում է, որպես նախընտրական քարոզչության ձևերից մեկը, որի նպատակն է համոզելու ընտրողներին՝ քվեարկելու կամ չքվեարկելու որոշակի թեկնածուի կամ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին: Քաղաքական գովազդը ներառում է ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) կամ թեկնածուներին բնորոշող խորհրդանիշներ կամ անհատականացնող այլ նշաններ: Քաղաքական գովազդ են համարվում նաև տեսաձայնային հայտարարություններն այն մասին, որ համերգները կամ հանրային այլ միջոցառումներն իրականացվում են կուսակցության

(կուսակցությունների դաշինքի) կամ թեկնածուի աջակցությամբ, կամ որոնք ներառում են թեկնածուի կողմից այդ հանրային միջոցառումներին մասնակցության մասին փաստի հիշատակում:

Տարիներ շարունակ ընտրական օրենսդրությամբ բաց էր այն հարցը, թե արդյո՞ք ընտրություններում առաջադրված և, օրինակ, քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի (վերջինիս քաղաքական ուժի) նախընտրական քարոզչության և միաժամանակ պաշտոնական լիազորությունների լուսաբանումն առաջադրված մյուս քաղաքական կուսակցությունների կամ թեկնածուների համեմատությամբ չի խախտում սահմանված հավասարությունը: Այս մասով Օրենսգրքում լրացում կատարվեց առ այն, որ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ընտրություններին մասնակցող թեկնածուների լիազորությունների իրականացման վերաբերյալ պաշտոնական հաղորդագրությունները չեն համարվում նախընտրական քարոզչություն, սակայն, պայմանով, որ դրանք չպետք է պարունակեն քարոզչական բնույթի մեկնաբանություններ կամ ներկայացնեն տվյալ պաշտոնատար անձի՝ որպես թեկնածուի գործունեությունը լուսաբանող տեսաձայնային հոլովակներ, ֆիլմեր կամ նկարներ, որոնք կարող են ասոցացվել նախընտրական քարոզչության հետ (19-րդ հոդվածի 1.4-րդ մաս):

Օրենսգրքի 21-րդ հոդվածը նվիրված է նախընտրական քարոզչության ժամանակահատվածում քարոզչական պաստառի, քարոզչական տպագիր և այլ նյութերի օգտագործման կարգին: Համաձայն այդ հոդվածի՝ թեկնածուները, ընտրություններին մասնակցող կուսակցություններն իրավունք ունեն

անարգել տարածելու քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր: Ընդ որում՝ քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր կարող են փակցվել միայն՝

1) հատուկ այդ նպատակով առանձնացված տեղերում, վճարովի գովազդային վահանակներում, ընտրական շտաբների վրա.

2) ֆիզիկական անձանց համաձայնությամբ՝ նրանց պատկանող կամ նրանց տիրապետման ներքո գտնվող շենքերի, շինությունների (բացառությամբ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող շենքերի, հանրակրթական դպրոցների, բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի, հասարակական սննդի կամ առևտրի օբյեկտների), տրանսպորտային միջոցների (բացառությամբ հասարակական տրանսպորտի և տաքսու) վրա կամ դրանց ներսում: Բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի վրա քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր կարող են տեղադրվել միայն ֆիզիկական անձի սեփականությունը հանդիսացող տարածքում (այդ թվում՝ պատշգամբներում, պատուհանների վրա և այլն) կամ արտաքին պատերին տեղադրված վճարովի գովազդային վահանակների վրա:

Քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր կարող են առանց սահմանափակման փակցվել կամ օգտագործվել նախընտրական ժողովներ, ընտրողների հետ հանդիպումներ և նախընտրական քարոզչության հետ կապված այլ միջոցառումներ անցկացնելու ժամանակ՝ այդ միջոցառումների անցկացման վայրում: Այդ միջոցառումների ժա-

մանակ փակցված քարոզչական պաստառը, քարոզչական տպագիր և այլ նյութերը միջոցառման ավարտից հետո հանվում են համապատասխան թեկնածուի, ընտրությունների մասնակցող կուսակցության կողմից: Նախընտրական քարոզչություն իրականացնող ֆիզիկական անձինք առանց սահմանափակման կարող են կրել քարոզչական նյութեր (21-րդ հոդվածի 2-րդ մաս):

Նախընտրական քարոզչությունն սկսելուց 10 օր առաջ համայնքի ղեկավարը պարտավոր է համայնքի տարածքում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար անվճար տեղեր առանձնացնել (բացառությամբ հանրակրթական դպրոցների)՝ սահմանելով այնպիսի պայմաններ, որոնք թեկնածուների և կուսակցությունների համար կապահովեն հավասար հնարավորություններ (հավասար մակերես): Ընդ որում՝ 10 000 և ավելի ընտրող ունեցող համայնքի դեպքում Օրենսգիրքը պահանջում է, որ համայնքի ղեկավարի՝ քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար անվճար տեղեր առանձնացնելու մասին որոշումը ներկայացվի ԿԸՀ՝ դրա ընդունումից հետո 3 օրվա ընթացքում:

Արտաքին գովազդային վահանակները տնօրինող կազմակերպությունները քարոզչական պաստառի, քարոզչական տպագիր և այլ նյութերի տեղադրման դեպքում նախընտրական քարոզչության ժամանակահատվածում թեկնածուների և կուսակցությունների համար ապահովում են ոչ խտրական և ոչ կողմնակալ պայմաններ:

Ազգային ժողովի և համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանու ընտրությունների ժա-

մանակ արտաքին գովազդային վահանակները տնօրինող կազմակերպությունները 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով, ինչպես նաև մետրոպոլիտենի տարածքում, հասարակական տրանսպորտի կանգառներում և վերելակներում տեղակայված վահանակներն ընտրություններին մասնակցող կուսակցություններին տրամադրելու համար ընտրությունները նշանակվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում, Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում են տեղեկատվություն՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ընտրություններին մասնակցող կուսակցություններին տրամադրվող վահանակների քանակի, մակերեսների, դրանց գտնվելու վայրերի և վարձավճարների վերաբերյալ: Տեղեկությունները տրամադրվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով: Այն վահանակները, որոնք բացակայում են Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացված ցանկում, հետագայում չեն կարող տրամադրվել ընտրություններին մասնակցող կուսակցություններին: Կենտրոնական ընտրական հանձնաժողովն այս տեղեկությունները տեղադրում է հանձնաժողովի համացանցային կայքում: Ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցման փաստաթղթերը ներկայացնելու համար Օրենսգրքով սահմանված ժամկետներում ընտրություններին մասնակցող կուսակցությունները Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում են հայտեր՝ այդ գովազդային վահանակներում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր տեղադրելու համար՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած ձևով: Այս տեղեկությունների հիման վրա ար-

տաքին գովազդային վահանակներում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու իրավունքն ընտրություններին մասնակցող կուսակցությունների միջև բաշխվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշման հիման վրա ընտրություններին մասնակցող կուսակցությունն արտաքին գովազդային վահանակը տնօրինող կազմակերպության հետ կնքում է պայմանագիր՝ քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութ փակցնելու համար: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, ընտրություններին մասնակցող կուսակցության կողմից պայմանագիր չկնքվելու դեպքում գովազդային վահանակը տնօրինողն ազատ է կնքելու այլ պայմանագիր՝ այդ վահանակն այլ նպատակներով օգտագործելու: Ազգային ժողովի և համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանու ընտրությունների ժամանակ 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով, ինչպես նաև մետրոպոլիտենի տարածքում, հասարակական տրանսպորտի կանգառներում և վերելակներում տեղակայված քարոզչական պաստառը կարող է փակցվել միայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից նախապես բաշխված արտաքին գովազդային վահանակում:

Փակցված քարոզչական պաստառները, քարոզչական տպագիր և այլ նյութերը քվեարկության օրը և դրա նախորդ օրը կարող են մնալ իրենց տեղերում:

Արգելվում են քարոզչական պաստառները, քարոզչական տպագիր և այլ նյութերը պոկելը, պատռելը, դրանց վրա գրա-

ռումներ կատարելը կամ որևէ այլ եղանակով վնասելը: Նման արարքների համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 40.11 հոդվածը նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով տուգանք է նախատեսում:

Ընտրական հանձնաժողովի այս կամ այն թեկնածուի կամ կուսակցության գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու մասին որոշումն ստանալուց հետո համայնքի ղեկավարը, արտաքին գովազդային վահանակները տնօրինող կազմակերպությունների ղեկավարներն ապահովում են, որ այդ թեկնածուների կամ կուսակցությունների քարոզչական պաստառը, քարոզչական տպագիր և այլ նյութերը հանվեն: Այս մասով Օրենսգրքում մի փոքր անորոշություն կա: Նախ, անհասկանալի է, թե այս կամ այն թեկնածուի կամ կուսակցության գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու մասին որոշումը համապատասխան ընտրական հանձնաժողովն ինչ ժամկետում պետք է ուղարկի համայնքի ղեկավարին և արտաքին գովազդային վահանակները տնօրինող կազմակերպությունների ղեկավարներին: Վարչական վարույթի մասնակիցներին հանձնաժողովում ընդունված վարչական ակտերի ծանուցման կարգի և ժամկետների մասին կարգավորումներ է պարունակում Օրենսգրքի 47-րդ հոդվածը: Սակայն, քանի որ համայնքի ղեկավարն ու արտաքին գովազդային վահանակները տնօրինող կազմակերպությունների ղեկավարները վարչական վարույթի մասնակիցներ չեն, ուստի, Օրենսգիրքը հստակ պետք է սահմանի ընդունված ակտի մասին վերջիններիս ծանուցելու ժամկետները:

Օրենսգրքի 21-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ պարբերությո-

յունը նշում է, որ գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչված թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների կողմից **եռօրյա ժամկետում** (ընդգծումը մերն է) քարոզչական պաստառները, քարոզչական տպագիր և այլ նյութերը չհանելու դեպքում դրանք հանում է համայնքի ղեկավարը: Համայնքի ղեկավարը գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչված թեկնածուներից, ընտրություններին մասնակցող կուսակցություններից կարող է պահանջել իր կատարած ծախսերի փոխհատուցում:

Նման կարգավորման պարագայում ծագում են հետևյալ հարցերը: Արդյո՞ք վերոնշյալ եռօրյա ժամկետը հաշվարկվում է գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչված թեկնածուներին, ընտրություններին մասնակցող կուսակցություններին ընդունված վարչական ակտի մասին ծանուցելու օրվանից, թե ընդունված վարչական ակտը համայնքի ղեկավարին և արտաքին գովազդային վահանակները տնօրինող կազմակերպությունների ղեկավարներին ուղարկելու օրվանից: Եթե ընդունենք, որ եռօրյա ժամկետը սկսում է հոսել թեկնածուներին, ընտրություններին մասնակցող կուսակցություններին ընդունված վարչական ակտի մասին ծանուցելու օրվանից, ապա այդ ծանուցումն էլ, իր հերթին, ըստ Օրենսգրքի 47-րդ հոդվածի 7-րդ մասի, կարող է լինել ինչպես հանձնաժողովի նիստի ժամանակ ընդունված ակտը վարույթի մասնակիցներին տրամադրելու, այնպես էլ վարչական ակտն ընդունելուց հետո՝ եռօրյա ժամկետում վարչական վարույթի մասնակիցներին ուղարկելու միջոցով: Նման պարագայում անորոշ է, թե ինչպե՞ս է համայնքի ղեկավարը վարչական ակտի ծանուցման օրվա մասին տեղեկանում, որից սկսած էլ

պետք է հաշվվի եռօրյա ժամկետը:

Եթե ընդունենք, որ եռօրյա ժամկետը հաշվվելու է համայնքի ղեկավարին կամ արտաքին գովազդային վահանակները տնօրինող կազմակերպությունների ղեկավարներին ընդունված ակտի մասին ծանուցելու օրվանից, ապա, նախ, ինչպե՞ս վերևում նշեցինք, հստակ չէ, թե ի՞նչ ժամկետում պետք է ընդունված որոշումն ուղարկվի վերջիններիս, և երկրորդ, ինչպե՞ս են դրա մասին տեղեկացվելու գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչված թեկնածուներն ու ընտրություններին մասնակցող կուսակցությունները՝ գործողությունների կատարման եռօրյա ժամկետը հաշվարկելու համար:

Բացի այդ՝ արդյո՞ք գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչված թեկնածուները կամ կուսակցությունները պարտավոր են միջոցներ (տեխնիկական կամ ֆինանսական) ունենալու քարոզչական պաստառներն ու նյութերը հեռացնելու համար կամ, ընդհանրապես, արդյո՞ք արդարացված է վերջիններիս վրա նման պարտականություն դնելը: Անհասկանալի է, թե այս գործընթացում որպես նշված նյութերի հեռացման «ապահովողներ», ի՞նչ պարտականություն ունեն արտաքին գովազդային վահանակները տնօրինող կազմակերպությունների ղեկավարները, եթե Օրենսգիրքն այդ նյութերի հեռացման պարտականությունը դնում է թեկնածուների և կուսակցությունների վրա, իսկ նրանց կողմից դա եռօրյա ժամկետում չարվելու դեպքում՝ համայնքի ղեկավարի վրա: Ի՞նչ ժամկետում պետք է համայնքի ղեկավարը հեռացնի գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչված թեկնածուների կամ կուսակցությունների քարոզչական պաստառները, քարոզչական տպագիր և այլ նյութերը, եթե վերջիններս ե-

նորյա ժամկետում չհանեն դրանք: Եվ վերջապես, չմոռանանք, որ այս հարաբերություններն իրենց կարգավորումն են ստանում նաև թեկնածուների, կուսակցությունների և գովազդային վահանակները տնօրինող կազմակերպությունների միջև կնքված քաղաքացիաիրավական պայմանագրերով: Թեկնածուների կամ կուսակցությունների գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչվելու դեպքում, վերջիններս, զուտ ֆինանսական տեսանկյունից, շահագրգիռ կլինեն իրենց քարոզչական պաստառները, քարոզչական տպագիր և այլ նյութերը հնարավորինս շուտ հեռացնելու հարցում՝ ակնկալելով վճարված գումարների վերադարձ: Մյուս կողմից, կարող է դրսևորվել արտաքին գովազդային վահանակները տնօրինող կազմակերպությունների՝ գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած թեկնածուների կամ կուսակցությունների քարոզչական պաստառների հեռացման անգործությունը՝ վերջիններիս կողմից վճարված գումարը չվերադարձնելու նպատակով:

Կարծում ենք՝ առաջ քաշված խնդիրներից խուսափելու նպատակով անհրաժեշտ է Օրենսգրքով հնարավոր մանրակրկտությամբ կարգավորել բարձրացված հարցերը՝ գործնականում դրանցից խուսափելու համար: Բացի այդ՝ հետագա կարգավորումները ուղենիշային կարող են լինել թեկնածուների, կուսակցությունների և արտաքին գովազդային վահանակները տնօրինող կազմակերպությունների միջև քաղաքացիաիրավական պայմանագրերի առավել ճշգրիտ կազմման համար, ինչը, իր հերթին, գործընթացի մեջ առավել հստակություն կմտցնի և թույլ կտա խուսափել նաև քաղաքա-

ցիաիրավական վեճերից⁶³:

Օրենսգիրքը սահմանում է նաև, որ սահմանված կարգի խախտմամբ փակցված քարոզչական պաստառը, քարոզչական տպագիր և այլ նյութերը հանում է համայնքի ղեկավարը, անհրաժեշտության դեպքում՝ ոստիկանության աջակցությամբ: Ըստ գործող կարգավորումների՝ նախընտրական քարոզչության անցկացման ժամանակահատվածում վերացման են ենթակա նաև կենտրոնական կամ տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից նախընտրական քարոզչության հետ ասոցացվող ճանաչված՝ 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով պաստառները, տպագիր և այլ նյութերը այն համայնքներում, որտեղ անցկացվում են ընտրություններ, և որոնց մասնակցում են այդ թեկնածուները, կուսակցությունները: Մինչև 5 քառակուսի մետր մակերեսով՝ նախընտրական քարոզչության հետ ասոցացվող ճանաչված պաստառները, տպագիր և այլ նյութերը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ 5 քառակուսի մետրը գերազանցող՝ նախընտրական քարոզչության հետ ասոցացվող համարված պաստառները, տպագիր և այլ նյութերը ենթակա են վերացման, եթե նշված պաստառների, տպագիր և այլ նյութերի ծախսերը սահմանված կարգով

⁶³ Զուգահեռաբար նշենք, որ Օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ - պարբերությունը նման կարգավորում, թեկուզ ոչ ամբողջական, պարունակում է: Մասնավորապես, համաձայն նշված դրույթի՝ գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու պահից թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների հետ ռադիոընկերությունների և հեռուստաընկերությունների կնքած՝ նախընտրական քարոզչության նպատակով եթեր տրամադրելու պայմանագրերը համարվում են ուժը կորցրած, և դադարեցվում է նախընտրական քարոզչության նպատակով եթերի տրամադրումը:

չեն ներառվում նախընտրական հիմնադրամում:

Քարոզչական տպագիր նյութերը պետք է տեղեկություններ ներառեն պատվիրատուի, տպագրող կազմակերպության և տպաքանակի վերաբերյալ: Առանց նշված տեղեկությունների տպագիր նյութեր տարածելն առաջացնում է վարչական պատասխանատվություն՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով (Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 40.11 հոդված):

Արգելվում է անանուն քարոզչական տպագիր նյութեր տարածելը: Անանուն կամ համապատասխան թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության կողմից չպատրաստված քարոզչական տպագիր նյութեր հայտնաբերելու դեպքում իրազեկ ընտրական հանձնաժողովը դիմում է իրավասու մարմիններ՝ ոչ իրավաչափ գործողությունները դադարեցնելու համար (հոդված 21, 11-րդ մաս):

Ինչպես աշխարհի շատ ընտրական օրենսգրքեր, ՀՀ ընտրական օրենսգիրքը ևս սահմանափակումներ է նախատեսում նախընտրական քարոզչության առնչությամբ:

Օրենսգրքի 23-րդ հոդվածի համաձայն՝ արգելվում է նախընտրական քարոզչություն կազմակերպելը կամ կատարելը, ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածելը, նախընտրական քարոզչության նպատակով ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցները, տարածքները, տրանսպորտային և կապի միջոցները, նյութական ու մարդկային ռեսուրսները, բացառությամբ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապա-

հովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով պետական պահպանության ենթակա բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցառումների, օգտագործելը՝

1) հանրային ծառայության մեջ գտնվողներին, առողջապահական կամ բժշկական կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատողներին իրենց լիազորություններն իրականացնելիս կամ ի պաշտոնե հանդես գալիս.

2) պետական հիմնարկների կամ կազմակերպությունների, համայնքային հիմնարկների կամ կազմակերպությունների, կանոնադրական կապիտալում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների 20 և ավելի տոկոս մասնակցությամբ կազմակերպությունների աշխատակիցներին իրենց աշխատանքային պարտականությունները կատարելիս կամ ի պաշտոնե հանդես գալիս.

3) դատավորներին, դատախազներին, ոստիկանությունում, ազգային անվտանգության ծառայությունում, քրեակատարողական հիմնարկներում, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում, պրոբացիոն ծառայությունում, փրկարար ծառայությունում ծառայողներին, զինծառայողներին, քննչական մարմիններում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննչական մարմինների ղեկավարներ և ղեկավարների տեղակալներ, քննիչներ).

4) ընտրական հանձնաժողովների անդամներին.

5) բարեգործական և կրոնական կազմակերպություններին, միջազգային կազմակերպություններին.

6) օտարերկրյա քաղաքացիներին և կազմակերպություններին, քաղաքացիություն չունեցող անձանց, բացառությամբ մինչև քվեարկության օրն առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց.

7) Մարդու իրավունքների պաշտպանին.

8) Կենտրոնական բանկի նախագահին և խորհրդի անդամներին.

9) Հաշվեքննիչ պալատի անդամներին.

10) Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամներին.

11) ինքնավար մարմինների անդամներին.

12) Բարձրագույն դատական խորհրդի անդամներին.

13) Հանրապետության նախագահին.

14) դիտորդական առաքելություն իրականացնելու համար հավատարմագրված կազմակերպություններին և դիտորդներին:

Հանրային ծառայողների կողմից նախընտրական քարոզչության արգելքի բովանդակությունը հստակեցվեց 2021 թվականի մայիսի 7-ին «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքով: «Հանրային ծառայության մասին» օրենքը լրացվեց 27.1 հոդվածով, որը, կարծես, փորձում է լրացնել հանրային ծառայողների քաղաքական գործունեության կարգավորման բացը: Համաձայն այդ հոդվածի՝ հանրային ծառայողները պարտավոր են ցանկացած հանգամանքում դրսևորել քաղաքական զսպվածություն:

Հանրային ծառայողներն իրավունք ունեն Օրենսգրքով սահմանված կարգով մասնակցելու նախընտրական քարոզ-

չությամբ՝ պահպանելով քաղաքական զսպվածությունը (հոդված 27.1, 3-րդ մաս): Կարծում ենք, սա կարևոր լրացում էր այն առումով, որ հանրային ծառայողների համար հստակեցվեց նախընտրական քարոզչությանը մասնակցելու իրավունքը, իհարկե, պահպանելով Օրենսգրքով սահմանված նախընտրական քարոզչություն կազմակերպելու կամ կատարելու արգելքը:

Հանրային ծառայողները քաղաքական կամ հանրային քննարկումներին, միջոցառումներին, այդ թվում՝ նախընտրական քարոզչությանը մասնակցելիս իրավունք չունեն հանդես գալու ի պաշտոնե կամ նշելու իրենց պաշտոնական դիրքի, կոչման մասին կամ որևէ կերպ օգտագործելու պաշտոնի հեղինակությունը որևէ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) կամ թեկնածուի օգտին (հոդված 27.1, 4-րդ մաս): Ընդ որում, այս կարգավորումը չի կիրառվում ընտրություններին որպես թեկնածու հանդես եկող հանրային ծառայողների նկատմամբ (հոդված 27.1, մաս 5-րդ):

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում հանրային ծառայողի՝ որպես պաշտոնատար անձի, մասնակցությունը քաղաքական բնույթի քննարկումներին պետք է կրի բացառապես տեղեկատվական բնույթ և արտահայտի պաշտոնական դիրքորոշումը (հոդված 27.1, 6-րդ մաս):

Հանրապետության նախագահի և դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների ու դիտորդների նախընտրական քարոզչություն կազմակերպելու կամ կատարելու մասով սահմանափակումն ավելացվել է Օրենսգրքով: Հանրապետության նախագահի սահմանափակումը միանգամայն արդարացված է, եթե նկատի ունենանք նրա

սահմանադրաիրավական կարգավիճակը: Նախ, վերջինս հանդես է գալիս որպես պետության գլուխ և հետևում սահմանադրության պահպանմանը: Այս կարգավիճակի ուժով ինքնին հակասություն կառաջանար, եթե Նախագահն ընտրական գործընթացում ներգրավվեր և որևէ քաղաքական ուժի օգտին կամ նրա դեմ քարոզչություն իրականացներ: Բացի այդ՝ այս փոփոխությունը ներդաշնակ է նաև սահմանադրական մեկ այլ կարգավորման (քաղաքական չեզոքության) տրամաբանության հետ, համաձայն որի, Հանրապետության նախագահն իր լիազորությունների իրականացման ընթացքում չի կարող լինել որևէ կուսակցության անդամ (124-րդ հոդվածի 5-րդ մաս):

Ինչ վերաբերում է Ազգային ժողովի պատգամավորին և անմիջականորեն ընտրողների կողմից ընտրված համայնքների ղեկավարներին և ավագանու անդամներին, ապա, վերջիններիս չի արգելվում քարոզչություն կատարելը կամ քարոզչական նյութ տարածելը, ի հարկե, պահպանելով վարչական ռեսուրսի օգտագործման սահմանափակումը:

Դիտորդական առաքելություն իրականացնելու համար հավատարմագրված կազմակերպությունների և դիտորդների մասով քարոզչություն իրականացնելու սահմանափակումը նախատեսելը պայմանավորված է այն հանգամանքով, որ Օրենսգիրքը, ի թիվս այլ նախապայմանների, դիտորդական առաքելության իրավունքի համար սահմանում է նաև թեկնածուներին կամ ընտրություններին մասնակցող կուսակցություններին չաջակցելը:

Վերը թվարկված սահմանափակումների հետ կապված ունենք նաև հետևյալ դիտարկումը: Մասնավորապես, նա-

խընտրական քարոզչության իրավունք չունեցող հանրային ծառայողների ցանկում, Օրենսգիրքը նշում է նաև քրեակատարողական հիմնարկներում ծառայողներին: Այս առնչությամբ, հարկ է նշել, որ քրեակատարողական ծառայությունը ներառում է նաև ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի մի շարք ստորաբաժանումներում իրականացվող ծառայությունը, իսկ այս մասով, կարծես, վերջիններս դուրս են մնացել սահմանափակումներից, այն դեպքում, երբ մյուս ծառայությունների մասով օգտագործվում է այդ ծառայությանը վերաբերող ընդհանրական ձևակերպումը (ազգային անվտանգության ծառայություն, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն, պրոբացիոն ծառայություն, փրկարար ծառայություն և այլն):

Օրենքով մի ուշագրավ լրացում ևս կատարվեց: Մասնավորապես, մինչև վերջերս օրենսդրորեն ձևակերպված չէր «վարչական ռեսուրս» հասկացությունը: Օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասում լրացում արվեց, համաձայն որի, վարչական ռեսուրսները մարդկային, ֆինանսական և նյութական այն միջոցներն են, որոնց ընտրությունների ժամանակ տիրապետում են հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձինք, որը պայմանավորված է հանրային ոլորտում անձնակազմի, ֆինանսների և հատկացումների նկատմամբ նրանց վերահսկողությամբ:

Օրենսգիրքը սահմանում է նաև հանրային ծառայության մեջ գտնվող թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների կողմից նախընտրական քարոզչության իրականաց-

ման սահմանափակումները: Մասնավորապես, վերջիններս քարոզչությունն իրականացնում են հետևյալ սահմանափակումների հաշվառմամբ.

1) արգելվում է թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցությանը, կողմ կամ դեմ քվեարկելուն ուղղված ուղղակի կամ անուղղակի կոչերը պաշտոնական լիազորություններն իրականացնելիս կամ պաշտոնական դիրքի ցանկացած չարաշահումը՝ ընտրությունների ժամանակ առավելություն ստանալու համար.

2) արգելվում է նախընտրական քարոզչության նպատակով ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցների, տարածքների, տրանսպորտային և կապի միջոցների, նյութական ու մարդկային ռեսուրսների օգտագործումը, բացառությամբ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով պետական պահպանության ենթակա բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցառումների (23-րդ հոդվածի 3-րդ մաս):

Եթե իրականացվում է ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակում ընդգրկված և նախորդ պարբերությունում նշված թեկնածուի այլ գործունեության լուսաբանում, ապա, վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող զանգվածային լրատվության միջոցն այն հաշվի է առնում մյուս թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների գործունեությունը լուսաբանելիս՝ լուսաբանման հավասարության ոչ խտրական

սկզբունքը պահպանելու համար:

Նախընտրական քարոզչության կարևորագույն ուղղություններից է *զանգվածային լրատվամիջոցներով քարոզչությունը*, որին նվիրված է Օրենսգրքի 20-րդ հոդվածը: Ի դեպ, Օրենքի փոփոխությունների հիման վրա Օրենսգրքի 20-րդ հոդվածը նոր խմբագրությամբ է շարադրվել, որի արդյունքում մի քանի կարևոր կարգավորումներ են ներառվել հոդվածի տեքստում:

Համաձայն այդ հոդվածի՝ Ազգային ժողովի, Երևանի ավագանու և մարզկենտրոնների ավագանիների ընտրություններին մասնակցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) ունեն Օրենսգրքով սահմանված չափով ռադիոյի և հեռուստատեսության եթերաժամերից հավասար պայմաններով անվճար և վճարովի (այդ թվում՝ ուղիղ եթերով) օգտվելու իրավունք:

Ազգային ժողովի, Երևանի ավագանու և մարզկենտրոնների ավագանիների ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) հանրային ռադիոյից և հանրային հեռուստատեսությունից անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու կարգը և ժամանակացույցը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ հաջորդ օրը:

Ընտրությունների ժամանակ հանրային ռադիոն և հանրային հեռուստատեսությունը պարտավոր են թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար ապահովել ոչ խտրա-

կան պայմաններ:

Հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության լրատվական հաղորդումներում թեկնածուների, ընտրությունների մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական քարոզչության վերաբերյալ ներկայացվում է անկողմնակալ և գնահատականներից զերծ տեղեկատվություն: Այս կարևոր նորմն էլ ավելի ամրապնդվեց քննարկվող հոդվածում Օրենքով կատարված այն լրացմամբ, որ ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) և թեկնածուների վերաբերյալ նախընտրական քարոզչության հետ չկապված հրապարակումները պետք է լինեն առավելագույնը չեզոք:

Թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից նախընտրական քարոզչություն չիրականացնելը զանգվածային լրատվության միջոցի համար հիմք չէ տվյալ թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության մասին տեղեկություններ չհրապարակելու համար:

Հետաքրքիր է՝ ի՞նչ տեղեկությունների մասին է խոսքը: Օրենսգրքի նման ձևակերպումը անորոշությունների տեղիք է տալիս: Մասնավորապես, հստակ չէ, թե՞ զանգվածային լրատվության միջոցն ի՞նչ տեղեկություններ կարող է հրապարակել: Արդյո՞ք կարելի է ենթադրել, որ խոսքը, օրինակ, թեկնածուի կամ կուսակցության նախընտրական ծրագրի լուսաբանման մասին է: Եթե այո, ապա, լրատվամիջոցը հայեցողության ի՞նչ սահմաններ ունի այդ ծրագիրը լուսաբանելիս: Եվ վերջապես, արդյո՞ք այս կարգավորումից բխում է, որ զանգվածային լրատվության միջոցները պարտավոր են թեկ-

նածուի կամ ընտրություններին մասնակցող կուսակցության մասին տեղեկություններ հրապարակել, թե դա նրանց իրավունքն է: Եթե պարտականությունն է, ապա, կարող ենք այն դիտարկել հավասար, ոչ խտրական լուսաբանման սկզբունքի տիրույթում: Սրանք հարցեր են, որոնք, կարծես, Օրենսգրքում չեն գտել իրենց պատասխանները: Բացի այդ՝ արդարացված չի կարող լինել լուսաբանման հավասարության պահանջը մի թեկնածուի կամ կուսակցության նկատմամբ, որը որոշել է նախընտրական քարոզչություն չիրականացնել: Այս համատեքստում, հարց է առաջանում, թե ինչու՞ է տվյալ թեկնածուն կամ կուսակցությունը մասնակցում ընտրություններին, եթե նախընտրական քարոզչություն չի իրականացնելու: Բացի այդ՝ 2021 թվականի խորհրդարանական ընտրությունների օրինակը առաջ է բերում մեկ այլ խնդիր ևս: Մասնավորապես վերջին ընտրություններին մասնակցում էին 25 կուսակցություններ և դաշինքներ: Դրանցից շատերը իրենց նախընտրական քարոզչության մեջ բավական պասիվ էին և, արդյո՞ք, նման դեպքերում զանգվածային լրատվամիջոցները պետք է իրենց ուսերին վերցնեն վերջիններիս լուսաբանման բեռը:

Գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու պահից թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների հետ ռադիոընկերությունների և հեռուստաընկերությունների կնքած՝ նախընտրական քարոզչության նպատակով եթեր տրամադրելու պայմանագրերը համարվում են ուժը կորցրած, և դադարեցվում է նախընտրական քարոզչության նպատակով եթերի տրամադրումը: Ինչպես վերևում քննարկեցինք, գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչված թեկնածուների, ընտրություններին մասնակցող կու-

սակցությունների քարոզչական պաստառների և այլ նյութերի հեռացման հետ կապված խնդիրը, նույն կերպ, կարծես, Օրենսգրքում անորոշ է ռադիոընկերություններին և հեռուստաընկերություններին ընտրություններին մասնակցող թեկնածուների և կուսակցությունների գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչելու որոշման մասին ծանուցելու հարցը: Ռադիոընկերությունները և հեռուստաընկերությունները վարչական վարույթի մասնակիցներ չեն, հետևաբար Օրենսգրքում հստակ պետք է կարգավորվի ընդունված որոշման մասին վերջիններիս ծանուցելու կարգը և ժամկետները՝ գործնական խնդիրներից խուսափելու համար:

Ազգային ժողովի և 70 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքների ավագանու ընտրությունների ժամանակ հանրային ռադիոն և հանրային հեռուստատեսությունը պարտավոր են հեռարձակել ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական ծրագրերի մասին հաղորդումներ կամ թողարկումներ՝ ապահովելով անկողմնակալություն, հավասարակշռվածություն, գնահատականներից զերծ տեղեկատվություն և հավասար պայմաններ:

Օրենքի հիման վրա խնդրո առարկա հոդվածում կատարված կարևոր լրացումներից էր նաև նախընտրական բանավեճերի իրավական կարգավորումը: Մասնավորապես, 20-րդ հոդվածի խմբագրված տեքստը սահմանում է, որ Ազգային ժողովի և 70 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքների ավագանու ընտրությունների ժամանակ Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը նախընտրական քարոզչության ժամանակահատվածում կազմակերպում է նախընտրական բա-

նավեճեր՝ ապահովելով մասնակցության հավասար պայմաններ բոլոր կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար: Նախընտրական բանավեճերի թեման, ձևաչափը և կանոնները որոշում է Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը: Նախընտրական բանավեճերը հեռարձակվում են ուղիղ եթերով:

Ազգային ժողովի ընտրությունների դեպքում նախընտրական բանավեճերի քանակը չպետք է պակաս լինի երեքից՝ յուրաքանչյուրն առնվազն 90 րոպե տևողությամբ, իսկ բանավեճերից առնվազն մեկին պետք է հրավիրվեն միայն կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների առաջին համարի թեկնածուները: Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցություն (կուսակցությունների դաշինք) պետք է հնարավորություն ունենա մասնակցելու հավասար թվով նախընտրական բանավեճերի:

70 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքների ավագանու ընտրությունների ժամանակ Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը կազմակերպում է առնվազն մեկական, իսկ Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ՝ առնվազն երկու նախընտրական բանավեճ, որոնց մասնակցության հավասար պայմաններ են ապահովվում ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար: Նախընտրական բանավեճի տևողությունը պետք է լինի ոչ պակաս, քան 90 րոպե:

Ինչպես տեսնում ենք, կատարված փոփոխություններում կարմիր թելի պես անցնում է ընտրություններին մասնակցող

կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար հավասար և ոչ խտրական մասնակցության ապահովման սկզբունքը:

Ազգային ժողովի և 70 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքների ավագանու ընտրությունների նշանակումից ոչ ուշ, քան 5 օր հետո Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը հրապարակում է հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության վճարովի եթերաժամի մեկ րոպեի արժեքը, որը չի կարող գերազանցել ընտրությունների նշանակմանը նախորդող վերջին վեց ամսվա համար առևտրային գովազդի միջին արժեքի 50 տոկոսը, և որը մինչև նախընտրական քարոզչության ավարտը չի կարող փոփոխվել (20-րդ հոդվածի 5-րդ մաս): Այստեղ ևս Օրենքով կարևոր փոփոխություն կատարվեց՝ ի նպաստ ընտրություններին մասնակցող կուսակցությունների և դրանց դաշինքների: Մասնավորապես, նախքան Օրենքի ընդունումը Օրենսգրքում սահմանվում էր, որ հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը, չէր կարող գերազանցել ընտրությունների նշանակմանը նախորդող վերջին 6 ամսվա համար առևտրային գովազդի ձևավորված շուկայական արժեքը:

Ընդ որում՝ հանրային հեռուստատեսության և հանրային ռադիոյի համար Օրենսգրքով սահմանված դրույթները հավասարապես տարածվում են նաև թեկնածուներին, ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) նախընտրական քարոզչություն իրականացնելու համար եթերաժամ տրամադրող մասնավոր հի-

մունքներով հեռուստառադիոհեռարձակում, այդ թվում՝ կաբելային (մալուխային) ցանցով, արբանյակային կապով և վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող մյուս հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների վրա՝ անկախ սեփականության ձևից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող մյուս բոլոր հեռարձակողների վրա:

Թեկնածուներին, ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) նախընտրական քարոզչություն իրականացնելու համար եթերաժամ տրամադրող հեռուստառադիոհեռարձակում իրականացնող մասնավոր հեռուստաընկերությունները և ռադիոընկերությունները ընտրությունների նշանակումից ոչ ուշ, քան 5 օր հետո իրենց եթերով հրապարակում են իրենց վճարովի եթերաժամի մեկ բուլետի արժեքը, որը չի կարող գերազանցել ընտրությունների նշանակմանը նախորդող վերջին վեց ամսվա համար առևտրային գովազդի միջին արժեքը, և որը մինչև նախընտրական քարոզչության ավարտը չի կարող փոփոխվել:

Արգելվում է նախընտրական քարոզչությանը վերաբերող ռադիոհաղորդումները և հեռուստահաղորդումներն ընդմիջել առևտրային գովազդով (20-րդ հոդվածի 7-րդ մաս):

Վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունները և ռադիոընկերություններն արբանյակային հեռարձակում իրականացնելիս պարտավոր են պահպանել Օրենսգրքի 20-րդ հոդվածի պահանջները:

Օրենսգիրքը պարտավորեցնում է, որ նախընտրական քարոզչությանը վերաբերող ռադիոհաղորդումները և հեռուստահաղորդումները հեռուստառադիոհեռարձակում իրականացնելիս ձայնագրվեն և տեսագրվեն: Դրանք պահպանվում են առնվազն մինչև ընտրվող մարմնի լիազորությունների ստանձնման օրը (20-րդ հոդվածի 9-րդ մաս):

Տեսալսողական և լսողական հաղորդումներ հեռարձակող հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը:

Այս հանձնաժողովը, որն ունի սահմանադրաիրավական կարգավիճակ, Ազգային ժողովի և 70 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքների ավագանու ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում իրականացնում է հեռուստառադիոհեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար հավասար պայմանների ապահովման գնահատման մշտադիտարկում (մոնիտորինգ): Այդ նպատակով Հանձնաժողովը մշակում և Ազգային ժողովի և 70 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքների ավագանու ընտրությունների նշանակումից ոչ ուշ, քան 7 օր հետո, իսկ արտահերթ ընտրությունների դեպքում 2 օր հետո հրապարակում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացնում վերգետնյա, կաբելային և արբանյակային կապով եթերային հեռարձակում իրականացնող հեռուս-

տաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ընտրություններին մասնակցող կուսակցությունների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը:

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը Ազգային ժողովի և 70 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքների ավագանու ընտրությունների ժամանակ՝ ոչ ուշ, քան նախընտրական քարոզչության համար սահմանված ժամկետի 10-րդ և 20-րդ օրը, ինչպես նաև ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից 2 օր առաջ, հրապարակում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացնում հեռուստառադիոհեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության ժամանակահատվածում Օրենսգրքի 20-րդ հոդվածի պահանջների կատարման մշտադիտարկման արդյունքները և հանձնաժողովի եզրակացությունը՝ հեռուստառադիոհեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ:

Ազգային ժողովի ընտրության երկրորդ փուլ անցկացվելու դեպքում վերոնշվյալ եզրակացությունը Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը հրապարակում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացնում ընտրության երկրորդ փուլի արդյունքների ամփոփման համար Օրենսգրքով սահմանված ժամկետից 2 օր առաջ (20-րդ հոդ-

վածի 12-րդ մաս):

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հիմնադրած զանգվածային լրատվության միջոցները նախընտրական քարոզչության ժամանակահատվածում պարտավոր են թեկնածուների, ընտրությունների մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար ապահովել ոչ խտրական և ոչ կողմնակալ պայմաններ:

Օրենքով սահմանվեց Հայաստանի հանրային հեռուստաընկերության անվճար եթերաժամերի և նախընտրական բանավեճերի ժամանակ հայերեն ժեստերի լեզվով թարգմանություն ապահովելու պահանջ, ինչը, կարևոր քայլ էր ժեստերի լեզվով հաղորդակցվող անձանց տեղեկություններ ստանալու իրավունքների երաշխավորման տեսանկյունից: Բացի այդ՝ սահմանվեց նաև, որ Հայաստանի հանրային հեռուստաընկերության եթերով նախընտրական քարոզչության հետ կապված տեսալսողական հաղորդումների տեսագրություններն ապահովվեն հայերեն ենթագրերով:

Օրենքի կարևոր լրացումներից էր նաև Օրենսգրքում 20.1 հոդվածի ներմուծումը, որը նվիրված է համացանցում նախընտրական քարոզչությանը: Մասնավորապես, համաձայն այդ հոդվածի՝ համացանցում գործող զանգվածային լրատվության միջոցները, ինչպես նաև համացանցային կայքի իրավատեր հանդիսացող անձինք նախընտրական քարոզչության ժամանակահատվածում թեկնածուների, ընտրությունների մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար ապահովում են ոչ խտրական և ոչ կողմնակալ պայմաններ:

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում համացանցում, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցներով, նախընտրական քարոզչությունը վերաբերող՝ վճարովի հիմունքներով գովազդային նյութեր և տեսանյութեր կարող են տեղադրվել միայն թեկնածուի, կուսակցության կամ նրա ներկայացուցչի հետ կնքված գրավոր պայմանագրի հիման վրա՝ նախընտրական հիմնադրամի միջոցների հաշվին (20.1 հոդվածի 2-րդ մաս):

Նախընտրական քարոզչական նյութերի հրապարակումը պետք է ուղեկցվի «Նախընտրական քարոզչություն» լուսագրով, իսկ քարոզչական տեսանյութերի դեպքում՝ տեսանյութի վրա տեղադրվող «Նախընտրական քարոզչություն»՝ անընդմեջ ուղեկցվող լուսագրով: Նախընտրական քարոզչական նյութերի և տեսանյութերի հրապարակումը պետք է տեղեկություններ պարունակի պատմիրատուի վերաբերյալ:

Մի կողմից, ողջունելի է, որ օրենսդիրն առաջին քայլն է արել համացանցում նախընտրական քարոզչության իրավական կարգավորման ուղղությամբ: Մյուս կողմից՝ դրա իրավակարգավորումների բացերը բազում հարցեր են առաջ բերում, որոնք գործնականում կարող են խնդիրներ առաջացնել համացանցում նախընտրական քարոզչության հսկողության նկատմամբ: Մասնավորապես, ո՞ր մարմինը պետք է հսկի համացանցի զանգվածային լրատվամիջոցների կամ համացանցային կայքի իրավատեր հանդիսացող անձանց կողմից նախընտրական քարոզչությունը և խախտումների դեպքում պատասխանատվության միջոցներ կիրառի: Ինչպե՞ս վարվել, եթե օտարերկրյա պետությունում գրանցված համացանցային

զանգվածային լրատվամիջոցը, որը Հայաստանի Հանրապետությունում ունի մեծ լսարան, չի հետևում Օրենսգրքով սահմանված կանոններին: Համացանցով նախընտրական քարոզչության հետ կապված խնդիրները բազմաթիվ են⁶⁴ և եթե դրանք իրենց պատշաճ կանոնակարգումը չստանան, ապա, կստացվի, որ Օրենսգրքում ներմուծված հոդվածը հռչակաբային բնույթ է կրելու և գործնականում ոչինչ չի տալու: Արդյունքում կարող ենք ունենալ մի իրավիճակ, որտեղ համացանցային լրատվամիջոցները կամ կայքերը, որոնք հաճախ փոխկապակցված են կամ ասոցացվում են ընտրություններին մասնակցող այս կամ այն թեկնածուի կամ կուսակցության հետ միակողմանի քարոզչություն կիրականացնեն:

Օրենքի նորամուծություններից է նաև Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ նախընտրական քարոզչական նյութերի հասանելիությունը գորամասերում և զինվորական հաստատություններում (հոդված 93.1): Մասնավորապես, այդ հոդվածի 1-ին մասի համաձայն գորամասերում և զինվորական հաստատություններում գորամասի հրամանատարական կազմը և զինվորական հաստատության ղեկավարությունը զինծառայողների համար ապահովում են տեսալսողական մեդիածառայություններ մատուցողների միջոցով նախընտրական քարոզչությանը հետևելու, ներառյալ քաղաքական գովազդների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) և թեկնածուների

⁶⁴ Համացանցով նախընտրական քարոզչության խնդիրների առնչությամբ տես՝ INTERNET AND ELECTORAL CAMPAIGNS. Study on the use of internet in electoral campaigns. <https://rm.coe.int/use-of-internet-in-electoral-campaigns-/16807c0e24>:

միջև նախընտրական բանավեճերի դիտման հնարավորություն:

Զորամասերում և զինվորական հաստատություններում զորամասի հրամանատարական կազմը և զինվորական հաստատության ղեկավարությունը ապահովում են զորամասի կամ զինվորական հաստատության տարածքում՝ տեղեկատվության համար նախատեսված սենյակում, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների)՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում հրապարակված նախընտրական ծրագրերի մատչելիությունը տպագիր եղանակով, իսկ հնարավորության դեպքում՝ նաև էլեկտրոնային եղանակով՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում հրապարակվելուց հետո՝ երկօրյա ժամկետում:

Զինծառայողներն իրավունք ունեն հետևելու նախընտրական քարոզչությանը ծառայողական պարտականությունների իրականացումից ազատ ժամերին կամ օրերին:

Արգելվում է զինվորական ծառայությունում ստորադասության (ենթակայության) հարաբերությունների օգտագործումը ստորադաս (ենթակա) զինծառայողների՝ նախընտրական քարոզչությանը հետևելու իրավունքի իրականացումն անհիմն սահմանափակելու կամ այլ կերպ խոչընդոտելու նպատակով:

Օրենսգիրքը կարգավորումներ է նախատեսում նաև ընտրողների կամքի ազատ արտահայտման վրա ներգործության արգելքի հետ կապված (հոդված 22): Համաձայն այդ հոդվածի՝ վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող ռա-

դիտրնկերությունների և հեռուստաընկերությունների՝ որպես թեկնածու գրանցված աշխատակիցներին, ինչպես նաև աշխատանքային կամ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր ունեցող անձանց արգելվում են ընտրությունների լուսաբանումը, ռադիոհաղորդումների կամ հեռուստահաղորդումների վարումը, բացառությամբ Օրենսգրքի 20-րդ հոդվածով սահմանված դեպքերի:

Թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների վարկանիշների վերաբերյալ սոցիոլոգիական հարցման արդյունքներ հրապարակելիս հարցումն իրականացնող կազմակերպությունը պարտավոր է նշել հարցման ժամկետները, հարցվողների թիվը և ընտրանքի ձևը, հավաքման ձևը և վայրը, հարցի ճշգրիտ ձևակերպումը, հնարավոր սխալի վիճակագրական գնահատականը և պատվիրատուին:

Թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների վարկանիշների վերաբերյալ լրագրողական հարցման արդյունքները հրապարակելիս հարցում իրականացնող զանգվածային լրատվության միջոցը, ինչպես նաև հարցման արդյունքները վերահրապարակող կամ լուսաբանող անձինք պարտավոր են նշել հարցման ժամկետները, հարցվողների թիվը և ընտրանքի ձևը, հավաքման ձևը և վայրը, հարցի ճշգրիտ ձևակերպումը:

Արգելվում է քվեարկության նախորդ օրը, ինչպես նաև քվեարկության օրը՝ մինչև ժամը 20.00-ն, վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստատեսությամբ, ռադիոյով կամ տպագիր մամուլով թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների վերաբերյալ սոցիո-

լոգիական հարցման արդյունքները, ինչպես նաև դրանց վերաբերյալ տեղեկատվություն հրապարակելը:

Արգելվում են քվեարկության օրը տեղամասային կենտրոնին հարող տարածքում մինչև 50 մետր շառավղով խմբերով հավաքվելը, տեղամասային կենտրոնի մուտքին հարող տարածքում մեքենաների կուտակումը: Այս պահանջների կատարումը, ինչպես նաև այդ տարածքում հասարակական կարգի պահպանումն ապահովում են տեղամասային կենտրոնում ծառայություն իրականացնող ոստիկանության ծառայողները՝ անկախ ընտրական հանձնաժողովի պահանջից (հոդված 20-ի 3-րդ մաս):

Այսիսով՝ ամփոփելով վերոշարադրյալը, կարող ենք արձանագրել, որ Օրենքի հիման վրա կատարված Օրենսգրքի փոփոխությունները և լրացումները՝ նախընտրական քարոզչության մասով, առաջադիմական են, որոնք հետագա ընտրություններում թեկնածուների, կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների համար հավասար և ոչ խտրական քարոզչության իրականացման նախադրյալներ կստեղծեն:

2.3. Ընտրությունների ֆինանսավորման ներպետական կարգավորումները: Արդի օրենսդրական փոփոխություններն ընտրությունների ֆինանսավորման ոլորտում և դրանց իրավաքաղաքական հնարավոր ազդեցությունը

Ինչպես աշխարհի շատ պետությունների ընտրական օրենսդրություններ, ՀՀ ընտրական օրենսդրությունը ևս ընտրությունների ֆինանսավորման երկու խումբ աղբյուրներ է նախատեսում: Առաջին խմբում ներառվում են պետական կամ տեղական բյուջեների միջոցները, որոնք հատկացվում են ընտրությունների կազմակերպման և անցկացման համար, իսկ երկրորդ խմբում՝ ընտրություններին մասնակցող թեկնածուների, կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներ կատարված նվիրատվությունները, որոնք անհրաժեշտ են վերջիններիս ընտրարշավի ֆինանսավորման համար:

Մասնավորապես, Օրենսգրքի 24-րդ հոդվածը սահմանում է, որ ընտրությունների կազմակերպման և անցկացման (ներառյալ՝ ընտրողների ցուցակները կազմելը, ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացները կազմակերպելը), ինչպես նաև ընտրական հանձնաժողովների գործունեության համար անհրաժեշտ ծախսերի ֆինանսավորումը կատարվում է պետական բյուջեի միջոցների հաշվին:

Արտահերթ, նոր հերթական, նոր ընտրությունների, վերաքվեարկությունների, ինչպես նաև Ազգային ժողովի ընտրության երկրորդ փուլի անցկացման դեպքում ընտրությունները ֆինանսավորվում են պետական բյուջեի պահուստային ֆոնդից, իսկ դրա անհնարինության դեպքում Կենտրոնական

ընտրական հանձնաժողովն օգտագործում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ ընտրական գրավների հատուկ հաշվեհամարում առկա միջոցները: Եթե ընտրական գրավների հատուկ հաշվեհամարում առկա միջոցները բավարար չեն, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մրցութային հիմունքներով կարող է վարկ ստանալ մասնավոր բանկերից: Այդ դեպքում օրենքի ուժով համարվում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը այդ գումարի չափով, ներառյալ՝ վարկի սպասարկման գումարը, բանկերին տրամադրել է 3 տարի ժամկետով բյուջետային երաշխիք՝ առանց ապահովման միջոցի: Ընտրական գրավների հատուկ հաշվեհամարից օգտագործված միջոցները և վարկը կառավարությունը եռամյա ժամկետում փոխհատուցում է:

Ընտրությունների կազմակերպման և անցկացման համար նախատեսված ֆինանսական միջոցները (այդ թվում՝ հանձնաժողովների պահպանման համար նախատեսված միջոցները) հատկացվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովին: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը Օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է ֆինանսական միջոցները և պատասխանատու է այդ միջոցները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած նախահաշիվներին համապատասխան օգտագործելու համար:

Օրենսգիրքն առանձին կարգավորումներ է նախատեսում ընտրական գրավի իսնտիտուտի հետ կապված: Մասնավորապես, Օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն թեկնածուները, ընտրություններին մասնակցող կուսակցությունները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հաշվեհամար

րին վճարում են ընտրական գրավ:

Օրենսգիրքը սահմանում է նաև ընտրական գրավի գումարի վերադարձման դեպքերը: Համաձայն 25-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ընտրական գրավի գումարը դիմումն ստանալուց հետո՝ յոթնօրյա ժամկետում, վերադարձվում է՝

1) ընտրվելու կամ մանդատների բաշխմանը մասնակցելու,

2) բոլոր թեկնածուներին կողմ քվեարկած քվեաթերթիկների թվի 5 կամ ավելի տոկոս կողմ քվեարկած քվեաթերթիկներ ստանալու, կուսակցության դեպքում՝ ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին կողմ քվեարկած քվեաթերթիկների թվի 2 կամ ավելի տոկոս կողմ քվեարկած քվեաթերթիկներ ստանալու, իսկ կուսակցությունների դաշինքի դեպքում՝ ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին կողմ քվեարկած քվեաթերթիկների թվի 4 կամ ավելի տոկոս կողմ քվեարկած քվեաթերթիկներ ստանալու,

3) մինչև թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցումն ինքնաբացարկ ներկայացնելու,

4) ընտրության արդյունքներն անվավեր ճանաչվելու և նոր հերթական կամ նոր ընտրություն նշանակվելու դեպքերում կամ

5) ժառանգներին՝ թեկնածուի մահվան դեպքում:

Մյուս բոլոր դեպքերում ընտրական գրավի գումարը չի վերադարձվում:

Պետք է նկատել, որ Օրենքի ընդունմամբ Օրենսգրքի 25-

րդ հողվածում կարևոր փոփոխություն կատարվեց: Մասնավորապես, մինչև Օրենքի ընդունումը կարգավորված չէր կուսակցությունների դաշինքների ընտրական գումարի վերադարձի և դրա շեմի հարցը: Այժմ Օրենսգրքում սահմանվեց, որ այն վերադարձվում է ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին կողմ քվեարկած քվեաթերթիկների թվի 4 կամ ավելի տոկոս կողմ քվեարկած քվեաթերթիկներ ստանալու դեպքում, իսկ կուսակցությունների համար նախկին 4 տոկոսի շեմն իջեցվեց մինչև 2 տոկոս, ինչը կարևոր խթան կհանդիսանա ընտրություններին կուսակցությունների էլ ավելի ակտիվ մասնակցության համար:

Ինչ վերաբերում է նախընտրական հիմնադրամների ձևավորմանը, ապա, Օրենսգրքի 26-րդ հոդվածը սահմանում է, որ Ազգային ժողովի, համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու ընտրությունների դեպքում ընտրություններին մասնակցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները), ինչպես նաև մեծամասնական ընտրակարգով ընտրվող համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուները, ովքեր նախընտրական քարոզչության ընթացքում Օրենսգրքով սահմանված ծախսերի ֆինանսավորման համար օգտագործելու է կամ արդեն օգտագործել է նվազագույն աշխատավարձի 500-ապատիկը գերազանցող գումար՝ պարտավոր են բացել նախընտրական հիմնադրամ թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակը գրանցելու վերաբերյալ որոշումն ընդունելուց հետո՝ 5 օրվա ընթացքում: Նախընտրական հիմնադրամ չբացելու հա-

մար վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում նախընտրական հիմնադրամ չբացելու դեպքում իրավասու ընտրական հանձնաժողովը դիմում է դատարան թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու պահանջով: Կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունները և ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակով առաջադրված թեկնածուներն առանձին նախընտրական հիմնադրամ ձևավորելու իրավունք չունեն: Ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) և թեկնածուների նախընտրական հիմնադրամի միջոցները հավաքվում են Երևանում և հանրապետության բոլոր մարզերում մասնաճյուղ ունեցող որևէ առևտրային բանկում⁶⁵: Այս բանկերի ցանկը Կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը: Նախընտրական հիմնադրամ ձևավորելու նպատակով, թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) դիմումների հիման վրա, բանկերը բացում են ժամանակավոր հատուկ հաշվեհամարներ, որոնք պետք է ունենան անկանխիկ եղանակով վճարումներ իրականացնելու հնարավորություն (օնլայն բանկինգ, վճարային քարտ և

⁶⁵ Մինչև օրենքի ընդունումը Ազգային ժողովի և Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական հիմնադրամի միջոցները հավաքվում էին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում:

այլն)⁶⁶: Այդ հաշվեհամարներից եկամուտներ չեն հաշվարկվում և չեն վճարվում:

Թեկնածուի նախընտրական հիմնադրամը ձևավորվում է՝

- 1) իր կատարած նվիրատվություններից.
- 2) իրեն առաջադրած կուսակցության կատարած նվիրատվություններից.
- 3) ընտրելու իրավունք ունեցող անձանց նվիրատվություններից (26-րդ հոդվածի 2-րդ մաս):

Ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) նախընտրական հիմնադրամը ձևավորվում է՝

- 1) այդ կուսակցության (դաշինքի անդամ կուսակցությունների) կատարած նվիրատվություններից.
- 2) ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի կատարած նվիրատվություններից.
- 3) ընտրելու իրավունք ունեցող անձանց նվիրատվություններից (26-րդ հոդվածի 3-րդ մաս):

Ընդ որում՝ նախորդ երկու պարբերություններում չնշված ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից նախընտրական հիմնադրամների հաշվին մուծված գումարները փոխանցվում են պետական բյուջե: Պետական բյուջե են փոխանցվում նաև նախընտրական հիմնադրամների հաշվին կատարված անանույն նվիրատվությունները:

⁶⁶ Անկանխիկ եղանակով վճարումներ իրականացնելու հնարավորությունը ևս ներմուծվել է Օրենքով, ինչը նախընտրական հիմնադրամներ նվիրատվություններ կատարողների համար հնարավորություն կտա նվիրատվություններն անել առանց բանկ այցելելու:

Նախընտրական հիմնադրամներ կատարվող մուծումների և հիմնադրամներից կատարվող ծախսերի հաշվառման կարգը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (26-րդ հոդվածի 5-րդ մաս)⁶⁷:

Օրենքի նորամուծություններից էր նաև այն, որ նախընտրական հիմնադրամ մուծումներ կատարող ֆիզիկական անձանց վրա պարտավորություն դրվեց նշելու իրենց անունը, ազգանունը և անձը հաստատող փաստաթղթի համարը, որոնք հրապարակման ենթակա չեն: Սա կարևոր քայլ էր հիմնադրամների ձևավորման աղբյուրների նկատմամբ պատշաճ հսկողություն իրականացնելու առումով:

Օրենսգիրքը սահմանում է նաև նախընտրական հիմնադրամներում կատարվող նվիրատվությունների առավելագույն չափերը և այդ չափերը գերազանցող մասերը փոխանցվում են պետական բյուջե:

Այն բանկերը, որտեղ բացված են ժամանակավոր հատուկ հաշվեհամարներ, թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցման համար Օրենսգրքով սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 3 աշխատանքային օրը մեկ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն տեղեկանք են ներկայացնում թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական հիմնադրամների ֆինանսա-

⁶⁷ Օրենքի հիման վրա սահմանվեց, որ նախընտրական հիմնադրամներ կատարվող նվիրատվությունների և հիմնադրամներից կատարվող ծախսերի հաշվառման կարգը մինչև 2023 թվականի հունվարի 1-ը սահմանելու է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:

կան մուտքերի և ելքերի վերաբերյալ⁶⁸: Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունն ամփոփում է այդ տվյալները, կազմում ամփոփ տեղեկանք և այն տեղադրում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

Նախընտրական հիմնադրամի միջոցների նկատմամբ չի կարող կիրառվել արգելանք, այդ միջոցները չեն կարող հանդիսանալ բռնագանձման առարկա՝ թեկնածուի, ընտրությունների մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) նախընտրական քարոզչության հետ չկապված անձնական բնույթի պարտավորություններով:

Թեկնածուները, ընտրությունների մասնակցող կուսակցությունները նախընտրական քարոզչության նախապատրաստման, կազմակերպման և իրականացման հետ կապված ծախսերն իրականացնում են նախընտրական հիմնադրամի միջոցների հաշվին, բացառությամբ Օրենսգրքով նախատեսված դեպքերի: Նախընտրական հիմնադրամի միջոցների հաշվին են կատարվում՝

1) զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչության իրականացման ծախսերը.

2) համացանցով նախընտրական քարոզչության իրականացման, այդ թվում՝ քաղաքական գովազդի հրապարակման ծախսերը.

3) նախընտրական քարոզչության ընթացքում սոցիոլոգիական հարցումների և հետազոտությունների իրականաց-

⁶⁸ 2023 թվականի հունվարի 1-ից նախընտրական հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ տեղեկանքները ներկայացվելու են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով: 2023 թվականի հունվարի 1-ից հետո նախընտրական հիմնադրամների նկատմամբ վերահսկողությունն իրականացնելու է նշված հանձնաժողովը:

ման ծախսերը.

4) նախընտրական ժողովներ, ընտրողների հետ հանդիպումներ և նախընտրական քարոզչության հետ կապված այլ միջոցառումներ անցկացնելու նպատակով դահլիճների, տարածքների վարձակալման ծախսերը.

5) ընտրական շտաբների տեղակայման նպատակով տարածքների վարձակալման ծախսերը.

6) քարոզչական պաստառների, քարոզչական տպագիր և այլ նյութերի պատրաստման (տեղադրման), ձեռքբերման, փակցման, ընտրողներին տրամադրվող քարոզչական բոլոր տեսակի նյութերի, ներառյալ տպագիր նյութերի պատրաստման ու տարածման հետ կապված ծախսերը.

7) նախընտրական քարոզչության նպատակով օգտագործվող տրանսպորտային միջոցների վարձակալության հետ կապված ծախսերը (բացառությամբ մինչև 7 նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների).

8) նախընտրական քարոզչության իրականացման նպատակով կազմակերպված մշակութային կամ մարզական միջոցառումների անցկացման հետ կապված ծախսերը.

9) վստահված անձանց տրվող փոխհատուցման ծախսերը, եթե մեկ վստահված անձի հաշվով փոխհատուցման գումարը գերազանցում է 10 000 դրամը:

Նախընտրական ժողովներ, ընտրողների հետ հանդիպումներ և նախընտրական քարոզչության հետ կապված այլ միջոցառումներ անցկացնելու նպատակով դահլիճների, տարածքների և ընտրական շտաբների կոմունալ ծախսերը, ինչպես նաև նախընտրական քարոզչության նպատակով օգտագործվող տրանսպորտային միջոցների վառելիքի հետ կապ-

ված ծախսերը կարող են չներառվել նախընտրական հիմնադրամում (Օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մաս):

Ընդ որում՝ հարկ է նկատել, որ Օրենքի ընդունմամբ նախընտրական հիմնադրամների միջոցների հաշվին կատարվող ծախսերի ցանկն էականորեն ընդլայնվել է, ինչը նախընտրական քարոզչությունը կդարձնի առավել թափանցիկ և հավասար պայմաններ կստեղծի ընտրություններին մասնակցող թեկնածուների, կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների համար: Մասնավորապես, 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-3, 5, 7-9 կետերով նախատեսված ծախսերն ամբողջությամբ նորամուծություն են:

Նախընտրական հիմնադրամից կատարվող ծախսերի առավելագույն չափը սահմանվում է Օրենսգրքով: Նախընտրական հիմնադրամից վճարումները կատարվում են անկանխիկ եղանակով (27-րդ հոդվածի 1.1 մաս): Վերջին ձևակերպումը ևս Օրենքով արված նորամուծություններից է և միայն անկանխիկ եղանակով կատարվող վճարումներն առավելագույն թափանցիկություն կապահովեն հիմնադրամների միջոցների ծախսման գործընթացում:

Քննարկվող հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ նույն հոդվածի 1-ին մասում նկարագրված ապրանքներն ու ծառայությունները, եթե մատուցվել են անհատույց կամ շուկայական արժեքից պակաս գնով կամ ձեռք են բերվել մինչև նախընտրական հիմնադրամի ձևավորումը, ապա իրենց շուկայական արժեքով ներառվում են նախընտրական հիմնադրամի ծախսերում:

Եթե վերահսկիչ-վերստուգիչ ծառայության եզրակացությամբ նշվում է, որ նախընտրական քարոզչության համար վե-

րոնշյալ ուղղություններով մատուցված ապրանքը կամ ծառայությունը շուկայական արժեքով չի ներառվել նախընտրական հիմնադրամի ծախսերում, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հարուցում է վարչական վարույթ: Եթե հարուցված վարույթի արդյունքում հիմնավորվում է վերահսկիչ-վերստուգիչ ծառայության եզրակացությամբ նշված տեղեկությունը, ապա թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության նկատմամբ կիրառվում է վարչական տույժ՝ հիմնադրամի ծախսերում չներառված ծախսերի եռապատիկի չափով (27-րդ հոդվածի 3-րդ մաս):

Եթե հիմնավորվում է, որ թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության նախընտրական քարոզչության համար կատարված ծախսերը գերազանցել են Օրենսգրքով սահմանված ուղղություններով կատարված ծախսերի սահմանված առավելագույն չափը, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հարուցում է վարչական վարույթ, և եթե վարույթի արդյունքում հիմնավորվում է վերահսկիչ-վերստուգիչ ծառայության եզրակացությամբ նշված տեղեկությունը, ապա թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության նկատմամբ կիրառվում է վարչական տույժ՝ հիմնադրամի՝ Օրենսգրքով սահմանված առավելագույն չափը գերազանցող գումարի եռապատիկի չափով (27-րդ հոդվածի 4-րդ մաս):

Եթե նախընտրական քարոզչության համար Օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ուղղություններով ծախսված գումարի և նույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված՝ պետական բյուջե վճարվող տուգանքի գումարի չափի և նախընտրական հիմնադրամի՝ Օրենսգրքով սահ-

մանված առավելագույն չափի տարբերությունը գերազանցում է նախընտրական հիմնադրամի՝ Օրենսգրքով սահմանված առավելագույն չափի 20 տոկոսը, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովի դիմումի հիման վրա դատարանն ուժը կորցրած է ճանաչում թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի գրանցումը (27-րդ հոդվածի 5-րդ մաս):

Ընդ որում՝ Օրենսգրքի 27-րդ հոդվածով սահմանված գումարները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումից հետո՝ հնգօրյա ժամկետում, պետական բյուջե չփոխանցելու կամ նույն ժամկետում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումը դատական կարգով չբողոքարկելու դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նշված գումարը գանձում է դատական կարգով (27-րդ հոդվածի 6-րդ մաս):

Նախընտրական հիմնադրամների հաշիվների հետ կատարվող բոլոր գործառնությունները դադարեցվում են քվեարկության օրվանից:

Թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների դիմումի հիման վրա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը թույլ է տալիս հիմնադրամից վճարումներ կատարել նաև քվեարկության օրվանից հետո, բայց մինչև քվեարկության օրը կատարված գործարքների համար (27-րդ հոդվածի 8-րդ մաս):

Ազգային ժողովի և համամասնական ընտրակարգով անցկացվող՝ համայնքների ավագանիների ընտրություններից հետո կուսակցության (կուսակցությունների դաշինքի) նախընտրական հիմնադրամում մնացած միջոցներն ընտրութ-

յունների արդյունքների պաշտոնական հրապարակումից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, փոխանցվում են կուսակցության հաշվին, իսկ կուսակցությունների դաշինքի դեպքում հավասարապես բաշխվում են դաշինքը կազմող կուսակցությունների միջև, եթե այլ բան նախատեսված չէ կուսակցությունների դաշինքի որոշմամբ (27-րդ հոդվածի 9-րդ մաս):

Մեծամասնական ընտրակարգով ընտրվող համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրություններից հետո թեկնածուի նախընտրական հիմնադրամում մնացած միջոցներն ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակումից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, փոխանցվում են թեկնածուին առաջադրած կուսակցությանը, իսկ ինքնաառաջադրման դեպքում՝ փոխանցվում են թեկնածուին (27-րդ հոդվածի 9.1. մաս)

Օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 9.1 մասերի ներկայացված խմբագրությունը Օրենքի հիման արված փոփոխության արդյունք է, ինչի արդյունքում ամբողջությամբ փոխվեց ընտրություններից հետո նախընտրական հիմնադրամներում մնացած միջոցների վերադարձի տրամաբանությունը: Մասնավորապես, մինչ Օրենքի ընդունումը, Օրենսգրքի մոտեցումը խնդրո առարկա հարցի հետ կապված հետևյալն էր: Ընտրությունից հետո նախընտրական հիմնադրամում մնացած միջոցներն ընտրության արդյունքների պաշտոնական հրապարակումից հետո՝ եռամսյա ժամկետում, թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության հայեցողությամբ օգտագործվում էին բարեգործական նպատակներով: Եռամսյա ժամկետը լրանալուց հետո նախընտրական հիմնադրամում մնացած միջոցները փոխանցվում էին պետական բյուջե:

Սա, իր հերթին, արհեստականորեն կարող էր բերել նախընտրական հիմնադրամների միջոցների ծախսմանը ավելորդ և ոչ անհրաժեշտ ուղղություններով: Սա պայմանավորված էր այն հանգամանքով, որ ընտրություններին մասնակցող թեկնածուները և կուսակցությունները, հնարավոր է և, մտադրություն չունենային նախընտրական հիմնադրամներում մնացած միջոցները բարեգործության վրա ծախսելու: Իսկ ներկա խմբագրությամբ լուծումը, կարծես, առավել ողջամիտ է թվում, այն հաշվով, որ միջոցների մնացորդը կվերադարձվի թեկնածուներին, կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին, իսկ վերջիններս, ըստ իրենց հայեցողության, կարող են այդ միջոցներն օգտագործել ցանկացած նպատակով, այդ թվում՝ բարեգործական:

Ընտրությունները չկայացած ճանաչվելու կամ ընտրություններն անվավեր ճանաչվելու և նոր հերթական կամ նոր ընտրություններ նշանակվելու դեպքերում նախընտրական հիմնադրամում մնացած միջոցները սառեցվում են մինչև նոր հերթական կամ նոր ընտրությունների համար թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցումը: Նոր հերթական կամ նոր ընտրությունների դեպքում թեկնածուները, ընտրություններին մասնակցող կուսակցությունները կարող են օգտագործել իրենց նախընտրական հիմնադրամներում մնացած միջոցները:

Նոր հերթական կամ նոր ընտրություններին չմասնակցող թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական հիմնադրամներում մնացած միջոցները տնօրինվում են Օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և

9.1-ին մասերով սահմանված կարգով:

Օրենսգրքի 27-րդ հոդվածի դրույթները կիրառվում են նաև Ազգային ժողովի ընտրության երկրորդ փուլի ընթացքում:

Թեկնածուները, ընտրություններին մասնակցող կուսակցություններն իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը ներկայացնում են վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո՝ 10-րդ, Ազգային ժողովի, համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների հերթական ընտրությունների ժամանակ՝ նաև 20-րդ օրը, ինչպես նաև ընտրությունների արդյունքների ամփոփման համար՝ Օրենսգրքով սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ: Հայտարարագրին կցվում են Օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասում նշված, ինչպես նաև նախընտրական քարոզչության նպատակով կատարված և հայտարարագրման ենթակա այլ ծախսերը հիմնավորող փաստաթղթերը (պայմանագիր, հանձնման-ընդունման ակտ, հաշիվ-ապրանքագիր, վճարման անդորրագիր և այլն):

Ազգային ժողովի ընտրության երկրորդ փուլ անցկացվելու դեպքում երկրորդ փուլին մասնակցող կուսակցությունը նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը ներկայացնում է վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն՝ ընտրությունների արդյունքների ամփոփման համար Օրենսգրքով սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ:

Հայտարարագրի էլեկտրոնային ձևը սահմանում է Կենտ-

րոնական ընտրական հանձնաժողովը: Հայտարարագրի ձևը ներառում է նաև ուղեցույց հայտարարագիրը կազմելու և ներկայացնելու կարգի ու ժամկետների մասին:

Հայտարարագրում նշվում են՝

1) նախընտրական հիմնադրամ կատարված նվիրատվությունների ժամանակագրությունը, նվիրատվության գումարի չափը և նվիրատվություն կատարած անձանց մասին տվյալները.

2) Օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված յուրաքանչյուր ծառայության, գույքի, ապրանքի ձեռքբերման համար կատարված ծախսերը, դրանց կատարման ժամկետը, ծախսերի կատարումը հաստատող փաստաթղթերի տվյալները.

3) հիմնադրամում մնացած գումարի չափը:

Հայտարարագրերը ներկայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, տեղադրվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում (Օրենսգրքի հոդված 28):

Օրենսգրքի 29-րդ հոդվածը նվիրված է Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությանը⁶⁹, վերջինիս լիազորություններին: Համաձայն այդ հոդվածի՝ վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունն իրականացնում է նախընտրական հիմնադրամներ կատարվող մուծումների, ծախսերի և դրանց հաշվարկման, ինչպես նաև կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գոր-

⁶⁹ Ինչպես արդեն վերևում նշել ենք, Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը 2023 թվականից հունվարի 1-ից կդադարեցնի իր գործունեությունը և նախընտրական հիմնադրամների նկատմամբ վերահսկողությունն ամբողջ ծավալով կիրականացվի Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

ծունեության նկատմամբ վերահսկողություն: Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը գործում է ընտրական հանձնաժողովներից անկախ և հաշվետու չէ նրանց:

Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ղեկավարի պաշտոնը ինքնավար պաշտոն է, ծառայության մյուս երկու աշխատակիցները քաղաքացիական ծառայողներ են: Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ղեկավարը նշանակվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ՝ 7 տարի ժամկետով: Ծառայության ղեկավարը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ:

Նախընտրական հիմնադրամներ կատարվող մուծումների, ծախսերի և դրանց հաշվարկման նկատմամբ թափանցիկությունն ու հրապարակայնությունն ապահովելու նպատակով Ազգային ժողովի ընտրությունները նշանակվելուց հետո՝ տասնօրյա ժամկետում, Ազգային ժողովի յուրաքանչյուր խմբակցություն վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունում կարող է նշանակել Հայաստանի Հանրապետությունում աուդիտորի որակավորում ստացած ընտրական իրավունք ունեցող մեկ աուդիտորի: Ազգային ժողովի խմբակցությունների՝ վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունում նշանակած աուդիտորները վարձատրվում են երկու ամսվա համար, յուրաքանչյուր ամսվա համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի անվանական չափի եռապատիկի չափով: Նրանց գործունեությունն ավարտվում է ընտրությունների արդյունքների հրապարակումից հետո՝ 5-րդ օրը:

Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների ժամանակ վերահսկիչ-

վերստուգիչ ծառայությունում մինչև մեկ ամիս ժամկետով պայմանագրային հիմունքներով կարող են ընդգրկվել մինչև 5 մասնագետ:

Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը ստանալուց հետո՝ 7 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան ընտրության արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից մեկ օր առաջ ստուգում, ստուգման արդյունքներով կազմում է եզրակացություն և ներկայացնում Կենտրոնական ընտրական հանձնաժողով: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պարտավոր է այն անհապաղ հրապարակել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում: Եզրակացության մեջ խախտումներ արձանագրված լինելու դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պարտավոր է քննարկել այն: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի այդ նիստին հրավիրվում է վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ներկայացուցիչը:

Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության լիազորություններն են՝

1) ստանալ համապատասխան տեղեկություններ, տեղեկանքներ, փաստաթղթերի պատճեններ՝ թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների նախընտրական հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ այն բանկերից, որտեղ նախընտրական հիմնադրամներ ձևավորելու համար բացվել են ժամանակավոր հատուկ հաշվեհամարներ.

2) բանկերից, կուսակցություններից և ապրանքներ մատակարարող, ծառայություններ մատուցող կամ աշխատանքներ կատարող այլ կազմակերպություններից ստանալ համապատասխան տեղեկություններ, տեղեկանքներ, փաստաթղթերի պատճեններ՝ կուսակցությանը վճարված անդամակցության վճարների, կուսակցությանը կատարված նվիրատվությունների, բյուջետային ֆինանսավորման, քաղաքացիական իրավական գործարքներից ստացված դրամական միջոցների և օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերի և ծախսերի վերաբերյալ:

3) իր գործունեությանն առնչվող հարցերի վերաբերյալ նախապատրաստել որոշումների նախագծեր և դրանք ներկայացնել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի քննարկմանը:

Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության գործունեության կարգը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ Օրենսգրքի և «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխան:

Այսպիսով՝ ամփոփելով ընտրությունների ֆինանսավորման օրենսդրական կարգավորումները և դրանցում կատարված վերջին փոփոխությունները, կարող ենք եզրահանգել, որ դրանք նշանակալի դերակատարում կարող են ունենալ ընտրական գործընթացների առավել թափանցիկ իրականացման համար: Մասնավորապես, առանձնացնենք այն, որ նախընտրական հիմնադրամների ծախսման ուղղությունները շեշտակիորեն ընդլայնվել են, ինչը առավելագույն թափանցիկություն կհաղորդի նախընտրական քարոզչությանը: Մյուս

կարևոր փոփոխությունը, թերևս, քարոզարշավից հետո նախընտրական հիմնադրամներում մնացած միջոցների վերադարձի նոր կառուցակարգի ներդրումն է, ինչը կբերի հիմնադրամների միջոցների առավել ողջամիտ ծախսմանը: Եվ, ի վերջո, նախընտրական հիմնադրամների մուտքերի և ելքերի վերահսկման ձևաչափի փոփոխությունը: 2023 թվականից սկսած այն կիրականացնի Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ համապատասխան օրենքի հիման վրա, ինչը, կարծում ենք, դրական ազդեցություն կունենա ընտրական գործընթացների առավել պատշաճ կազմակերպման համար:

ԳԼՈՒԽ 3.

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋՈՑ

3.1. Դիտորդական առաքելության նպատակն ու գործառույթները

Ընտրությունները հանդիսանում են ժողովրդավարական կառավարման նախապայմաններից, քանի որ իրենցից ներկայացնում են մեխանիզմ, որով երկրի բնակչությունը, օրենսդրությամբ սահմանված ընթացակարգի հիման վրա, ազատորեն արտահայտում է իր կամքն այն հարցի վերաբերյալ, թե ո՞վ ունի իր անունից և ի շահ իրեն իշխանություն իրականացնելու օրինական իրավունք: Այս կարևորագույն դրույթն ամրագրված է նաև ՀՀ սահմանադրության 2-րդ հոդվածում, որը հանդիսանում է Սահմանադրության առանցքային դրույթներից մեկը: Համաձայն Սահմանադրության 2-րդ հոդվածի՝ «Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: Իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է:»⁷⁰: Այն երկրներում, որտեղ կառավարությունն ընտրվում է

⁷⁰ ՀՀ սահմանադրություն, ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118, ընդունվել է 2015 թվականի դեկտեմբերի 6-ին:

օրինական ճանապարհով՝ ժողովրդավարական ընտրությունների միջոցով, նրա իշխանության վրա ոչ ժողովրդավարական ոտնձգությունների հնարավորությունները սահմանափակ են:

Դիտորդական առաքելության նպատակն ու գործառնությունները սահմանված են բազմաթիվ միջազգային փաստաթղթերում, որոնք մենք կուսումնասիրենք այս աշխատանքի շրջանակներում:

Ընտրությունների կարևորությամբ է պայմանավորված, որ ընտրական գործընթացի իրականացումն ապահովող լայն սուբյեկտային կազմ է ներգրավված այդ գործընթացում: Այս մասում իրենց առանձնահատուկ տեղն ունեն դիտորդական առաքելություն իրականացնող տեղական հասարակական և միջազգային կազմակերպությունները, որոնք այդ առաքելությունն իրականացնում են իրենց կազմակերպության դիտորդների միջոցով:

Ընտրությունների միջազգային դիտարկումն արտահայտում է ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու միջազգային հանրության շահագրգռվածությունը՝ որպես ժողովրդավարության զարգացման մի մաս՝ ներառելով մարդու իրավունքների և օրենքի գերակայության նկատմամբ հարգանքը: Ընտրությունների միջազգային դիտարկումը, որը կենտրոնանում է քաղաքացիական և քաղաքական իրավունքների վրա, ինչպես արդեն նշվեց, մարդու իրավունքների միջազգային դիտարկման մի մասն է, և պետք է իրականացվի անաչառության ամենաբարձր չափանիշներով՝ ազգային քաղաքական մրցակիցների նկատմամբ և գերծ լինի երկկողմ կամ բազմակողմ նկատառումներից, որոնք կարող են հակա-

սել միմյանց: Առհասարակ, ընտրությունները մշտապես գտնվել են դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների հետաքրքրությունների կենտրոնում, որի նպատակն է՝ ժողովրդավարական ընտրությունների արդյունավետ իրականացման ապահովումը:

Ընտրությունների դիտարկումն ինքնանպատակ չէ: Այն նպատակ չի հետապնդում քննադատել երկրներին սկզբից մինչև վերջ ժողովրդավարական ընտրություններ չանցկացնելու, կամ գովաբանել այլ երկրներին իրենց պարտավորությունները կատարելու համար: Ընտրությունների դիտարկումն առավել գործնական նպատակով է օժտված՝ օգնել պետություններին բարելավել իրենց ընտրական գործընթացների արդյունավետությունը:

Մինչև դիտորդական առաքելության նպատակներին անդրադառնալը, նախ, հասկանանք «նպատակ» և «գործառույթ» եզրույթների բացատրությունը: Այսպես, բազմաթիվ ռուսական բացատրական բառարաններում «նպատակ» բառը բացատրվում է որպես «մարդկային վարքագծի և գիտակից գործունեության տարրերից մեկը, որը բնութագրում է մտածողության՝ որպես գործունեության, արդյունքի կանխատեսումը և դրա իրականացման եղանակը՝ որոշակի միջոցների օգնությամբ»: Հին փիլիսոփայության մեջ նպատակի նշանակությունը զարգացրել է Արիստոտելը, ով նպատակը մեկնաբանել է որպես «այն, ինչի համար որևէ բան գոյություն ունի»: Մարդկային գործունեությանը բնորոշ նպատակի գաղափարը տարածելով բնության վրա՝ Արիստոտելը նպատակը բացատրել է՝ որպես գոյության վերջնական պատճառ (*causa finalis*): Կարճ ասած՝ նպատակը դա այն է, ինչ պետք է ստանանք

որևէ գործունեության արդյունքում: Ինչ վերաբերում է «գործառույթ» եզրույթին, ապա, այս եզրույթը լատինական function բառից է, որը նշանակում է իրականացում, կատարում, ինչպես նաև այն բացատրվում է որպես գործունեության, պարտականությունների, աշխատանքի շրջանակ, հարաբերությունների որոշակի համակարգում առարկայի հատկությունների արտաքին դրսևորում, որոշակի ինստիտուտի կամ գործընթացի դերն ամբողջի նկատմամբ:

Եթե փորձենք վերլուծել այս երկու եզրույթների հասկացությունները, ապա, կտեսնենք, որ այս երկու եզրույթները փոխլրացնում են միմյանց: Այսինքն՝ ստացվում է, որ գործառույթը հենց այն միջոցների ու մեխանիզմների ամբողջությունն է, որը հնարավորություն է տալիս հասնել որևէ գործունեության ցանկալի արդյունքին, նպատակի: Հետևաբար, գործառույթը նպատակին հասնելու միջոցն է: Նախ, ուսումնասիրենք այն նպատակները, որոնք իրենց առաջ դրել են դիտորդական առաքելություն իրականացնող միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունները, այնուհետև, անդրադառնանք, այն միջոցներին, մեթոդներին, մեխանիզմներին՝ գործառույթներին, որոնց միջոցով նշված կազմակերպությունները հասնելու են այդ նպատակին:

Ընտրությունների դիտարկման ցանկացած միջոցառման նպատակը կայանում է նրանում, որպեսզի գնահատվի, թե որքանով է տվյալ ընտրական գործընթացը համապատասխանում ժողովրդավարական ընտրությունների միջազգային չափանիշներին, արտացոլված են արդյոք այդպիսի պարտավորություններն ազգային օրենսդրությամբ և ինչպե՞ս է այդ օրենսդրությունն իրականացվում: Ընտրությունների դիտարկ-

ման խնդիրների մեջ մտնում են նաև անհրաժեշտ բարելավումների կարիք ունեցող ոլորտների բացահայտումը, ինչպես նաև միջազգային փաստաթղթերում ամրագրված միջազգային չափանիշներին համապատասխան ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու կոնկրետ և արդյունավետ առաջարկությունների մշակումը:

Օրինակ, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ «Ընտրությունների դիտարկման ձեռնարկում» գրված է. «Ընտրությունների դիտարկումը Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) հիմնական բաղադրիչներից մեկն է, որի նպատակն է աջակցել մարդու իրավունքներին, ժողովրդավարությանը և օրենքի գերակայությանը՝ ամբողջ Եվրոպայի, Կենտրոնական Ասիայի և Հյուսիսային Ամերիկայի տարածքում⁷¹: Բացի այդ, ԺՀՄԻԳ-ի ընկալմամբ, ընտրությունների դիտարկման նպատակը կայանում է հետևյալում՝ գնահատել, թե որքանով է ընտրական գործընթացը համապատասխանում պետության կողմից ստանձնած պարտավորություններին՝ ԵԱՀԿ-ի և ժողովրդավարական ընտրությունների այլ ընդհանուր սկզբունքների շրջանակներում: Ընտրությունները նաև գնահատվում են երկրի ներքին օրենսդրությանը համապատասխանության տեսանկյունից, և դիտարկման հիմնական նպատակն է աջակցել պետություններին ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու իրենց պարտավորությունների կատարման մեջ: Իսկ ԱՊՀ-ն, դիտարկում իրականացնելիս, իր դիտորդների առաքելության հիմնական նպատակ է հռչակել՝ իրենց ապագան որոշող քաղաքացիների հա-

⁷¹ Ընտրությունների դիտարկման ձեռնարկ
/https://www.osce.org/files/f/documents/5/9/78697.pdf, հոդ. 7:

մար ազատ, անկախ ընտրության պայմանների ապահովումը: Միևնույն ժամանակ, առաքելության եզրակացությունները պետք է հիմնված լինեն ազգային օրենսդրության և ԱՊՀ փաստաթղթերի վրա, որոնք վերաբերում են ընտրական ոլորտին:

Ընտրությունների դիտարկումը կարող է բարձրացնել ընտրական գործընթացների արժանահավատությունը՝ խախտումներն ու կեղծիքները կանխելու և հրապարակելու, ինչպես նաև ընտրական գործընթացը բարելավելու վերաբերյալ առաջարկություններ անելու ճանապարհով: Այն կարող է նպաստել հանրային վստահության ձևավորմանը, ինչպես պահանջում է ընտրական գործընթացը, նպաստել ընտրողների առավել ակտիվ մասնակցությանը և նվազեցնել ընտրական վեճերի առաջացման պոտենցիալ շարժառիթները: Ընտրությունների դիտարկումն ուղղված է ընտրությունների նկատմամբ վստահության բարձրացմանը՝ խախտումներն ու կեղծիքները կանխելու և վեր հանելու, ընտրակեղծիքների պոտենցիալ հնարավորությունները մեղմելու և ընտրական ու քաղաքական գործընթացների բարելավման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու ճանապարհով: Այն նաև ծառայում է միջազգային և տեղական մակարդակով իրազեկության բարձրացման նպատակին՝ ժողովրդավարության զարգացման վերաբերյալ փորձի և տեղեկատվության փոխանակմամբ:

Վերոգրյալին համապատասխան՝ ընտրությունների անկողմնակալ դիտարկման նպատակն է՝ ապահովել ընտրական գործընթացի ամբողջականությունը՝ գործընթացի յուրաքանչյուր ասպեկտի վերաբերյալ ճշգրիտ և անաչառ դիտարկմամբ և հաշվետվողականությամբ, գնահատելու, թե արդյո՞ք

այն ընթանում է բաց և թափանցիկ ձևով, ինչպես նաև՝ ապահովել ազգային սահմանադրությունների, ընտրական օրենքների և կանոնակարգերի, պայմանագրային պարտավորությունների և ժողովրդավարական ընտրություններին առնչվող այլ միջազգային պարտավորությունների հետ համապատասխանությունը: Բացի այդ, ընտրությունների անկողմնակալ դիտարկումը նպատակ ունի մոբիլիզացնել քաղաքացիներին, որպեսզի իրականացնեն հանրային գործերին մասնակցելու իրենց իրավունքը՝ որպես ընտրությունների անաչառ դիտորդներ, ինչպես նաև նպատակ ունի՝ նպաստել ընտրություններին և քաղաքական գործընթացներին քաղաքացիների մասնակցության խթանմանը:

Որպեսզի դիտորդական առաքելությունը կարողանա իրականացնել իր առջև դրված նպատակները, ապա, ընտրությունների դիտարկումը ենթադրում է հետևյալ գործառույթները՝ ընտրությունների անցկացմանն առնչվող օրենքների, գործընթացների և ինստիտուտների, ընդհանուր ընտրական միջավայրին առնչվող այլ գործոնների մասին տեղեկատվության համակարգված, համապարփակ և մանրակրկիտ հավաքում:

Ընտրությունների մանրակրկիտ և անաչառ դիտարկումը պահանջում է հուսալի մեթոդաբանություն և համագործակցություն ազգային իշխանությունների, քաղաքական պայքարի ազգային քաղաքական մասնակիցների (քաղաքական կուսակցությունների, թեկնածուների և հանրաքվեի հարցերով դիրքորոշումների կողմնակիցների), ընտրությունների նկատմամբ դիտորդություն իրականացնող ազգային կազմակերպությունների և ընտրությունների դիտարկման միջազգային այլ վստահելի կազմակերպությունների հետ:

Դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպություններն ընդունում են, որ ընտրական գործընթացին հետևելու համար կան բազմաթիվ հուսալի մեթոդներ և պարտավորվում են տեղեկատվության փոխանակման միջոցով, անհրաժեշտության դեպքում, համաձայնության գալ տարբեր մեթոդների վերաբերյալ: Նրանք նաև ընդունում են, որ ընտրությունների դիտորդական առաքելությունները պետք է լինեն բավականաչափ մեծ՝ քանակապես, որպեսզի կարողանան անկախ և անաչառ կերպով որոշել ընտրական գործընթացի բնույթը տվյալ երկրում, իսկ այդ առաքելությունը պետք է տևի բավական երկար ժամանակ, որպեսզի նրանք կարողանան վեր հանել ընտրական գործընթացի բոլոր կարևոր տարրերի բնութագրական հատկանիշները՝ նախընտրական փուլում, ընտրությունների օրը և հետընտրական շրջանում:

Դիտորդական առաքելության շրջանակներում ուսումնասիրվում են ընտրելու և ընտրվելու իրավունքի իրացման հետ կապված պայմանները, ներառյալ, ի թիվս այլոց, խտրականությունը կամ ընտրական գործընթացին մասնակցելու այլ խոչընդոտները՝ ելնելով քաղաքական և այլ տեսակետներից, սեռից և ռասայից, մաշկի գույնից, էթնիկ պատկանելությունից, լեզվից, կրոնից, ազգային կամ սոցիալական ծագումից, հարստությունից, ունեցվածքից կամ սոցիալական այլ կարգավիճակից, ինչպես օրինակ՝ հաշմանդամություն ունեցող անձանց կարգավիճակը: Միջազգային և տեղական դիտորդական առաքելությունների եզրակացություններն իրականում ընդհանուր ելակետ են բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրված են ընտրություններով՝ ներառյալ քաղաքական պայքարի մասնակիցները: Այն կարող է, հատկապես, կարևոր

նշանակություն ունենալ ընտրությունների արդյունքները վիճարկելիս, երբ օբյեկտիվ և արժանահավատ եզրակացությունները կարող են թուլացնել վեճի առաջացման պոտենցիալ գործոնները:

Միջազգային փաստաթղթերում դիտորդական առաքելություն իրականացնելու համար կա հստակ ամրագրված պահանջ, որ դիտորդական առաքելության կազմում չի կարելի ընդգրկել որևէ անձի, եթե նա ունի որևէ քաղաքական, տնտեսական կամ այլ շահեր, որոնք կխանգարեն ընտրական գործընթացի բնույթի վերաբերյալ դիտարկումների և (կամ) եզրակացություններ անելու ճշգրտությանը և օբյեկտիվությանը: Այս պահանջները պետք է արդյունավետ կերպով պահպանվեն և՛ երկարաժամկետ, և՛ կարճաժամկետ դիտորդների համար:

Դիտորդական առաքելության արդյունավետ իրականացման պահանջներից է նաև այն, որ դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունները չպետք է ընդունեն այն պետական մարմինների ֆինանսական կամ նյութական օժանդակությունը, որոնց ընտրությունները նրանք դիտարկում են, քանի որ դա կարող է ստեղծել շահերի բախում և խաթարել առաքելության արդյունքների արժանահավատությունը:

Դիտորդական առաքելությունները պետք է ժամանակին, արժանահավատ և անկողմնակալ հայտարարություններ տարածեն հանրության համար (այդ թվում՝ դրանց պատճենները տրամադրեն ընտրական մարմիններին և այլ ազգային համապատասխան հաստատություններին)՝ ներկայացնելով իրենց եզրահանգումները, եզրակացությունները և ցանկացած հա-

մապատասխան առաջարկություններ, որոնք նրանք կհամարեն օգտակար՝ ընտրական գործընթացների կատարելագործման համար: Առաքելությունները պետք է հրապարակայնորեն հայտարարեն երկրում իրենց ներկայության մասին, այդ թվում՝ իրենց լիազորությունների, կազմի և դիտարկման ժամկետի մասին, ըստ անհրաժեշտության, պարբերաբար ներկայացնեն հաշվետվություններ և ընտրական գործընթացի ավարտին թողարկեն ընտրությունների արդյունքների նախնական հայտարարություն և վերջնական գեկույց:

Որպեսզի դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունն արդյունավետ իրականացնի իր առաքելությունը, շատ կարևոր է այն, որ վերջինս պետք է իրականացվի այն երկրի ինքնիշխանության նկատմամբ հարգանքի պայմաններում, որտեղ այդ առաքելությունն իրականացվում է, ինչպես նաև երկրի բնակչության մարդու իրավունքները հարգելու պայմաններում: Դիտորդական առաքելությունները պետք է հարգեն ընդունող երկրի օրենքները, ինչպես նաև հարգանք ցուցաբերեն ազգային իշխանության մարմինների, ներառյալ ընտրական մարմինների նկատմամբ, և իրենց գործունեությունը վարեն այնպես, որ այն համահունչ լինի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգմանն ու խրախուսմանը: Նրանք նաև պետք է ակտիվորեն ձգտեն համագործակցել ընդունող երկրի ընտրական մարմինների հետ և չպետք է խոչընդոտ հանդիսանան ընտրական գործընթացի իրականացման համար:

Դիտորդական առաքելությանը վերաբերող միջազգային և ազգային փաստաթղթերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ դիտորդական առաքելություն իրակա-

նացնող կազմակերպությունների գործառույթների շարքում կարևոր է առանձնացնել հետևյալները՝

- ❖ ընտրական գործընթացի շրջանակներում կապ հաստատել քաղաքական պայքարի բոլոր մասնակիցների հետ, ներառյալ՝ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների և թեկնածուների, ովքեր կարող են տիրապետել տեղեկատվության, որը վերաբերում է ընտրական գործընթացի որակին,

- ❖ խրախուսել ընտրական գործընթացի բնույթի վերաբերյալ նրանց կողմից տրվող տեղեկատվության ներկայացումը,

- ❖ կատարել տեղեկատվության անկախ և օբյեկտիվ գնահատում,

- ❖ ապահովել տեղեկատվության թափանցիկությունը՝ կապված դիտարկման ընթացքում կիրառվող սկզբունքների և մեթոդների հետ,

- ❖ որպես միջազգային ընտրությունների դիտարկման կարևոր ասպեկտ՝ գնահատել, թե արդյո՞ք քաղաքական պայքարի մասնակիցներին հնարավորություն ընձեռնված է ընտրական գործընթացի բոլոր փուլերում իրականացնել ընտրական գործընթացի բոլոր տարրերի ամբողջականության ստուգում՝ առանց խտրական հիմքերի,

- ❖ ընտրությունների դիտորդական առաքելություններն իրենց առաջարկություններում պետք է ապահովեն ընտրական գործընթացի ամբողջականությունը:

Միջազգային փաստաթղթերը դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպություններին օժտել են հիմնականում նույն մանդատով՝ իրականացնել ընտրական գոր-

ծընթացի դիտարկում՝ ընտրություններից առաջ, ընթացքում և ընտրություններից հետո՝ հետևյալ գործառույթների հետևողական իրականացմամբ՝

ա) հետևել, որ բոլոր ընտրական մարմինների կողմից ձեռնարկվող միջոցառումներն ու որոշումները լինեն անաչառ և համահունչ՝ ազատ ու արդար ընտրությունների սկզբունքներին,

բ) հետևել, որ ձեռնարկվեն համապատասխան միջոցներ, որպեսզի ընտրողների ցուցակներում ընդգրկվեն քվեարկելու իրավունք ունեցող քաղաքացիները, որը նրանց թույլ կտար իրականացնել ընտրելու իրենց իրավունքը,

գ) հետևել բազմակի քվեարկությունը կանխելու արդյունավետ մեխանիզմների ստեղծմանը՝ հաշվի առնելով ընտրություններից առաջ ընտրողների ցուցակների ստուգման գործնական անհնարիությունը,

դ) հետևել՝ խոսքի, միավորումների, տեղաշարժման և հավաքների ազատության անարգել իրականացման ապահովմանը,

ե) հետևել, որ պոտենցիալ ընտրողները բավականաչափ իրազեկված լինեն ընտրություններին մասնակցելու մեխանիզմներին,

զ) ընտրությունների օրը դիտորդներ ուղարկել բոլոր ընտրական տեղամասեր՝ ընտրական իրավունքի լիարժեք իրականացումը վերահսկելու համար:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրությունը դիտորդական առաքելության իրավունքը սահմանելով՝ նույնպես հստակեցրել է կոնկրետ նպատակները, որոնք ամրագրված են դիտորդական առաքելություն իրականացնելու

համար հավատարմագրվել ցանկացող կազմակերպությունների կանոնադրություններում: Մասնավորապես, Ընտրական օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք ունեն՝

1) միջազգային կազմակերպությունները և օտարերկրյա այն հասարակական կազմակերպությունները, որոնց կանոնադրական նպատակները ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր.

2) Հայաստանի Հանրապետության այն հասարակական կազմակերպությունները, որոնց կանոնադրական նպատակներն ընտրությունները նշանակելու օրվան նախորդող նվազագույնը մեկ տարի ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր, և որոնք չեն աջակցում թեկնածուներին կամ ընտրություններին մասնակցող կուսակցություններին:»:

Այսինքն՝ ստացվում է, որ ՀՀ ընտրական օրենսդրությունը դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունքը հավատարմագրման միջոցով տրամադրում է այն կազմակերպություններին, որոնց կանոնադրական նպատակները ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր:

Դիտորդական առաքելության հիմնական նպատակներն ու գործառնությունները սահմանող բազմաթիվ փաստաթղթերի ուսումնասիրությունը հնարավորություն են տալիս գալ այն եզրակացության, որ ընտրությունների անկողմնակալ դիտարկման նպատակներին և խնդիրներին հասնելու համար յուրաքանչյուր կազմակերպություն պետք է՝

1. պահպանել խիստ անաչառություն՝ քաղաքականապես չեզոք մնալով ընտրական գործընթացի հետ կապված բոլոր գործողություններում (ներառյալ՝ դիտարկումը, մոնիտորինգը և ցանկացած այլ գործունեություն)՝ զերծ մնալով որևէ թեկնածուի, քաղաքական կուսակցության կամ դրա դեմ նախապատվությունը հրապարակավ արտահայտելուց,

2. աշխատել կառավարությունից անկախ՝ իրական ժողովրդավարական ընտրական գործընթացին աջակցելու համար՝ անկախ նրանից, թե ո՞վ կհաղթի կամ կպարտվի, և օգտագործել լավագույն փորձը, մեթոդաբանությունը և տեխնիկան, որպեսզի դիտարկի և վերահսկի ընտրական գործընթացի տարբեր տարրեր,

3. զերծ մնալ ընտրությունների հետ կապված իրավախախտումներից,

4. հարգել երկրի սահմանադրությունը, օրենքները, կանոնակարգերը և միջազգային պարտավորությունները, նպաստել ընտրական իրավունքների հարգմանը,

5. հարգել բոլոր մակարդակների անկախ ընտրական մարմինների դերը և ոչ մի դեպքում որևէ անօրինական կամ անպատշաճ ձևով չմիջամտել ընտրությունների անցկացմանը, ինչպես նաև՝ աշխատել ընտրությունների անկողմնակալ պաշտոնյաների հետ համագործակցությամբ և հետևել նրանց կամ այլ համապատասխան մարմինների օրինական ցուցումներին՝ ընտրությունների ամբողջականության պաշտպանության տեսանկյունից,

6. սերտորեն համագործակցել ընտրությունների այլ դիտորդների հետ,

7. զեկույցում անկողմնակալ, ճշգրիտ և ժամանակին գրել

բոլոր դիտարկումների և եզրակացությունների մասին՝ ինչպես դրական, այնպես էլ բացասական՝ ընտրական գործընթացի ընթացքում կատարվածի անաչառ և ճշգրիտ պատկերը ապահովելու համար,

8. ապահովել բավարար որակի ուսուցում բոլոր դիտորդների և դիտորդական կազմակերպությունների համար, որպեսզի վերջիններս կարողանան իրենց առաքելությունն իրականացնել այդ առաքելության նպատակներին համապատասխան:

Կարող ենք ասել, որ դիտորդների աշխատանքի հիմնական օբյեկտը ընտրողն է, իսկ նպատակը՝ իրավական, ընտրական մշակույթի նոր հայացք ստեղծելը: Մրանով պայմանավորված՝ ընտրությունների ամբողջականությունը որոշվում է գործող իշխանության և ընտրական գործընթացում ներգրավված մեխանիզմների կողմից:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք ասել, որ ընտրությունների կարևորությամբ է պայմանավորված, որ ընտրական գործընթացում անհրաժեշտ են դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպություններ և վերջիններիս դիտորդները, որպեսզի ապահովեն անկախ և անկողմնակալ դիտարկում՝ նպաստելով ժողովրդավարության զարգացմանը: Չնայած ուսումնասիրված փաստաթղթերում չկան կոնկրետ կարգավորումներ, թե որո՞նք են դիտորդական առաքելության կոնկրետ նպատակները և ինչպիսի՞ գործառույթների կիրառման միջոցով հնարավոր կլինի հասնել առաքելության առջև դրված արդյունքին, այնուամենայնիվ, առկա բացերի պարագայում էլ հնարավոր է գալ այն եզրակացության, որ դիտորդական առաքելության հիմնական նպատակները պետք է լի-

նեն ժողովրդավարական ընտրությունների արդյունավետ անցկացման ապահովումը՝ որպես ժողովրդավարության զարգացման հիմնական միջոց, ժողովրդավարական ընտրական գործընթացի ապահովումը և խախտումների բացակայությունը, մարդու և քաղաքացու ընտրական իրավունքների և ազատությունների պաշտպանությունն ու խթանումը, ժողովրդավարական ընտրություններ և հանրաքվեներ անցկացնելու պետությունների միջազգային պարտավորությունների կատարման խթանումը, ինչպես նաև՝ կայուն ժողովրդավարական ինստիտուտների և օրենքի գերակայության աջակցությունը:

3.2. Ընտրությունների նկատմամբ դիտորդություն իրականացնող հասարակական կազմակերպությունների և դիտորդների միջազգային փաստաթղթերով ամրագրված դերը՝ որպես ժողովրդավարական ընտրությունների ապահովման գրավական

Դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների և վերջիններիս դիտորդների դերի մասին անդրադարձ է կատարվում գրեթե բոլոր միջազգային փաստաթղթերում, որոնք կարգավորում են ընտրական գործընթացում դիտորդական առաքելության իրականացման հետ կապված հարցերը:

Ընտրությունների դիտարկումը լայն ճանաչում է ձեռք բերել ամբողջ աշխարհում և կարևոր դեր է խաղում ընտրական գործընթացների բնույթի ճշգրիտ և անաչառ գնահատումն ապահովելու հարցում և դարձել է ժողովրդավարական զարգացման ու մարդու իրավունքների խթանման առավել շոշափելի և նշանակալի հարթություններից մեկը, քանի որ ընտրական գործընթացի որակը սովորաբար արտացոլում է պետության ժողովրդավարական բնույթը և կարող է լինել կառավարությանը բնութագրող կարևոր ցուցիչ: Այն արդյունավետ գործիք է ընտրական գործընթացում առկա թերությունները վեր հանելու, կեղծիքները կանխելու և ընտրական գործընթացի նկատմամբ ընտրողների վստահությունը բարձրացնելու համար:

Դիտորդական գործունեության խնդիրն է գնահատել, թե ի՞նչ աստիճանի են գործում ժողովրդավարական ինստիտուտները և համապատասխանում են միջազգային փաս-

տաթղթերում ամրագրված միջազգային պարտավորություններին, ժողովրդավարական ընտրությունների միջազգային այլ պարտավորություններին և չափանիշներին, ինչպես նաև դրական փորձին: Դրա համար պահանջվում է սահմանադրական պահանջների, ընտրական օրենքների և կանոնակարգերի մանրակրկիտ վերլուծություն, ինչպես նաև ընտրական գործընթացների մանրակրկիտ մոնիտորինգ: Նաև պետք է հաշվի առնել միջազգային-իրավական հեղինակավոր փաստաթղթերը և կոնկրետ հարցերի վերաբերյալ զեկույցները (օրինակ՝ օրենքի գերակայությունը և դատական իշխանության անկախությունը), ներառյալ ՄԱԿ-ի մարդու իրավունքների մարմինների, ՄԱԿ-ի հատուկ զեկուցողների, Վենետիկի հանձնաժողովի և Եվրոպայի խորհրդի մարմինների փաստաթղթերը:

Ընտրությունների դիտորդությունը հիմնված է երկու հիմնական սկզբունքների վրա՝

առաջին, դրանք հստակ պարտավորություններ են, որոնք ստանձնել են պետությունները՝ ժողովրդավարական ընտրությունների անցկացումն ապահովելու համար,

երկրորդ, պարզ և անվիճելի կանոն է, որ դիտորդն ընդամենը հանդիսանում է մասնավոր անձ՝ օբյեկտիվ տեսակետով, որը չի միջամտում գործընթացին: Թափանցիկությունն առանցքային պայման է՝ ապահովելու այն, որ ընտրությունների դիտարկումը մնա օբյեկտիվ, և որ գործընթացի բոլոր շահագրգիռ կողմերը վստահ լինեն, որ այն հետազայում ևս կշարունակի լինել օբյեկտիվ:

Ընտրությունների դիտարկման դերն է՝ ազատ ընտրությունների իրավունքի խթանումն ու պաշտպանությունը: Եվրո-

պայի խորհրդի Պառլամենտական վեհաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 9-ի «Ընտրական դիտորդների միջազգայնորեն ճանաչված կարգավիճակի մասին» զեկույցում «Դիտորդների դերը» վերտառությամբ 2-րդ բաժնի 9-րդ կետում դիտորդական առաքելության դերն ամրագրված է հետևյալ կերպ. «Դիտորդները հետևում են ընտրական գործընթացի նկատմամբ, որպեսզի երաշխավորեն, որ ընտրություններն անցկացվում են ազգային և միջազգային իրավունքին համապատասխան, սակայն, նրանց դերը միայն դիտարկելն է»:⁷²

Կարևոր է, որ դիտորդների դերը չսահմանափակվի ընտրությունների օրով: Ընդհակառակը, դիտորդական առաքելությունը, ներառյալ՝ փորձագետները, ինչպես նաև երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդները, պետք է գնահատման առարկա դարձնեն այն ոլորտները, որոնք առնչվում են ամբողջ ընտրական գործընթացին: Ընտրությունների դիտարկումը կարելի է բաժանել երեք փուլի՝

- (1) նախընտրական քվեարկության փուլ,
- (2) քվեարկության օրվա փուլ,
- (3) հետընտրական փուլ:

Եվ այսպես՝ **նախընտրական քվեարկության** դիտարկումը պետք է տեղի ունենա նաև ընտրական գործընթացի շատ այլ ոլորտներում՝ ապահովելով հավասար հնարավորություններ

⁷² Եվրոպայի խորհրդի Պառլամենտական վեհաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 9-ի «Ընտրական դիտորդների միջազգայնորեն ճանաչված կարգավիճակի մասին» զեկույց (Doc. 12355 <http://semanticpace.net/tools/pdf.aspx?doc=aHR0cDovL2Fzc2VtYmx5LmNvZS5pbmQvbnNveG1sL1hSZWYvWDJILURXLWV4dHIuYXNwP2ZpbGVpZD0xMjUyNCZsYW5nPUVO&xsl=aHR0cDovL3NlbWFudGljcGFjZS5uZXQvWHNsdc9QZGYvWFJlZi1XRC1BVCI1YTUwyUERGLnhzbA==&xsltparams=ZmlsZWlkPTEyNTI0>):

բոլոր կուսակցությունների և թեկնածուների համար, և դիտարկման այս իրավունքը պետք է երաշխավորված լինի օրենքով: Նախընտրական քվեարկության փուլը ներառում է գնահատման հետևյալ ոլորտները՝

- քաղաքական համատեքստը,
- իրավական բազան (ներառյալ՝ ընտրական համակարգը և ընտրատարածքների սահմանազատումը),
- ընտրությունների կազմակերպումը,
- ընտրողների գրանցումը և ընտրողների ցուցակների վարումը,
- քաղաքական կուսակցությունների և թեկնածուների գրանցումը,
- նախընտրական քարոզարշավը,
- նախընտրական քարոզարշավի ֆինանսավորումը,
- ընտրական բողոքների քննարկումը,
- ինչպես պետական, այնպես էլ մասնավոր լրատվամիջոցների մոնիտորինգը,
- կարծիքի արտահայտման ազատությունը, իսկ ավելի լայն իմաստով, բոլոր հիմնարար ազատությունները, որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու համար,
- մարդու իրավունքները (ներառյալ՝ կանանց և փոքրամասնությունների մասնակցությունը),
- քաղաքացիական հասարակության դերը:

Քվեարկության օրվա փուլն ընդգրկում է քվեարկության ընթացքը, ներառյալ՝ տեղամասային կենտրոնների բացման և փակման ընթացակարգերը, և նաև պետք է ընդգրկի ցանկացած հատուկ խմբերի քվեարկությունը (զինծառայողների,

քրեակատարողական հիմնարկներում, ձերբակալված անձանց պահելու վայրերում քվեարկությունը, ստացիոնար բուժ. հաստատություններում քվեարկությունը, ինչպես նաև սահմանափակ հնարավորություններով անձանց քվեարկությունը): Քվեարկության օրը նաև պետք է ընդգրկի հատուկ միջոցները, այնպիսիք, ինչպիսիք են էլեկտրոնային, փոստային, լիազորված, շարժական և վաղաժամկետ քվեարկությունը:

Եվ վերջապես՝ **հետընտրական փուլը ենթադրում է** դիտարկում՝ ընտրված թեկնածուների և քաղաքական կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների աջակցությանն ուղղված միջոցառումների անցկացման նկատմամբ: Այս գործընթացները պետք է իրականացվեն ընտրական օրենսդրությանը համապատասխան: Հետընտրական փուլն ընդգրկում է գնահատման հետևյալ ոլորտները՝

- հաշվարկի գործընթացը,
- աղյուսակավորման գործընթացը,
- նախնական արդյունքների փոխանցումն ու հրապարակումը,
- դիմումների և բողոքների ներկայացման ընթացակարգերը,
- վերջնական արդյունքների հրապարակումը:

Ընտրությունների դիտարկումը հասարակական կազմակերպությունների և նրանց դիտորդների կողմից, դա քաղաքացիների մոբիլիզացումն է՝ քաղաքականապես չեզոք, անկողմնակալ և ոչ խտրական ձևով հանրային գործերին մասնակցելու իրենց իրավունքից օգտվելու և ընտրություններին հետևելու, անաչառ, ճշգրիտ և ժամանակին վերլուծություններ ու եզրակացություններ ներկայացնելու, իրական ժողովրդա-

վարական ընտրություններ անցկացնելու համար համապատասխան առաջարկություններ ներկայացնելու, ընտրությունների իրավական դաշտը կատարելագործելու միջոցով, որոնք կնպաստեն ընտրական ու քաղաքական գործընթացներին քաղաքացիների լիարժեք մասնակցության խոչընդոտների վերացմանը: Նրանք անաչառ են բոլոր քաղաքական կուսակցությունների, թեկնածուների և հանրաքվեի ու ընդհանրապես ընտրությունների ժամանակ ներկայացված ցանկացած հարցի կամ նախաձեռնության օգտին կամ դեմ արտահայտվողների նկատմամբ: Փաստացի նրանք չեն մասնակցում ընտրությունների կառավարմանը: Հենց նույն կերպ էլ ընտրություններում դիտորդների որոշումն ինքնին ընտրությունները չի դարձնում վավեր կամ անվավեր:

Քանի որ դիտորդները կարևոր դեր են խաղում ընտրական գործընթացի թափանցիկության բարձրացման գործում, իրենց առաքելությունն իրականացնելու համար նրանք պետք է իրավունք ունենան հավատարմագրվել՝ որպես դիտորդ: Այդպես է նաև ՀՀ ընտրական օրենսդրությամբ, որում սահմանված է, որ Ընտրական օրենսգրքով դիտորդական առաքելության իրավունքով օժտված կազմակերպությունների դիտորդներն իրենց առաքելությունն իրականացնում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրվելուց հետո: Բացի այդ, ամրագրված է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մերժում է դիտորդների հավատարմագրման մասին դիմումը, եթե կազմակերպության կանոնադրական նպատակները չեն բավարարում Ընտրական օրենսգրքի պահանջները, կամ դիմումը ներկայացվել է Ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետների խախտմամբ,

կամ ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշման պահանջներին, կամ դիմումը չի պարունակում նշում կազմակերպության դիտորդների վարքագծի կանոնների ընդունման կամ ուսուցման մասին:

Դիտորդները և դիտորդական կազմակերպությունները պետք է անաչառ գնահատեն ընտրական գործընթացի բոլոր տարրերին վերաբերող տեղեկատվությունը, ներառյալ այն գործոնները, որոնք կարող են ազդել ընդհանուր ընտրական միջավայրի վրա: Դա կարող է կատարվել մեկ կազմակերպության, կազմակերպությունների կողմից՝ կամ կազմակերպությունների համակարգված ջանքերի համապարփակ, անաչառ դիտարկման և մոնիտորինգի միջոցով, ինչպես նաև միմյանցից քիչ թե շատ անկախ գործող մի քանի կազմակերպությունների ջանքերով: Հասարակական կազմակերպությունների՝ ընտրությունները կամ դրա որևէ տարր դիտարկելու որոշումը չի նշանակում, որ կազմակերպությունները ենթադրում են, որ ընտրական գործընթացը վստահելի է կամ անվստահելի: Նրանց դերը կայանում է ընտրական գործընթացը և դրա տարրերը ճշգրիտ, անաչառ և հնարավորինս համակարգված գնահատելու մեջ, այնպես, որպեսզի ընտրական գործընթացները բնութագրվեն պատշաճ՝ ազգային օրենսդրության պահանջներին և կիրառելի միջազգային պարտավորություններին ու չափանիշներին համապատասխան, նրանք պետք է ամեն ջանք գործադրեն՝ ապահովելու համար, որ իրենց գործունեությունը չմեկնաբանվի որպես ակնհայտորեն ոչ ժողովրդավարական ընտրական գործընթացի լեգիտիմացում: Նրանք նաև պետք է պարբերաբար հրապարակեն

Ճշգրիտ, անկողմնակալ և հանրային գեկույցներ, հայտարարություններ, հրապարակումներ, պարունակեն դիտարկումներ, վերլուծություններ, եզրակացություններ և առաջարկություններ՝ ընտրական գործընթացները բարելավելու համար: Երբ դիտորդությունն ու մոնիտորինգը սահմանափակվում են ընտրական գործընթացի մեկ տարրով կամ սահմանափակ թվով տարրերով, դա պետք է հստակ ամրագրվի համապատասխան հրապարակային հայտարարություններում:

Դիտորդական առաքելության արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է մշակել և կիրառել միևնույն չափանիշները: Թերևս արժեք դիտորդական առաքելության անդամների թիվը որոշել տվյալ երկրում ընտրողների թվի հիման վրա կամ ընտրական հանձնաժողովների թվի հիման վրա: Եվ այդ դեպքում մի երկիր չէր ուղարկվի 20 մարդ, իսկ մեկ այլ երկիր՝ 700-ը: Ցանկացած երկրում, նույնիսկ ամենաժողովրդավարական, նման թվով դիտորդները, անշուշտ, կգտնեն խախտումներ և միջազգային չափանիշներից շեղումներ: Իդեալական ընտրություններ չեն լինում, նրանք ամենուր անցկացվում են բազմաթիվ մասնակիցների կողմից: Հետևաբար, պետք է հայտնվի մեկ չափանիշ, ըստ որի՝ կախված կլինի դիտորդական առաքելության մասնակիցների թիվը, օրինակ, տվյալ պետության տարածքից, ինչը, մեր կարծիքով, անաչառ դիտարկման ամենակարևոր նախապայմաններից մեկն է:

Դիտորդական առաքելությունները պետք է ձեռնպահ մնան իրենց հյուրընկալող երկրի իշխանություններին հակադրվելուց: Առաքելության ներկայացուցիչները չպետք է թույլ տան գործողություններ, որոնք կարող են խախտել ըն-

դունող երկրի օրենքները: Ինչ վերաբերում է դիտորդների հրավերին, ապա, դա պետության կողմից պետք է դիտվի որպես բարի կամքի դրսևորում: Միայն նման դիրքերից և պետությունների ներքին գործերին չմիջամտելու տեսանկյունից կարելի է հավակնել անաչառ, օբյեկտիվ, անկախ փորձագետ-դիտորդի դերին, ինչը կնպաստի ժողովրդավարական ընտրական չափանիշների տարածմանը և ամրապնդմանը:

Ավելի քան 90 երկրներում, վերջին երկու տասնամյակների ընթացքում, միլիոնավոր քաղաքացիներ միացել են ընտրությունների անաչառ դիտորդական և մոնիտորիգ իրականացնելու ջանքերին՝ ապահովելու ընտրությունների ազնվությունը: Մա օգնել է նվազեցնել խախտումների հավանականությունը և նպաստել հաշվետվողականությանն ու ժողովրդավարական զարգացմանը, և ինչպես նշված է «Հասարակական կազմակերպությունների կողմից անկուսակցական դիտորդության ու անկուսակցական դիտորդների վարքագծի կանոնների համընդհանուր սկզբունքների» հռչակագրում. «Անկուսակցական դիտորդները կարող են դիտվել որպես մասնագիտացված իրավապաշտպաններ, որոնք զբաղվում են քաղաքացիական և քաղաքական իրավունքներով և որոնք որոշիչ նշանակություն ունեն իրական ընտրությունների հասնելու համար»⁷³:

⁷³ DECLARATION OF GLOBAL PRINCIPLES FOR NON-PARTISAN ELECTION OBSERVATION AND MONITORING BY CITIZEN ORGANIZATIONS AND CODE OF CONDUCT FOR NON-PARTISAN CITIZEN ELECTION OBSERVERS AND MONITORS Strasbourg, 21 June 2012 Study No. 678 / 2012 CDL-AD(2012)018 Or. Engl. Commemorated 3 April 2012, at the United Nations, New York endorsed by the Venice Commission at its 91st Plenary Session (Venice, 15-16 June 2012), էջ 3:

Վենետիկի հանձնաժողովի «Ժողովրդավարություն՝ օրենքի միջոցով» փաստաթղթի 86-րդ կետում գրված է, որ. «Ընտրությունների դիտարկումը կարևոր է, քանի որ այն վկայում է այն մասին, թե արդյո՞ք ընտրական գործընթացը կանոնավոր է եղել, թե՞ ոչ»⁷⁴:

Ընդհանուր առմամբ, դիտորդներն առաջնային դեր են խաղում այն պետություններում, որոնք չունեն ընտրությունների օրինականության անաչառ ստուգման ավանդույթ և պետք է կատարեն դիտարկումներ, գնահատականներ և եզրակացություններ՝ ներպետական իրավական բազայի և ժողովրդավարական ընտրությունների պարտավորությունների հիման վրա, որոնք սահմանված են մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերում, ինչպես նաև միջազգային և տարածաշրջանային խարտիաներում, կոնվենցիաներում, հռչակագրերում և այլ նմանատիպ փաստաթղթերում սահմանված չափանիշներում, սկզբունքներում և պարտավորություններում:

Դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների և վերջիններիս դիտորդների դերը հստակ սահմանելու հարցում կարևոր է նաև այն հանգամանքը, որ, որպես կանոն, նրանք պետք է կարողանան հարցազրույց վերցնել բոլոր ներկա գտնվողներից, կատարեն գրառումներ և հաշվետու լինեն իրենց կազմակերպությանը, սակայն, նրանք պետք է զերծ մնան մեկնաբանություններից:

⁷⁴ EUROPEAN COMMISSION FOR DEMOCRACY THROUGH LAW (VENICE COMMISSION) CODE OF GOOD PRACTICE IN ELECTORAL MATTERS GUIDELINES AND EXPLANATORY REPORT Adopted by the Venice Commission at its 51st and 52nd sessions (Venice, 5-6 July and 18-19 October 2002), էջ 27:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը, որպես դիտորդական առաքելություն իրականացնող միջազգային կազմակերպություն, առանձնահատուկ նշանակություն է տալիս ժողովրդավարական ընտրություններին՝ որպես երկարաժամկետ անվտանգության և կայունության հիմնական գործոնի: Ժողովրդավարական ընտրությունները մարդու հիմնարար իրավունքների հաղթանակն են, իսկ ավելի կոնկրետ՝ քաղաքացիական և քաղաքական իրավունքների հաղթանակը: Այդ իսկ պատճառով, ընտրությունների դիտարկումը նպաստում է այդ իրավունքների հաստատմանն ու պաշտպանությանը: Իրական ընտրությունը քաղաքական մրցակցություն է, որն իրականացվում է բազմակարծության, վստահության, թափանցիկության և հաշվետվողականության պայմաններում և, որոնք, թույլ են տալիս ընտրողներին կատարել գիտակցված ընտրություն՝ միայնացից տարբերվող քաղաքական հարթակների շարքից: Նման ընտրությունները ենթադրում են հիմնարար ազատությունների՝ արտահայտման և տեղեկատվության ազատություն, միավորումների, հավաքների և շարժումների հարգում, ինչպես նաև օրենքի գերակայության պահպանում, որը ներառում է արդյունավետ միջոցների հասանելիություն: Այդ իսկ պատճառով դիտարկումը կարող է կարևոր դեր խաղալ ընտրությունների թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման և ընտրական գործընթացի նկատմամբ հասարակության վստահության ամրապնդման գործում: Դիտարկումն ակնհայտորեն աջակցում է ժողովրդավարական գործընթացների զարգացմանը և կարող է նպաստել իրենց առջև դրված նպատակին հասնելուն՝ այն է՝ իրապես ժողովրդավարական ընտրությունների անցկացմանը՝ միջազգային չափանիշներով

սահմանված պարտավորություններին համապատասխան:

Դիտորդի դերը հանգում է դիտարկելուն և, ինչպես արդեն նշվեց, հաշվետվություն ներկայացնելուն: Դիտորդներն իրավասու չեն տալ որևէ ցուցում, օժանդակել կամ միջամտել քվեարկությանը, ձայների հաշվարկին, արդյունքների ամփոփմանը կամ ընտրական գործընթացի այլ ասպեկտներին: Օրինակ՝ հավատարմագրվելուց հետո ԺՀՄԻԳ-ի բոլոր դիտորդները պարտավոր են ստորագրել դիտորդի վարքագծի Կանոնագիրքը: Կանոնագիրքը պարտադիր է ԺՀՄԻԳ-ի բոլոր դիտորդների համար և դրա դրույթների ցանկացած լուրջ խախտում կհանգեցնի այդ դիտորդի հավատարմագրման անհապաղ չեղարկմանը:

Դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների և վերջիններիս դիտորդների դերը սահմանելիս, նախևառաջ, կարևոր է հասկանալ դիտորդության ընդհանուր էությունը: Ի վերջո, դիտորդը դատավոր չէ, այլ խորհրդատու: Այն չի կարող փոխարինել ազգային մարմիններին, որոնք կոչված են պաշտոնական գնահատական տալ ընտրությունների օրինականությանը: Այլ մոտեցումը կխախտի այն պետության ինքնիշխանությունը, որում իրականացվում է մշտադիտարկումը, ինչը բացարձակապես անընդունելի է: Միևնույն ժամանակ դիտորդների հիմնավոր մեկնաբանությունների ու առաջարկությունների հաշվառումը չափազանց կարևոր է ժողովրդավարության զարգացման համար: Դիտորդները պետք է լիովին պատրաստ լինեն մշտադիտարկման իրենց պարտականությունները կատարելու համար: Նրանք պետք է վերապատրաստում անցնեն, ծանոթ լինեն ընտրական օրենքներին և հարակից բոլոր ենթաօրենսդ-

րական ակտերին:

Դիտորդները պետք է պահպանեն լիակատար անկախություն իրենց աշխատանքի ամբողջ ընթացքում, չպետք է կրեն կամ իրենց մոտ ունենան խորհրդանիշներ, հագուստ և առարկաներ, որոնք կարող են կասկածի տակ դնել նրանց չեզոքությունն ու անաչառությունը: Նրանք պետք է իրենց պարտականությունները կատարեն ոչ պարտադրող ոճով և չպետք է միջամտեն ընտրական գործընթացի տարբեր ասպեկտներին: Եթե նրանք նկատեն որևէ բացթողում կամ թերություն, նրանք կարող են ընտրական հանձնաժողովի անդամների ուշադրությունը հրավիրել դրանց վրա, բայց ոչ մի դեպքում նրանք չպետք է նրանց ցուցումներ տան կամ վիճարկեն նրանց ընդունած որոշումները: Բոլոր եզրակացությունները պետք է արվեն միայն լավ փաստաթղթավորված, հուսալի և ստուգելի տվյալների հիման վրա: Ընտրությունների նկատմամբ վստահության մակարդակը գնահատելու և հնարավոր խախտումների մասին տեղեկատվություն ստանալու համար դիտորդները պետք է փորձեն խոսել այն մարդկանց հետ, ովքեր գտնվում են ընտրական տեղամասում, այդ թվում՝ միջազգային դիտորդների (եթե նրանք նույնպես այնտեղ են) և հենց ընտրողների հետ: Անհրաժեշտ է հաշվի առնել լաված բոլոր կարծիքները, որոնց հավաստիությունը կասկած չի հարուցում: Դիտորդները պետք է հիշեն, որ որոշ մարդիկ կարող են շահարկել տեղեկատվությունն իրենց անձնական նպատակների համար, ուստի, նրանք պետք է դրսևորեն խելամտությամբ՝ փորձելով հասկանալ և ողջամտորեն գնահատել իրավիճակը: Նաև չպետք է բաց թողնեն հնարավորինս տարբեր «ճամբարների» և հետաքրքրությունների ներկայացուցիչների

հետ հարցազրույց անցկացնելու հնարավորությունը:

Դիտորդների համար շատ կարևոր է ընտրությունների ժամանակ չեզոք դիրք պահպանելը, քանի որ ընտրությունները, ընտրական գործընթացը յուրաքանչյուր պետության և տվյալ պետության ժողովրդի գործն է՝ հիմնված սեփական օրենքի և սեփական սահմանադրության վրա:

Հետընտրական շրջանում դիտորդները պետք է ուշադրություն դարձնեն խնդիրների բոլոր հնարավոր դրսևորումներին, օրինակ, օրենքով սահմանված ժամկետների չպահպանմանը, որոշումների կայացման գործընթացում շեղումներին, խախտումների հետ կապված բողոքների քննարկման ուշացմանը, դիտորդների և քաղաքական կուսակցությունների հնարավորությունների սահմանափակմանը և այլն: Նրանք պետք է պատրաստ լինեն ցանկացած խնդրի ուսումնասիրությանը, որոնք կարող են վկայել համակարգված կանխատեսված մանիպուլյացիաների կամ որոնք կարող են լրջորեն ազդել ընտրությունների արդյունքների վրա:

Դիտորդները գնահատում են ընտրական գործընթացները՝ միջազգային սկզբունքներին և ներքին օրենսդրությանը համապատասխան՝ միաժամանակ ընդունելով, որ, ի վերջո, հենց երկրի ժողովուրդն է որոշում ընտրական գործընթացի հուսալիությունն ու օրինականությունը:

Չնայած նրան, որ առավել ուշադրությամբ և ճանաչվածությամբ աչքի է ընկնում ընտրությունների միջազգային դիտարկումը, սակայն, նկատելիորեն աճել է տեղական դիտորդի կարևորության ճանաչումը, և, չնայած, ներքին (տեղական) և միջազգային դիտարկումներն իրականացվում են որպես գործունեության առանձին տեսակներ, այնուամենայնիվ,

դրանք լրացնում են միմյանց այն առումով, որ երկուսն էլ ուղղված են ընտրական գործընթացի գնահատմանն ու դրա բարելավմանը: Ընտրությունների ներքին դիտարկումն անմիջականորեն նպաստում է մարդու իրավունքների պահպանմանն ու պաշտպանությանը: Բացի այդ, ընտրական գործընթացի թափանցիկության ապահովումը՝ գործող օրենսդրությանը և միջազգային չափանիշներին համապատասխան, ժողովրդավարական հասարակության անբաժանելի մասն է: Տեղական դիտորդական խմբերի ներքին դիտարկումներն օգնում են կանխել խախտումները և նպաստում են ընտրական գործընթացի ամբողջականության նկատմամբ վստահության ամրապնդմանը՝ դրանով իսկ խթանելով քաղաքացիական ակտիվության բարձրացումը:

Հարկ է նշել, որ Կոպենհագենի փաստաթղթի 8-րդ պարբերությունը ճանաչում է միջազգային և ներքին դիտորդների դերը: Այնտեղ, մասնավորապես, ասվում է, որ ընտրություններում օտարերկրյա, ինչպես նաև տեղական դիտորդների ներկայությունը կարող է բարձրացնել ընտրական գործընթացի հեղինակությունը:

Դիտորդական առաքելության դերը, որպես ընտրական գործընթացի նկատմամբ վերահսկողության արդյունավետ գործիքի, կայանում է նաև նրանում, որ ընտրությունների արժանահավատ դիտարկումը պահանջում է հանրության առջև թափանցիկ և պարբերական հաշվետվողականություն: Եզրափակիչ զեկույցը նաև հաշվի է առնում՝ արդյո՞ք արձանագրված խախտումները եզակի դեպքեր են եղել, թե՞ պարբերական բնույթ են կրել, որը կարող էր սպառնալ ամբողջ ընտրական գործընթացի ազնվությանը, և գնահատվում է, թե որքա-

նո՞վ են իշխանությունները դրսևորել քաղաքական կամք՝ իրական ժողովրդավարական ընտրական գործընթաց իրականացնելու համար: Ի վերջո՝ բոլոր ընտրությունները գնահատվում են՝ հաշվի առնելով միջազգային պարտավորություններին, համընդհանուր չափանիշներին և այլ միջազգային պարտավորություններին համապատասխանությունը: Դիտորդները որևէ հայտարարություն չեն անում ընտրությունների արդյունքների վերաբերյալ, և ընտրությունների արդյունքների վերաբերյալ ցանկացած հայտարարություն սահմանափակվում է գնահատելով, թե արդյո՞ք ընտրությունների արդյունքները համապատասխան մարմինների կողմից հայտարարված է ազնվորեն և առանց ձգձգումների:

Դիտարկումը նպաստում է այնպիսի խնդիրների լուծմանը, ինչպիսիք են ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու իրենց պարտավորությունների կատարման համար պետությունների պատասխանատվության բարձրացումը, ընտրական համակարգի կազմակերպչական, ֆինանսական, տեխնոլոգիական ապահովումը, ընտրողների իրազեկման ապահովումը, ընդհանուր ընտրական համակարգի և ընտրությունների արդյունքների հուսալիության նկատմամբ հասարակության վստահության մակարդակի բարձրացումը և այլն:

Ընտրությունների դիտարկումն ինքնանպատակ չէ: Նպատակն այն չէ, որ քննադատեն երկրներին կամ, ընդհակառակը, միայն գովաբանեն անցկացվող ընտրությունները, երբեք չպետք է հայտարարել կամ մեկնաբանել ընտրությունների արդյունքները կամ քննարկել դրանց օրինականությունը կամ անօրինականությունը: Ընտրությունները պետությունների քաղաքացիների կամքի արտահայտումն են: Դիտորդի

խնդիրն է՝ մանդատի շրջանակներում, եզրակացություն անել, թե որքանո՞վ են ընտրությունները համապատասխանում այս կամ այն երկրի ստանձնած պարտավորություններին:

Որպեսզի դիտորդներն արդյունավետորեն իրականացնեն իրենց դերը, գտնում ենք, որ կարևոր է միջազգային դիտորդական առաքելությունների ձևավորման կարգը, և դա պահանջում են թափանցիկության, հրապարակայնության և կողմերի հավասարության ընթացակարգերը: Դիտորդները պետք է հավաքագրվեն հիմնականում ընտրական իրավունքի և ընտրական գործընթացի ոլորտի ճանաչված փորձագետներից:

Դիտարկման որակի պահանջներն անընդհատ աճում են: Մի կողմից, դիտորդները պետք է վերահսկեն ընթացիկ ընտրական գործընթացների համապատասխանությունն ազգային ընտրական օրենսդրության պահանջներին, իսկ մյուս կողմից՝ լինեն քաղաքականապես չեզոք օգնականներ, խորհրդատուներ՝ ժողովրդավարական և ազատ ընտրությունների նախապատրաստման և անցկացման գործում: Գտնում ենք, որ դիտորդներն ուղղակի իրավունք չունեն կատարված ընտրությունների վերաբերյալ քաղաքական գնահատականներ տալ, իսկ ժողովրդավարության զարգացման և ամրապնդման մտահոգությունը պետք է հանդիսանա ընտրական գործընթացի դիտարկման հիմքը:

Առհասարակ, և՛ Կառավարությունը, և՛ ընտրական մարմինները, և՛ նրանք, ովքեր ցանկանում են ընտրվել, և՛ ընտրական գործընթացի այլ շահագրգիռ կողմեր ճանաչել են, որ հասարակական կազմակերպությունների և դիտորդների կողմից ընտրությունների անաչառ դիտարկումը և մոնիտորինգը

հանդիսանում են իշխանական և հասարակական գործերին քաղաքացիների մասնակցելու իրավունքի անբաժանելի մասը, ինչը միջազգայնորեն ճանաչված իրավունք է: Միջկառավարական կազմակերպությունների և տարբեր միջկառավարական կանոնադրությունների, դեկլարացիաների և այլ փաստաթղթերի կողմից ընտրությունների դիտարկումը նշվում է որպես իրական ժողովրդավարական ընտրությունների խթանման կարևոր ասպեկտ:

3.3. Ընտրական գործընթացում ընտրությունների դիտարկումն իրականացնող հասարակական կազմակերպությունների և դիտորդների իրավական (միջազգային իրավական) կարգավիճակը

Ընտրություններն առանձնահատուկ տեղ են զբաղեցնում պետության քաղաքական կյանքում: Դրանց արդյունքը մեծապես կանխորոշում է երկրի, նրա քաղաքական և պետական կառույցների ու քաղաքացիական հասարակության ինստիտուտների զարգացման հետագա ինքնիշխան վեկտորը: Ազատ ընտրությունները պետական իշխանության օրինականացման, ժողովրդավարական սոցիալ-քաղաքական էլիտայի, պատասխանատու ընտրողի ընտրության և «աճեցնելու» ամենակարևոր ժողովրդավարական ուղիներից են: Նման կարևոր խնդիրների հաջող լուծման համար էական են ընտրական օրենսդրության որակը, ընտրությունների կազմակերպման և անցկացման ժողովրդավարական գործելակերպը, ինչպես նաև դրանց ճանաչումն ընտրական գործընթացի մասնակիցների և միջազգային հանրության կողմից: Այդ իսկ պատճառով է կարևորվում դիտորդների և դիտորդական կազմակերպությունների միջազգային իրավական կարգավիճակը:

Կան բազմաթիվ միջազգային գործիքներ, որոնք կարգավորում են դիտորդի կարգավիճակը, սակայն, այդ տեքստերում տարբեր կերպ է ուսումնասիրվում ընտրական գործընթացներին դիտորդների մասնակցությունը: Որոշ փաստաթղթեր տալիս են դիտորդների դերի կարևորության մասին միայն ընդհանուր հայտարարություն, իսկ մյուսներում՝ նրանց գործառույթները կարգավորում են ավելի մանրա-

մասն: Ավելին՝ դրանցից շատերը չեն կարգավորում ներքին դիտորդների կարգավիճակը:

Ընտրությունների դիտարկումը կարող է իրականացվել անհատական՝ դիտորդների խմբի կազմում կամ միջազգային կամ տեղական դիտորդական առաքելության կազմում:

Ժամանակակից պատմության մեջ ընտրությունների միջազգային դիտարկման առաջին հայտնի դեպքը թվագրվում է 1857 թվականին, երբ Եվրոպական հանձնաժողովը, որը ներառում էր ներկայացուցիչներ Ավստրիայից, Մեծ Բրիտանիայից, Ֆրանսիայից, Պրուսիայից, Ռուսաստանից և Թուրքիայից, դիտարկեց ընդհանուր ընտրությունները Մոլդովայի և Վալախիայի վիճելի տարածքներում: Շատ դժվար կլիներ որևէ պատկերացում կազմել այդ առաջին դիտորդների կողմից կիրառվող դիտարկման մեթոդաբանության մասին, սակայն, մեծ հավանականությամբ կարելի է ենթադրել, որ այն քիչ ընդհանրություններ ուներ այսօրվա դիտորդական առաքելությունների հետ, որոնք կիրառվում են որոշ դիտորդական կազմակերպությունների կողմից: Այս առաքելությունները հանդիսանում են համակարգված, պարբերական և հաճախ մի քանի ամսվա ընթացքում այնտեղ աշխատում են հարյուրավոր աշխատակիցներ:

Միայն վերջին 20 տարում, շնորհիվ նրան, որ բազմաթիվ երկրներ անցում կատարեցին դեպի ժողովրդավարություն, ընտրությունների դիտարկումը դարձել է սովորական: Թեև ընտրությունների անցկացումն ինքնին չի ենթադրում ժողովրդավարության ակնթարթային հաստատում, իրական ընտրությունները, որոնք անցկացվում են սահմանված ժամանակահատվածի ընթացքում և թույլ են տալիս արդար մրցակ-

ցություն, հանդիսանում են ժողովրդավարական գործընթացի հիմքը: Հետևաբար, ընտրությունների դիտարկումը դարձել է չափազանց օգտակար գործիք ժողովրդավարական ընտրություններին աջակցելու և զարգացնելու համար՝ հանդիսանալով կայուն ժողովրդավարական կառավարման կարևորագույն տարրերից մեկը:

Քսաներորդ դարի 90-ականների սկզբից արդեն սկսվել է ձևավորվել միջազգային հանրային իրավունքի նոր ինստիտուտ, որը կարգավորում է ընտրությունների և հանրաքվեների միջազգային դիտարկումների հետ կապված սոցիալական և միջազգային հարաբերությունների բավականին առանձնահատուկ տեսակ: Այսօր, ազգային ընտրական ընթացակարգերի կազմակերպման բազմազանության ամբողջ տեսանկյունից, առկա է ընտրական իրավունքների և ազատությունների իրականացման կանոնակարգման, ներդաշնակեցման ընդհանուր միտում, ինչը նկատելի է դառնում աշխարհի տարբեր երկրներում ընտրությունների համադրմամբ: Բոլոր պետություններն ընտրություններ անցկացնում են գրեթե նույն սխեմայով՝ օրենսդրորեն սահմանվում է ազգային ընտրական համակարգը, որոշակիացվում է ընտրական մարմինը, ձևավորվում կամ բարձրաձայնվում են անկախ ընտրական մարմինների լիազորությունները, անցկացվում է նախընտրական քարոզչություն՝ իրենց ազգային օրենսդրություններով սահմանված ժամկետների, փուլերի, մասնակիցների սահմանափակումների հետ կապված առանձնահատկությունների հաշվառմամբ: Հետո՝ քվեարկություն և ընտրությունների արդյունքների սահմանում ու ամփոփում:

Ընտրական գործընթացի բոլոր փուլերում, այն պահից,

երբ երկրներն ընդունեցին համապատասխան միջազգային պարտավորությունները, սկսեց ներկա գտնվել նոր հատուկ սուբյեկտ՝ միջազգային դիտորդը: Իսկ նրա գործունեության իրավական հիմքերը կարգավորվում են միջազգային ակտերով: Այնուամենայնիվ, դրանց կիրառումը ինչպես նախկինում, տեղի է ունենում ազգային օրենսդրության շրջանակներում: Իրավունքի տեսանկյունից դա հնարավոր է, եթե թույլատրվի, որ միջազգային դիտարկման ինստիտուտն ունենա միջոլորտային բնույթ: Ավելի ուշ, բացի միջազգային դիտորդներից, ընտրական գործընթացին սկսեցին մասնակցել նաև ներքին դիտորդները:

Անցյալ դարի 90-ականների սկզբից ազգային ընտրական օրենսդրությունը և ընտրություններ անցկացնելու պրակտիկան, հատկապես, ինտենսիվորեն զարգացան եվրոպական մայրցամաքում փոփոխվող կազմաձևի համատեքստում, ինչը հանգեցրեց ժամանակակից ընտրական գործընթացի էական բաղադրիչների հարստացմանը, ժողովրդավարական ընտրական տարածության ընդլայնմանը և, միննույն ժամանակ, առաջին հերթին, ժողովրդավարական ընտրությունների անցկացման ընթացիկ և միջազգային նոր պարտավորությունների և չափորոշիչների հստակեցման անհրաժեշտության աճին, երկրորդ՝ ընտրությունների միջազգային դիտարկումների կազմակերպման և անցկացման մեթոդաբանության բարելավման անհրաժեշտությանը:

Միջազգային դիտորդական առաքելություն, մասնավորապես, իրականացնում են հետևյալ միջազգային կազմակերպությունները՝ ՄԱԿ-ը, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը, Եվրոպայի խորհուրդը, Եվրոպական միությունը, ԱՊՀ-ն, Ամերիկյան պետություն-

ների կազմակերպությունը (ԱՊԿ) և այլն:

Առաջին համաշխարհային պատերազմից ի վեր միջազգային կազմակերպությունները և կառավարության ներկայացուցիչները որոշ չափով ներգրավված են եղել ընտրությունների դիտարկմանը, իսկ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ դիտարկումը դարձել է ավելի սովորական երևույթ: Այն ժամանակ ընտրությունների դիտարկումը հիմնականում իրականացվում էր **Միավորված ազգերի կազմակերպության** (ՄԱԿ) հովանու ներքո, ով ամենից շատ ուշադրություն էր դարձնում ինքնիշխանություն չունեցող տարածքներին, քանի որ դա ավելի շատ համահունչ էր կազմակերպության կանոնադրությանը, որն արգելում է միջամտել «ցանկացած պետության ներքին իրավասությանն առնչվող հարցերին»: 2005 թվականին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Քոֆի Անանը Նյու Յորքի ՄԱԿ-ի գլխավոր գրասենյակում կայացած հանդիպմանը դիմեց միջազգային կազմակերպություններին՝ Ընտրությունների միջազգային դիտարկման սկզբունքների հռչակագրի ընդունման վերաբերյալ: Այս Հռչակագիրն առաջին փորձն էր՝ ընտրությունների օբյեկտիվ և անկողմնակալ դիտարկումների ամբողջականությունը պաշտպանող պրակտիկ գործողությունների օրենսգիրք սահմանելու՝ որպես ամբողջ համաշխարհային հանրության համատեղ գործունեություն: «Ինքնիշխան պետությունների հրավերով միջազգային դիտորդների ներկայությունը կարող է նշանակալիորեն ապահովել, որպեսզի ընտրություններն իսկապես նպաստեն ժողովրդավարական գործընթացի զարգացմանը», - ասել է Անանը,- «Հենց միայն դիտորդների ներկայությունը կարող է կանխել խախտումները, ապահովել գործընթացի

թափանցիկությունը և վստահություն ներշնչել գործընթացի նկատմամբ»⁷⁵:

Ներկայումս ՄԱԿ-ը հազվադեպ է ունեում իր սեփական դիտորդները, փոխարենը դիտարկումն իրականացվում է տարածաշրջանային կառավարական կազմակերպությունների և միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների կողմից:

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն (ԵԱՀԿ): ԵԱՀԿ-ի պատմության մեկնարկը տրվել է միջազգային լարվածության ժամանակահատվածում՝ 1970-ականների սկզբին, երբ ստեղծվեց Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդաժողովը (ԵԱՀԽ), որը կոչված էր ծառայելու՝ որպես Արևելքի և Արևմուտքի երկխոսության և բանակցությունների բազմակողմ ֆորում: Երկամյա հանդիպումների արդյունքը Հելսինկիում և Ժնևում 1975 թվականի օգոստոսի 1-ին ստորագրված համաձայնագիրն էր, որը կոչվեց Հելսինկյան եզրափակիչ ակտ: Այս փաստաթուղթը պարունակում է մի շարք կարևոր պարտավորություններ ռազմա-քաղաքական և տնտեսական-բնապահական ոլորտներում, ինչպես նաև, այսպես կոչված, «Հելսինկյան գործընթացի» համար հիմնարար դարձած մարդու իրավունքների խնդիրներին առնչվող ոլորտներում,

⁷⁵ Наблюдение за выборами: ОБСЕ/БДИПЧ 2006 г. -

file:///C:/Users/User/Desktop/%D0%9C%D0%98%D0%9C%D0%A0%D0%94/%D0%94%D0%BE%D0%BA%D1%83%D0%BC%D0%B5%D0%BD%D1%82%D1%8B%D0%20%D0%9E%D0%91%D0%A1%D0%95/%D0%9D%D0%B0%D0%B1%D0%BB%D1%8E%D0%B4%D0%B5%D0%BD%D0%B8%D0%B5%D0%B7%D0%B0%D0%20%D0%B2%D1%8B%D0%B1%D0%BE%D1%80%D0%B0%D0%BC%D0%B8.pdf, էջ 2:

հասարակության քաղաքակիրթ հարաբերությունների զարգացման սկզբունքներին առնչվող ոլորտներում, նաև ազգային ժողովրդավարական ընտրությունների կազմակերպման և անցկացման հիմնարար քաղաքական սկզբունքներին վերաբերող ոլորտներում՝ ներառյալ դրանց վարքագծի միջազգային դիտարկման տարրերը:

ԵԱՀԿ շրջանակներում միջազգային դիտորդական ինստիտուտը զարգանում է ԵԱՀԿ վարչական կառուցվածքային ստորաբաժանումներից մեկի՝ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) հրահանգչական մշակումների իրականացման միջոցով:

ԺՀՄԻԳ-ը մարդկային չափանիշի համար պատասխանատու ԵԱՀԿ հիմնական հաստատությունն է: Դա նշանակում է, որ ԺՀՄԻԳ-ը համագործակցում է ԵԱՀԿ մասնակից-պետությունների հետ՝ «մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների լիակատար հարգանքն ապահովելու, օրենքի գերակայության հիման վրա գործելու, ժողովրդավարության սկզբունքներն իրականացնելու և ... ժողովրդավարական ինստիտուտների ստեղծման, ամրապնդման և պաշտպանության, ամբողջ հասարակության մասշտաբով հանդուրժող հարաբերությունների սկզբունքների մշակման գործում»⁷⁶: ԺՀՄԻԳ-ը ստեղծվել է 1990թ.՝ Փարիզի խարտիայի հիման վրա՝ «Գրասենյակ՝ ազատ ընտրությունների համար» անվանմամբ: Իր ներկայիս անվանումը ստացել է 1992 թ., երբ նրա մանդատն ընդլայնվել է՝ ներառելով մարդու իրավունքներն ու ժողովր-

⁷⁶ Хельсинкский Документ 1992 года
(<https://www.osce.org/files/f/documents/8/0/39534.pdf>)

դավարացումը, և որին 1994 թ. Բուդապեշտի գազաթնաժողովի կողմից հանձնարարվել է մշակել ուղեցույցներ՝ ընտրությունների դիտարկումն իրականացնելու նախապատրաստման և մեթոդաբանության բարելավման նպատակով: Եթե ԵԱՀԿ ղեկավար մարմինների կողմից ընդունված փաստաթղթերն ունեն միջազգային ակտերի կարգավիճակ (կրում են քաղաքական և ոչ իրավական բնույթ), ապա, այդ կարգավիճակը տարածել կառուցվածքային վարչական, թեև մասնագիտացված, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ստորաբաժանման վրա՝ առանց ԵԱՀԿ ղեկավար մարմինների (Խորհրդարանական վեհաժողովի կամ Մշտական խորհրդի կամ Նախարարների խորհրդի) հաստատման կամ հավանության, արդեն իսկ անբավարար է՝ հաշվի առնելով միջազգային դիտորդության մեխանիզմի կարգավորման ոլորտում կոլեկտիվ մարմինների դերի բարձրացման անհրաժեշտությունը: Սա տարածվում է ինչպես ընտրությունների, այնպես էլ հանրաքվեի ինստիտուտների վրա:

ԺՀՄԻԳ-ը Եվրոպայում հանդիսանում է առաջատար կազմակերպություն՝ ընտրությունների դիտարկման ոլորտում: Մանրակրկիտ և մանրամասն մշակված մեթոդաբանությունը թույլ է տալիս ընդգրկել ընտրական գործընթացի բոլոր ասպեկտները և տալ նրանց հնարավորինս լիարժեք գնահատական:

Ընտրությունների դիտարկման վաղ տարիները կարելի է բնութագրել որպես «ազատ և արդար» տարիներ, քանի որ դիտորդներից ակնկալվում էր ընտրությունների օրվա ընթացակարգերի պարզ և արագ նկարագրություն: Սակայն, շուտով պարզ դարձավ, որ նման «սև ու սպիտակ» գնահատական-

ներն անբավարար էին ընտրական գործընթացի բարդությունը գնահատելու համար: «Ընտրական գործընթացի հեղինակությունը պետությունների համար, որտեղ անցկացվում են ընտրություններ» բարձրացնելու նպատակով՝ ԵԱՀԿ մասնակից-պետություններն առաջին անգամ ամրագրեցին պարտավորություններ՝ հրավիրել միջազգային դիտորդներին՝ դիտարկելու իրենց ազգային ընտրությունների ընթացքն այն ծավալով, որը թույլատրվում է օրենքով: Նրանք նաև կձգտեն օժանդակել նույնպիսի ներկայությունը՝ համազգայինից ցածր մակարդակով անցկացվող ընտրական գործընթացին: Նման դիտորդները պարտավորություն կստանան նաև չմիջամտել ընտրական գործընթացին: Ավելին՝ ընտրությունների միջազգային դիտարկման ինստիտուտի հիմնական խնդիրը դրա ձևավորման ժամանակահատվածի համար ձևակերպվել է հենց որպես «ընտրական գործընթացի հեղինակության բարձրացում»:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ ԵԱՀԿ 56 մասնակից-պետություններից 20-ից քիչ պետություններ իրենց ազգային ընտրական օրենսդրության մեջ ներառել են դրույթներ՝ միջազգային (օտարերկրյա) դիտորդների վերաբերյալ, և Հայաստանն առաջիններից էր նման պետությունների շարքում: Այդ պետությունները գրեթե լիովին ամրագրել են միջազգային դիտորդների կարգավիճակն ու լիազորությունները, նրանց անկախ և ինքնուրույն գործունեության երաշխիքները, ընտրական գործընթացի մասնակիցների կողմից միջազգային դիտորդների իրավունքների խախտման դեպքում պատասխանատվությունը:

Այս կամ այն ընտրություններին հետևելու որոշումը կա-

յացվում է կարիքների գնահատման առաքելության (ԿԳԱ) աշխատանքների արդյունքների հիման վրա, որն առաջարկություններ է ներկայացնում ընտրությունների դիտարկման անհրաժեշտ տեսակի, ձևի, տևողության և ծավալի վերաբերյալ:

1990 թվականին ընդունված Կոպենհագենի պատմական փաստաթղթում պետությունները հայտարարեցին, որ «Պարբերական և իսկական ընտրությունների ընթացքում ազատորեն և ազնվորեն արտահայտվող ժողովրդի կամքն իշխանության և ցանկացած կառավարության օրինականության հիմքն է»: Բացի այդ, Կոպենհագենում մասնակից-պետությունները պայմանավորվեցին մի շարք պարտավորությունների շուրջ, որոնք այն ժամանակ աննախադեպ մանրամասնություններով ցույց տվեցին, իսկապես, ժողովրդավարական ընտրությունների նշաններ⁷⁷:

Ներկայումս անհետաձգելի անհրաժեշտություն կա այս ոլորտում մշակել և ընդունել լրացուցիչ միջազգային պարտավորություններ՝ հաշվի առնելով կուտակված միջազգային և ազգային փորձը և ժողովրդավարական ընտրությունների անցկացման միջազգային պարտավորությունների ժամանակակից համակարգի հետագա ձևավորման կարիքները: Այս առումով անհրաժեշտ է շարունակել աշխատանքը ժողովրդավարական ընտրությունների անցկացման լրացուցիչ սկզբունքների համախմբման ուղղությամբ, ինչպիսիք են՝ ընտրությունների նկատմամբ ընտրողների վստահությունը, ընտրությունների անցկացումն անկախ ընտրական մարմին-

⁷⁷ <https://www.osce.org/files/f/documents/5/9/78697.pdf>

ների կողմից, քվեարկության և հաշվարկման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը, ընտրական գործընթացի մասնակիցների պատասխանատվությունը, ինչպես նաև՝ ընտրությունների և հանրաքվեների նկատմամբ միջազգային դիտարկման կազմակերպման սկզբունքները: Այս լրացուցիչ միջազգային պարտավորությունները պետք է համարժեքորեն ամրագրվեն ԵԱՀԿ համապատասխան փաստաթղթում՝ լրացնելով և հստակեցնելով 1990 թվականի Կոպենհագենի փաստաթուղթը նոր ընտրական իրողություններով և միջազգային պարտավորություններով:

ԺՀՄԻԳ-ը դիտարկում իրականացնում է միայն ԵԱՀԿ մասնակից երկրներում: 1990 թվականի Կոպենհագենի փաստաթուղթը նախատեսում է համապետական, համազգային ընտրությունների դիտարկում, սակայն, 1999 թվականի Եվրոպական անվտանգության խարտիան և 2006 թվականի Նախարարների խորհրդի որոշումներն ընդլայնեցին ընտրությունների դիտարկման շրջանակը՝ հրաժարվելով «համազգային» բառից՝ ԺՀՄԻԳ-ին տալով ընտրությունների ցանկացած մակարդակում դիտարկում իրականացնելու մանդատ՝ հրավերի առկայության դեպքում: Բյուրոն հիմնականում կենտրոնանում է համազգային մակարդակում պետական ինստիտուտների ուղղակի ընտրությունների վրա, ինչպիսիք են նախագահական և խորհրդարանական ընտրությունները, բայց նրանք նաև դիտարկում են որոշ տարածաշրջանային և տեղական ընտրություններ և հանրաքվեներ: ԺՀՄԻԳ-ի դիտորդական առաքելությունները գնահատում են ԵԱՀԿ տարածաշրջանի երկրներում ընտրական գործընթացների համապատասխանությունը ԵԱՀԿ պարտավորություններին, ժո-

դովրդավարական ընտրությունների միջազգային չափանիշներին, ինչպես նաև ազգային օրենսդրությամբ:

Գլոբալիզացիան և նոր մարտահրավերները թույլ են տալիս փաստելու, որ ԺՀՄԻԳ-ի մեթոդաբանությունն այլևս միջազգային ընտրությունների դիտարկման «ոսկե չափանիշ» չէ. այն պահանջում է լուրջ և համարժեք ընտրական գործընթացների գնահատման մեթոդների արդիականացում՝ հաշվի առնելով ԵԱՀԿ մասնակից բոլոր երկրների շահերը և ազգային ընտրությունների վերաբերյալ միջազգային գնահատականների մշակման արդար հիմքը:

ԵԱՀԿ շրջանակներում միջազգային պարտավորությունների զարգացումը ենթադրում է դրանց տարածումը նաև հանրաքվեի ինստիտուտի վրա՝ որպես ազատ ժողովրդավարական ընտրությունների ինստիտուտի հետ կապված ինստիտուտ, որն ապահովում է ազգային պետության և քաղաքացիական հասարակության ժողովրդավարական զարգացումը: Բացի այդ, կարևոր է, որ ԵԱՀԿ բոլոր մասնակից պետությունները լիովին կատարեն իրենց պարտավորությունները՝ համախմբելու, ազգային օրենսդրությամբ թույլատրված չափով միջազգային դիտորդների կարգավիճակն ու լիազորությունները, ինչպես նաև ընտրություններին նրանց պարտադիր հրավերը՝ ներառյալ համազգայինից ավելի ցածր ընտրությունների մակարդակում:

Ընտրությունների դիտարկման ԺՀՄԻԳ-ի մեթոդաբանությունը պարունակում է ևս մեկ փաստաթուղթ՝ Միջազգային ընտրությունների դիտարկման սկզբունքների հռչակագիրը: Հռչակագիրն ընդունվել է ՄԱԿ-ի կողմից 2005 թվականին և ընդգծում է այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են՝ ընտրությ-

յունների դիտարկման համապատասխանեցումը մարդու իրավունքների ոլորտի միջազգային օրենսդրությանը, ընտրությունների նկատմամբ մոտեցումը՝ որպես երկարաժամկետ գործընթացի, ընտրությունների հուսալի դիտարկման համար նվազագույն պայմանների ստեղծման անհրաժեշտությունը, տեղական դիտորդների դերի կարևորությունը:

Միատեսակ միջազգային կանոնների և դիտարկման մեթոդների բացակայությունը հանգեցնում է միջազգային դիտորդության ինստիտուտի դեգրադացիայի, մինչև այն աստիճանը, երբ մի շարք պետություններ հրաժարվում են ընտրություններին հրավիրել միջազգային դիտորդների: Վերջին տարիների այդպիսի օրինակներ են՝ Լեհաստանի, Մոլդովայի ընտրությունները (որտեղ ընտրությունների կազմակերպիչները հրաժարվել են հավատարմագրել ավելի քան հարյուր միջազգային դիտորդների), ԱՄՆ ընտրությունները (որտեղ մի շարք նահանգներում դիտորդներին թույլ չեն տվել տեղամասեր մտնել), Ուկրաինայի ընտրությունները (որտեղ ընտրություններին չեն հրավիրել ԱՊՀ գործադիր կոմիտեի դիտորդական առաքելությանը): Այսպիսով՝ ԵԱՀԿ տարածքում պետություններն իրենք են որոշում միջազգային դիտորդներ հրավիրելու և ընդունելու նպատակահարմարությունը, նրանց թիվը որոշելով իրենց տեսակետներով և սկզբունքներով, ոչ թե օրենսդրությամբ ամրագրված չափանիշների հիման վրա: Միջազգային չափանիշների ընդունման հետագա ձգձգումը, ի վերջո, կարող է հանգեցնել միջազգային դիտորդական ինստիտուտի վերացմանը:

Եվրոպայի խորհուրդ: Եվրոպական մեկ այլ կազմակերպության՝ Եվրոպայի խորհրդի շրջանակներում, նաև ընթա-

նում են գործընթացներ, որոնք ուղղված են միջազգային դիտարկման ընթացակարգերի որոշակի ձևականացմանը՝ նման՝ ԵԱՀԿ-ում տեղի ունեցող գործընթացներին: Եվրոպայի խորհրդի ղեկավար մարմինների (Նախարարների կոմիտե, Խորհրդարանական վեհաժողով) կողմից միջազգային դիտորդության կազմակերպման վերաբերյալ հստակ պահանջների բացակայության դեպքում ընտրությունների միջազգային դիտարկման վերաբերյալ որոշ և մի շարք դեպքերում չափազանց ընդհանուր դրույթներ պարունակող փաստաթղթերը (մասնավորապես՝ Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագիրքը) մշակում են այս տարածաշրջանային միջկառավարական կազմակերպության այլ մարմիններ՝ Վենետիկի հանձնաժողովը (Եվրոպական հանձնաժողով «Հանուն ժողովրդավարության՝ օրենքի միջոցով»), նրա ժողովրդավարական ընտրությունների Խորհուրդը, Եվրոպայի տեղական և տարածաշրջանային իշխանությունների Կոնգրեսը: Այս հիմքի վրա՝ «Հանուն ժողովրդավարության՝ օրենքի միջոցով» Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) շրջանակներում մշակվեց և 2009 թ. դեկտեմբերի 11-12-ի 81-րդ լիազումար նիստում ընդունվեց ընտրությունների դիտորդների միջազգայնորեն ճանաչված կարգավիճակի վերաբերյալ հանձնարարությունները: 2010 թ. նոյեմբերի 12-ին Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի կողմից այս հանձնարարությունները հավանության արժանացան և ընդունվեց 1771 (2010) «Ընտրությունների դիտորդների միջազգայնորեն ճանաչված կարգավիճակը» բանաձևը և 1945 (2010) համանուն հանձնարարությունները:

Ընտրություններին միջազգային դիտորդի կարգավիճա-

կով ժամանած Եվրոպայի խորհրդի մոնիտորների կողմից օգտագործվում են խորհրդատվական բնույթի փաստաթղթեր, մասնավրապես, Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագիրքը, ուղեցույցները և բացատրական զեկույցը, տեղական և տարածքային ընտրությունների դիտարկումը՝ Կոնգրեսի ռազմավարությունը և կանոնները, որոնք հավանության էին արժանացել Եվրոպայի տարածաշրջանային և տեղական իշխանությունների Կոնգրեսի մշտական հանձնաժողովի կողմից 2010 թվականի հունիսի 7-ին: Բայց հարկ է նշել, որ պետություններում ազատ ընտրությունների անցկացումն ապահովող գոյություն ունեցող եվրոպական իրավական բազան, մեր կարծիքով, այլևս բավարար չէ:

Ընդհանուր առմամբ, եվրոպական ընտրական չափանիշների համախմբումն ու կոնկրետացումը, ազատ ընտրությունների ժամանակակից չափանիշների ցանկը, ընտրական իրավունքներն ու ազատությունները՝ կոնվենցիայի համատեքստում, առնվազն նոր ազդակ կհաղորդեն միջազգային և ազգային իրավական տարածքի սինխրոնիզացիային և ներդաշնակեցմանը, մարդու և քաղաքացու ընտրական իրավունքների և ազատությունների ապահովմանը, ժողովրդավարական ընտրությունների նախապատրաստմանն ու անցկացմանը: Համաեվրոպական կոնվենցիայի ձևաչափով նշված չափանիշների ամրագրումը, ինչպես արդեն նշվել է, թույլ կտա ավելի ամուր միջազգային իրավական հիմք դնել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գործունեության համար:

Եվրոպայի խորհրդի շրջանակներում մնում է չլուծված նաև ազգային հանրաքվեների նախապատրաստման և անցկացման չափանիշների միջազգային փաստաթղթի մշակման

խնդիրը, հանրաքվեին մասնակցելու քաղաքացիների իրավունքի իրականացման երաշխիքները, ինչպես նաև միջազգային դիտորդական առաքելության իրականացումը ոչ միայն ընտրությունների, այլև հանրաքվեների ժամանակ:

Եվրոպական միություն: Եվրոպական միությունում ընտրությունների դիտարկման միջազգային ընթացակարգերի ամրագրումը նույնպես հանձնարարությունների մակարդակում է: Եվրոպայի խորհուրդն ընտրությունների դիտարկումն սկսեց 1989 թվականին Բեռլինի պատի փլուզումից հետո՝ որպես ժողովրդավարության զարգացման գործընթացի մի մաս: 2008թ. փետրվարին Արտաքին հարաբերությունների և Եվրոպական հանձնաժողովի Եվրոպական աջակցության գլխավոր տնօրինությունը հրապարակեցին Եվրոպական միության ընտրությունների դիտարկման ձեռնարկի երկրորդ հրատարակությունը: Ձեռնարկը մշակվել է Եվրոպական միության դիտորդների համար, սակայն, հաշվի առնելով այս փաստաթղթի խորհրդատվական բնույթը, պրակտիկան գնում է մի փոքր այլ ճանապարհով: Այսպիսով, 2000-ից 2007 թվականների ընթացքում Եվրոպական միությունն ընտրությունների դիտարկման 64 միջազգային առաքելություն է ուղարկել Աֆրիկայի, Ասիայի և Մերձավոր Արևելքի 41 երկրներ (առաքելություններից ոչ մեկը չի ուղարկվել Եվրոպական միության անդամ պետության տարածք): Դա պայմանավորված է «Ընտրությունների դիտարկման ԵՄ մանդատը» ձեռնարկի 1.3 բաժնի ձևական դրույթով, որն ասում է. «Դիտորդական առաքելությունը չպետք է ուղարկվի այն երկրներ, որտեղ ընտրությունների ժամանակ միջազգային չափանիշներից էական շեղումներ չեն ակնկալվում, կամ որտեղ պետության ժողովր-

դավարական գործունեությունն ընդհանուր առմամբ համարվում է արդյունավետ»⁷⁸: Այս դրույթն էլ հենց մեծապես կանխորոշեց այս փաստաթղթի իրավական կարգավիճակը՝ որպես խորհրդատվական (տեղեկատու) բնույթ ունեցող, կառավարման մարմինների հաստատումը չպահանջող և գործող հիմնականում Եվրոպական միության սահմաններից դուրս: Մեր կարծիքով, նման մոտեցումը, մի կողմից, էապես արժեզրկում է ձեռնարկի նպատակային ուղղվածությունը, քանի որ Եվրոպական միության բոլոր անդամ երկրներն ապրիորի անվերապահորեն որակվում են որպես ժողովրդավար՝ ընտրական ոլորտում՝ վեր դասվելով այլ պետություններից, իսկ, մյուս կողմից, դա առաջացնում է իրավական անհեթեթություն (նոնսենս), երբ պետությունների մեկ շրջանակում օգտագործելու համար նախատեսված փաստաթուղթը չի կիրառվում այդ երկրների սահմաններում, այլ մեխանիկորեն կիրառվում է այլ պետություններում:

Ամերիկյան պետությունների կազմակերպություն (ԱՊԿ):

Միջազգային դիտարկման ինստիտուտի զարգացման գործում ամերիկյան մայրցամաքի պետությունները գնում են իրենց սեփական, բայց եվրոպականին մոտ ճանապարհով: Միջամերիկյան ժողովրդավարական խարտիայում, որն ընդունվել է Ամերիկյան պետությունների կազմակերպության (ԱՊԿ) Գլխավոր ասամբլեայի կողմից 2001 թվականին՝ ընդգծելով ամերիկյան ժողովրդի զարգացման հարցում ժողովրդավարության կարևորությունը, ամրագրված են ընտրությունների անցկացման հիմնարար սկզբունքները՝ որպես ժողովրդի ինքնիշ-

⁷⁸ <http://old.cikrf.ru/news/relevant/2014/10/01/03.html>

խանության դրսևորում: Այդ Խարտիայում ամրագրված է, որ «ընտրություններն անցկացվում են՝ պարբերական, ազատ, արդար սկզբունքներով՝ հիմնված գաղտնի քվեարկության վրա»: Խարտիան ներառում է միջազգային դիտորդական առաքելություններին վերաբերող բաժին: Մասնակից-պետությունները, իրենց ինքնիշխանությունն իրականացնելիս, կարող են խորհրդատվության կամ աջակցության խնդրանքով դիմել ԱՊԿ-ին՝ իրենց ինստիտուտների և ընտրական գործընթացների ամրապնդման և զարգացման համար՝ ներառյալ համապատասխան առաքելությունների ուղարկումը: Դիտորդական առաքելություններն ուղարկվում են շահագրգիռ պետության խնդրանքով: Այդ պետության կառավարությունը և ԱՊԿ-ի Գլխավոր քարտուղարը համաձայնության են գալիս, որով, ի թիվս այլ բաների, սահմանվում են դիտորդական առաքելության նպատակներն ու ձևը: ԱՊԿ-ն, իր հերթին, երաշխավորում է այդ առաքելությունների արդյունավետությունն ու անկախությունը, իսկ առաքելությունները պետք է գործեն օբյեկտիվ, անաչառ և թափանցիկ: Առաքելությունն իր գործունեության մասին զեկույցները ներկայացնում է ԱՊԿ-ի Մշտական խորհրդին: Միջամերիկյան ժողովրդավարական խարտիան ճանաչում է ընտրական գործընթացների հետ կապված մի շարք իրավունքներ՝ նշելով ԱՊԿ դիտորդական առաքելությունների համար ելակետ հանդիսացող չափանիշները: Այդպիսի փաստաթղթերի դրույթների հիման վրա, ինչպիսիք են Միջամերիկյան ժողովրդավարական խարտիան, ԱՊԿ Գլխավոր քարտուղարության համագործակցության և ընտրությունների դիտարկման վարչությունը, մշակել է մի շարք ձեռնարկներ Ամերիկայի պետությունների կազմակերպութ-

յան դիտորդական առաքելությունների համար, այդ թվում՝ միջազգային դիտարկումն էլեկտրոնային քվեարկության կիրառմամբ՝ նպատակ ունենալով ամփոփելու այն չափանիշներն ու մեթոդները, որոնք ԱՊԿ-ն օգտագործում է դիտորդական առաքելությունների միջոցով ընտրական գործընթացներին հետևելիս:

Հարկ է նշել, որ ԱՊԿ մարդու իրավունքների մասին կանոնադրական փաստաթղթերը և հիմնարար փաստաթղթերը ԱՊԿ անդամ երկրների համար նաև նախատեսում են պատժամիջոցներ՝ ընտրությունների կազմակերպման և անցկացման գործում ժողովրդավարական չափանիշները չպահպանելու համար՝ ընդհուպ մինչև ԱՊԿ մասնակից-պետությունների կազմից խախտող պետությանը հեռացնելը: Այսպիսով՝ 1962 թվականին Կուբան հեռացվեց ԱՊԿ-ից և նրա անդամությունը վերականգնվեց միայն 2009 թվականի հուլիսին, 2010 թ.-ից Հոնդուրասը հեռացվել է ԱՊԿ-ից՝ 2009 թվականի հունիսի 28-ին տեղի ունեցած ռազմական (պետական) հեղաշրջման և Հոնդուրասի նախագահ Մանուել Սելայոյին իր պաշտոնում վերականգնելը մերժելու և կռալիցիոն կառավարություն ստեղծելու հետ կապված⁷⁹:

Անկախ պետությունների համագործակցություն (ԱՊՀ):

Բավականին ակտիվորեն է ընթանում Անկախ պետությունների համագործակցության միջազգային դիտորդական ինստիտուտի զարգացումը: 2003 թվականին, «Անկախ պետությունների համագործակցության մասնակից-պետություններում ժողովրդավարական ընտրությունների, ընտրական ի-

⁷⁹ http://www.oas.org/en/information_center/default.asp

րավունքների և ազատությունների չափանիշների մասին» Կոնվենցիան (այսուհետ՝ ԱՊՀ Կոնվենցիա) երեք պետությունների (Ղրղզստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և Տաջիկստանի Հանրապետության) կողմից վավերացվելուց հետո, մտավ ուժի մեջ, որից հետո այն վավերացրել են Մոլդովան (2005թ. հունվարի 14) և Հայաստանը (2005թ. մարտի 17), այնուհետև, ԱՊՀ Կոնվենցիային միացել են Ղազախստանը (2007թ. հուլիսի 4) և Բելառուսը (2014թ. հունվար): ԱՊՀ Կոնվենցիայի յուրահատկությունը, առաջին հերթին, կայանում է նրանում, որ համաշխարհային պրակտիկայում առաջին անգամ միջազգային-իրավական ակտի՝ կոնվենցիայի, ձևաչափով, որը կրում է պարտադիր և ոչ թե խորհրդատվական բնույթ, ամրագրվեց ժողովրդավարական ընտրությունների չափանիշները՝ պետական իշխանության, տեղական ինքնակառավարման, ժողովրդավարական (ազգային) ներկայացուցչական այլ մարմիններում քաղաքացու ընտրելու և ընտրվելու իրավունքը՝ ընդհանուր, հավասար, ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ, ընտրողների կամքի ազատ արտահայտումն ապահովող պարբերական ու պարտադիր, արդար, իրական և ազատ ընտրությունների սկզբունքները, ընտրությունների թափանցիկ և հրապարակային բնույթը, մարդու և քաղաքացու ընտրական իրավունքների և ազատությունների դատական և այլ պաշտպանության, ընտրությունների հասարակական և միջազգային դիտարկման իրականացումը, ընտրական գործընթացի մասնակիցների ընտրական իրավունքների և ազատությունների իրականացման երաշխիքները:

ԱՊՀ Կոնվենցիայի 14-րդ հոդվածում ամրագրված են ազ-

գային դիտորդների կարգավիճակն ու լիազորությունները՝ համաձայն որի. «1. Յուրաքանչյուր թեկնածու, յուրաքանչյուր քաղաքական կուսակցություն (դաշինք), այլ հասարակական միավորում (հասարակական կազմակերպություն), ընտրողների խումբ, Սահմանադրությամբ, օրենքներում նշված՝ ընտրությունների այլ սուբյեկտներ իրավունք ունեն օրենքներով կամ ընտրությունները կազմակերպող մարմինների կողմից ընդունվող նորմատիվ ակտերով սահմանված կարգով նշանակել ազգային դիտորդներ, որոնք իրավունք ունեն քվեարկության օրը, այդ թվում՝ վաղաժամկետ քվեարկության օրը, քվեարկության համար հատկացված տարածքում իրականացնել դիտարկում:

2. Ազգային դիտորդների իրավունքներն ու պարտականությունները պետք է սահմանվեն օրենսդրությամբ:

3. Ազգային դիտորդներին պետք է տրվեն հետևյալ իրավունքները.

ա) ծանոթանալ ընտրությունների մասին օրենքներում նշված ընտրական փաստաթղթերին, տեղեկատվություն ստանալ քվեարկության համար ընտրողների ցուցակներում ընդգրկված ընտրողների թվի և քվեարկությանը մասնակցած, այդ թվում՝ վաղաժամկետ և քվեարկության համար նախատեսված տարածքից դուրս քվեարկած ընտրողների թվի վերաբերյալ.

բ) ներկա գտնվել քվեարկության համար նախատեսված տարածքում.

գ) հետևել ընտրողներին քվեաթերթիկների հանձնմանը.

դ) ներկա գտնվել վաղաժամկետ քվեարկության անցկացմանը, քվեարկության համար նախատեսված տարածքից

դուրս քվեարկությանը.

ե) քվեաթերթիկների հաշվարկման ընթացակարգի տեսանելիությունն ապահովող պայմաններում հետևել ընտրողների ձայների հաշվարկմանը.

զ) հետևել ընտրական մարմնի կողմից քվեարկության, ընտրությունների արդյունքների արձանագրությունների և այլ փաստաթղթերի կազմմանը, ծանոթանալ քվեարկության արդյունքների վերաբերյալ ընտրական մարմնի արձանագրությանը, այդ թվում կրկնակի կազմվող արձանագրությանը, ազգային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով՝ համապատասխան ընտրական մարմնից ստանալ նշված արձանագրությունների հաստատված պատճենները.

է) քվեարկության կազմակերպման հարցերի վերաբերյալ առաջարկություններով և դիտողություններով դիմել ընտրական մարմին.

ը) բողոքարկել ընտրական մարմնի, ընտրական մարմնի անդամների որոշումները և գործողությունները (անգործությունը) անմիջական վերադաս ընտրական մարմին կամ դատարան:

4. Օրենքներով նախատեսված դեպքերում և կարգով՝ ազգային դիտորդների իրավունքներից կարող են օգտվել նաև թեկնածուների, քաղաքական կուսակցությունների (դաշինքների) վստահված անձինք:

5. Ընտրական մարմինները և (կամ) այլ մարմիններն ու կազմակերպությունները կարող են օժտվել ազգային դիտորդների և ընտրությունների մյուս մասնակիցների համար ժողովրդավարական ընտրական տեխնոլոգիաների հիմունքների, ազգային ընտրական օրենսդրության, միջազգային ընտ-

րական չափանիշների, մարդու և քաղաքացու ընտրական իրավունքների և ազատությունների ապահովման և պաշտպանության վերաբերյալ ուսուցում կազմակերպելու լիազորություններով»:

Իսկ ԱՊՀ Կոնվենցիայի 15-րդ հոդվածում հստակեցված են միջազգային դիտորդների կարգավիճակն ու լիազորությունները, որտեղ գրված է. «1. Կողմերը հաստատում են, որ միջազգային դիտորդների ներկայությունը նպաստում է ընտրությունների թափանցիկությանը և հրապարակայնությանը, պետությունների միջազգային պարտավորությունների պահպանմանը: Նրանք կձգտեն աջակցել միջազգային դիտորդների մասնակցությանն ավելի ցածր, քան համազգային մակարդակով՝ ընդհուպ մինչև համայնքային (տեղական) մակարդակով անցկացվող ընտրական գործընթացներին:

2. Միջազգային դիտորդների գործունեությունը կարգավորվում է ընդունող պետության օրենքներով, սույն Կոնվենցիայով, միջազգային այլ փաստաթղթերով:

3. Միջազգային դիտորդները երկրի տարածք մուտք գործելու թույլտվություն են ստանում օրենքով սահմանված կարգով և հավատարմագրվում են համապատասխան ընտրական մարմնի կողմից՝ համապատասխան հրավերի առկայության դեպքում: Հրավերները կարող են ուղարկվել օրենքով լիազորված մարմինների կողմից ընտրությունների նշանակման մասին որոշման պաշտոնական հրապարակումից հետո: Հրավերների ուղարկման առաջարկները կարող են ներկայացվել Անկախ Պետությունների Համագործակցության հիմնադիր մարմինների կողմից:

4. Կենտրոնական ընտրական մարմինը միջազգային դի-

տորդին հանձնում է սահմանված նմուշի հավատարմագրման վկայական: Այդպիսի վկայականն իրավունք է տալիս միջազգային դիտորդին իրականացնելու դիտարկում ընտրությունների նախապատրաստման և անցկացման ժամանակահատվածում:

5. Ընդունող երկրի տարածքում միջազգային դիտորդը գտնվում է տվյալ պետության հովանավորության ներքո: Ընտրական մարմինները, պետական իշխանության մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են իրենց իրավասությունների սահմաններում նրանց ցուցաբերել անհրաժեշտ աջակցություն:

6. Միջազգային դիտորդն իր գործունեությունն իրականացնում է ինքնուրույն և անկախ: Միջազգային դիտորդի գործունեության նյութաֆինանսական ապահովվածությունը կատարվում է դիտորդին ուղարկող կողմի կամ նրա անձնական միջոցների հաշվին:

7. Միջազգային դիտորդներն իրավունք չունեն օգտագործելու իրենց կարգավիճակը ընտրարշավի ընթացքը դիտարկելու հետ առնչություն չունեցող գործունեություն իրականացնելու համար: Կողմերն իրենց իրավունք են վերապահում հավատարմագրումից զրկել այն միջազգային դիտորդներին, որոնք խախտում են օրենքները, միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքները և նորմերը:

8. Միջազգային դիտորդներն իրավունք ունեն՝

ա) ստանալ ընտրական գործընթացը կարգավորող բոլոր փաստաթղթերը (ազգային անվտանգության շահերին չառնչվող), ընտրական մարմիններից անհրաժեշտ տեղեկատվություն և ազգային օրենքներում նշված ընտրական փաստաթղթեր:

թերի պատճենները.

բ) շփվել քաղաքական կուսակցությունների, դաշինքների, թեկնածուների, մասնավոր անձանց, ընտրական մարմինների աշխատակիցների հետ.

գ) ազատ այցելել բոլոր ընտրական տեղամասերը և քվեարկության համար նախատեսված տարածքները, այդ թվում՝ քվեարկության անցկացման օրը.

դ) հետևել քվեարկության ընթացքին, ձայների հաշվարկմանը և դրանց արդյունքների ամփոփմանը քվեաթերթիկների հաշվարկման ընթացակարգի տեսանելիությունն ապահովող պայմաններում.

ե) ծանոթանալ ընտրությունների մասին օրենսդրության խախտման հետ կապված բողոքների (դիմումների) և գանգատների քննարկման արդյունքներին.

զ) առանց միջամտելու ընտրություններն իրականացնող մարմնի աշխատանքներին՝ տեղեկացնել ընտրական մարմինների ներկայացուցիչներին իրենց դիտարկումների, առաջարկությունների մասին.

է) քվեարկության ավարտից հետո հրապարակայնորեն շարադրել իրենց կարծիքը ընտրությունների նախապատրաստման և անցկացման մասին.

ը) ընտրությունների կազմակերպիչներին, պետական իշխանության մարմիններին և համապատասխան պաշտոնատար անձանց ներկայացնել ընտրությունների ընթացքի դիտարկման արդյունքների վերաբերյալ իրենց եզրակացությունը:

9. Միջազգային դիտորդները պետք է՝

ա) պահպանեն ընդունող երկրի Սահմանադրությունը և

օրենքները, սույն Կոնվենցիայի, միջազգային այլ փաստաթղթերի դրույթները.

բ) իրենց մոտ ունենան ընդունող երկրի սահմանած կարգով հանձնված միջազգային դիտորդի հավատարմագրման վկայականը և այն ներկայացնեն ընտրությունների կազմակերպիչների պահանջով.

գ) կատարեն իրենց գործառնությունները՝ ղեկավարվելով քաղաքական չեզոքության, անկողմնակալության սկզբունքներով, հրաժարվելով ընտրական մարմինների, պետական և այլ մարմինների, պաշտոնատար անձանց, ընտրական գործընթացի մասնակիցների վերաբերյալ ցանկացած նախապատվություն կամ գնահատական տալուց.

դ) չմիջամտեն ընտրական գործընթացին.

ե) իրենց բոլոր եզրակացությունները հիմնեն դիտարկման և փաստական նյութերի վրա»⁸⁰:

ԱՊՀ Կոնվենցիայում ամրագրված և՛ միջազգային, և՛ տեղական դիտորդների կարգավիճակն ու լիազորությունները համապատասխանում են միջազգային փաստաթղթերով ամրագրված վերջիններիս կարգավիճակին ու լիազորություններին: Հենց այս լիազորություններն են, ըստ էության, ընկած բոլոր դիտորդական կազմակերպությունների կարգավիճակի հիմքում:

Ընդհանուր առմամբ, ԱՊՀ-ում ստեղծված է ժամանակակից ընտրական մարտահրավերներին համապատասխանող միջազգային իրավական դաշտ՝ ԱՊՀ երկրներում ընտրական իրավունքներն ու ազատություններն ապահովելու, ազգային

⁸⁰ <http://www.irtek.am/views/act.aspx?tid=52349>

ընտրություններ անցկացնելու և դրանց միջազգային դիտարկումը՝ միջազգային իրավունքի ընդհանուր ճանաչված սկզբունքներին և նորմերին համապատասխան իրականացնելու միջոցով: Մինևույն ժամանակ, ԱՊՀ գործունեության բարելավման գործընթացում հետագա քայլեր են մշակվում՝ ընտրական գործընթացի ժողովրդավարացման, ԱՊՀ անդամ երկրներում ընտրությունների միջազգային դիտարկումների կազմակերպման, ԱՊՀ իրավական դաշտը եվրոպական ընտրական ժառանգության և համընդհանուր ճանաչված ընտրական արժեքների հետ զուգակցելու ուղղությամբ:

ԱՊՀ դիտորդական առաքելությունները դարձել են ԱՊՀ երկրներում ընթացող ընտրական գործընթացների միջազգային մոնիտորինգի համակարգի անբաժանելի տարրը և քաղաքական համագործակցության արդյունավետ ձևը:

Ինչպես տեսնում ենք, միջազգային ասպարեզում կազմակերպությունների բավականին մեծ խումբ կա, որոնք զբաղվում են ընտրությունների և հանրաքվեների միջազգային դիտարկման հարցերով՝ իրենց ներդրումն ունենալով ժողովրդավարության առաջադեմ զարգացման գործում: Բայց այսօր արդեն պահանջվում է որոշակի ներդաշնակեցում (եթե չասենք՝ միասնականացում) միջազգային ընտրությունների դիտարկման մոտեցումներում, մեթոդներում և ընթացակարգերում, ինչը կբացառեր քաղաքական կամ նեղ կորպորատիվ նպատակների փոխարինումը ժողովրդավարական սկզբունքների այս կարևոր գործում:

Եթե այսօր ժողովրդավարությունը հանդիսանում է հանրային իշխանության կազմակերպման միակ քաղաքակիրթ ձևը, ապա, դրա ապահովագրման հիմնական տարրը պետք է

լինի ընտրությունների և հանրաքվեների միջազգային մոնիտորինգի ինստիտուտը՝ հիմնված ժողովրդավարական ընթացակարգերի և սկզբունքների հստակ և համաձայնեցված միջազգային չափանիշների վրա՝ վավերացված և ամրագրված միջազգային պայմանագրում՝ հիմնականում իր իրավական ուժով՝ միջազգային ակտում: Այս «ապահովագրական մեխանիզմի» նպատակը պետությունների և իրավական համակարգերի տարբեր խմբերի դիրքորոշումների մերձեցումն է՝ արդեն գոյություն ունեցող և նոր մշակված ժողովրդավարական չափանիշների հետագա բացահայտման գործում՝ ընտրությունների, հանրաքվեների կազմակերպման և անցկացման, քաղաքացիների ընտրական իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու, արդար և հարատև խաղաղություն պահպանելու համար:

«Հանուն ժողովրդավարության՝ օրենքի միջոցով» Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) փաստաթղթի 86-րդ կետում գրված է, որ կան երեք տարբեր տիպի դիտորդներ՝ որևէ կուսակցության համակիր ազգային դիտորդներ, անկուսակցական, չեզոք ազգային դիտորդներ և միջազգային (անկուսակցական) դիտորդներ: Գործնականում առաջին երկու կատեգորիաների միջև տարբերակումը միշտ չէ, որ ակնհայտ է, այդ իսկ պատճառով լավագույն տարբերակը կլինի դիտորդական ընթացակարգը դարձնել հնարավորին չափ ընդգրկուն թե՛ ազգային և թե՛ միջազգային մակարդակում: Ինչպես ասվում է Եվրոպայի խորհրդի Պառլամենտական վեհաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 9-ի «Ընտրական դիտորդների միջազգայնորեն ճանաչված կարգավիճակի մասին» զեկույցում՝ «Միջազգային դիտորդները գալիս են այն

երկրից, որտեղ անցկացվում են ընտրությունները: Նրանք սովորաբար նշանակվում են ազգային կառավարությունների կամ միջազգային կազմակերպությունների կողմից կամ նրանց անունից: Ներքին դիտորդները հանդիսանում են երկրի քաղաքացիներ և կարող են լինել հասարակական կազմակերպությունների անդամներ: Հասկանալի է, որ ընտրություններին դիտորդների երկու տեսակներն էլ անհրաժեշտ են: Ներքին դիտորդներն ավելի լավ են հասկանում իրենց երկիրը և ավելի լավ գիտեն լեզուն, մինչդեռ միջազգային դիտորդներին կարելի է համարել ավելի անաչառ»: Նշված կարգավորումը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ միջազգային կազմակերպությունը միջազգային դիտորդի անկողմնակալության վրա շատ ավելի վստահ է, քան տեղական դիտորդի, որը շատ դեպքերում հավատարմագրվում է որպես դիտորդական առաքելություն իրականացնող տեղական հասարակական կազմակերպություն, սակայն, հանդիսանում է որևէ կուսակցության անդամներից կազմված միավորում: Հենց սա է, գտնում ենք, տեղական հասարակական կազմակերպությունների անկողմնակալության հիմնական ռիսկայնությունը: Նման ռիսկ, իհարկե, չի բացառվում, որ կարող է լինել նաև միջազգային դիտորդների պարագայում: Եվ դա պայմանավորված է նրանով, որ ընդհանուր գնահատականները, որոնք ավելի քիչ են կապված ընտրությունների կազմակերպման հետ, չեն կարող լիովին համընկնել, քանի որ միջազգային դիտորդները ապրում են տարբեր երկրներում, ունեն տարբեր փորձառություն, տարբեր քաղաքական հայացքներ: Նրանց ներկայացրած պետություններից յուրաքանչյուրն ունի իր մշակույթն ու պատմությունը: Կարծես թե դիտորդները նա-

յում են նույն վագոնից, բայց տեսնում են տարբեր բնապատկերներ:

Հենց այս տարբերություններն են առավել ցայտուն դառնում մարդկանց մեծամասնության աչքերում՝ շարքային ընտրողներից մինչև ակադեմիկոսներ, քաղաքական գործիչներ և լրագրողներ: Ավելին՝ նման տարաձայնությունները կրկնվում են ընտրություններից ընտրություններ, և տպավորություն է ստեղծվում, որ դիտորդները, պայմանական ասած, կա՛մ վերահսկել են լրիվ ուրիշ ընտրություններ, կա՛մ ընդհանրապես չեն մասնակցել այս ընտրություններին, և պատրաստել են իրենց զեկույցները տանը՝ լսելով քաղաքական գործիչների ելույթները: Եվ դա, մեր կարծիքով, լուրջ վնաս է հասցնում միջազգային դիտորդների ինստիտուտի հեղինակությանը:

Իրականում, կա բավականին լուրջ ընդհանուր հիմք, ընդհանուր պատկերացումներ՝ առաջին հերթին, դրանք միջազգային իրավունքի կողմից մշակված չափանիշներն են: Ակնհայտ է, որ մշակույթների բոլոր տարբերություններով հանդերձ, ընտրություններին համահունչ գնահատական տալու հնարավորություն, գնահատական, որը գործնականում կարող են կիրառվել ընտրությունների կազմակերպիչների կողմից, որը կնպաստի համագործակցելուն, կապահովի հավասար գործընկերների, ինստիտուտների, պետությունների միջև հորիզոնական երկխոսություն, այնուամենայնիվ, կարող է դեռ գոյություն ունենալ:

Բայց, որպեսզի ժողովրդավարական ընտրություններին բնորոշ բոլոր ռեսուրսները լիարժեք կիրառվեն, ոչ պակաս, քան կարևոր նշանակություն ունի ուղղահայաց երկխոսությունը՝ տվյալ երկրի իշխանությունների և նրա ընտրողների

միջև: Եթե մենք խոսում ենք ընտրողների օգտին ընտրությունները դիտարկելու մասին, ապա, ո՞վ կարող է նման դիտարկումն իրականացնել անկողմնակալ: Դրանք, առաջին հերթին, միջազգային դիտորդներն են, հասարակական կազմակերպությունները, զանգվածային լրատվության միջոցներն ու հենց ընտրողները: Իրականում, միջազգային դիտորդները հաճախ են հակասում միմյանց: Հասարակական կազմակերպությունները կարող էին հավակնել անկախության, սակայն, նրանք անխուսափելիորեն ունեն հովանավորներ, այդ թվում՝ ընտրությունների արդյունքներով շահագրգռվածները: Զանգվածային լրատվության միջոցները նույնպես ինչ-որ չափով կախված են իրենց սեփականատերերից և նրանց քաղաքական նախասիրություններից:

Այսպիսով՝ միակը, ով կարող է արդյունավետ վերահսկել ընտրությունների ընթացքը, դա ընտրողն է, այսինքն՝ դիտորդների տեղական խմբերը: Եվ այս դեպքում դիտորդների հնարավոր քաղաքական կողմնակալությունը նույնիսկ դրական դեր կխաղա, եթե նրանց խմբում լինեն տարբեր քաղաքական ուժերի կողմնակիցներ: Կարծում ենք, որ կա չափանիշ, որով դեռ հնարավոր է գնահատել ընտրությունները, դա տեղամասային ընտրական հանձնաժողովում տեղական դիտորդների և տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների միջև լավ փոխըմբռնումն է, եթե նրանք ազատորեն շփվում են մեկը մյուսի և միջազգային դիտորդների հետ, ապա, այնտեղ ընտրությունները լիովին համահունչ են ժողովրդավարական սկզբունքներին: Իսկ եթե տեղական դիտորդները չեն վստահում տեղամասային ընտրական հանձնաժողովին և նույնիսկ մեկը մյուսին, ապա, մտավախություն կա, որ

այս տեղամասային ընտրական հանձնաժողովում ինչ-որ բան այն չէ, քանի որ վստահության բացակայության, որոշակի լարվածության և որոշակի ճնշման դեպքում չի կարող լինել կառուցողական համագործակցություն՝ ընտրությունների կազմակերպիչների և դիտորդների միջև՝ ինչպես միջազգային, այնպես էլ տեղական: Հետևաբար, շատ կարևոր է ամրապնդել դիտորդական առաքելությունների և տեղական դիտորդների հեղինակությունը:

Առհասարակ, միջազգային իրավունքում դիտորդական առաքելություն ասելով, հիմնականում, ի նկատի է ունեցվում միջազգային դիտորդական առաքելությունը, որին հանգել ենք դիտորդական առաքելության նպատակներն ու գործառույթները սահմանող միջազգային փաստաթղթերի ուսումնասիրությունից: Ինչպես նշվում է «Ընտրությունների միջազգային դիտարկման սկզբունքների հռչակագրում և միջազգային դիտորդների վարքագծի կանոնագրքի» 4-րդ պարբերությունում, որն ընդունվել է ՄԱԿ-ի կոմից 2005 թվականի հոկտեմբերի 27-ին Նյու Յորքում կայացած հանդիսավոր արարողության ժամանակ. «Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելություններն իրենցից ներկայացնում են միջկառավարական և միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների և ասոցիացիաների կազմակերպված ջանք՝ ընտրությունների միջազգային դիտորդությունն իրականացնելու նպատակով»:

Այդ նույն Հռչակագրում խոսվում է ազգային հասարակական կազմակերպությունների մասին և նշվում, որ միջազգային ու ազգային հասարակական կազմակերպությունները պետք է համագործակցեն՝ պահպանելով իրենց անկախությ-

յունը: Այսպիսով՝ Հռչակագրում ասվում է. «Քաղաքացիներն օժտված են միջազգայնորեն ճանաչված հասարակական մի-վորումներ ստեղծելու ազատության և իրենց երկրի պետա-կան և հասարակական գործերի վարմանը մասնակցելու ի-րավունքով: Այս իրավունքները կարող են իրականացվել հա-սարակական կազմակերպությունների գործունեության հի-ման վրա՝ ընտրություններին վերաբերող բոլոր գործընթաց-ների նկատմամբ վերահսկողության և ընթացակարգերի պահպանմանը հետևելու միջոցով, այդ թվում՝ ընտրական տեղամասերում, քվեարկության արդյունքների հաշվարկման կենտրոններում և ընտրությունների անցկացման այլ օբյեկտ-ներում էլեկտրոնային և այլ տեխնիկական միջոցների շահա-գործմանը, ինչպես նաև քվեաթերթիկների և այլ կարևոր փաստաթղթերի տեղափոխմանը: Ընտրությունների միջազ-գային դիտորդական առաքելությունները պետք է գնահատեն և ներկայացնեն զեկույց այն մասին, թե արդյո՞ք անկախ ազ-գային կազմակերպությունները հնարավորություն ունեցել են դիտարկելու և վերահսկելու ընտրություններն առանց խտրա-կանության, առանց անհարկի սահմանափակումների կամ արտաքին միջամտության: Ընտրությունների միջազգային դի-տորդական առաքելությունները պետք է պաշտպանեն ազգա-յին մակարդակով քաղաքացիների՝ առանց անհարկի սահմա-նափակումների կամ արտաքին միջամտության անաչառ դի-տորդություն իրականացնելու իրավունքը, և իրենց առաջար-կություններում պետք է հանդես գան նման անհարկի սահմա-նափակումների կամ միջամտությունների վերացման կոչով:

Միջազգային դիտորդական առաքելությունները պետք է երևան բերեն ընտրությունների նկատմամբ անաչառ վերահս-

կողություն իրականացնելու վստահություն ներշնչող ազգային կազմակերպություններին, կանոնավոր կերպով պահպանեն իրենց կապը նրանց հետ և, ըստ անհրաժեշտության, համագործակցեն նրանց հետ: Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունները պետք է խրախուսեն նման կազմակերպություններին ընտրական գործընթացի բնույթին վերաբերող տեղեկատվություն տրամադրելը: Նման կազմակերպությունների տրամադրած տեղեկատվության անկախ գնահատումից հետո դրանց արդյունքները կարող են կարևոր լրացում լինել միջազգային դիտորդական առաքելությունների արդյունքների համար, սակայն, դրա հետ մեկտեղ, միջազգային դիտորդական առաքելությունները պետք է պահպանեն իրենց անկախությունը: Ըստ այդմ՝ ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունները պետք է գործադրեն հնարավոր բոլոր ջանքերը՝ ցանկացած հայտարարություն հրապարակելուց առաջ խորհրդակցելու այդպիսի կազմակերպությունների հետ»:

Վերոշարադրյալի ուսումնասիրությունն ու վերլուծությունը թույլ են տալիս հանգել այն եզրակացության, որ Ընտրական օրենսգիրքը դիտորդական առաքելության իրավունքը սահմանելիս, ըստ էության, հստակ առաջնորդվել է միջազգային փաստաթղթերում ամրագրված դիտորդական առաքելության իրականացման համար սահմանված չափանիշներով, նման իրավունք վերապահելով՝

1. միջազգային կազմակերպություններին,
2. օտարերկրյա հասարակական կազմակերպություններին,
3. Հայաստանի Հանրապետության հասարակական կազ-

մակերպություններին:

Բացի այդ, Ընտրական օրենսգիրքը նախատեսել է նաև հետևյալ դրույթը՝ «Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների ներկայացուցիչները հրավերի առկայության դեպքում կարող են ընտրությունների ժամանակ այցելուի կարգավիճակով իրականացնել ընտրական գործընթացի դիտարկում: Հրավերն ուղարկում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը:

Այլ պետությունների ընտրական մարմինների ներկայացուցիչները հրավերի առկայության դեպքում կարող են ընտրությունների ժամանակ այցելուի կարգավիճակով իրականացնել ընտրական գործընթացի դիտարկում: Հրավերն ուղարկում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը»: Այսինքն՝ վերը նշված երեք խումբ դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունքով օժտված կազմակերպություններից բացի, Ընտրական օրենսգիրքը դիտարկելու իրավունք է վերապահել նաև՝

- ✓ այցելուներին,

- ✓ այլ պետությունների ընտրական մարմինների ներկայացուցիչներին:

Այսինքն՝ դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունքով օժտված հասարակական կազմակերպությունների և նրանց դիտորդների կարգավիճակը Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրությամբ հստակ սահմանված է՝ նաև նախատեսելով հետևյալ դրույթը. «միջազգային կազմակերպությունները, օտարերկրյա հասարակական կազմակերպությունները դիտորդական առաքելություն կարող են

իրականացնել հրավերի առկայության դեպքում: Միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա հասարակական կազմակերպությունների դիտորդական առաքելությունների կազմում որպես դիտորդ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ ընդգրկվել չեն կարող»:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ բացի միջազգային և օտարերկրյա կազմակերպություններից, տեղական հասարակական կազմակերպությունները նույնպես օժտված են դիտորդություն իրականացնելու իրավունքով, այսինքն, ըստ էության, այս ինստիտուտը կիրառվում է դասական իմաստով:

Ընտրական օրենսգիրքը դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունքով օժտված կազմակերպություններին հավատարմագրելուց հետո, դիտորդական առաքելության իրականացման հիմնական սուբյեկտ ճանաչում է հավատարմագրված կազմակերպությունների դիտորդներին: Եվ որպեսզի դիտորդներն իրենց առաքելությունն իրականացնեն միջազգային փաստաթղթերով նախատեսված իրենց բուն նպատակներին համապատասխան, սահմանել է պատասխանատվություն այն դիտորդների համար, որոնք կխախտեն անկողմնակալ և չեզոք դիտարկման միջազգայնորեն ճանաչված սկզբունքները:

Մասնավորապես, Ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Դիտորդի կողմից որևէ թեկնածուի, ընտրություններին մասնակցող որևէ կուսակցության աջակցելու, ինչպես նաև սույն օրենսգրքի պահանջներն այն եղա-

նակով խախտելու դեպքում, որն էապես խաթարում է ընտրական հանձնաժողովի բնականոն աշխատանքը կամ քվեարկության բնականոն ընթացքը, ընտրական հանձնաժողովի նախագահը կարող է դիտորդին հեռացնել հանձնաժողովի նիստից, իսկ քվեարկության օրը՝ տեղամասային կենտրոնից՝ ընտրական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ»:

Հետաքրքիր է, օրինակ, Ռուսաստանի դաշնության օրենսդրությամբ նախատեսված կարգավորումներն այս մասով: «Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի Պետական դումայի պատգամավորների ընտրությունների մասին» 2014 թվականի փետրվարի 14-ի Դաշնային օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված է. «Դիտորդներ նշանակելու իրավունք ունեն դաշնային ցուցակով թեկնածուներ գրանցած յուրաքանչյուր քաղաքական կուսակցություն, համապատասխան միամանդատ ընտրատարածքում գրանցված յուրաքանչյուր թեկնածու, ինչպես նաև հանրային վերահսկողության սուբյեկտները»: Միևնույն ժամանակ, «Ռուսաստանի Դաշնությունում հասարակական վերահսկողության հիմունքների մասին» 2014 թվականի հուլիսի 21-ի թիվ 212-Փ3 դաշնային օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված է. «Հանրային վերահսկողության սուբյեկտները դիտորդներ նշանակում են այն ընտրական հանձնաժողովներում, որոնք տեղակայված են Ռուսաստանի Դաշնության համապատասխան սուբյեկտի տարածքում»: «Ռուսաստանի Դաշնությունում հասարակական վերահսկողության հիմունքների մասին» Դաշնային օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մա-

սի 2-րդ պարբերությամբ ամրագրված է. «1. Հասարակական վերահսկողության սուբյեկտներ են հանդիսանում՝

... 2) Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների հասարակական պալատները, ...»⁸¹:

Այսպիսով՝ հասարակական վերահսկողության սուբյեկտներից Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների հասարակական պալատները դիտորդներ են նշանակում ընտրական հանձնաժողովներում, որոնք տեղակայված են Ռուսաստանի Դաշնության համապատասխան սուբյեկտի տարածքում: Բացի այդ, ՌԴ օրենսդրության համաձայն, դիտորդական առաքելության իրավունք ունեն նաև օտարերկրյա (միջազգային) դիտորդները, որոնց գործունեությունը կարգավորվում է Ռուսաստանի Դաշնության միջազգային պայմանագրերով, նշված Դաշնային օրենքով և այլ դաշնային օրենքներով: Միջազգային դիտորդներին վերաբերող իրավական կարգավորումների շարքում հետաքրքրություն են ներկայացնում նաև «Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի Պետական դումայի պատգամավորների ընտրությունների մասին» 2014 թ. փետրվարի 14-ի Դաշնային օրենքի 34-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով ամրագրված դրույթները՝ համաձայն որոնց.

«10. Օտարերկրյա (միջազգային) դիտորդներն իրավունք չունեն օգտագործել իրենց կարգավիճակը՝ Պետական դումայի պատգամավորների ընտրությունների նախապատրաստման և անցկացման հետ չկապված դիտարկում իրականացնե-

81

http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_165809/28d7b2d53fe37b41c89ba7087f9f529fa9b7f2fc/

լու նպատակով:

11. Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իրավունք ունի հետ կանչելու օտարերկրյա (միջազգային) դիտորդի հավատարմագրումը՝ միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում գտած սկզբունքների և նորմերի, սույն Դաշնային օրենքի և դաշնային այլ օրենքների խախտման դեպքում»:

Փաստորեն, ստացվում է, որ միայն միջազգային կազմակերպություններն են, որ իրենց առաքելությունն իրականացնում են միջազգային չափանիշներին համապատասխան, իսկ տեղական դիտորդները նշանակվում են կուսակցությունների, թեկնածուների կամ էլ ՌԴ համապատասխան սուբյեկտների կողմից, որտեղ դիտորդական առաքելության իրական դերը, ըստ էության, հեռանում է դասական դիտորդական առաքելությունից, և «դիտորդ» եզրույթի կիրառումն ավելի սիմվոլիկ նշանակություն է ստանում, քան բովանդակային: Առհասարակ, անհասկանալի է դառնում, թե ինչի՞ համար է նման կարգավիճակ տրված մի ինստիտուտի, որը որևէ առնչություն չունի այն նպատակների հետ, որը կոչված է իրականացնելու դիտորդական առաքելությունը, ինչը անհասկանալի է դարձնում ընտրական գործընթացում դիտորդական առաքելության դերը: Այս պարագայում, օրինակ, կարելի էր վստահված անձանց թիվը շատացնել կամ փոխել օրենսդրության կարգավորումներն այս մասով, որպեսզի ընտրական գործընթացում մասնակցող սուբյեկտի կարգավիճակը համապատասխաներ այն արդյունքին, որի համար կոչված է տվյալ ինստիտուտի

ներդրումն ու նպատակների սահմանումը⁸²:

Եվրոպայի խորհրդի Պառլամենտական վեհաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 9-ի «Ընտրական դիտորդների միջազգայնորեն ճանաչված կարգավիճակի մասին» զեկույցում (12355) նշված է. «Վենետիկի հանձնաժողովի հանձնարարականների և ղեկավարող սկզբունքների հաշվառմամբ՝ Վեհաժողովը գտնում է, որ դիտորդների վերաբերյալ չկան ընդհանուր կանոններ, չնայած նրանց իրավունքներն ու պարտականությունները կարգավորվում են միջազգային իրավունքի մի շարք փաստաթղթերով: Միջազգային մակարդակով այս կանոնները դեռևս թերի են: Վեհաժողովը գտնում է, որ դիտորդների կարգավիճակի վերաբերյալ անհրաժեշտ են համաձայնեցված միջազգային կանոններ: Ինչ վերաբերում է ընտրությունների դիտորդների կարգավիճակի ներքին դրույթներին, Վեհաժողովը ընդունում է, որ անդամ-պետությունների մեծ մասում այս հարցի վերաբերյալ չկան օրենսդրական դրույթներ: Թեև որոշ նահանգներ այս հարցում ներառել են կանոններ, այնուամենայնիվ, այդ դրույթները մեծապես տարբերվում են միմյանցից, և ընտրական պրակտիկայի վրա շարունակում են ազդեցություն ունենալ տարբեր ազգային ավանդույթները: Վեհաժողովը կրկնում է, որ այս իրավիճակը չպետք է օգտագործվի որպես ազատ և արդար ընտրությունների անցկացումը կարգավորող հիմնական սկզբունքները խարխլելու պատրվակ: Վեհաժողովը համարում է, որ եվրոպական մակարդակով համաձայնեցված նորմերի ընդունումը

⁸² http://pravo.gov.ru/proxy/ips/?docbody=&link_id=0&nd=102171479, 33-րդ հոդված

կարող է ամրապնդել ընտրությունների դիտարկման կարգավիճակը, բարձրացնել դրանց նկատմամբ վստահության մակարդակը, ինչպես նաև ընտրությունների օրինականությունը՝ կանխելով որոշ գործնական խնդիրներ, ինչպես օրինակ՝ որոշ դիտորդների կողմից «հարմար» ընտրություններ ընտրելու վտանգը: Նման նորմերը պետք է հիմնված լինեն «Ընտրությունների միջազգային դիտարկման սկզբունքների Հռչակագրի և միջազգային ընտրությունների դիտորդների վարքագծի կանոնագրքի» վրա»⁸³:

Վենետիկի հանձնաժողովի փաստաթղթերում խոսվում են նաև դիտորդների պարտականությունների մասին: Դիտորդները միշտ պետք է իրենց հետ ունենան անձը հաստատող և հավատարմագրման փաստաթղթեր: Նրանք պետք է հետևեն այն երկրի բոլոր ազգային օրենքներին և կանոնակարգերին, որտեղ նրանք իրականացնում են դիտարկում և երբեք չպետք է խոչընդոտեն ընտրական գործընթացի ցանկացած տարրի անցկացմանը: Դիտորդները պետք է լինեն քաղաքականապես անաչառ և չպետք է միջամտեն ընտրական գործընթացին: Նրանք երբեք չպետք է ցուցաբերեն որևէ անձնական կողմնակալություն կամ նախապատվություն այն հարցերում, որոնք կարող են ունենալ քաղաքական կամ ընտրական հետևանքներ, և պետք է զերծ մնան որևէ քաղաքական կամ կուսակցական գործունեությունից: Նրանք չպետք է կաշկանդված լինեն որևէ մեկի շահերով և միշտ պետք է հավատարիմ մնան խիստ անաչառության սկզբունքներին՝ առանց որևէ

⁸³ [https://www.coe.int/T/r/parliamentary_assembly/\[Russian_documents\]/%5B2010%5D/%5BAntalya%202010%5D/Res1771_rus.asp](https://www.coe.int/T/r/parliamentary_assembly/[Russian_documents]/%5B2010%5D/%5BAntalya%202010%5D/Res1771_rus.asp)

մասնակցի կամ կողմի նախընտրելու:

Ինչպես միջազգային, այնպես էլ տեղական դիտորդներին պետք է տրվեն նույն ազատություններն ու իրավունքները: Նրանք պետք է ունենան ընդհանուր սկզբունքներ, իրավունքներ և պարտավորություններ, քանի որ նման իրավունքներն ու պարտականությունները միշտ չէ, որ բավարար չափով ապահովված են գործող ազգային ընտրական օրենսդրությամբ: Դիտորդները պետք է հարգանքով վերաբերվեն ընտրական հանձնաժողովների պաշտոնատար անձանց, ազգային այլ իշխանություններին և գործընթացի մյուս բոլոր մասնակիցներին: Նրանք իրենց միշտ պետք է պահեն պրոֆեսիոնալ և անբասիր կերպով, այդ թվում՝ նաև ազատ ժամանակ: Դիտորդի կարգավիճակը ենթադրում է՝ խստագույնս հետևել այն երկրի իրավական շրջանակներին, որտեղ անցկացվում են ընտրությունները, ինչպես նաև ենթադրում է հետևել՝ անաչառության և չմիջամտության սկզբունքին: Դիտորդներն իրենց հաշվետվություններն ու զեկույցները պետք է կառուցեն փաստական և ստուգման ենթակա ապացույցների վրա՝ մասնագիտական ճշգրտությամբ և անկողմնակալության նկատմամբ խիստ հարգանքով: Հետևաբար, եթե դիտորդը չի ենթարկվում այս սկզբունքներին (նույնիսկ եթե նա ազատ ժամանակ անանուն է գործում), նա կարող է զրկվել հավատարմագրումից: Այնուամենայնիվ, նման որոշում կայացնելիս պետք է առաջնորդվել համաչափության սկզբունքով:

Եվս մեկ անգամ ցանկանում ենք ընդգծել դիտորդների կարգավիճակի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի եզրակացությունների և հանձնարարականների կարևորություն-

նը: Հետևաբար, մենք կարծում ենք, որ Վեհաժողովը պետք է նպաստի վերը նշված ղեկավարող սկզբունքների իրականացմանը: Այս համատեքստում հարց է ծագում՝ հաշվի առնելով ընտրությունների դիտարկման հետ կապված իրավիճակների բազմազանությունը՝ արդյո՞ք հնարավոր և/կամ նպատակահարմար է դիտորդների կարգավիճակի միջազգային, կամ ավելի ճիշտ՝ եվրոպական կոդիֆիկացումը, որը կներառեր նրանց իրավունքներն ու պարտականությունները: Մենք համարում ենք, որ այս հարցը երկրորդական նշանակություն ունի, քանի որ ամեն դեպքում, բոլոր պետություններին պետք է խրախուսել իրենց օրենսդրությամբ վերանայել ընտրությունների ներքին և միջազգային դիտարկումները և գործնականում նպաստել նման դիտարկումների իրականացմանը: Միջազգայնորեն ճանաչված դիտորդների կարգավիճակի մասին ուղեցույցում նույնպես այս խնդրին մանրամասն անդրադարձ չի կատարվում: Նրանք միայն շեշտում են միջազգայնորեն ճանաչված գոյություն ունեցող չափանիշների (հատկապես՝ Ընտրությունների միջազգային դիտարկման սկզբունքների հռչակագրի և Միջազգային ընտրությունների դիտորդների վարքագծի կանոնագրքի) կրկնություններից խուսափելու անհրաժեշտությունը և ընդգծում դրանց մանրակրկիտ և անշեղորեն կատարման անհրաժեշտությունը: Հետևաբար, մենք գտնում ենք, որ յուրաքանչյուր անդամ-պետություն պետք է մտածի, թե որքանո՞վ է անհրաժեշտ դրանց ներդրումն իր ազգային համակարգում և նաև հաշվի առնի այս ուղեցույցների իրավական ճանաչման հարցը, մասնավորապես, առաջարկությունների միջոցով:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ հանգում ենք այն եզրակացության, որ դիտորդական առաքելությունն իրականացնող միջազգային կազմակերպությունների և վերջիններիս դիտորդների կողմից իրենց կարգավիճակի վերաբերյալ բազմաթիվ փաստաթղթերի ուսումնասիրություններ վկայում են, որ եղած կարգավորումները հնացած են, լիարժեք չեն արտահայտում ներկայիս աշխարհաքաղաքական զարգացումներով պայմանավորված պահանջները, այդ իսկ պատճառով շատ դեպքերում այդ առաքելության իրականացումը դառնում է անարդյունավետ և չի արտացոլում վերջինիս դերն ու կարգավիճակը:

Ինչ վերաբերում է տեղական դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների և վերջիններիս դիտորդների կարգավիճակին, ապա, այս մասով չկա կոնկրետ սահմանում, որը, հնարավորություն է տալիս վերջիններիս իրենց գործունեությունն իրականացնել տարածական անսահմանության մեջ, որտեղ չկան կոնկրետ սահմաններ, այլ կան կամայականություններ: Հետևաբար, գտնում ենք, որ հաշվի առնելով ընտրական գործընթացի կարևորությունը՝ անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրության ներքո պահել դիտորդական առաքելության իրավունքը և այն առավել մանրակրկտորեն սահմանել յուրաքանչյուր երկրի ազգային օրենսդրություններով՝ առանց այն էլ խոցելի գործընթացը կամայականություններից պաշտպանելու նպատակով:

3.4. Ընտրական վարչարարության մեջ հասարակական կազմակերպությունների և դիտորդների ներգրավումը և նման ներգրավվածության անհրաժեշտ աստիճանը

Սահմանադրական կարգի հիմունքների երաշխավորման պատասխանատու գործընթացում առանձնահատուկ դեր ունեն ազատ ժողովրդավարական ընտրությունները. վերջիններս գործնականում ապահովում են հանրային իշխանության մարմինների կազմավորման արդյունավետությունը և իշխանության բնականոն իրավահաջորդությունը, շարունակականությունն ու պետության քաղաքական կայունությունը: Ըստ այդմ էլ՝ ընտրական իրավունքի իրացումն ու պաշտպանությունն ուղեկցվում են որոշակի առանձնահատկություններով, մասնավորապես, ստեղծվում են համարժեք ընթացակարգեր, վերահսկողական կառուցակարգեր և նախադրյալներ, սահմանվում են ընտրախախտումների քննության հատուկ ընթացակարգեր և այլն:

Ընտրական գործընթացի արդյունավետությունը, թերևս, պայմանավորված է նաև սուբյեկտիվ գործոններով, մասնավորապես, դրա բոլոր մասնակիցների կողմից ընտրական օրենսդրության դրույթներին անշեղորեն հետևելու աստիճանից են կախված ընտրությունների արդյունավետության ցուցիչները: Այս հարցում իրավական չափորոշիչների ոչ համարժեք ընտրությունը, ինչպես նաև դրանց զանգվածային խախտումները հաճախ վճռորոշ նշանակություն են ունենում պետության Հիմնական օրենքով ամրագրված ժողովրդաիշխանության երաշխիքների կայունությունը պահպանելու տեսանկյունից:

Ընտրական գործընթացում առկա բազում խնդիրներից սույն աշխատանքում կառանձնացնենք ընտրական վարչարարությունում դիտորդների և դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների ընտրական վարչարարությանը ներգրավվածության աստիճանը և այդ ներգրավվածության անհրաժեշտ ծավալը, այսինքն ողջամիտ է նման ներգրավվածության աստիճանը, թե ոչ: Այս հետազոտության ընթացքում կատարված եզրահանգումների համար հիմք է հանդիսացել նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողով վերջիններիս կողմից ներկայացված դիմումների/բողոքների ուսումնասիրությունը, որում դիտորդների և դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների հիմնական խնդիրը եղել է երկուսը՝

1) ինչու՞ դիտորդները չեն կարող հանդիսանալ այլոց իրավունքների պաշտպանության հարցով ընտրական հանձնաժողովներ դիմում/բողոք ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտներ,

2) ինչու՞ դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունք ունեցող հասարակական կազմակերպությունները չեն կարող հանդես գալ իրենց կազմակերպության դիտորդների իրավունքների պաշտպանության համար՝ որպես դիմում/բողոք ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտներ:

Ընտրությունների միջազգային դիտարկման սկզբունքների և միջազգային ընտրությունների դիտորդների վարքագծի կանոնադրքում (Ընդունված է ՄԱԿ-ի կողմից, Նյու Յորք, 27.10.2005թ.) ամրագրված է. «Ընտրությունների միջազգային դիտարկումը լայն ճանաչում է ստացել ամբողջ աշխարհում և կարևոր դեր է խաղում ընտրական գործընթացների բնույթի

Ճշգրիտ և անաչառ գնահատման ապահովման գործում: Ընտրությունների մանրակրկիտ և անաչառ միջազգային դիտարկումը պահանջում է հուսալի մեթոդաբանություն և համագործակցություն ազգային իշխանությունների, ազգային քաղաքական դերակատարների (քաղաքական կուսակցությունների, թեկնածուների և հանրաքվեի դրված հարցերի կողմնակիցների), ընտրությունների դիտորդական ազգային կազմակերպությունների և ընտրությունների դիտարկման այլ արժանահավատ միջազգային կազմակերպությունների հետ՝ ի թիվս այլոց»:

Ընտրական գործընթացի նկատմամբ միջազգային դիտորդների կողմից հսկողության իրականացման կանոնների ժողովածուի համաձայն՝ միջազգային դիտորդներն ընտրությունների նկատմամբ հսկողություն իրականացնելիս՝ պարտավոր են հարգել ամրագրված միջազգային իրավունքի նորմերը մարդու իրավունքների ոլորտում, հարգել ներպետական օրենսդրությունը և պետական մարմինների լիազորություններն ընտրությունների ընթացքում, հարգել միջազգային դիտորդական առաքելության կազմակերպական միասնությունը, պահպանել քաղաքական չեզոքությունը, չխոչընդոտել ընտրական գործընթացի անցկացմանը, ապահովել օբյեկտիվ և բազմակողմանի մշտադիտարկում, եզրակացություններ կազմելիս՝ ցուցաբերել արհեստավարժություն, չհրապարակել կարծիք ընտրությունների օրինականության վերաբերյալ՝ մինչև համապատասխան պաշտոնական զեկույց հրապարակելը:

Այսպես, ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասը հստակ սահմանում է ընտրական հանձնաժողովի որո-

շումը, գործողությունը (անգործությունը) բողոքարկելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը, որի 3-րդ կետով բողոքարկման իրավունքը վերապահում է դիտորդին կամ այցելուին, եթե վերջիններս գտնում են, որ խախտվել է իրենց՝ Ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքը:

Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածում ամրագրված վերոհիշյալ տրամաբանությունն արտացոլված է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 69-րդ հոդվածում, որի համաձայն. «Անձինք իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով իրավունք ունեն բողոքարկելու վարչական ակտերը, այդ թվում՝ գուգորդվող վարչական ակտերի միջամտող դրույթները, ինչպես նաև վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը»: Նշված դրույթի բովանդակությունից բխում է, որ վարչական կարգով բողոք ներկայացնելու իրավունքը վերապահվում է այն անձանց, ովքեր բողոքարկման միջոցով պաշտպանում են իրենց խախտված իրավունքները: Այսինքն, բողոքարկումը կրում է հասցեավորված բնույթ. անձը ցանկացած կամ վերացական պահանջով չի կարող դիմել իրավական պաշտպանության: Ստացվում է, որ դիտորդներն ընտրական հանձնաժողովներ կարող են դիմում/բողոք ներկայացնել ոչ թե այլոց իրավունքների պաշտպանության հարցով, այլ եթե կխախտվի Ընտրական օրենսգրքով սահմանված իրենց որևէ իրավունք:

Ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական փաստաթղթերում ամրագրված դիտորդի կարգավիճակի ուսումնասիրությունից հետևում է, որ դիտորդի «կոչումը» ընտրությունները դիտարկելը և վերջնական զեկույց ներկայացնելն է, իսկ այդ նպատակով Ընտրական օրենսգիրքը իրավունքների

լայն շրջանակ է նախատեսել, բայց այդ «կոչումը» չի ենթադրում ընտրական վարչարարությանը մասնակցություն ունենալու հնարավորություն և առհասարական ընտրական գործընթացին միջամտելու ցանկացած հնարավորություն, քանի որ, ինչպես վերևում արդեն նշել ենք, բողոքարկումն ընտրական գործընթացում կրում է սուբյեկտիվ և հասցեավորված բնույթ: Վարչական դատարանն իր 2018թ. դեկտեմբերի 11-ի ՎԴ/5398/05/17 վճռում նույնպես անդրադարձել է այս հարցին, ներկայացնելով հետևյալ իրավական դիրքորոշումը. «...ընտրական հարաբերություններում նախատեսված իրավունքների պաշտպանության մեխանիզմները կարող են գործի դրվել կամ իրացվել միայն այն սուբյեկտների կողմից, որոնց մոտ այդ իրավունքների խախտման վերացումը կապված է նրանց սուբյեկտիվ իրավական շահագրգռվածության հետ»:

Եվրոպայի խորհրդի Պառլամենտական վեհաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 9-ի «Ընտրական դիտորդների միջազգայնորեն ճանաչված կարգավիճակի մասին» զեկուցում (12355) «Դիտորդների դերը» վերտառությամբ 2-րդ բաժնի 9-րդ կետում դիտորդական առաքելության դերը ամրագրված է հետևյալ կերպ. «Ընտրական դիտորդների դերն ազատ ընտրությունների իրավունքին նպաստելն ու պաշտպանելն է: ...նրանց դերը միայն դիտարկելն է: Նրանք փաստացիորեն չեն մասնակցում ընտրական վարչարարությանը:...»:

Եվրոպայի խորհրդի մեկ այլ փաստաթղթում՝ Եվրոպական հանձնաժողովի «Հանուն ժողովրդավարության՝ օրենքի միջոցով» (Վենետիկի հանձնաժողով)՝ 2009 թվականի դեկտեմբերի 14-ի CDL-AD(2009)59 Ընտրական դիտորդների միջազգայնորեն ճանաչված կարգավիճակի մասին ուղեցույցի

2.3. կետում ամրագրված է. «Ընտրական դիտորդները չպետք է խանգարեն ընտրական գործընթացի իրականացմանը՝ դրա ցանկացած տարրին, նրանք չպետք է միջամտեն ընտրական գործընթացին և պետք է լինեն քաղաքականապես անկողմնակալ»⁸⁴:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը նույնպես անդրադարձել է ընտրական վարչարարությունում դիտորդների ներգրավվածության հարցին և ընտրությունների դիտարկման ուղեցույցում նշել, որ՝ «ԺՀՄԻԳ-ը **հետևում է** դիմումների և բողոքների քննարկմանն ու դրանց լուծմանը, ներառյալ՝ դատական համակարգի աշխատանքին»:

Ընտրական օրենսդրության ուսումնասիրությամբ փաստվում է, որ դիտորդները և դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպություններն ընտրական իրավահարաբերություններում օժտված չեն այլոց իրավունքների պաշտպանությամբ հանդես գալու իրավունքով, ինչը բխում է վերը հիշատակված միջազգային փաստաթղթերով սահմանված կարգավորումներից:

Սակայն, միաժամանակ, պետք է նկատել, որ մինչև 2016թ. Ընտրական օրենսգրքի ընդունումը, գրանցամատյանում գրառում կատարելու պահանջ կարող էին ներկայացնել միայն վստահված անձինք և հանձնաժողովի անդամները, իսկ արձանագրման առարկան՝ քվեարկության ընթացքում Ընտրական օրենսգրքով նախատեսված քվեարկության կար-

⁸⁴ Европейская комиссия «За демократию через право» (Венецианская комиссия) 14.12.2009г. CDL-AD(2009)59 «Руководство о международно признанном статусе наблюдателей за выборами» ([https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2009\)059-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2009)059-e))

գի խախտումն էր: Նոր Ընտրական օրենսգրքի պայմաններում նշված երկու սուբյեկտներին ավելացվեց նաև դիտորդը, իսկ Ընտրական օրենսգրքի 2021 թվականի մայիսի 7-ի փոփոխությունների արդյունքում՝ արձանագրելու առարկայի շրջանակն ընդլայնվեց՝ ընդգրկելով՝ քվեարկության նախապատրաստման, քվեարկության և արդյունքների ամփոփման ընթացքում Ընտրական օրենսգրքով նախատեսված կարգի խախտումները: Այսպիսով՝ Ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 14-րդ մասով սահմանվեց՝ «Եթե հանձնաժողովի անդամը, վստահված անձը կամ դիտորդը համարում են, որ քվեարկության նախապատրաստման, քվեարկության և արդյունքների ամփոփման ընթացքում կատարվել է սույն օրենսգրքով նախատեսված կարգի խախտում, ապա իրավունք ունեն պահանջելու, որ իրենց գնահատականն արձանագրվի տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում»:

Ստացվեց շատ հետաքրքիր հակասություն՝ դիտորդին մի հոդվածով մասնակից ենք դարձնում վարչարարությանն առհասարակ, մեկ այլ հոդվածով «արգելում ենք իրեն չվերաբերող հարցերով բողոք ներկայացնել», որով նաև խեղաթյուրվում է միջազգային փաստաթղթերով սահմանված դիտորդի իրական առաքելությունը, վերջինիս դերն ընտրական գործընթացում և չի բխում միջազգայնորեն ամրագրված նրա կարգավիճակից: Այսինքն՝ միջազգային տարբեր փաստաթղթերի վերլուծությունը ցույց է տալիս, որ դիտորդի հիմնական առաքելությունն է դիտարկել ընտրությունները, չմիջամտել ընտրական գործընթացին, լինել քաղաքականապես անկողմնակալ, չհրապարակել կարծիք ընտրությունների օրինակալության վերաբերյալ՝ մինչև համապատասխան պաշտոնա-

կան գեկույց հրապարակելը: Իսկ վարչարարությանը մասնակից լինելը ենթադրում է նաև օգտվել լաված լինելու իրավունքից, նաև ենթադրում է միջամտել ընտրական գործընթացին, քանզի վարչարարությունն իրենից ներկայացնում է միջատություն, ենթադրում է կարծիքի հրապարակում, և վերջապես, քանզի ընտրական գործընթացը քաղաքական գործընթաց է, նաև հնարավոր կանխակալություն:

Պրակտիկ փորձը և տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյանների ուսումնասիրությունը հավաստում են, որ դիտորդները չունեն այն մասնագիտական հմտություններն ու գիտելիքները, որոնք հնարավորություն կտային վերջիններիս գրանցամատյանում գրառում կատարելու պահանջ ներկայացնել, հաշվի առնելով դիտորդների հավաքագրման, նրանց ուսուցանելու և հրահանգավորելու ձևավորված կառուցակարգերը, իսկ եթե այդ ամենին ավելացնենք նաև դիտորդի աշխատանքի համար տրվող վարձատրության պայմանները, ակնհայտ է դառնում, որ հաճախ դիտորդի աշխատանքը չի ծառայում նրա առջև դրված խնդիրների լուծմանը, այն է՝ դիտորդական առաքելության իրականացումը, այսինքն, ընտրական գործընթացների բնույթի հստակ, անաչառ գնահատման ապահովումը, ընտրությունների մանրակրկիտ և անկողմնակալ դիտարկումը, ընտրական գործընթացի անցկացմանը չխոչընդոտելը, օբյեկտիվ և բազմակողմանի մշտադիտարկման ապահովումը: Գրանցամատյանում առկա գրառումների ուսումնասիրությունները վկայում են, որ դիտորդները պատշաճ իրազեկված չեն ընտրական գործընթացների վերաբերյալ և իրենց համար մեծ դժվարություն է ներկայացնում քվեարկության կարգի խախտումը տարանջատել բոլոր

այլ հանգամանքներից:

Ընտրական օրենսդրությամբ սահմանված է դիտորդի կարգավիճակի այնպիսի ձևաչափ, որը թույլ է տալիս նրան հանդես գալու բացառապես որպես անկողմնակալ, անաչառ և քվեարկության արդյունքներով չշահագրգռված սուբյեկտ: Վերոգրյալից ելնելով՝ դիտորդների իրավունքների և պարտականությունների շրջանակը պետք է ապահովի նրա կողմից լիարժեք դիտարկում իրականացնելը՝ առանց միջամտելու բուն ընտրական գործընթացին:

Բավականին խնդրահարույց է դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների՝ որպես դիմում ներկայացնելու իրավասություն ունեցող սուբյեկտների, բողոքարկման հարցը: Նախ, հիմնական դժգոհությունը կայանում է նրանում, որ դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով հավատարմագրման դիմում է ներկայացնում հասարակական կազմակերպությունը, սակայն իր կազմակերպության դիտորդի խախտված իրավունքի պաշտպանության համար, ըստ Ընտրական օրենսգրքի, դիմում ներկարացնելու իրավունք ունեցող սուբյեկտ չի հանդիսանում. այդ իրավունքն Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով վերապահված է դիտորդին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հասարակական կազմակերպությունների իրավասուբյեկտության հարցին անդրադարձել է իր մի շարք որոշումներում՝ նշելով, որ «առարկայագուրկ են դատողություններն առ այն, որ հասարակական կազմակերպությունները, դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունքի շրջանակներում, ունեն նաև թե՛ դիտորդի սուբյեկտիվ իրավունքների, թե՛ օբյեկտիվ

ընտրական իրավունքի խախտման վերաբերյալ բողոքներ ներկայացնելու իրավունք: Վերջիններս օրյեկտիվ ընտրական իրավունքի պաշտպանությամբ ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը կամ անգործությունը բողոքարկող սուբյեկտներ չեն»:

Ընտրական օրենսդրության ուսումնասիրությունից բխում է, որ ընտրական իրավունքը դիտարկվում է օրյեկտիվ և սուբյեկտիվ իրավունքների տեսանկյունից: Ընտրական իրավունքն օրյեկտիվ իմաստով այնպիսի իրավակարգավում է, որով կարգավորվում են ընտրական գործընթացի կազմակերպման և անցկացման հետ կապված հասարակական հարաբերությունները, իսկ սուբյեկտիվ իմաստով ընտրական իրավունքը կոնկրետ անձի կողմից ընտրություններին մասնակցելու, այդ թվում՝ ընտրելու (ակտիվ) կամ ընտրվելու (պասիվ) կոնկրետ իրավունքն է: Չնայած այն հանգամանքին, որ դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունները հանդիսանում են ընտրական իրավահարաբերությունների լիարժեք սուբյեկտներ, միաժամանակ փաստում ենք, որ հասարակական կազմակերպությունների՝ որպես ընտրական գործընթացի կազմակերպման և անցկացման հարցում մասնակից սուբյեկտի, իրավունքներն ամրագրված են Ընտրական օրենսգրքի 30-րդ և 31-րդ հոդվածներով, որոնք վերաբերում են դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով հավատարմագրվելուն և դրանով պայմանավորված հարաբերություններին: Որևէ այլ իրավունք Ընտրական օրենսգրքով հասարակական կազմակերպությունների համար նախատեսված չէ:

«Հասարակական կազմակերպությունների մասին» օրեն-

քի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետ՝ ֆիզիկական անձ) և (կամ) իրավաբանական անձանց հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 50-րդ հոդվածի վերլուծությունից կարելի է հանգել այն եզրակացության, որ իրավաբանական անձ հանդիսացող կազմակերպությունը դատարանում հանդես է գալիս որպես հայցվոր կամ պատասխանող: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 4-րդ և 5-րդ գլուխների իրավանորմերի վերլուծությունից ակնհայտ է, որ քաղաքացիները և իրավաբանական անձինք հանդիսանում են իրավունքի ինքնուրույն սուբյեկտներ և չեն կարող նույնացվել մեկը մյուսի հետ:

Ակնհայտ է, որ վերը նշված դեպքերում որպես դիմումատու հանդես եկող հասարակական կազմակերպությունները, հանդիսանում են իրավաբանական անձինք՝ իրավունքի ինքնուրույն սուբյեկտներ, հետևաբար, չեն հանդիսանում այլ սուբյեկտների՝ դիտորդների, իրավունքների պաշտպանության համար դիմում ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտներ:

Բողոքարկման սուբյեկտիվ բնույթը և անձի կողմից վարչական մարմին դիմում ներկայացնելը բխում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի կանոնակարգումներից, մասնավորապես, 20-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Վարչական վարույթը հարուցվում է անձի (անձանց) դիմումի կամ վարչական մարմնի

նախաձեռնության հիման վրա (հարուցման փուլ):»։ Կամ 21-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ «Վարչական վարույթի մասնակիցներն են (այսուհետ՝ վարույթի մասնակիցներ)՝

ա) վարչական ակտի հասցեատերը՝ այն անձը, ով դիմել է վարչական ակտ ընդունելու համար (դիմող), կամ այն անձը, ում նկատմամբ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ ընդունելու է վարչական ակտ.

բ) երրորդ անձինք՝ այն անձինք, որոնց իրավունքները կամ օրինական շահերը կարող են շոշափվել վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտով»։

Վերոնշյալ հոդվածների հաշվառմամբ՝ որպես վարչական մարմին դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտի, վարչական վարույթի մասնակիցների շրջանակը սահմանափակվում է «անձանցով», իսկ այդ «անձանց» շրջանակը հստակեցվում է կոնկրետ ոլորտի իրավական ակտերում, ինչպես Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածում թվարկված անձանց շրջանակը, որոնց թվում, ինչպես վերևում նշվել է, ներառված է նաև դիտորդը։

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածը 2018թ. սեպտեմբերի 7-ին լրացվեց 2.1. մասով՝ համաձայն որի. «Օրենքով նախատեսված դեպքերում վարչական դատարան կարող են դիմել նաև ընտրություններին մասնակցող կուսակցությունը, կուսակցությունների դաշինքը, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն կամ այդ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունները, ինչպես նաև հանրաքվեի ժամանակ՝ քարոզչության կողմը՝ սույն օրենսգրքի 29-րդ գլխով սահմանված կարգով անձին վարչա-

կան պատասխանատվության ենթարկելու մասին գործերով»։ Այս լրացումը դարձավ լրջագույն քննարկման առարկա այն տեսանկյունից, որ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությանը դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների շարքին ավելացնելը, դիտորդների, դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև մի շարք դատավորների մոտ «սուտ» տպավորություն էր ստեղծել, որ այդ կարգավորումը, չգիտես ինչու իրենից ենթադրում է, որ այն պետք է գործի նաև ընտրական հանձնաժողովներում, վերջիններում իրականացվող ընտրական վարչարարությունում։ Եվ սա դարձավ պատճառ, որպեսզի ձևավորվի չափազանց հակասական դատական պրակտիկա քննարկվող հարցի մասով, դարձավ նույն հարցի շուրջ իրարից շատ տարբերվող իրավական դիրքորոշումներ արտահայտելու և իրարից տարբերվող դատական ակտեր կայացնելու պատճառ։

Վարչական դատարանի մի շարք որոշումներով (օրինակ՝ ՎԴ/3982/05/17⁸⁵, ՎԴ/10643/05/18⁸⁶, ՎԴ/0378/05/19⁸⁷) արտահայտած իրավական դիրքորոշումների համար հիմք է հանդիսացել Ընտրական օրենսգրքի 30-32-րդ հոդվածների վերլուծությունը և արդյունքում նշված բոլոր դատական ակտերի եզրահանգումներում առաջադրվել է այն տրամաբանությունը, որ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունն իրավասու է ընտրական գործընթացում հանդես գալու իր դիտորդի՝ Ընտրական օրենսգրքով

⁸⁵ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809904353

⁸⁶ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809927538

⁸⁷ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930175

ամրագրված սուբյեկտիվ իրավունքի իրավական պաշտպանությամբ:

Այլ է պատկերը ուրիշ վարչական գործերով դատական ակտերի (օրինակ, ՎԴ/5862/05/17⁸⁸, ՎԴ/5381/05/17⁸⁹, ՎԴ/0395/05/19⁹⁰) պարագայում, մասնավորապես, դրանցում ընտրական օրենսդրության վերլուծության արդյունքում արտահայտված իրավական դիրքորոշումների հիմքում, դրվել է այն տրամաբանությունը, որ օրենսդիրը որոշակի պահանջներ բավարարող հասարակական կազմակերպություններին դիտորդական առաքելությամբ հանդես գալու հնարավորություն տալով՝ միաժամանակ եզրագծել է նրանց և դիտորդների՝ իրենց իրավունքների պաշտպանության նպատակով ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները բողոքարկելու իրավունքների շրջանակները՝ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպություններին վերապահելով բացառապես իրենց հավատարմագրմանն առնչվող՝ հավատարմագրումն իրականացնող ընտրական հանձնաժողովի ակտերը բողոքարկելու իրավունք: Այսպիսով, հասարակական կազմակերպություններին վերապահված է բացառապես իրենց դիտորդների՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրման իրավունքը, ինչից հետո դիտորդները ձեռք են բերում ինքնուրույն իրավական կարգավիճակ, այդ թվում՝ իրավասուբյեկտություն, և հանդիսանում Ընտրական օրենսգրքով սահմանված բողոքարկման իրավունք ունեցող ինքնուրույն սուբյեկտ:

⁸⁸ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809906487

⁸⁹ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809905981

⁹⁰ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930176

Նման տարբերակման պատճառն անհասկանալի է նաև հաշվի առնելով, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքն այդ հարցի կարգավորումը հստակ սահմանել է՝ նախատեսելով՝ «Սույն օրենքի գործողությունը չի տարածվում դատավարական իրավունքի նորմերով կարգավորվող հարաբերությունների վրա»: Իրավական հարթակում ենթադրություններ կատարել այն հարցերում, որոնք հստակ կարգավորված են, դատողություններն առնվազն իրավականից տեղափոխում են կենցաղային հարթակ: Եվ, ի վերջո, դատական մարմնի և վարչական մարմնի իրավասության շրջանակները խիստ տարբեր են, դրանք չեն կարող նույնացվել:

Այն դատական ակտերը, որոնք Կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովների կարծիքով հակասում էին Ընտրական օրենսգրքով ամրագրված իրավական կարգավորումներին, բողոքարկվել են Վերաքննիչ վարչական դատարան, որոնք բավարարվել են:

Դիտորդի իրական «կոչումն» ու չեզոքությունը պահպանելու կարևորագույն առաքելությամբ պայմանավորված՝ գտնում ենք, որ Ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 14-րդ մասից՝ գրանցամատյանում գրառում կատարելու պահանջներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտների ցանկից պետք է հանել դիտորդին, ինչը կնպաստի ընտրական հանձնաժողովներում աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպմանը, ինչպես նաև աշխատանքային ծանրաբեռնվածությամբ ու խիստ ժամկետներով սահմանափակված լինելու պատճառով, պատշաճ ժամկետներ և ընթացակարգեր ապահովել իրական խախտումների առնչությամբ վարչական

վարույթի իրականացմանը, քանի որ գրառում կատարելով դիտորդները հաճախ «հրահրում» են վարչական վարույթի անհարկի հարուցում:

Միևնույն ժամանակ, Հայաստանում շատ դեպքերում շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպությունները հաճախ դիմում են միջազգային դիտորդական կազմակերպություններին, և դա պայմանավորված է նրանով, որ այդ կազմակերպությունները բարոյական և ֆինանսական աջակցություն են ցուցաբերում ընտրական գործընթացի ընթացքում և հաճախ իրենց դնում են դատական համակարգի տեղը, հենց այս գործոնն էլ ընտրական գործընթացում առաջացնում է կոնֆլիկտներ:

Օրինակ, միջազգային դիտորդական կազմակերպության ֆինանսական աջակցությամբ, տեղական ոչ առևտրային կազմակերպությունը, մեծ տպաքանակով թողուցիկներով, ընտրողներին ուղղված ուղերձներում նշել է, որ. «տեղամասային հանձնաժողովներում կան անամոթ մարդիկ, ովքեր գողանում են ձեր ձայները»: Տարբեր բովանդակությամբ նման տեքստերը կարող են կոնֆլիկտներ ստեղծել ընտրական գործընթացի բոլոր մասնակիցների հարաբերություններում:

Ընտրությունների ընթացքում այսպիսի բազմաթիվ խնդիրներ կան, և, լիովին ըմբռնումով մոտենալով և աջակցելով դիտարկման ինստիտուտին, կցանկանայինք նշել, որ միջազգային կազմակերպությունները պետք է գործեն բացառապես անկողմնակալ և սկզբունքային դիտորդների դիրքից, այլ ոչ թե ընտրական գործընթացի պետական մարմինների ձևավորմանը մասնակցող մասնակիցների: Ի վերջո, ընտրական գործընթացն, առաջին հերթին, ինքնիշխան պետության քա-

դաքական գործընթաց է, որտեղ իշխանության հիմնական կրողը ժողովուրդն է:

Ինչ վերաբերում է դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպություններին, ապա, վերջիններս ընտրական գործընթացին պետք է մասնակցեն որպես դիտորդների հավատարմագրման համար դիմում ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտներ, իսկ ընտրական վարչարարությունում դիմում/բողոք ներկայացնելու իրավունք վերապահել ն՝ դիտորդին, ն՝ վերջինիս հավատարմագրած հասարակական կազմակերպությանը, առանց այն էլ ընտրական գործընթացների սեղմ ժամկետների պայմաններում, անիմաստ է, քանի որ դիտորդի իրավունքի պաշտպանության հարց առաջանալու պարագայում, միևնույն է, հասարակական կազմակերպությունը դիտորդի և վարչական մարմնի միջև հանդես է գալու որպես այսպես կոչված «միջնորդ»:

Ուստի, վերլուծելով վերոգրյալը, գտնում ենք, որ բողոքարկման իրավունք պետք է ունենան միայն դիտորդները, իրենց առաքելությունն իրականացնելիս պետք է առաջնորդվեն ներպետական և միջազգային փաստաթղթերով ամրագրված իրավակարգավորումներով, դիտարկեն ընտրական գործընթացը, ընտրական վարչարարությանը մասնակցեն միայն իրենց սուբյեկտիվ իրավունքների խախտման դեպքում:

**3.5. Ընտրական օրենսդրության փոփոխությունների
քաղաքական և իրավական հետևանքները դիտորդություն
իրականացնող հասարակական կազմակերպությունների և
դիտորդների՝ ընտրական հանձնաժողովներում
վարչական գործունեությանը մասնակցության հարցի
շրջանակներում**

Ընտրությունները ժամանակակից հասարակության
կյանքում, որպես ժողովրդավարության երաշխիք, ունեն ա-
ռանցքային դեր և հանդիսանում են քաղաքական իշխանու-
թյան կառուցակարգային ձևավորման ամենակարևոր ընթա-
ցակարգային հենքը: Ընտրությունները թույլ են տալիս պար-
բերաբար որոշելու հասարակական տրամադրությունները,
նախասիրությունները, քաղաքական կամքը և, ըստ այդմ էլ՝
ժողովրդին ներգրավելու երկրում ընթացող քաղաքական գոր-
ծընթացներին: Ընտրական գործընթացի կազմակերպման ու
անցկացման որակից է կախված տվյալ երկրի ժողովրդավա-
րության աստիճանը:

Ընտրական իրավունքն անձի քաղաքական իրավունքնե-
րի կարևոր բաղադրիչն է, և եթե այն արդյունավետ չի իրակա-
նացվում, քաղաքացու մյուս իրավունքների իրագործումը
դառնում է խնդրահարույց, քանզի ընտրական իրավունքի խե-
ղաթյուրված իրականացումը գործնականում վտանգում է ողջ
քաղաքական համակարգը՝ դրանից բխող բացասական
հետևանքներով հանդերձ:

Ընտրությունների միջոցով հանրային իշխանության մար-
մինների ձևավորումը կարևոր նշանակություն ունի պետութ-

յան զարգացման համար, քանզի հանդիսանում է քաղաքական իշխանության լեգիտիմացման առավել արդյունավետ միջոց: Ժողովրդավարության այս ինստիտուտի առանձնահատուկ կարևորությամբ պայմանավորված՝ քաղաքացիների ընտրական իրավունքներն առանձնահատուկ «կշիռ» են ձեռք բերում քաղաքական իրավունքների և ազատությունների համակարգում: Վենետիկի հանձնաժողովի՝ Ընտրական դիտորդների միջազգայնորեն ճանաչված կարգավիճակի մասին ուղեցույցի 2.3 կետում ամրագրված է. «Ընտրական դիտորդները չպետք է խանգարեն ընտրական գործընթացի իրականացմանը... չպետք է միջամտեն ընտրական գործընթացին և պետք է լինեն քաղաքականապես անկողմնակալ»: Ըստ էության, դիտորդների կողմից անկողմնակալ և քաղաքական ցանկացած մանիպուլյացիայից անկախ դիտարկումը դիտորդական առաքելության միջազգայնորեն ճանաչված ամենահիմնական սկզբունքներն են, որոնք էլ ընկած են դիտորդական առաքելության իրավունքի իրականացման հիմքում: Այլապես, դիտորդական առաքելությունը իմաստ չէր ունենա, քանի որ ընտրական գործընթացում «քաղաքական դիտարկման» մասով ընտրական օրենսդրությունն ունի սուբյեկտներ, որոնք իրենց կարգավիճակին համապատասխան՝ արդյունավետ կարողանում են իրականացնել իրենց «դիտարկումը»։ Խոսքը վերաբերում է վստահված անձանց, լիազոր ներկայացուցիչներին:

Դիտորդական առաքելության իրավունքի իրականացման զարգացմանը զուգընթաց, թվում է, թե պետք է այս ինստիտուտն առավել խորը արմատներ գցեր քաղաքական չեզո-

քության սկզբունքի պահպանման ասպարեզում, սակայն, վերջին տարիների դիտորդական առաքելություն իրականացնող որոշ միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների կողմից այլ տենդենց է նկատվում: Այսինքն՝ դիտորդական առաքելության էությունը կայանում է ընտրությունները դիտարկելը և ընտրությունների վերաբերյալ որևէ գնահատական չներկայացնելը՝ մինչև պաշտոնական զեկույց ներկայացնելը: Սակայն, ինչ է նկատվում, կան միջազգային և տեղական դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպություններ, որոնք որևէ երկրի ընտրության դիտարկմանը չեն մասնակցում՝ նշելով, որ այդ երկրներում դրա կարիքը չկա, քանզի այդ երկրներում ժողովրդավարության աստիճանը բարձր է, հետևապես, ընտրությունները նույնպես կանցկացվեն միջազգայնորեն ճանաչված չափանիշներին համապատասխան: Անհասկանալի է, թե այդ ի՞նչ սանդղակով են գնահատում այդ կազմակերպությունները տարբեր երկրների ժողովրդավարության աստիճանը և ընտրությունների լեգիտիմությունը: Այստեղից հետևություն, որ դիտորդական առաքելությունը, ըստ էության, կարող է կրել ձևական բնույթ և չունենալ այն դերակատարումը, որը սահմանված է միջազգային փաստաթղթերում:

Բազմաթիվ փաստաթղթերի, այդ թվում՝ ներպետական, կատարված փոփոխություններն իրենցում պարունակում են կոլիզիաներ դիտորդական առաքելության իրականացման ոլորտում: Սույն աշխատանքում կուսումնասիրենք, մասնավորապես, ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրենսդրական փաթեթում տեղ գտած

փոփոխությունները: Անհրաժեշտ է նշել, որ ներկայացված օրենսդրական փաթեթը կարելի է բաժանել երկու մասի՝ «փոփոխությունների մեծ փաթեթ», որը ներկայացվել է նաև Վենետիկի հանձնաժողով՝ կարծիքի համար (2021թ. ապրիլի 21-ին Վենետիկի հանձնաժողովը ներկայացրել է դրական կարծիք), և «փոփոխությունների փոքր փաթեթ», որը, ըստ էության, «մեծ փաթեթի» առավել սեղմացված տարբերակն է: Ուստի, կանդիդատնանք երկու փաթեթներին էլ:

Ընտրական օրենսգրքում դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունք ունեցող կազմակերպությունների և դիտորդների վերաբերյալ գործող կարգավորումները, վերջիններիս կողմից ընտրական վարչարարությանը ներգրավվածությունը, որի մասին խոսվել է նախորդ պարագրաֆում, ըստ էության, արտացոլել են վերջիններիս միջազգայնորեն ամրագրված կարգավիճակը, իհարկե, որոշակի վերապահումներով:

Ընտրական օրենսգիրքը նախընտրական քարոզչության արգելքի մասով լրացում է կատարել՝ արգելքի սահմանափակումը տարածելով նաև դիտորդական առաքելություն իրականացնելու համար հավատարմագրված կազմակերպությունների և դիտորդների վրա, ինչպես նաև ուղղակի սահմանափակում է սահմանվել դիտորդների համար, այն է՝ վերջիններս ընտրական հանձնաժողովի անդամ չեն կարող լինել, որը, քաղաքական անկողմնակալության և չեզոքության սկզբունքի պահպանման իմաստով, գտնում ենք, կարելի է համարել լավագույն լուծումներից:

Ընտրական օրենսգրքի գործող կարգավորմամբ առկա են

հետևյալ դրույթները՝

✓ դիտորդը, այցելուն իր իրավունքներն իրականացնելիս պարտավոր է լինել անկողմնակալ, չեզոք, հրապարակայնորեն որևէ կանխակալ դիրքորոշում չարտահայտել կամ նախապատվելի վերաբերմունք չդրսևորել իշխանության կամ ընդդիմության, թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների հետ կապված որևէ հարցի նկատմամբ,

✓ դիտորդներն իրենց անձնական դիտարկումները կարող են ներկայացնել ընտրական հանձնաժողովներին դիտորդական առաքելության զեկույցի միջոցով,

✓ դիտորդների բոլոր եզրահանգումների համար պետք է հիմք հանդիսանան իրենց անձնական դիտարկումները,

✓ դիտորդը, այցելուն, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչն իրավունք չունեն միջամտելու ընտրական հանձնաժողովի աշխատանքներին և քվեարկության ընթացքին, իրականացնելու քարոզչություն, ընտրական հանձնաժողովի անդամներին տալու ցուցումներ, ներկայացնելու պահանջներ:

Հետաքրքիր է, որ Ընտրական օրենսգրքի վերջին դրույթը վերջին փոփոխությունների շրջանակներում լրացվեց «Բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի» բառերով: Այս լրացումն առաջին հայացքից բավականին «անմեղ» տպավորություն է թողնում, սակայն, Հայաստանում ընտրական վարչարարության խորը ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն կարող է լինել շատ ռիսկային և իրենում պարունակել քաղաքական և կողմնակալ գնահատականներ: Գտնում ենք, որ

այս կարգավորման արմատները խորն են և գնում են դեպի այնպիսի կարգավորման, որը վերաբերում է ընտրական հանձնաժողովների որոշումների, գործողությունների (անգործության) բողոքարկմանը ու այս մասում առաջարկվում է իրականացնել դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունք ունեցող կազմակերպությունների և վերջիններիս դիտորդների «երազանքը»՝ ընդգրկելով վերջիններիս բողոքարկելու իրավունք ունեցող սուբյեկտների շարքում:

Մասնավորապես, առաջարկվում է բողոքարկման իրավունքով օժտել «դիտորդական առաքելություն իրականացրած Հայաստանի Հանրապետության հասարակական կազմակերպությանը, եթե գտնում է, որ խախտվել են Սահմանադրության 7-րդ հոդվածով սահմանված ընտրական իրավունքի սկզբունքները կամ դիտորդի աշխատանքի խոչընդոտման պատճառով խախտվել է դիտորդական առաքելության իրավունքը»: Բացի այդ, ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտների շարքում ավելացվել է դիտորդը, ով նման իրավունք ստանում է, եթե քվեարկության օրը ներկա է գտնվել քվեարկության սենյակում կամ ներկա է գտնվել տեղամասային ընտրական հանձնաժողովի արդյունքների ամփոփման նիստին:

Մեր կարծիքով, նշված կարգավորումներն ուղիղ հակասության մեջ են դիտորդական առաքելությանը վերապահված կարգավիճակին, ինչպես նաև միջազգային փաստաթղթերով ամրագրված դիտորդական առաքելության բուն կարգավիճակին: Ներկայումս նման թյուրըմբռնումն արդեն կիրառվում է,

երբ որոշ դիտորդական առաքելության կազմակերպությունների ցուցակներում զարմանալիորեն գտնում ենք, ոչ թե անկողմնակալ դիտորդի, այլ անձի, որը նախկինում ակտիվորեն մասնակցել է այս կամ այն քաղաքական ուժի կողմում: Այն, որ դա թույլատրելի է անաչառ դիտարկման համար, միանգամայն հնարավոր է կասկածի տակ առնել: Մասնավորապես, տեղական հասարակական կազմակերպությունների կողմից ընտրությունների դիտարկման ժամանակ հաճախ նկատվում է, որ հիմնական քաղաքական խաղացողներն իրենց շուրջը ստեղծում են ոչ կառավարական կազմակերպությունների շղթա, որոնք անուղղակիորեն մասնակցում են նախընտրական քարոզարշավին և անուղղակիորեն ազդում ընտրողների կարծիքի վրա: Հավատարմագրվելով որպես ներքին, տեղական դիտորդներ՝ նրանք, այնուամենայնիվ, որոշակի քաղաքական գիծ են քարոզում, ինչն անընդունելի է: Եվ փոխանակ, հաշվի առնելով պրակտիկայում հանդիպած ռիսկերը, ստեղծենք բոլոր արդյունավետ մեխանիզմները նման խնդիրները լուծելու համար, հակառակը, այնպիսի օրենսդրական կարգավորումներ են առաջարկվել, որոնք խրախուսում են դիտորդի՝ քաղաքական գործընթացներում ներգրավվածության հնարավորությունները:

Տպավորություն է ստեղծվում, որ դիտորդական առաքելությունը վեր է ածվում նույն վստահված անձի ինստիտուտին, ավելին, շատ ավելի լայն իրավունքներով են օժտվում, քան վստահված անձինք, ովքեր վարչարարությանը մասնակցելիս, ունեն կոնկրետ պատճառ և շահագրգռվածություն, իսկ դիտորդի պարագայում նման իրավունքի վերապահումը ոչ

միայն անհասկանալի է և անտրամաբանական, այլ նաև կարող է հանգեցնել լուրջ քաղաքական գործընթացներին վերջիններիս ներգրավվածության: Եվ դա այն դեպքում, որ դիտորդական առաքելությունը սահմանող բազմաթիվ փաստաթղթերում դիտորդական առաքելության վերաբերյալ սահմանված է. «Օրենսդրական դաշտը պետք է վերանայի դիտորդների, ներառյալ տեղական և օտարերկրյա, ինչպես նաև մամուլի ներկայացուցիչների, քաղաքական կուսակցությունների և թեկնածուների մասնակցությունը՝ ընտրական գործընթացներում բոլոր թափանցիկությունն ապահովելու համար: Օրենսդրությունը չպետք է նույնացնի դիտորդների դերը գործակալի կամ քաղաքական կուսակցությունների և թեկնածուների դերի հետ»: Մեր օրենսդրական կարգավորումների շրջանակում, փաստացի, ձևավորվում է նոր, անսահմանափակ հնարավորություններով օժտված մի ինստիտուտ, որին թույլ է տրվում ամեն ինչ կամ շատ բաներ և որի նպատակը դառնում է քողարկված քաղաքական դիտարկում իրականացնելը:

Նման տպավորությունն ամրապնդվում է նաև Վենետիկի հանձնաժողովի կողմից տրված Համատեղ կարծիքով, որի 89-րդ կետով նշված է՝ «Փոփոխությունները հասարակական կազմակերպություններին հնարավորություն են տալիս ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդվածում թվարկված ընտրական իրավունքի սկզբունքների խախտում հայտնաբերելու դեպքում բողոք ներկայացնել: Միևնույն ժամանակ, ընտրողների համար բողոքարկման ավելի մեծ հնարավորություններ ստեղծելու նախորդ առաջարկությունը փոփոխություններում

արձագանք չի ստացել»⁹¹:

Այնուհետև, նույն փաստաթղթի 90-րդ կետում անդրադարձ է կատարվել ընտրությունների արդյունքների անվավեր ճանաչման դիմում ներկայացնելու հնարավորությունը նաև դիտորդներին վերապահելու հարցին՝ նշելով, որ. «դա չի հակասում միջազգային չափանիշներին, թեև այլ երկրներում հազվադեպ է հանդիպում, քանի որ ընտրությունների կազմակերպման իրավասու մարմիններին կամ դատարանները կարող է ծանրաբեռնել բողոքներով և բողոքարկումներով»: Համատեղ կարծիքում բազմաթիվ անգամներ նշված. «չի հակասում միջազգային չափանիշներին» արտահայտությունը կիրառելիս, հավանաբար ի նկատի չի ունեցվել իրենց իսկ կողմից սահմանված բազմաթիվ փաստաթղթերում տեղ գտած կարգավորումները: Ավելին՝ մեր կարծիքով, Վենետիկի հանձնաժողովի կողմից ընդունված փաստաթղթերում ներկայացված կարգավորումներում տեղ գտած դրույթներից առնվազն չորս բաղադրիչ, որոնց մասին սույն հետազոտական աշխատանքում արդեն իսկ խոսել ենք, խախտվում են: Դրանք են՝

1. նրանք փաստացիորեն չեն մասնակցում ընտրական վարչարարությանը,
2. ընտրական դիտորդները չպետք է խանգարեն ընտրական գործընթացի իրականացմանը՝ դրա ցանկացած տար-

⁹¹ Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողով (Վենետիկի հանձնաժողով) Հայաստանի ընտրական օրենսգրքի և առնչվող օրենսդրության փոփոխությունների վերաբերյալ համատեղ հրատապ կարծիք. Կարծիք թիվ 1026/2021, ԺՀՄԻԳ Կարծիք թիվ ELE-ARM/409/2021, CDL-PI(2021)006, Ստրասբուրգ, Վարչակա, 2021 թվականի ապրիլի 21, էջ 29-30:

րին,

3. նրանք չպետք է միջամտեն ընտրական գործընթացին,

4. պետք է լինեն քաղաքականապես անկողմնակալ:

Այսպիսով՝ Ընտրական օրենսգրքի փոփոխությունները, փաստացի դիտորդներին և դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպություններին դարձնում եմ ընտրական վարչարարության լիարժեք սուբյեկտ՝ այս մասով օժտելով վերջիններիս արտոնյալ իրավունքներով, որը չի բխում միջազգային փաստաթղթերով սահմանված դիտորդական առաքելության իրական դերից: Ավելին՝ նման կարգավորումը հեռացնում է նրանց դիտորդական առաքելության իրական ինստիտուտից՝ վերածելով լրիվ նոր ինստիտուտի, քանզի, ինչպես արդեն նշել ենք, վարչարարությունն ինքնին ենթադրում է այս կամ այն գործունեության որոշակի միջամտություն՝ բոլոր պատճառահետևանքային կապերով հանդերձ, այդ թվում՝ քաղաքական գնահատականներ ներկայացնելը:

Ամփոփելով տվյալ հարցի վերաբերյալ սույն հետազոտական աշխատանքում իրականացված ուսումնասիրությունների արդյունքները՝ հանգում ենք այն եզրակացության, որ միանշանակ հասկացություն միջազգային դիտորդի և, ընդհանրապես, դիտորդի վերաբերյալ, չկա. որո՞նք են նրա նպատակները, գործառույթները և կարգավիճակը, դիտորդական առաքելություն իրականացնող որևէ կազմակերպության փաստաթղթերում, անգամ միջազգային փաստաթղթերում, դեռևս գոյություն չունեն, որն էլ հենց հանգեցնում է բազմաթիվ կամայականությունների այս ոլորտում, քանզի այդ փաս-

տաթիթերում տեղ գտած կարգավորումները միմյանց հետ գտնվում են շարունակական հակասության մեջ: Այսպիսով՝ անսահմանափակ «դիտարկումը» չի հանգեցնի տվյալ երկրում, որտեղ իրականացվում է դիտարկումը, ժողովրդավարական արժեքների և ինստիտուտների զարգացմանը, այլ կլիեղաթյուրի այդ երկրում ժողովրդավարության արժեքներն ու ազգային արժեքները: Հետևաբար, մենք չենք կարողանալու ժողովրդավարության գլոբալ խնդիրները, եթե չտիրապետենք միջազգային մշտադիտարկման այբուբենին:

ԳԼՈՒԽ 4.

ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՎՐԱ

4.1. ՀՀ-ում կիրառվող ընտրական համակարգերը և դրանց փոփոխության հետևանքները

Չնսեմացնելով ժողովրդավարական ընտրությունների այս կամ այն չափանիշների, չափորոշիչների նշանակությունը՝ սույն պարագրաֆի շրջանակներում հետագա քննարկման առարկա կհանդիսանա ընտրական համակարգի ընտրությունը և, կախված դրանից, քաղաքացիների կամարտահայտության իրական արդյունքի արտացոլման աստիճանը⁹², ինչը, մեր կարծիքով, հանդիսանում է ընտրությունները՝ որպես «ազատ» բնութագրելու, անվիճելի չափանիշ, քանի որ հենց ընտրական համակարգն է որոշելու, թե ինչպես է յուրաքանչյուր ընտրողի ձայն դառնալու մանդատ: Մեր կարծիքով, Հայաստանի ընտրական իրավունքի իրավակարգավորման շրջանակներում հենց այս ասպեկտն է այսօր հանդիսանում ամենախոցելին և անկանխատեսելին: Այստեղ հնարավոր են ամենատարաբնույթ դրսևորումներ, ինչի մասին խոսք կգնա ստորև:

Ընտրական համակարգերի հետազոտմանը նվիրված են

⁹² Դրա վերաբերյալ տես նաև՝ Այվազյան Ն.Ա., Օհանյան Մ.Ս. Ազատ ընտրություններ և հանրաքվե կազմակերպելու հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում /Ն.Ա. Այվազյան, Մ.Ս. Օհանյան - Եր.: ԵՊՀ հրատ., 2010, էջեր 57-80:

հայրենական և արտասահմանյան հեղինակների բազմաթիվ աշխատություններ:⁹³ Չխորանալով տեսաիրավական հարցերի մեջ՝ միայն մատնանշենք, որ քննարկվող հիմնախնդիրների շրջանակներում, հաջորդիվ խոսք կգնա, նեղ իմաստով, ընտրական համակարգերի մասին, կամ, ինչպես նշում են ընտրական համակարգերի նեղ և լայն առումներով ընկալելու հակառակորդները⁹⁴, թեկնածուների միջև ըստ ստացված ձայների մանդատների բաշխման մեթոդի, բանաձևի մասին: Այսպիսով, հետագայում ընտրական համակարգերի մասին ցանկացած հիշատակում վերաբերելու է հենց մանդատների բաշխման մեթոդին:

Ա. Ք. Ռուպելը նշում է, որ «իրական ժողովրդավարական

⁹³ Տես, օրինակ՝ Թովմայան Հ.Վ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացման հիմնահարցերը // ԺԲ.00.02- «Հանրային իրավունք» մասն. իրավ. գիտ. Թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2000; Мурадян М.О. Конституционно-правовые основы избирательной системы Республики Армения // Автореф. диссертации на соискание ученой степени канд. юр. наук по специальности 12.00.02 - конституционное право, муниципальное право, М., 2008; Թորոսյան Ս.Լ. Ընտրական համակարգի ձևավորման և զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում // ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» մասն.իրավ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2012; Белов С.А. Избирательная система как правовой институт // Дисс. на соискание ученой степени канд.юр.наук по специальности 12.00.02, Санкт-Петербург, 2003; Елистратова В.С. Избирательная система России: конституционно-правовые основы и политическая практика // Дисс. на соискание ученой степени канд.юр.наук по специальности 12.00.02, Москва, 2008 և այլն:

⁹⁴ Տես, օրինակ՝ Избирательное право: учебное пособие / под ред. К.К. Гасанова, А.С. Прудникова. - 2-е изд., перераб. и доп. - М., 2007, с. 15; Мурадян М.О. Конституционно-правовые основы избирательной системы Республики Армения // Автореф. диссертации на соискание ученой степени канд. юр. наук по специальности 12.00.02 - конституционное право, муниципальное право, М., 2008, с. 9.

պետությունում քվեարկության և ձայների հաշվարկի համակարգը պետք է լինի հստակ, օբյեկտիվ և վստահելի, որպեսզի առավելագույնս ճիշտ արձանագրի հասարակությունում առկա ողջ քաղաքական ներկայակերները»⁹⁵.

Աշխարհում գոյություն ունեցող բազմաթիվ ընտրական համակարգերից յուրաքանչյուրը կարող է հավակնել ունակ լինելու՝ ապահովել քվեարկության և ձայների հաշվարկի «հստակ, օբյեկտիվ և վստահելի» համակարգ: Զվիճարկելով Վենետիկի հանձնաժողովի 2002 թվականի Ընտրությունների անցկացման բարենպաստ կանոնագրքի 4-րդ կետում արտացոլված դրույթն առ այն, որ «վերը նշված սկզբունքների պահպանման պայմաններում կարող է ընտրվել ցանկացած ընտրական համակարգ»⁹⁶, և Վենետիկի հանձնաժողովի և ԺՀ-ՄԻԳ-ի Համատեղ հրատապ կարծիքում առկա արտահայտություններն առ այն, որ «ընտրական համակարգի ընտրությունը պետության ինքնիշխան որոշում է իր քաղաքական համակարգի միջոցով»⁹⁷, լինելով քաղաքական ավանդույթով

⁹⁵ Руппель А.Х. Принципы избирательного права как критерий демократичности избирательных систем // Автореф. дисс. ... канд.юр.наук, М., 1993, с.6.

⁹⁶ Свод рекомендуемых норм при проведении выборов, принят Венецианской комиссией на 52-й сессии (Венеция, 18–19 октября 2002 года) CDL-AD(2002)023rev // Основополагающие документы Венецианской комиссии в области избирательного права и политических партий. – Кишинев : Cudrag, Изд. при поддержке ЕС и МИД Финляндии, 2016 (F.E.-P. «TipografiaCentrală»), с. 18.

⁹⁷ «Համամասնական ընտրական համակարգերի վերաբերյալ հաշվետվություն, ցուցակներում տեղերի բաշխում (բաց/փակ ցուցակներ)», CDL-AD(2015)001, կետ 9: Տե՛ս օրինակ. «Մոլդովայի Հանրապետություն՝ «Համատեղ կարծիք որոշ օրենսդրական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի վերաբերյալ» (Խորհրդարանական ընտրությունների ընտրական համակարգ), CDL-AD(2017)012, 25-28 կետեր, Հայաստանի Հանրապետություն՝ «Համատեղ կարծիք 2016

ներշնչված ազգային ընտրության խնդիր», և որ «ցանկացած ընտրական համակարգ սկզբունքորեն ընդունելի է, քանի դեռ այն հարգում է ընտրությունների ոլորտում միջազգային չափանիշները»⁹⁸, որ «մարդիկ պետք է վստահեն ընտրված համակարգին և դրա կիրառմանը»⁹⁹, հարկ է, սակայն, ընդունել, որ հայտնի ընտրական համակարգերի (մեծամասնական և համամասնական) գործնական կիրառման ժամանակակից տարբերակները միշտ չեն ապահովում փաստացի ընտրական գովազդի «քաղաքական տրամադրության» առավելագույն ճիշտ արտացոլումը:

Զե¹⁰ որ ընտրությունների ժողովրդավարական բնույթն ապահովելու համար ոչ միայն անհրաժեշտ է ընտրական իրավունքի օբյեկտիվ և սուբյեկտիվ սկզբունքների պահպանումը, դրանց կազմակերպումն ու անցկացումը ժողովրդավարական ընտրությունների միջազգային չափորոշիչներին համապատասխան, այլ նաև ծայրահեղ կարևոր է, թե ինչպե՞ս են համընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի շրջանակներում՝ գաղտնի քվեարկությամբ, ազատ և այլընտրանքային ընտրությունների, լայն իրազեկվածության և թափանցիկության պայմաններում տրված ընտրողների ձայները

թվականի ապրիլի 18-ի՝ Ընտրական օրենսգրքի նախագծի վերաբերյալ», CDL-AD(2016)019, կետ 27, «Համատեղ կարծիք Մոլդովայի ընտրական օրենսդրությունը փոփոխող օրենքի նախագծի վերաբերյալ», CDL-AD(2014)003, 21 և 25 կետեր:

⁹⁸ «Ընտրությունների հարցերով լավագույն պրակտիկայի մասին օրենք. ուղեցույցեր և բացատրական հաշվետվություն», CDLAD(2002)023rev2-cor, II.4:

⁹⁹ «Համամասնական ընտրական համակարգերի վերաբերյալ հաշվետվություն. տեղերի բաշխում ցուցակների ներսում (բաց/ փակ ցուցակներ)», CDL-AD(2015)001, կետ 9: - 13 - CDL-PI(2021)006 27.

վերափոխվելու մանդատների:

Գաղտնիք չէ, որ և՛ մեծամասնական, և՛ համամասնական ընտրական համակարգերն ունեն ինչպես առավելություններ, այնպես էլ թերություններ: Երկու ընտրական համակարգերի թերությունների մեղմացման նպատակով շատ երկրների օրենսդիրներ հաճախ հակված են ամրագրելու խառը ընտրական համակարգը (Գերմանիա, Վրաստան, Իտալիա 1993-2005թթ., Եգիպտոս, Մակեդոնիա, Հարավային Կորեա, Ճապոնիա և այլն): Նման ընտրական համակարգ էր գործում Հայաստանում մինչև 2015 թվականի սահմանադրական բարեփոխումները:

Հայաստանի Հանրապետությունում 1991-2016թթ. ժամանակահատվածում անմիջական ընտրությունների միջոցով ընտրվում կամ ձևավորվում էին Հանրապետության Նախագահը և ՀՀ խորհրդարանը՝ Ազգային ժողովը¹⁰⁰՝ համընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունների մասին» 04.04.1995թ. ՀՀ օրենքի համաձայն, որը գործել է մինչև 1999թ. ՀՀ ընտրական օրենսգրքի ընդունումը, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների թիվը կազմում էր 190, որոնցից 150-ն ընտրվում էին

¹⁰⁰ Տեղական ինքնակառավարման մարմինները՝ համայնքի ղեկավարն ու համայնքի ավագանին, ևս 1996 թվականից ընտրվում էին ուղղակի ընտրությունների միջոցով: Բացառություն էին կազմում Երևանի, Գյումրու և Վանաձորի քաղաքապետերը: Երևանի քաղաքապետը՝ 2009, իսկ Գյումրու և Վանաձորի քաղաքապետերը՝ 2016 թվականից ընտրվում են անուղղակի ընտրությունների միջոցով: Սակայն սույն հետազոտության շրջանակում հետաքրքրություն են ներկայացնում ուղղակի ընտրությունները:

միամասնադատ մեծամասնական ընտրատարածքներից, իսկ 40-ը՝ համամասնական ընտրակարգով՝ Հանրապետության ողջ տարածքն ընդգրկող մեկ բազմամասնադատ ընտրատարածքից: Եվ միայն 1995թ. հուլիսի 5-ին ընդունված ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ 1999թ. ընդունված ՀՀ առաջին ընտրական օրենսգիրքը սահմանեց, որ ՀՀ սահմանադրությամբ ամրագրված 131 պատգամավորներից 56-ն ընտրվում են համամասնական ընտրակարգով՝ հանրապետության ողջ տարածքն ընդգրկող մեկ բազմամասնադատ ընտրատարածքից կուսակցությունների ընտրական ցուցակներով առաջադրված պատգամավորի թեկնածուների թվից, իսկ 75 պատգամավորներ ընտրվում են մեծամասնական ընտրական համակարգով՝ մեկ պատգամավոր յուրաքանչյուր ընտրատարածքից (1999թ. ՀՀ ընտրական օրենսգրքի 95-րդ հոդված)։ «ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 04.12.2000թ. ՀՀ օրենքով համամասնական և մեծամասնական ընտրակարգով ընտրվող պատգամավորների թիվը փոփոխվեց. այսուհետ 94 պատգամավորներ պետք է ընտրվեին համամասնական ընտրակարգով, իսկ 37-ը՝ մեծամասնական, սակայն սույն օրենքն ուժի մեջ չմտավ, քանի որ այն պետք է ուժի մեջ մտներ ՀՀ Ազգային ժողովի հերթական ընտրություններից հետո, սակայն մինչև հաջորդ խորհրդարանական ընտրությունները մեկ այլ օրենքով՝ «ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 03.07.2002թ. ՀՀ օրենքով, համամասնական և մեծամասնական ընտրակարգով ընտրվող պատգամավորների թիվը կրկին փոփոխվեց. 75 պատգամավորներ պետք է ընտրվեին

համամասնական, իսկ 56-ը՝ մեծամասնական ընտրակարգով: Եվ, վերջապես, «ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 19.05.2005թ. ՀՀ օրենքով սահմանվեց համամասնական և մեծամասնական ընտրակարգով ընտրվող պատգամավորների թվերի հետևյալ հարաբերակցությունը՝ 90-ը՝ համամասնական ընտրակարգով, 41 պատգամավորներ՝ մեծամասնական ընտրակարգով¹⁰¹.

Այսպիսով, խորհրդարանական ընտրությունները Հայաստանում 1995 թվականից մինչև 2016 թվականն անցկացվել են խառը ընտրական համակարգով, ընդ որում, համամասնական և մեծամասնական ընտրակարգով ընտրվող պատգամավորների թիվը փոփոխելով՝ մեծամասնական ընտրական համակարգով ընտրվող պատգամավորների թիվն աստիճանաբար նվազեցնելու և, համապատասխանաբար, համամասնական ընտրական համակարգով ընտրվող պատգամավորների թիվն աստիճանաբար ավելացնելու միտումով:

ՀՀ ընտրական իրավունքի ժամանակակից պատմությունում ընտրական համակարգի ընտրության հարցը որոշվում էր ՀՀ օրենսդրությամբ: Ընտրական համակարգի հարցի սահմանադրական ամրագրման մասին դեռ 2004 թվականին խոսում էր պրոֆ. Ֆ.Պ. Թոխյանը¹⁰²: Նույն դիրքորոշումն ունի

¹⁰¹ Առավել մանրամասն տես՝ Акопян Л. Правовые регулирования институтов избирательного права в Армении с 1991 года по 2016 год // Развитие избирательных систем в Центральной и Восточной Европе с 1991 года. / Гл. ред. Жолт Солноки. Издатель: Ассоциация организаторов выборов стран Европы (AOBCE), Будапешт, 2016, с. 78-82.

¹⁰² Թոխյան Ֆ.Պ. Խորհրդարանական ընտրությունների սահմանադրաիրավական կարգավորման հիմնախնդիրները երիտասարդ ժողովրդավարության երկրներում (ՀՀ օրենսդրության հիման վրա) / Ֆ. Թոխյան; Ռուս-հայկական (սլավոնական) պետ. համալս., Խմբ.՝ Ա.Շ. Հարությունյան. - Երևան: ՌՀՀ, 2004, էջ 19:

նան Դ.Ս. Թադևոսյանը, նշելով, որ սահմանադրական մակարդակում ընտրական համակարգի ամրագրումը «կապահովի հասարակության քաղաքական կայունությունը և ժողովրդի իշխանության օրենսդիր մարմնի ներկայացուցչության անհրաժեշտ բարձր մակարդակը»¹⁰³:

Իրավիճակը փոխվեց 2015 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքում: 2015 թվականի դեկտեմբերի 6-ի սահմանադրական փոփոխություններով Հայաստանի Հանրապետությունում փոխվեց կառավարման ձևը՝ անցում կատարելով կիսանախագահական կառավարման ձևից խորհրդարանականին, ինչն էլ պայմանավորեց առաջնային մանդատով օժտված պետական իշխանության մարմինների ցանկի վերանայումը: Վերոգրյալի կապակցությամբ Հայաստանի Հանրապետությունում անցկացվում են միայն մեկ տեսակի համապետական ընտրություններ, այն է՝ Ազգային ժողովի ընտրությունները, Հանրապետության Նախագահն ընտրվում է անուղղակի ընտրությունների միջոցով:

ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածը սահմանել է. «1. Ազգային ժողովը կազմված է առնվազն հարյուր մեկ պատգամավորից:

2. Ազգային ժողովում Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով տեղեր են հատկացվում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին:

3. Ազգային ժողովն ընտրվում է համամասնական ընտրակարգով: Ընտրական օրենսգիրքը երաշխավորում է կայուն

¹⁰³ Թոխյան Ֆ.Պ., Թադևոսյան Դ.Ս. Ընտրական օրենսդրության զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում // Годичная научная конференция: сборник статей, Российско-армянский (славянский) университет, Ереван, 2007, с. 399.

խորհրդարանական մեծամասնության ձևավորումը: Եթե ընտրության արդյունքով կամ քաղաքական կոալիցիա կազմելու միջոցով կայուն խորհրդարանական մեծամասնություն չի ձևավորվում, ապա կարող է անցկացվել ընտրության երկրորդ փուլ: Երկրորդ փուլի անցկացման դեպքում թույլատրվում է նոր դաշինքների ձևավորումը: Քաղաքական կոալիցիա կազմելու սահմանափակումները, պայմանները և կարգը սահմանվում են Ընտրական օրենսգրքով»:

Այսպիսով, 2015 թվականի սահմանադրական փոփոխություններն առաջին անգամ Սահմանադրության մակարդակում ամրագրեցին ընտրական համակարգը: ՀՀ Սահմանադրությանը համապատասխան ՀՀ ընտրական օրենսգրքով, որը դարձավ ՀՀ-ում ընդունված առաջին սահմանադրական օրենքը, սահմանվեցին համամասնական ընտրակարգով խորհրդարանական ընտրությունների կազմակերպման և անցկացման իրավակարգավորումները, «կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորումը» երաշխավորող կոալիցիաների ձևավորման օրենսդրական կառուցակարգերը:

ՀՀ ընտրական օրենսգրքի հոդվածների վերլուծությունը վկայում է, որ 2017 և 2018 թվականներին խորհրդարան ձևավորելիս Հայաստանում կիրառվել է համամասնական ընտրակարգը՝ մաքուր տեսքով, երբ ընտրողն ունի մեկ ձայնի իրավունք, որը նա կարող է տալ միայն ընտրություններին գրանցված կուսակցության կուսակցական ցուցակի օգտին:

Եվ չնայած լայն տարածում ունի այդ ընտրական համակարգում մեծամասնականության տարրերի առկայության մասին կարծիքը, քանի որ քվեարկության ժամանակ ընտրողը

հնարավորություն ունենալ քվեաթերթիկի հակառակ կողմում, որտեղ գետեղված էր կուսակցության տարածքային ընտրական ցուցակը տվյալ ընտրական տարածքում, նշել իր նախապատվությունը ցուցակի թեկնածուների թվից՝ նրանցից մեկին «ընտրելով», ընտրական համակարգն ինքնին հանդիսանում էր բացառապես համամասնական: Ընտրողը չէր կարող ուղղակիորեն ազդել այս կանայն թեկնածուի ընտրվելու վրա, իսկ իր կողմից արտահայտած նախապատվությունը կարող էր, այսպես ասած, «աշխատել» բացառապես ընտրություններին մասնակցելու համար գրանցված կուսակցությունների միջև ընտրական քվոտայի մեթոդով մանդատների համամասնորեն բաշխման շրջանակներում, և, միայն որոշակի պայմաններում, ընտրողն այդ կերպ մասնակիորեն «միջամտում էր» կուսակցական ցուցակներում թեկնածուների հերթականության հարցի լուծմանը:

Վերոգրյալը թույլ է տալիս պնդելու, որ ՀՀ խորհրդարանական ընտրություններին կիրառվող նշված ընտրական համակարգը մաքուր համամասնական ընտրակարգ էր՝ առանց մեծամասնական ընտրական համակարգի «խառնուրդների», իսկ այս մոտեցման հետ տարբերվող հասարակությունում տարածված կարծիքը և քաղաքական գործիչների կողմից տրվող գնահատականներն ընտրական գործընթացի մասնակիցների սուբյեկտիվ ընկալման արդյունք են, երբ թեկնածուներից որևէ մեկին՝ որպես նախընտրածի, մատնանշելու իրավական հնարավորությունն ընկալվել է որպես ընտրողի կողմից թեկնածուի օգտին «կողմ» ձայն տալ և նրան ընտրել:

Հարկ է նկատել, որ ըտրողն ինքն էր որոշում, մատնանշել արդյո՞ք քվեաթերթիկում այս կամ այն թեկնածուի նկատմամբ

նախապատվություն կա, թե՛ ոչ: Ընդ որում, եթե ընտրողը քվեարկում էր կոնկրետ կուսակցության օգտին՝ առանց որևէ նախապատվություն նշելու, ձայնը համարվում էր տրված, իսկ քվեաթերթիկը՝ վավեր:

Ընդ որում, հարկ է նկատել, որ շահագրգռված լինելով գրանցված կուսակցական ցուցակում իր «տեղը» (դիրքը) բարելավելու հարցում, որն այս ընտրական համակարգի պարագայում կախվածության մեջ էր դրվում թեկնածուի՝ իր կողմից ստացված ընտրողների նախապատվություններից, տարածքային ցուցակների թեկնածուներն ակտիվ ջանում էին հենց իրենց ընտրական տարածքի շրջանակներում ապահովել իրենց կուսակցությունների առաջխաղացումը: Մյուս կողմից, ընտրողը հնարավորություն ուներ «առաջ տալ» այն թեկնածուին, որը ներկայացված էր հենց իր ընտրական տարածքից: Այսպիսով, բնական էր ստացվում Հայաստանի Ազգային ժողովում բավականին լուրջ տարածքային ներկայացուցչություններ, քանի որ արգելապատնեշը հաղթահարած կուսակցությունների միջև մանդատները բաշխելիս նույն կուսակցության շրջանակներում մանդատների կեսը տրվում էր համապետական ցուցակով, մյուս կեսը՝ տարածքային ցուցակներով:

Բացարձակ ակնհայտ է, որ որևէ ընտրական համակարգ, այդ թվում՝ համամասնականը, գործնականում չի հանդիսանում բացարձակ համամասնական. «ինքնին ներկայացվածության սկզբունքին համապատասխան՝ ավելի լայն մարմինը (ողջ ընտրազանգվածը) միշտ ներկայացված է իր մասշտաբով ավելի փոքր մարմնում (պառլամենտի անդամներով): Այսպիսով, միշտ գոյություն ունի ձայների որոշակի նվազագույն թիվ, որն անհրաժեշտ է, որպեսզի կուսակցությունը կարողա-

նա խորհրդարանում ներկայացված լինել (տեղեր ստանա)» (կետ 13)¹⁰⁴:

Բացարձակ ակնհայտ է նաև, որ քաղաքական գործիչների, գիտնականների և օրենսդիրների կողմից առաջարկվել են որոշակի կառուցակարգեր, որոնք սահմանում են, այսպես կոչված, թույլատրելի «շեղումներ» այդ համամասնությունից: Այսպես, օրինակ, հարկ է այդպիսի թույլատրելի «խեղաթյուրում» համարել բազմաթիվ երկրների օրենսդրությամբ նախատեսված արգելապատնեշը, որը պետք է հաղթահարի կուսակցության կողմից պատգամավորական մանդատների բաշխմանը մասնակցելու համար: Արտասահմանյան երկրների օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս պնդելու, որ այդ առումով ամենատարածված շեմը հանդիսանում է 4-5%-ը¹⁰⁵: Այդ տեսակետից կարելի է արդարացված համարել ՀՀ

¹⁰⁴ Համեմատական զեկույց՝ շեմերի և ընտրական համակարգերի այլ բնութագրերի մասին, որոնք խոչընդոտում են կուսակցություններին անցնելու խորհրդարան հաստատված 2008 թվականին Ժողովրդավարական ընտրությունների խորհրդի 26-րդ նիստում (Վենետիկ, 2008 թվականի դեկտեմբերի 12-13) և Վենետիկի հանձնաժողովի կողմից 77-րդ պլենար նստաշրջանում (Վենետիկ, 2008 թվականի դեկտեմբերի 12-13) Կլեմեն Յակլիչի (Հանձնաժողովի անդամ, Սլովենիա) մեկնաբանությունների հիման վրա CDL-AD(2008)037 // Աղբյուրը՝ Основополагающие документы Венецианской комиссии в области избирательного права и политических партий. - Кишинев: Cudrag, 2016, с. 131.

¹⁰⁵ Արդար լինելու համար հարկ է նկատել, որ կան երկրներ, որոնք նման շեմ չեն նախատեսում կամ նախատեսում են աննշան շեմ: Այսպես, օրինակ, Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների շարքում Իռլանդիայում, Իսլանդիայում, Պորտուգալիայում, Ֆինլանդիայում, Շվեյցարիայում իրավաբանական շեմը բացակայում է, իսկ Նիդերլանդներում կազմում է 0,67%: Կան նաև բավական բարձր իրավաբանական շեմեր (Թուրքիա՝ 10%, Ռուսաստան՝ 7%) // Աղբյուրը՝ Основополагающие документы Венецианской комиссии в области избирательного права и политических партий. - Кишинев: Cudrag, 2016, с. 131-135, 145-148.

ընտրական օրենսգրքում արգելապատնեշի ակայությունը, որը սահմանված է 5% մակարդակում՝ կուսակցությունների համար և 7% մակարդակում՝ կուսակցությունների դաշինքների համար (մինչև 2021 թվականի մայիսի 7 Փոփոխությունների մասին օրենքի ուժի մեջ մտնելը ՀՀ ընտրական օրենսգրքի 95-րդ հոդվածի 4-րդ մաս): Իհարկե, տվյալ նորմը շեղում է ներկայացուցչությունը, սակայն համամասնության սկզբունքից նման շեղումը կարելի է համարել միանգամայն թույլատրելի:

Թույլատրելի շեղումների թվում հարկ է նաև նշել այն նորմերը, որոնք ուղղված են երկրի խորհրդարանում կանանց և ազգային փոքրամասնությունների ներկայացուցչության ապահովմանը, ինչպես նաև տարբեր երկրների պրակտիկայում կիրառվող այսպես կոչված «պարզևսեղանները», որոնք ուղղված են կայուն մեծամասնության ապահովմանը:

Վենետիկի հանձնաժողովն ու ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ն իրենց նախկինում հիշատակած CDL-AD(2016)019 Համատեղ կարծիքում մաքուր համամասնական ընտրակարգից շեղումներ են դիտել.

- 5% արգելապատնեշը՝ կուսակցությունների համար, 7% արգելապատնեշը՝ կուսակցությունների դաշինքների համար,

- ձայների մեծամասնություն ստացած երկու կուսակցությունների միջև երկրորդ փուլի անցկացման հնարավորությունը,

- «կայուն պառլամենտական մեծամասնության» ապահովման նպատակներով մեծամասնության կուսակցությանը լրացուցիչ մանդատների տրամադրման, ինչպես նաև փոքրամասնության կուսակցությանը լրացուցիչ մանդատների տրա-

մադրման հնարավորությունը,

- որոշակի ազգային փոքրամասնությունների համար չորս լրացուցիչ քվոտաների կիրառումը:¹⁰⁶

Սակայն ՀՀ ընտրական օրենսգիրքը պարունակում է նաև այնպիսի կառուցակարգեր, որոնք ունակ են ուժի որոշակի հարաբերակցության ժամանակ հանգեցնել այնպիսի մասշտաբների խեղաթյուրումների, երբ համամասնական ներկայացուցչության մասին դժվար կլինի խոսել: Սակայն այդ հարցը կքննարկվի հաջորդ պարագրաֆներում:

Փոփոխությունների մասին օրենքի շրջանակներում խոհրդարանական ընտրությունների ժամանակ կիրառվող ընտրական համակարգը վերանայվել է, պարզեցվել և հասցվել է բացարձակ դասական համամասնական ընտրական համակարգի: Նշված մոտեցման հիմնավորման մեջ օրենքի նախագծի հեղինակները նշել են, որ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ կիրառվող ընտրական համակարգի իրավական կարգավորումները գնահատում են որպես «բացառիկ» բացասական իմաստով՝ մերկապարանոց հայտարարելով դրանք «անարդյունավետ», ընդ որում, ընդունում են, որ որոշ խնդիրների առկայությունը կարելի է բացատրել սահմանադրական պահանջներով կամ դրանց որոշակի մեկնաբա-

¹⁰⁶ Մանրամասն տես՝ European Commission For Democracy Through Law (Venice Commission) and Osce Office For Democratic Situations And Human Rights (Osce/Odihr) Armenia Preliminary Joint Opinion On The Draft Electoral Code, as of 18 April 2016 (On the basis of comments by Mr Richard Barrett (Member, Ireland) Ms Paloma Biglino Campos (Substitute Member, Spain) Mr Evgeni Tanchev (Member, Bulgaria) Mr Kåre Vollan (Expert, Norway) Mr Vasil Vashchanka (Expert, OSCE/ODIHR) // Venice Commission Opinion No. 835/2016 OSCE/ODIHR Opinion No: ELE-ARM/286/2016 Strasbourg, Warsaw, 13 June 2016, CDL-AD(2016)019, § 24.

նությամբ: Հեղինակները նշել են նաև, որ ընտրությունների կանոնների ազդեցությունը մարդկանց վարքի և ինստիտուտների վրա դրսևորվում է երկարաժամկետ հեռանկարում: Նշվածը հատկապես ճշմարտացի է ընտրակարգի հետ կապված փոփոխություններում, երբ մի քանի ընտրական շրջափուլից հետո նոր ակնհայտ է դառնում ֆորմալ խաղի կանոնների ազդեցությունը, հետևաբար՝ նաև հնարավորություն է ստեղծվում գնահատելու տվյալ ընտրակարգի ազդեցությունը քաղաքական և կուսակցական համակարգերի, ընտրողների վարքի, առանձին խմբերի մասնակցության և ներկայացվածության և բազմաթիվ այլ գործոնների վրա:

Անդրադառնալով ՀՀ-ում ընտրական համակարգերի օրենսդրական կարգավորման պատմությանը՝ օրինագծի հեղինակները նշել են, որ 2015 թվականի սահմանադրական բարեփոխումների շրջանակներում համամասնական ընտրակարգի ներդրման նպատակը կուսակցությունների և կուսակցական համակարգի կայացումն էր և ընտրությունների վերացարկումն առանձին անձանցից: Սակայն, նոր Ընտրական օրենսգրքով նախատեսված ընտրական տարածքների և տարածքային ցուցակների ու դրանց մեջ նախապատվության քվեի (որն ավելի հայտնի դարձավ որպես «ռեյտինգային» համակարգ) հնարավորությունը ընտրակարգը, օրինագծի հեղինակների կարծիքով, փաստացի վերածեց ավելի բարդ մեծամասնական ընտրակարգի: Ինչպես նրանք նշում են, նոր ընտրակարգը նպաստում էր, որ անհատ թեկնածուի նկատմամբ նախապատվությունը պարտադիր կերպով արտացոլվի նաև այդ թեկնածուի կուսակցության օգտին՝ զրկելով նախկինում առկա հնարավորությունից իրարից անկախ ընտրելու թեկ-

նածու տվյալ ընտրատարածքից և կուսակցություն՝ համապետական մակարդակում:

Հեղինակներն ընդգծել են նաև, որ տարածքային ցուցակները ստեղծում են տարբեր կշիռ և ազդեցություն ունեցող մանդատներ, ինչը միշտ չէ, որ նպաստում է պատգամավորների համագործակցությանը և արդյունավետ օրինաստեղծ գործունեությանը:

Հաջորդ էական խնդիրը, ըստ հեղինակների, նախ՝ կոալիցիաների ձևավորման խիստ սահմանափակումներն են, ըստ էության, նվազեցնելով քաղաքական համաձայնության իրական հնարավորությունը, և երրորդ՝ պարզ մեծամասնության և քաղաքական փոքրամասնության համար Հնտրական օրենսգրքով նախատեսված լրացուցիչ մանդատների տրամադրմամբ ընտրողի կամարտահայտումը վերանայելու հնարավորությունը: Հեղինակները գտնում են, որ ընտրողների կողմից ձևավորված Ազգային ժողովում քաղաքական համաձայնության խթանման նպատակով, ընտրական օրենսգրքի փոփոխություններն առավել նպաստավոր պայմաններ կարող են նախատեսել կուսակցությունների առաջադրման և մասնակցության համար՝ էականորեն նվազեցնելով ընտրական շեմը՝ առանձին կուսակցություններով ընտրություններին մասնակցելու դեպքում:

Կարելի է նշել ընտրական օրենսդրության այսպիսի փոփոխությունների ինչպես դրական, այնպես էլ բացասական հետևանքները: Այսպես, որպես դրական հետևանքներ պետք է նշել ինքնին ընտրական համակարգի պարզեցումը, ինչը դարձնում է այն առավել հասկանալի և ընկալելի ընտրական գործընթացի բոլոր մասնակիցների կողմից՝ կուսակցություն-

ների (կուսակցությունների դաշինքների), թեկնածուների, ընտրողների, ընտրական հանձնաժողովների և այլն: Դա թույլ է տալիս, առաջին հերթին, ընտրական իրավունքի հիմնական սուբյեկտներին՝ ընտրվողներին և ընտրողներին, կանխավ մշակել իրենց հարաբերությունների փոխգործակցությունների համապատասխան ռազմավարությունները և կանխատեսածել այդ ռազմավարությունների առաջնադասցման կառուցակարգերը, միջոցներն ու եղանակները: Ընտրական գործընթացի մասնակիցներին հասկանալի կլինի ապագա խորհրդարանի կազմն այն հաշվառմամբ, որ կուսակցական ցուցակներում թեկնածուները դասավորված են որոշակի հերթականությամբ, որը փոփոխության ենթակա չէ: Ընտրական հանձնաժողովների համար ավելի դյուրին կլինի կուսակցությունների և դաշինքների, և հատկապես, յուրաքանչյուր կուսակցության ներսում մանդատների բաշխման հաշվարկներ անցկացնելը:

Բացասական, անշուշտ, կդառնա թեկնածուների հեռավացումն ընտրողներից, նրանց միջև կապի թուլացումը, կուսակցական ցուցակի թեկնածուների նվազ շահագրգռվածությունը, որոնք տեղավորված են ոչ առաջին շարքերում, ինչպես նաև տարածքային ներկայացուցչության ծավալի կրճատումը, քանի որ եթե ընտրողների նախապատվությունների շրջանակներում նրանք կարող էին որոշել «իրենց» թեկնածուի տեղը կուսակցական ցուցակում և իրենց նախապատվությունների շրջանակներում «առաջ տանել» նրան, ապա փակ ցուցակներով դասական համամասնական ընտրակարգի պայմաններում կուսակցական ցուցակներում թեկնածուների հերթականությունը կուսակցության բացառիկ իրավասությունն է:

Հետաքրքրություն է ներկայացնում նաև մունիցիպալ ընտրությունների շրջանակներում կիրառվող ընտրական համակարգի վերանայման հարցը:

Երկար տարիներ շարունակ՝ Հայաստանում տեղական ինքնակառավարման ինստիտուտի ներդրման մեկնարկից ի վեր, տեղական ինքնակառավարման մարմինները՝ և՛ համայնքի ղեկավարը, և՛ համայնքի ավագանին, ընտրվել են հարաբերական մեծամասնության մեծամասնական ընտրական համակարգով՝ ընդհուպ մինչև 2020 թվականի օրենքով ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելը: Հարկ է նկատել, որ 2005 թվականի սահամանդրական բարեփոխումներից հետո, երբ Երևան քաղաքը ստացավ համայնքի կարգավիճակ, առաջին անգամ Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ կիրառվեց համամասնական ընտրական համակարգը և Երևանի քաղաքապետի անուղղակի ընտրությունները: Նշված կանոնակարգումները նախատեսվել էին 1999 թվականի ՀՀ ընտրական օրենսգրքով (փոփոխությունները կատարվել են «ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով, որն ընդունվել է 2008 թվականի դեկտեմբերի 26-ին և ուժի մեջ է մտել 2009 թվականի հունվարի 26-ին) և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով, որն ընդունվել է 2008 թվականի դեկտեմբերի 26-ին և ուժի մեջ է մտել 2009 թվականի հունվարի 26-ին: Այնուհետև, 2011 թվականի ՀՀ նոր Ընտրական օրենսգիրքը պահպանեց նույն մոտեցումը մունիցիպալ ընտրությունների շրջանակներում կիրառվող ընտրական համակարգերի հարցում: Եվ միայն 2016 թվականին ընդունված ՀՀ գործող Ընտրական օրենսգիրքը, ընդհանուր առ-

մամբ, պահպանելով առկա հիմնական իրավական մոտեցումները, համամասնական ընտրակարգով ընտրվող համայնքի ավագանի ունեցող համայնքների թվին, Երևանից բացի, ավելացրեց ևս երկու համայնք՝ Գյումրին և Վանաձորը (Հայաստանի մայրաքաղաքից հետո երկու խոշորագույն քաղաքները): Տվյալ իրավական կարգավորման հիմքով ընտրություններ անցկացվել են միայն մեկ անգամ՝ Գյումրու և Վանաձորի ավագանիների 2016 թվականի հոկտեմբերի 2-ին կայացած ընտրությունները:

2020 թվականին Քովիդ-19 համավարակով պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետությունում հայտարարվել է արտակարգ դրության ռեժիմ, այդ իսկ պատճառով տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ վերջին անգամ անցկացվեցին 2020 թվականի մարտին: Սակայն, արտակարգ դրության ռեժիմի պայմաններում 2020 թվականի հունիսի 18-ին Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքը, որն ուժի մեջ մտավ 2020 թվականի հուլիսի 11-ին, որն էլ վերանայեց մունիցիպալ ընտրությունների շրջանակներում կիրառվող ընտրական համակարգը: Այսպես, նշված օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ Ընտրական օրենսգիրքը լրացվում է նոր բաժնով, որը նվիրված է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և ներկայացվում է մեկ՝ 104.1-րդ հոդվածով, որը վերնագրված է «Ընտրական համակարգը»: Նշված հոդվածով սահմանված է.

«1. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտ-

րություններն անցկացվում են մեծամասնական կամ համամասնական ընտրակարգով:

2. Մեծամասնական ընտրակարգի դեպքում՝

1) համայնքի ղեկավարի ընտրության ժամանակ համայնքի տարածքում կազմավորվում է միամանդատ մեծամասնական ընտրատարածք:

2) համայնքի ավագանու ընտրության ժամանակ համայնքի տարածքում կազմավորվում է մեկ բազմամանդատ մեծամասնական ընտրատարածք:

3. Համամասնական ընտրակարգի դեպքում՝

1) համայնքի ավագանիների ընտրություններն անցկացվում են համամասնական ընտրակարգով:

2) համայնքի ավագանիների ընտրության ժամանակ համապատասխանաբար համայնքի տարածքում կազմավորվում է մեկ բազմամանդատ ընտրատարածք:

4. Մինչև 4000 ընտրող ունեցող համայնքներում (բացառությամբ բազմաբնակավայր համայնքների) համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրություններն անցկացվում են մեծամասնական ընտրակարգով:

5. 4000-ից ավելի ընտրող ունեցող համայնքներում, ինչպես նաև բազմաբնակավայր համայնքներում համայնքի ավագանու ընտրություններն անցկացվում են համամասնական ընտրակարգով:

6. Համայնքի ավագանին բաղկացած է՝

1) հինգ անդամից՝ մինչև 1 000 ընտրող ունեցող համայնքում:

2) յոթ անդամից՝ 1 001-ից 2 000 ընտրող ունեցող համայնքում:

3) ինն անդամից՝ 2 001-ից 4 000 ընտրող ունեցող համայնքում.

4) տասնհինգ անդամից՝ 4001-ից 10 000 ընտրող ունեցող համայնքում.

5) քսանմեկ անդամից՝ 10 001-ից 25 000 ընտրող ունեցող համայնքում.

6) քսանյոթ անդամից՝ 25 001-ից 70 000 ընտրող ունեցող համայնքում.

7) երեսուներեք անդամից՝ 70001-ից մինչև 300 000 ընտրող ունեցող համայնքում.

8) վաթսուհինգ անդամից՝ 300 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքում:

7. Ընտրողների թիվը յուրաքանչյուր համայնքի համար հաշվարկվում է՝ հիմք ընդունելով սույն օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան տրամադրված տեղեկանքում նշված ընտրողների թիվը:»:

Սակայն, դրանից կարճ ժամանակ անց, Փոփոխությունների մասին օրենքով փոփոխվեցին 104.1-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերը՝ բազմաբնակավայր համայնքների վերաբերյալ, մասնավորապես, Փոփոխությունների մասին օրենքով շտկվեց այն համայնքների տարանջատման չափանիշը, որոնց ավագանիներն ընտրվում են համամասնական ընտրական համակարգով՝ որպես այդպիսին թողնելով միայն տվյալ համայնքում ընտրողների թիվը:

Այսպիսով, գործող Ընտրական օրենսգրքի համաձայն, 4000 ավելի ընտրող ունեցող համայնքներում համայնքի ավագանին ընտրվում է համամասնական ընտրական համակարգով, իսկ մինչև 4000 ընտրող ունեցող համայնքներում՝ մեծա-

մասնական ընտրական համակարգով:

Հայաստանի Ընտրական օրենսգրքի և նրա հետ կապված օրենսդրության փոփոխությունների վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի 2021 թվականի ապրիլի 21-ի Համատեղ հրատապ կարծիքի բաժին 6-ի 22-րդ կետում խոսք է գնում տեղական ինքնակառավարման մարմինների (ավագանու անդամների) ընտրությունների մասին, և Վենետիկի հանձնաժողովը, զերծ մնալով ընտրական համակարգի այդ տարբերակի ընտրության հարցում, ընդհանուր առմամբ դրական է գնահատել փոփոխությունները, սակայն կասկածի տակ է դրել տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների շրջանակներում կուսակցությունների համար 4% և կուսակցությունների դաշինքների համար 6% շեմի անհրաժեշտությունը¹⁰⁷:

Մեր կարծիքով, ընտրական օրենսդրության նման վերանայումը, հատկապես այն պայմաններում, երբ ընտրությունների կազմակերպումն ու անցկացումը հնարավոր չէր, դժվար թե կարելի լինի արդարացված համարել հենց այն հանգամանքների տեսանկյունից, որոնց առկայությամբ այդ փոփոխությունները կատարվել են: Ընտրությունների անցկացման անհնարինության պայմաններում ընտրական օրենսդրության փոփոխություններ կատարելը հանգեցրել է նրան, որ այդ փոփոխությունների շուրջ լայն հանրային քննարկումներ չեն

¹⁰⁷ Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով Եվրոպական հանձնաժողով (Վենետիկի հանձնաժողով) Հայաստան ընտրական օրենսգրքի և առնչվող օրենսդրության փոփոխությունների վերաբերյալ համատեղ հրատապ կարծիք. Կարծիք թիվ 1026/2021, ԺՀՄԻԳ Կարծիք թիվ ELE-ARM/409/2021, CDL-PI(2021)006, Ստրասբուրգ, Վարչակա, 2021 թվականի ապրիլի 21:

անցկացվել, և նրանք զերծ են մնացել բարձր հասարակական հետաքրքրությունից, ինչպես դա սովորաբար տեղի է ունենում ընտրությունների մասին օրենսդրության վերանայման ժամանակ: Ավելին, 2021 թվականի աշնանը «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի շրջանակներում անցկացվել են Հայաստանի համայնքների խոշորացման բարեփոխումները, ինչը, ենթադրում է նոր ստեղծված համայնքներում տեղական ընտրությունների անցկացման անհրաժեշտության առաջացում: Այսպիսով, հարյուրավոր համայնքներ ներգրավվելու են ընտրական գործընթացների մեջ, որոնք նախատեսված են 2021 թվականի հոկտեմբերին, նոյեմբերին և դեկտեմբերին: Մտահոգություն է առաջացնում այն փաստը, որ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների շրջանակներում կիրառվող ընտրական համակարգի վերանայման կապակցությամբ նորամուծությունները պետք է փորձարկում անցնեն խոշորացված նորաստեղծ համայնքների ավագանիների ընտրությունների շրջանակներում, ինչը, մեր կարծիքով, ծայրահեղ ռիսկային է: Չէ՞ որ խոշորացման գործընթացն ինքնին արդեն իսկ լրացուցիչ ծանրություն է առաջացնում ինչպես այն կուսակցությունների համար, որոնք ցանկանում են մասնակցել ընտրություններին, այնպես էլ ընտրողների համար, որոնք պետք է, առաջին հերթին, համակերպվեն այսուհետ խոշորացված համայնքում բնակվելու մտքի հետ, ինչը ենթադրում է, օրինակ, բնակիչների և տեղական ինքնակառավարման մարմինների միջև փոխհարաբերությունների որոշակի վերանայում, և միայն դրանից հետո փորձեն կողմն-

րոշվել այս կամ այն քաղաքական ուժի բուն ընտրության հարցում: Այդ տեսակետից նորամուծությունների նման համատեղումը և նրանց միաժամանակյա փորձարկումը, մեր կարծիքով, ծայրահեղ ռիսկային է:

Նշված հանգամանքներից բացի, գտնում ենք, որ քիչ թե շատ փոքր համայնքներում (օրինակ՝ մինչև 10 000 ընտրող ունեցող) համամասնական ընտրական համակարգի նախատեսումը ծատ անհարմարություններ կստեղծի կուսակցությունների համար, որոնք դժվար թե կարողանան ձևավորել կուսակցական ցուցակ, որը կբավարարի Ընտրական օրենսգրքով դրանց ներկայացվող բոլոր պահանջները, ինչի մասին կխոսվի հաջորդ պարագրաֆում: Դա, անկասկած, կկրճատի ընտրություններին մասնակցող կուսակցությունների թիվը, կավելացնի իշխող կուսակցության շանսերը, որը բազմաթիվ վարչական լծակների առկայության և հեղինակության կամ ճանաչելիության պայմաններում, ունակ է համալրելու իր կուսակցական ցուցակը, կնվազեցնի ոչ իշխող կուսակցությունների հնարավորություններն այդ հարցում, և, որպես արդյունք, կնվազեցնի համայնքներում քաղաքական մրցակցության մակարդակը: Նման իրավիճակում արդարացիորեն հարց է առաջանում՝ ինչի՞ համար էր պետք տեղական ընտրությունների շրջանակներում կիրառվող ընտրական համակարգի վերանայումը:

**4.2. Ընտրությունների արդյունքների ամփոփումը և
մանդատների բաշխման կառուցակարգերն՝
ըստ ՀՀ օրենսդրության**

Եվ այսպես, Ընտրական օրենսգրքի 95-րդ հոդվածը որոշում է Ազգային ժողովի ընտրությունների ամփոփման կարգը: Նշված հոդվածի համաձայն՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (այսուհետ՝ նաև ԿԸՀ) կարող է ընդունել հետևյալ որոշումներից մեկը՝

1) Ազգային ժողով ընտրվելու և մանդատների բաշխման մասին.

2) Ազգային ժողովի պատգամավորների մանդատների նախնական բաշխման մասին.

3) առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն նշանակելու մասին.

4) Ազգային ժողովի ընտրություններն անվավեր ճանաչելու և ընտրությունների վերաքվեարկություն նշանակելու մասին.

5) Ազգային ժողովի ընտրությունների վերաքվեարկությունն անվավեր ճանաչելու մասին: Այդ դեպքում Հանրապետության նախագահը նշանակում է Ազգային ժողովի նոր հերթական ընտրություն:

Վերջին երեք որոշումները ԿԸՀ-ն ընդունում է, եթե ընտրությունների ընթացքում տեղի են ունեցել Ընտրական օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա:

Ինչ վերաբերում է առաջին երկու որոշումներին, ապա հարկ է նկատել, որ Ազգային ժողով ընտրվելու և մանդատներ-

րի բաշխման մասին որոշումն ընդունվում է, եթե ընտրության արդյունքով ընտրություններին մասնակցող կուսակցություններից կամ կուսակցությունների դաշինքներից մեկը մանդատների բաշխման արդյունքում ստանում է մանդատների ընդհանուր թվի մեծամասնությունը, հակառակ դեպքում պետք է ընդունվի պատգամավորների մանդատների նախնական բաշխման որոշում (Ընտրական օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մաս):

Ինչպես նշվել էր ավելի վաղ, մանդատների բաշխմանը մասնակցություն ունենում են համապատասխանաբար 5% և 7% արգելապատնեշը հաղթահարած կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները: Փոփոխությունների մասին օրենքը վերանայել է այս մոտեցումը և սահմանել 4 տոկոսանոց արգելապատնեշ՝ կուսակցությունների համար, և 8 տոկոսանոց արգելապատնեշ՝ կուսակցությունների դաշինքների համար, որոնք ներառում են մինչև երեք կուսակցություններ, և 10 տոկոսանոց արգելապատնեշ՝ կուսակցությունների դաշինքների համար, որոնք ներառում են մինչև չորս և ավելի կուսակցություններ, ինչը, մեր կարծիքով, կխթանի հարաբերականորեն փոքր և նոր կուսակցությունների մասնակցությունը խորհրդարանական ընտրություններին և միաժամանակ կխոչընդոտի կուսակցությունների դաշինքների ձևավորմանը բավականին բարձր հաղթահարման շեմ սահմանելու պատճառով:

Մանդատների բաշխումն իրականացվում է ընտրական քվոտայի մեթոդով՝ առաջնային բաշխմամբ չբաշխված մանդատների երկրորդական բաշխման ժամանակ առավելագույն

մնացորդի սկզբունքի կիրառմամբ: Եթե մանդատները վերը նշված բաշխումից, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների համար նախատեսված քվոտաների բաշխումից հետո որևէ կուսակցություն ստանում է բաշխված մանդատների ընդհանուր թվի մեծամասնությունը, սակայն 54%-ից (իսկ Փոփոխությունների մասին օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 52%-ից) պակաս, ապա այն ստանում է այսպես կոչված «պարզևավճար», այսինքն՝ այդ կուսակցությունը ստանում է այնքան թվով չհերիքող մանդատ, որպեսզի արդյունքում այդ կուսակցության մանդատների թիվը տոկոսային արտահայտությամբ կազմի խորհրդարանում մանդատների ընդհանուր թվի 54%-ը (իսկ Փոփոխությունների մասին օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 52%-ը): Գործող Ընտրական օրենսգրքի համաձայն՝ «պարզևավճար» նախատեսված է նաև խորհրդարանական փոքրամասնության համար այն դեպքում, երբ որևէ կուսակցություն ստանում է բաշխված մանդատների ընդհանուր թվի 2/3-ը, և դրա «չափը» կազմում է այնքան թվով լրացուցիչ մանդատներ, որպեսզի բոլոր այլ կուսակցությունների մանդատների համակցված թիվը կազմի մանդատների ընդհանուր թվի 1/3-ից ոչ պակաս (Ընտրական օրենսգրքի 96-րդ հոդված): Սակայն, այդ մասով Փոփոխությունների մասին օրենքը նախատեսել է այլ մոտեցում:¹⁰⁸ Անշուշտ, խոսքը գնում է խորհրդարանում քաղաքական ուժերի որոշակի հավասարակշռությ-

¹⁰⁸ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքը, որն ընդունվել է 2021 թվականի մայիսի 7-ին, մանդատների բաշխման հարցերի մասով ուժի մեջ կմտնի Ազգային ժողովի հերթական ընտրությունների նշանակումից հետո:

յան ապահովման մասին, և նման տեսակի կառուցակարգերի առկայությունը կարելի է միայն ողջունել: Սակայն, ծայրահեղ կարևոր է, որպեսզի օրենքը նախատեսի այնպիսի կառուցակարգեր և կիրառի այնպիսի ձևակերպումներ, որոնք հնարավորություն կտան ընտրական գործընթացի հիմնական մասնակիցներին դրանք հասկանալ և դրանց հաշվառմամբ ընտրել ռազմավարություն, իսկ ընտրությունների կազմակերպման համար պատասխանատու մարմիններին՝ պատշաճ կարգով և ժամկետներում կիրառել այդ կառուցակարգերը: Փոփոխությունների մասին օրենքի 67-րդ հոդվածի 2-րդ կետն առաջարկում է Ընտրական օրենսգրքի 85-րդ հոդվածի 4-րդ մասի եկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Եթե որևէ կուսակցություն (կուսակցությունների դաշինք) քվեարկության արդյունքով չի ստացել կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի 2/3-ից ավելին, սակայն սույն հոդվածի 4-9-րդ մասերի հերթական կիրառման արդյունքով կարող է ստանալ մանդատների ընդհանուր թվի 2/3-ից ավելին, ապա մանդատների բաշխմանը հաջորդաբար՝ ըստ ստացած կողմ քվեարկված քվեաթերթիկների քանակի մեծության, մասնակցում են բաշխման ենթակա մանդատների ընդհանուր թվի 2/3-ը գերազանցող մանդատների թվով կուսակցություններ (կուսակցությունների դաշինքներ), որոնք սույն հոդվածի 4-9-րդ մասերի հերթական կիրառման արդյունքով ստացել են քվեարկության արդյունքով կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի առնվազն 2 տոկոսը: Ըստ ստացած կողմ քվեարկված քվեաթերթիկների

քանակի մեծության՝ յուրաքանչյուր կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) տրվում է մեկ մանդատ: Եթե բաշխման ենթակա մանդատների թիվը գերազանցում է քվեարկության արդյունքով կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի առնվազն 2 տոկոսը ստացած կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) թիվը, ապա, ըստ ստացած կողմ քվեարկած քվեաթերթիկների քանակի մեծության, մանդատների բաշխումը շարունակվում է մինչև բաշխման ենթակա մանդատները սպառվեն:»:

Չնայած այն հանգամանքին, որ Վենետիկի հանձնաժողովը և ԺՀՄԻԳ-ն իրենց Համատեղ կարծիքում միայն նշել են, որ վերը հիշատակված պարբերության ձևակերպումը «բարդ է և ոչ հստակ» և որ, հնարավոր է, կա թարգմանության խնդիր, հակառակ դեպքում այն շտկման կարիք ունի, այնուամենայնիվ, իրականում բարդ է հասկանալ խորհրդարանական փոքրամասնությանն աջակցելու նման կառուցակարգը: Խորհրդարանական փոքրամասնության «պարզևատրման» նախկինում գործող համակարգի փոխարեն օրենսդիրն առաջարկել է մանդատների բաշխմանը ներգրավել սահմանված շեմը չհաղթահարելու պատճառով մանդատների բաշխմանը չներգրավված կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների): Նման որոշումն ինքնին, մեր կարծիքով, շատ լուրջ խթան է հանդիսանում փոքր կուսակցությունները խորհրդարան բերելու համար, ինչը կաջակցի երկրում իրական բազմակուսակցական համակարգի կայացմանը և հայկական խորհրդարանում առավել մեծ քաղաքական մրցակցությանը:

Ընդ որում, խորհրդարանական փոքրամասնության աջակցության նման կառուցակարգը, ենթադրում ենք, առավել ժողովրդավար է, քան խորհրդարան անցած քաղաքական ուժերին ուղղակի «պարզևատրումը»՝ պարզապես լրացուցիչ մանդատներ տրամադրելով: Սակայն, ընդունված օրենքն առկա ձևակերպմամբ առաջացնում է այնքան հարցեր, որ կասկածներ են ծագում նման իրավական կարգավորման կիրառման հնարավորությունների և այդ կառուցակարգից ակնկալվող դրական հետևանքների ստացման կապակցությամբ: Այսպես, Փոփոխությունների մասին օրենքն առաջարկել է իրավիճակի լուծում միայն այն դեպքում, եթե քվեարկության արդյունքներով, կուսակցությունը չի ստացել ձայների 2/3-ից ավելին, սակայն բանաձևերի կիրառման արդյունքում կարող է ստանալ մանդատների ընդհանուր թվի 2/3-ից ավելին: Իսկ ինչպե՞ս վարվել, եթե քվեարկության արդյունքներով, կուսակցությունը ստացել է ձայների 2/3-ից ավելին և պետք է ստանա նաև մանդատների ընդհանուր թվի 2/3-ից ավելին:

Կամ, օրինակ, հնարավոր է իրավիճակ, երբ 2 տոկոս կամ ավելի քիչ ձայն ստացած կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը) արդեն իսկ մասնակցում է մանդատների բաշխմանը, եթե հանկարծ սահմանված շեմը հաղթահարել են երկու կուսակցություններ, և այդ կուսակցությունն առավել «կողմ» ձայներ ստացածն է եղել, իսկ 2 տոկոս շեմը հաղթահարած այլ կուսակցություն չկա: Ինչպե՞ս են այդ իրավիճակում բաշխվելու մանդատները, եթե առկա է իմպերատիվ պահանջ 2 տոկոսանոց շեմը հաղթահարելու վերաբերյալ:

Տրված հարցերը մանդատների բաշխման մասին զուտ

տեսական կամ վերացական մտորումներ չեն: Նման իրավական կարգավորումների առկայությունն ունակ է հանգեցնելու տարաբնույթ հակասահմանադրական իրավիճակների, իսկ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ այդ ամենը տեղի է ունենալու ընտրական գործընթացների շրջանակներում կամ արդյունքներով, երբ «քաղաքական կրքերը» բորբոքված են, հասարակությունը հուզված է, նման անորոշությունները կարող են հանգեցնել անկանխատեսելի հետևանքների, հասարակության պառակտմանը, հասարակական արդորրի խաթարմանը և ընտրությունների արդյունքների նկատմամբ անվստահության: Ըստ այդմ, մեր կարծիքով, խորհրդարանական փոքրամասնության կարգավիճակի ապահովմանն ողողված իրավական կանոնակարգումները պետք է վերանայվեն:

Փոփոխությունների է ենթարկվել նաև Ընտրական օրենսգրքի 95-րդ հոդվածի 4-րդ մասի իրավակարգավորումն առ այն, որ եթե կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի առնվազն 5 (7) տոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացել են 3-ից պակաս կուսակցություն (կուսակցությունների դաշինք), ապա մանդատների բաշխմանը մասնակցում են առավելագույն կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացած 3 կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները: Փոփոխությունների մասին օրենքը, մեր կարծիքով, շտկել է վերը նշված «անարդար» մոտեցումը, երբ որպես երրորդ կուսակցություն կամ կուսակցությունների դաշինք մանդատների բաշխմանը մասնակցում է այն քաղաքական ուժը, որը պարզապես ավելի շատ ձայն է ստացել, հաշվի չառնելով, թե որքանով է տվյալ

քաղաքական ուժը (կուսակցությունը կամ կուսակցությունների դաշինքը) մոտ եղել արգելապատնեշը հաղթահարելուն: Այսպես, օրինակ, 2021 թվականի արտահերթ ընտրությունների արդյունքներով սահմանված արգելապատնեշը հաղթահարել էին երկու քաղաքական ուժեր, ինչի ուժով, որպես երրորդ քաղաքական ուժ, ներգրավվել է «Պատիվ ունեմ» դաշինքը, քանի որ խորհրդարան չանցած ընտրական գործընթացին մասնակցող կուսակցություններից և կուսակցությունների դաշինքներից հենց այդ դաշինքն ուներ առավել շատ «կողմ» քվեարկված ձայներ: Սակայն, արգելապատնեշը հաղթահարելու համար «Պատիվ ունեմ» կուսակցությունների դաշինքին չէր բավարարում մոտ 1,8 տոկոս ձայն, իսկ, օրինակ, «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանը, որը ստացել էր 3,95% ձայն, ընդամենը չէր հերիքում 1,05% ձայն: Փոփոխությունների մասին օրենքը նախատեսել է մանդատների բաշխմանը, որպես երրորդ քաղաքական ուժ ներգրավել, այն ուժին, որին ամենաքիչ թվով ձայն չէր բավարարել արգելապատնեշը հաղթահարելու համար (Փոփոխությունների մասին օրենքի 67-րդ հոդված):

Վերը նկարագրված ցանկացած իրավիճակում, մեր կարծիքով, որոշակի թույլատրելի շեղումներով ապահովվում է ընդունելի համամասնական ներկայացուցչությունը: Եվ մեր մոտ չէր առաջանա որևէ հարց, եթե վերը ներկայացված կառուցակարգերը կիրառվեին նաև այն իրավիճակներում, երբ ընտրություններին մասնակցող որևէ կուսակցություն կամ կուսակցությունների դաշինք չի ստացել խորհրդարանի տեղերի մեծամասնությունը: Սակայն ի՞նչ է տեղի ունենում այն

դեպքում, երբ վերը նշված իրավիճակներից որևէ մեկը չկա:

Այն դեպքերում, երբ ընտրություններին մասնակցող որևէ կուսակցություն կամ կուսակցությունների դաշինք չի ստանում խորհրդարանում տեղերի մեծամասնությունը, օրենսդրությամբ առաջարկվում է խորհրդարանում «կայուն մեծամասնության» ապահովման երկու ուղի .

1. քաղաքական կոալիցիայի ձևավորում,

2. ընտրությունների երկրորդ փուլ:

Գործող օրենսդրությամբ և, մինչև Փոփոխությունների մասին օրենքի ուժի մեջ մտնելը, կոալիցիա կազմելու իրավունք ունի ցանկացած կուսակցություն, որը հաղթահարել է իրավաբանական շեմը: Բայց կոալիցիա կարող է ձևավորվել միայն երեք պայմանների առկայության դեպքում .

ա) կոալիցիայում կարող են միավորվել երեքից ոչ ավելի կուսակցություններ,

բ) կոալիցիա կարող է ստեղծվել միայն պայմանով, որ համակցությամբ նրա մանդատների թիվը կկազմի մանդատների ընդհանուր թվի մեծամասնությունը,

գ) եթե կոալիցիա կազմած կուսակցությունները համաձայնության են եկել վարչապետի թեկնածուի հարցում:

Կոալիցիա կազմելու համար նախատեսված է վեցօրյա ժամկետ:

Օրենսդիրը նախատեսում է նաև կոալիցիայի «պարզևատրման» համակարգ, եթե կոալիցիա կազմելու արդյունքում կոալիցիան ստանում է մանդատների ընդհանուր թվի մեծամասնությունը, սակայն 54 տոկոսից պակաս: Սակայն, բաց են թողել այն հարցը, արդյո՞ք խորհրդարանական

փոքրամասնությունը ստանալու է «պարզևալճար» այն դեպքում, երբ կոալիցիա կազմելիս այն ունենա խորհրդարանական տեղերի ընդհանուր թվի 2/3-ից ավելի:

Փոփոխությունների մասին օրենքն Ընտրական օրենսգրքի 97-րդ հոդվածը, որը նվիրված է քաղաքական կոալիցիայի ձևավորմանը, շարադրում է նոր խմբագրությամբ և նախատեսում է կոալիցիայի ձևավորման հետևյալ կանոնները.

1) առաջին հերթին, կոալիցիա ձևավորելու իրավունքը վերապահվում է այն կուսակցությանը, որը ստացել է հարաբերական մեծամասնություն մանդատների նախնական բաշխման արդյունքում: Կոալիցիա կարող է կազմվել արգելապատնեշը հաղթահարած կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների հետ, եթե նրանց օգտին տրված ձայների գումարը բավարար է մանդատների բաշխման արդյունքում բաշխված մանդատների ընդհանուր թվի 52 տոկոսը ստանալու համար, և նրանք եկել են համաձայնության վարչապետի թեկնածուի վերաբերյալ: Նման կոալիցիա կարող է ձևավորվել 9 օրվա ընթացքում:

2) եթե 9 օրվա ընթացքում վերը նշված կոալիցիան չի ձևավորվում, ապա 5 օրվա ընթացքում կոալիցիա ձևավորելու իրավունք են ստանում մանդատների բաշխմանը մասնակցող մնացած կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները՝ նույն պայմանների պահպանմամբ, այսինքն՝ եթե նրանց օգտին տրված ձայների գումարը բավարար է մանդատների բաշխման արդյունքում բաշխված մանդատների ընդհանուր թվի 52 տոկոսը ստանալու համար, և նրանք եկել են համաձայնության վարչապետի թեկնածուի վերաբերյալ:

Նման կռալիցիա կարող է ձևավորվել 9 օրվա ընթացքում:

Այսպիսով, Փոփոխությունների մասին օրենքը վերացնում է կռալիցիա կազմելու քանակական սահմանափակումը՝ նախատեսելով ավելի երկար ժամկետ նրա ձևավորման համար, ինչը, անշուշտ, կարելի է դասել դրական փոփոխությունների թվին, ինչի վերաբերյալ նշվել է նաև Վենետիկի հանձնաժողովի և ԺՀՄԻԳ-ի ավելի վաղ հիշատակված Համատեղ կարծիքում¹⁰⁹, սակայն վիճելի է, մեր կարծիքով, արգելապատնեշը հաղթահարած կուսակցությունների նկատմամբ անհավասար վերաբերմունքը, քանի որ Փոփոխությունների մասին օրենքը, ըստ էության, ի սկզբանե արգելափակում է կռալիցիա կազմելու այն կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների իրավունքը, որոնք մանդատների առաջնային բաշխման արդյունքում զբաղեցրել են ոչ առաջին տեղը: Նման խտրական մոտեցումը կարող է ընտրական գործընթացի մասնակիցների մոտ առաջացնել անհավասարության և անարդարության զգացողություն: Բացի կռալիցիա կազմելու իրավունքի սկզբնական արգելափակման, Փոփոխությունների մասին օրենքն առաջին տեղը զբաղեցրած քաղաքական ուժի համար

¹⁰⁹ European Commission For Democracy Through Law (Venice Commission) and Osce Office For Democratic Situations And Human Rights (Osce/Odihr) Armenia Preliminary Joint Opinion On The Draft Electoral Code, as of 18 April 2016 (On the basis of comments by Mr Richard Barrett (Member, Ireland) Ms Paloma Biglino Campos (Substitute Member, Spain) Mr Evgeni Tanchev (Member, Bulgaria) Mr Kåre Vollan (Expert, Norway) Mr Vasil Vashchanka (Expert, OSCE/ODIHR) // Venice Commission Opinion No. 835/2016 OSCE/ODIHR Opinion No: ELE-ARM/286/2016, 33. //

[https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI\(2021\)006-arm](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI(2021)006-arm)

նախատեսում է 9-օրյա, իսկ բոլոր այլ կուսակցությունների համար՝ 5-օրյա ժամկետ, ինչը կարող է ևս մեկ առիթ հանդիսանալ դժգոհության համար: Վենետիկի հանձնաժողովի և ԺՀՄԻԳ-ի ավելի վաղ հիշատակված Համատեղ կարծիքում այդ հարցին անդրադարձ չի կատարվել, որպես դրական միտում գնահատվել է միայն կոալիցիա ձևավորելու ժամկետի երկարաձգումը 6 օրից մինչև ընդհանուր առմամբ 14 օր, սակայն, կարծում ենք, ծայրահեղ կարևոր կլինե՞ր անդրադառնալ այդ ընդհանուր ժամկետի վերը նշված առանձին բաղադրիչներին:

Անվիճելի է, որ կոալիցիայի ցանկացած ձևավորում, այդ թվում՝ նաև այդ ձևաչափում, որը վերը ներկայացվել է և որը նախատեսված է Ընտրական օրենսգրքի 97-րդ հոդվածով, խեղաթյուրում է հասարակության քաղաքական պատկերի արտացոլումը: Այնուամենայնիվ, կայուն խորհրդարանական մեծամասնության ապահովման Ընտրական օրենսգրքով առաջարկվող երկու տարբերակներից կոալիցիայի ձևավորումն ավելի ընդունելի է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ազատ մանդատի պայմաններում ընտրողն ի սկզբանե պատրաստ է նրան, որ իրենց կողմից ընտրված ներկայացուցիչները «դատապարտված են» գնալու որոշակի զիջումների, այդ թվում՝ կոալիցիաներ ձևավորելու:

Իրավիճակը շատ ավելի է բարդանում, եթե այդպիսի կոալիցիա չի ձևավորվում: Այդ դեպքում Ընտրական օրենսգրքի 97-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ կոալիցիա ձևավորելու համար օրենքով սահմանված ժամկետը սպառվելուց հետո հաջորդ օրը ԿԸՀ-ն ընդունում է որոշում՝ ընտրություն-

ների երկրորդ փուլ անցկացնելու մասին:

Ընտրությունների երկրորդ փուլում մասնակցում են այն երկու կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները), որոնց կողմ են քվեարկել առավել թվով ընտրողներ: Ընդ որում, Ընտրության երկրորդ փուլին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) շուրջ կարող են ձևավորվել նոր դաշինքներ՝ կազմված արգելապատնեշները հաղթահարած կուսակցություններից (կուսակցությունների դաշինքներից), եթե նրանք եկել են համաձայնության վարչապետի թեկնածուի վերաբերյալ: Ինչպես խորհրդարանական մեծամասնության, այնպես էլ խորհրդարանական փոքրամասնության «պարզևատրման» կանոնները գործում են նաև ընտրությունների երկրորդ փուլի արդյունքներով, որում մասնակցել է երկրորդ փուլին մասնակցելու նպատակով ստեղծված դաշինքը, այսինքն՝

- եթե նոր դաշինքն առաջին փուլի աղյուսակներով ստանում է 54 տոկոս և ավելի մանդատներ, ապա երկրորդ փուլում հաղթելու դեպքում դաշինքի կազմի մեջ մտնող կուսակցությունները պահպանում են իրենց մանդատները,

- եթե նոր դաշինքն առաջին փուլի աղյուսակներով ստանում է մանդատների 2/3-ը ավելին, ապա երկրորդ փուլում հաղթելու դեպքում մնացած կուսակցությունները ստանում են խորհրդարանական փոքրամասնության համար նախատեսված «պարզևատրումը»,

- եթե երկրորդ փուլում հաղթում է այն կուսակցությունը կամ երկրորդ փուլին մասնակցելու նպատակով ստեղծված դաշինքը, որը առաջին փուլի աղյուսակներով ստանում է 54

տոկոսից պակաս մանդատներ, ապա երկրորդ փուլում հաղթած կուսակցությունը կամ դաշինքը «պարզևատրվում են» խորհրդարանական մեծամասնության համար սահմանված կարգով¹¹⁰:

Փոփոխությունների մասին օրենքի շրջանակներում 54 տոկոսը փոխարինվել է 52 տոկոսով, այլ իրավակարգավորումները պահպանվել են, բացառությամբ այն նորմերի, որոնք վերաբերվում են խորհրդարանական փոքրամասնության «պարզևատրմանը», ինչի մասին ավելի վաղ արդեն իսկ խոսվել է:

Մասշտաբային են հանդիսացել նաև մունիցիպալ ընտրություններին վերաբերող մասով լնտրական օրենսգրքի փոփոխությունները: Համայնքների փոքր մասը, որոնք ներառված չեն խոշորացման գործընթացում և ունեն մինչև 4 000

¹¹⁰ Առավել պատկերավոր նշված իրավակարգավորումները կարող ենք տեսնել կոնկրետ օրինակի վրա: Ենթադրենք, խորհրդարանական ընտրություններին մասնակցել են և սահմանված շեմը հաղթահարել են 4 կուսակցություններ: Կուսակցություն I ստացել է 42% , կուսակցություն II - 28%, կուսակցություն III - 8%, կուսակցություն IV - 22%, մանդատներ: Գոալիցիա չի ձևավորվել և նշանակվել է քվեարկության երկրորդ փուլ: Ձայների նման բաշխման դեպքում երկրորդ փուլ կանցնեն I և II կուսակցությունները: Ենթադրենք, երկրորդ փուլում ընտրողների ձայների մեծամասնությունը ստանում է II կուսակցությունը: Նման դեպքում կուսակցությունների միջև մանդատները կբաշխվեն հետևյալ կերպ. բոլոր կուսակցությունները, բացի II կուսակցությունից, կպահպանեն առաջին փուլի արդյունքներով ստացված մանդատների թիվը, իսկ II կուսակցությունը կստանա այնքան թվով մանդատներ, որ այդ թիվը կազմի մանդատների ընդհանուր թվի 54%: Այսպես, եթե մեր պայմանական խորհրդարանն ի սկզբանե պետք է կազմված լիներ 100 պատգամավորներից, ապա բերված օրինակի պայմաններում I կուսակցությունը կստանա 42 տեղ խորհրդարանում, III կուսակցությունը՝ 8, IV կուսակցությունը՝ 22, իսկ II կուսակցությունը՝ 84 մանդատներ: Մանդատների ընդհանուր թիվը կկազմի՝ 156:

ընտրող, տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու ընտրություններն անցկացնելու են հարաբերական մեծամասնության մեծամասնական ընտրակարգով, և այդ համայնքային ընտրությունների մասով փոփոխությունները կրում են առավելապես կոամետիկ բնույթ:

Ավելի բարդ է իրավիճակն այն համայնքներում, որոնք ունեն 4 000-ից ավել ընտրողներ, իսկ էլ ավելի բարդ այն համայնքներում, որտեղ ընտրողների թիվը կազմում է 70 000 և ավելի, և այս համայնքներում ընտրություններն անցկացվում են համամասնական ընտրակարգով:

Այսպիսով, Հայաստանի համայնքների մեծամասնությունում ուղղակի ընտրությունների միջոցով ընտրվում է միայն համայնքի ավագանին՝ համամասնական ընտրակարգով: Հենց այս ընտրությունների մասին է խոսք գնալու հետագայում: Ցանկացած ընտրակարգի ընտրությունն ինքնին ընդունելի և թույլատրելի է, եթե ծառայում է այն նպատակներին, որոնք դրվում են այդ տեսակ իրավակարգավորումների առջև: Համայնքային ընտրություններին կուսակցությունների ակտիվ ներգրավումը, մեր կարծիքով, թույլ կտա համայնքնային ընտրություններում ընտրապայքարը բարձրացնել հայեցակարգային, գաղափարախոսական մակարդակի և հեռվանալ միջանձնային պայքարից: Մակայն օրենսդրական կարգավորումները պետք է հաշվի առնեն նաև իրողությունները և ստեղծեն հնարավորություններ՝ ձևավորելու այնպիսի տեղական իքնակառավարման մարմիններ, որոնք, ինչպես և նախատեսված է, կհանդիսանան բնակչությանն ամենամոտ կանգնած իշխանությունը:

Համամասնական ընտրակարգի շրջանակներում առաջադրվելու իրավունք ունեն կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները: Ընտրական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Յուրաքանչյուր կուսակցություն (կուսակցությունների դաշինք) իրավունք ունի առաջադրելու միայն մեկ ընտրական ցուցակ: Կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունն իրավունք չունի իր անունից թեկնածուների առանձին ցուցակ առաջադրելու»: Նույն մասում սահմանվում են նաև կուսակցական ցուցակներին ներկայացվող պահանջները, այսպես.

1) կուսակցական ցուցակում թեկնածուների թիվը չպետք է պակաս լինի ավագանու անդամների ընդհանուր թվի $1/3$ -ը և չպետք է գերազանցի ավագանու անդամների ընդհանուր թվի եռապատիկը,

2) եթե ընտրություններում առաջադրվել է միայն մեկ կամ մեկից ավելի կուսակցություն (կուսակցությունների դաշինք), սակայն նրանց կողմից ներկայացված կուսակցական ցուցակներում ընդգրկված թեկնածուների ընդհանուր թիվը պակաս է ավագանու անդամների ընդհանուր թվից, ապա մինչև ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի ավարտը նրանց հնարավորություն է տրվում համալրելու թեկնածուների ցանկը,

3) կուսակցության (կուսակցությունների դաշինքի) և դաշինքում ընդգրկված կուսակցություններից յուրաքանչյուրի ընտրական ցուցակի 1-ին համարից սկսած՝ ցանկացած ամբողջ թվով եռյակներում (1-3, 1-6, 1-9 և այդպես շարունակ՝ մինչև ցուցակի ավարտը) յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 70 տոկոսը,

4) կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում կարող են ընդգրկվել նաև այդ կուսակցության անդամ չհանդիսացող անձինք, որոնց թիվը չի կարող գերազանցել այդ ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների ընդհանուր թվի 30 տոկոսը,

5) բազմաբնակավայր համայնքի ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում պետք է ընդգրկվեն տվյալ համայնքը կազմող բնակավայրերի առնվազն կեսը ներկայացնող թեկնածուներ, բացառությամբ երեքից պակաս բնակավայրերից կազմված համայնքների:

Առաջին հայացքից, բավականին պարզ և օբյեկտիվ պահանջները գործնականում բավականին վիճելի գտնվեցին: Այսպես, օրինակ, օրենքը թույլ է տալիս կուսակցությանն առաջադրվել համայնքի ավագանու անդամների ընդհանուր թվի 1/3-ի քանակով թեկնածուներ պարունակող ընտրական ցուցակով, և թույլ է տալիս ընտրությունների անցկացում, եթե առաջադրվել է միայն մեկ կուսակցություն, սակայն թույլ չի տալիս համայնքային ընտրությունների անցկացում, եթե կուսակցական ցուցակում թեկնածուների ընդհանուր թիվը փոքր է համայնքի ավագանու անդամների ընդհանուր թվից: Բացարձակ անհասկանալի է, թե ի՞նչ նպատակով է օրենսդիրը սահմանում կուսակցական ցուցակում թեկնածուների այնպիսի նվազագույն թիվ, որը սպառնալիքի տակ է դնում ընդհանրապես համայնքային ընտրությունների անցկացումը, քանի որ Հնտրական օրենսգրքի 135.1-րդ հոդվածի համաձայն՝ եթե առաջադրման շրջանակներում կուսակցական ցուցակներում թեկնածուների թիվը փոքր է համայնքի ավագանու անդամների

րի թվից և գրանցման համար սահմանված ժամկետում ցուցակը չի համալրվել, ապա գրանցման համար ժամկետը լրանալուց հետո ընդունվում է համայնքային ընտրությունները չկայացած ճանաչելու մասին որոշում: Համայնքի ավագանու անդամների թվին հավասար թվով թեկնածուներ ներկայացնելու պահանջը նույնպես տրամաբանական չէ, քանի որ Ընտրական օրենսգրքի և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ համայնքի ավագանին համարվում է ձևավորված, եթե ընտրվել է համայնքի ավագանու անդամների ընդհանուր թվի 2/3-ը:

Եվս մեկ հակասություն է նկատվում թեկնածուների նվազագույն թվի և համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերի առնվազն կեսի ներկայացուցիչներին ընդգրկելու պահանջների միջև: Այսպես, օրինակ, խոշորացված Կապան համայնքը, որի ավագանին ունի 27 անդամ, ներառում է 38 բնակավայր: Ստացվում է, որ կուսակցական ցուցակին ներկայացվող վերը նշված առաջին պահանջի համաձայն՝ բավական է ցուցակում ընդգրկել 9 թեկնածու, քանի որ դա է 27-ի 1/3-ը, սակայն քանի որ համայնքը ներառում է 38 բնակավայր, կուսակցական ցուցակում ընդգրկվող թեկնածուների նվազագույն թիվը մեխանիկորեն աճում է մինչև 19 (38-ի կեսը): Նման հակասական իրավակարգավորումները կարող են պարարտ հող լինել ընտրական հանձնաժողովների կողմից կամայական մեկնաբանման և տարբերակված, ոչ միանման կիրառան համար: Մեր կարծիքով, շատ հակասություններից կարելի է խուսափել՝ բարձրացնելով կուսակցական ցուցակներում թեկնածուների նվազագույն թվի վերաբերյալ պահանջը մինչև ավագանու անդամների ընդհանուր թվի 2/3-ը:

Մեր կարծիքով, արդարացված չէ նաև համայնքային ընտրությունների շրջանակներում արգելապատնեշ նախատեսելը, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ մինչև այժմ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները՝ հազվադեպ բացառություններով, անցկացվել են մեծամասնական ընտրակարգով և կուսակցությունները համայնքային ընտրություններին այժմյա ձևաչափով մասնակցելու փորձ չունեն։ Նման շեմի առկայության կապակցությամբ կասկած է հայտնվել նաև Վենետիկի հանձնաժողովի և ԺՀ-ՄԻԳ-ի Համատեղ կարծիքում (կետ 22)¹¹¹։ Արդար լինելու համար հարկ է նկատել, որ մինչև Ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելը այդ հարցով համամասնական ընտրությունների շրջանակներում Երևան, Գյումրի, Վանաձոր քաղաքներում կիրառվել են կուսակցությունների համար 6, իսկ կուսակցությունների դաշինքների համար 8 տոկոսանոց շեմ։ Այնուամենայնիվ, մեր կարծիքով, համայնքային ընտրությունների շրջանակներում արգելապատնեշից պետք էր հրաժարվել, առնվազն համամասնական ընտրական համակարգը համատարած ներմուծելու սկզբնական փուլում։

Համայնքային ընտրություններն ամփոփվում են այնպես,

¹¹¹ European Commission For Democracy Through Law (Venice Commission) and Osce Office For Democratic Situations And Human Rights (Osce/Odihr) Armenia Preliminary Joint Opinion On The Draft Electoral Code, as of 18 April 2016 (On the basis of comments by Mr Richard Barrett (Member, Ireland) Ms Paloma Biglino Campos (Substitute Member, Spain) Mr Evgeni Tanchev (Member, Bulgaria) Mr Kåre Vollan (Expert, Norway) Mr Vasil Vashchanka (Expert, OSCE/ODIHR) // Venice Commission Opinion No. 835/2016 OSCE/ODIHR Opinion No: ELE-ARM/286/2016. //

[https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI\(2021\)006-arm](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI(2021)006-arm)

ինչպես խորհրդարանական ընտրությունների արդյունքները՝ կիրառելով նույն սկզբունքներն ու բանաձևերը: Առանձնահատկություն է հանդիսանում միայն մեկ կուսակցության մասնակցության հնարավորությունը, այդ դեպքում կուսակցությունը ստանում է բոլոր մանդատները, եթե նրա օգտին քվեարկել է քվեարկության մասնակիցների մեծամասնությունը: Բացի այդ, համայնքային ընտրությունների շրջանակներում օրենսդիրն ամրագրել է, մեր գնահատմամբ, «անարդար» մոտեցում, որի կապակցությամբ ավելի վաղ խոսվել է խորհրդարանական ընտրություններով պայմանավորված, երբ որպես երրորդ կուսակցություն կամ կուսակցությունների դաշինք մանդատների բաշխմանը մասնակցում է այն քաղաքական ուժը, որն ուղղակի ավելի շատ ձայն է ստացել, առանց հաշվի առնելու այն հանգամանքը, թե որքանով է տվյալ քաղաքական ուժը՝ կուսակցությունը կան կուսակցությունների դաշինքը, մոտ արգելապատնեշը հաղթահարելուն: Եթե խորհրդարանական ընտրությունների շրջանակներում օրենսդիրը վերանայել է իր մոտեցումը, միևնույն ժամանակ համայնքային ընտրությունների հանար պահպանել է նշված իրավակարգավորումը: Ընտրական օրենսդրությունը փոփոխելու շրջանակներում վերացվել է նաև հաղթած կուսակցությանը «պարգևատրելու» նախկինում գործող համակարգը, որը կիրառվում էր, եթե կուսակցությունը ստացել էր 40 տոկոսից ավելի մանդատ, այդ դեպքում նրան տրամադրելով մանդատների մեծամասնությունը և մնացած մանդատները բաշխելով բաշխմանը մասնակցող մնացած բոլոր կուսակցությունների միջև՝ իրենց ստացած ձայների համամասնորեն: Կատարված փոփոխությունները, մեր կարծիքով, ապահովում են առավել

հատակ ներկայացուցչություն, ինչը, անկասկած, դրական ազդեցություն կունենա նաև ընտրողներ տրամադրությունների վրա, որոնք այդպիսի կանոնակարգումների պայմաններում կարող են առավել հստակ կանխատեսել ընտրությունների արդյունքները, ինչը կբարձրացնի ընտրությունների նկատմամբ վստահությունը: Այդ տեսանկյունից խորհրդարանական և համայնքային ընտրությունների արդյունքներով մանդատների բաշխման շրջանակներում խորհրդարանական ընտրությունների դեպքում՝ մեծամասնության «պարզևատրման» և փոքրամասնության կարգավիճակն ապահովելու անհրաժեշտության կառուցակարգերի առկայության, և համայնքային ընտրությունների դեպքում՝ դրանց բացակայության հաշվառմամբ, կարելի է փաստել, որ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ համամասնական ներկայացուցչությունն ապահովվում է ավելի բարձր մակարդակում, քան դա տեղի է ունենում Ազգային ժողովը ձևավորելիս:

4.3. Իշխանության ներկայացուցչական բնույթի խնդիրները և դրանց լուծման հնարավորությունները ՀՀ ընտրական օրենսդրության փոփոխությունների շրջանակներում

Ինչպես արդեն նշվել է, Ընտրական օրենսգիրքը պարունակում է այնպիսի կառուցակարգեր, որոնք ունակ են որոշակի իրավիճակում հանգեցնել այնպիսի ծավալների խեղումների, որոնց պարագայում համամասնական ներկայացուցչության մասին հնարավոր չի լինի խոսել:

Նախորդ պարագրաֆում թվարկված մեծ թվով մանիպուլյացիաների արդյունքում, որոնք ոչ մի առնչություն չունեն համամասնական ընտրական համակարգի հետ, համամասնական ներկայացուցչությունը խեղվում է այն աստիճանի, որ հնարավոր են իրավիճակներ, երբ մանդատների բաշխմանը մասնակցող կուսակցությունների մանդատների թվի հարաբերակցությունը հիմնավորելու համար չգտնվի և ոչ մի փաստարկ:¹¹²

Ավելի վաղ հիշատակված CDL-AD(2016)019 Համատեղ կարծիքում նշվել է, որ նման կարգի ընտրական համակարգ

¹¹² Համամասնական ընտրական համակարգով խորհրդարանական ընտրությունների երկրորդ փուլ նախատեսված էր նաև Բտալիայի ընտրական օրենսգրքով, որը կոչվում էր «Բտալիկում», որը չեղարկվել է՝ այդպես էլ որևէ անգամ չկիրառվելով: Օրենքն ընդունվել էր 2015 թվականին, պետք է ուժի մեջ մտներ 2016 թվականի հուլիսի 1-ից և կիրառվեր 2018 թվականի գարնանը: Սակայն 2017 թվականի հունվարին Բտալիայի Սահմանադրական դատարանը ճանաչել է այն մասամբ հակասահմանադրական: Հակասահմանադրական է ճանաչվել այն մասով, որը վերաբերում էր խորհրդարանական ընտրությունների երկրորդ փուլին: // Աղբյուրը՝ <https://www.pnp.ru/politics/2017/01/26/ konstitucionnyy-sud-italii-priznal-izbiratelnyy-zakon-italikum-nemedlenno-primenimym.html>

ընդունված է եղել Իտալիայում, սակայն այն ընդունվել է անկայունության բավականին երկար ժամանակահատվածից հետո՝ նպատակ ունենալով երկար տարիների փորձի արդյունքներով գտնելու կառավարելիության և ներկայացուցչության միջև լավագույն հավասարակշռությունը, և պարտադիր չէ այդ փորձը փոխանցել մի երկրի, որը ընտրություն է կատարում խորհրդարանական կառավարման ձևի օգտին և առաջին անգամ է այն փորձարկելու:¹¹³

Համեմատական գեկույցում՝ շեմերի և ընտրական համակարգերի այլ բնութագրերի մասին, որոնք խոչընդոտում են կուսակցություններին անցնելու խորհրդարան, մաս II, 2010թ.)՝ հաստատված Ժողովրդավարական ընտրություններով խորհրդի և Վենետիկի հանձնաժողովի կողմից, ասվում է. «64. Ինչպիսի՞ դեր են խաղում խորհրդարանական ընտրությունները: Ակնհայտ պատասխանը կայանում է նրանում, որ իրենց շնորհիվ ընտրվում են ժողովրդի ներկայացուցիչները, այսինքն՝ խորհրդարանի քաղաքական կազմը պետք է արտացոլի, որքանով հնարավոր է, երկրի քաղաքական կառուցվածքը: Սակայն դա արդեն բավարար պատասխան չի հանդիսանում: Խորհրդարանական ընտրությունները նաև (և միգուցե դա ամենակարևորն է) այն միջոցն է, որի շնորհիվ ժողովուրդը միջնորդավորված, սակայն արդյունավետ, նշանակում է վարչա-

¹¹³ Առավել մանրամասն տե՛ս՝ European Commission For Democracy Through Law (Venice Commission) and Osce Office For Democratic Situations And Human Rights (Osce/Odihr) Armenia Preliminary Joint Opinion On The Draft Electoral Code, as of 18 April // Venice Commission Opinion No. 835/2016 OSCE/ODIHR Opinion No: ELE-ARM/286/2016 Strasbourg, Warsaw, 13 June 2016, CDL-AD(2016)019, § 26. // [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI\(2021\)006-arm](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI(2021)006-arm)

պետին՝ իր թիմով և մեծամասնությանը... Օրինակ, 2009 թվականի սեպտեմբերին ՔԴՄ նախընտրական պաստառների վրա Բեռլինում զետեղվել է կոչ՝ «WirwählendieKanzlerin»՝ «Մենք ընտրում ենք Կանցլերին»: Այլ խոսքերով, ընտրողներին միանշանակորեն ասվում էր, որ իրենցից պահանջվում է ընտրել կառավարության գլխին, այլ ոչ թե պարզապես խորհրդարանի անդամներից մեկին:

65. Դա հանգեցնում է մեզ այն գաղափարին, որ ընտրական համակարգերը ծառայում են նրան, որպեսզի կենտրոնացնեն ձայները իրական մրցակիցների վրա, այդ կերպ ընտրողներին տրամադրելով առանցքային դերն այդ սկզբունքային հարցում, եթե անգամ դա կրճատում է պակաս անմիջականորեն մասնակցող կուսակցությունների ներկայացուցչությունը»¹¹⁴:

Ընդ որում ծայրահեղ կարևոր է, որպեսզի համապատասխան ընտրական նորմերը լինեն պարզ և դյուրին, ընկալելի ինչպես կուսակցությունների, այնպես էլ ընտրողների համար, այնպես, որ բոլորը կարողանան հարմարեցնել իրենց վարքագիծն այդ նորմերին:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է նկատել, որ իրական ժո-

¹¹⁴ Զեկույց՝ շեմերի և ընտրական համակարգերի այլ բնութագրերի մասին, որոնք խոչընդոտում են կուսակցություններին անցնելու խորհրդարան,՝ հաստատված 2008 թվականին Ժողովրդավարական ընտրությունների խորհրդի 32-րդ նիստում (Վենետիկ, 2010 թվականի մարտի 11) և Վենետիկի հանձնաժողովի կողմից 82-րդ պլենար նստաշրջանում (Վենետիկ, 2010 թվականի մարտի 12-13) Ժան-Կլոդ Կոլյարի (Հանձնաժողովի անդամ, Ֆրանսիա) մեկնաբանությունների հիման վրա CDL-AD(2010)007// Աղբյուրը՝ Основополагающие документы Венецианской комиссии в области избирательного права и политических партий. - Кишинев: Cudrag, 2016, с. 155.

դովրդավարական ընտրությունների ապահովման ճանապարհին Հայաստանի զարգացման տվյալ փուլում առավել խոցելի ենք համարում ընտրական օրենսդրության կայունության ապահովման հարցերը, ինչպես նաև թույլատրելի «շեղումների» կիրառման պայմաններում ընտրողների ընտրական նախասիրությունների և կուսակցություններին տրվող մանդատների հարաբերակցությունում առավելագույն հստակ արտացոլման տեսքով՝ իրական ներկայացուցչության ապահովման հարցերը:

Համաձայնելով Մ.Բ. Բազլայի կարծիքի հետ¹¹⁵, նշենք, որ իրական ժողովրդավարական ընտրություններին կարելի է հասնել ընտրողների համար իրական ընտրություն ապահովելու միջոցով, այսինքն՝ միայն քաղաքական բազմակարծության պայմաններում: Նման ընտրություններն ուղղված են նրան, որպեսզի ներկայացուցչական մարմիններում տեղերը և ընտրովի պաշտոնատար անձինք իրենց պաշտոնները ստանձնեն ընտրողների մեծամասնության կամքին համապատասխան: Ընդ որում, փոքրամասնություն կազմած քաղաքական ուժերը պետք է ընտրությունների արդյունքները ճանաչելու պատրաստակամություն ունենան, եթե դրանք եղել են ազատ, արդար և օրինական:

Փոփոխությունների մասին օրենքը շատ լուրջ անդրադարձել է նաև ներկայացուցչության բնույթին՝ առաջացնելով նոր կանոնակարգումների կիրառումից ինչպես բարենպաստ, այնպես էլ ոչ բարենպաստ սպասումներ: Ընտրական օրենսդրության փոփոխությունների շրջանակներում «ամենատպա-

¹¹⁵ Арутюнян Г.Г., Баглай М.В. Конституционное право: энциклопедический словарь.- М.: НОРМА, 2006, с. 80.

վորիչը» ընտրական համակարգի վերանայումն է: Այսպես, մինչ օրս գործող օրենսդրության համաձայն՝ պատգամավորներն ընտրվում էին համամասնական ընտրական համակարգով՝ տարածքային ցուցակի շրջանակներում այս կամ այն թեկնածուի նկատմամբ նախապատվություն ցուցաբերելու հնարավորությամբ, այսինքն, ինչպես ընդունված է ասել, համամասնական ընտրակարգով՝ «ռեյտինգային» համակարգի տարբերով: Տարածքային ցուցակների վերացումը հանգեցրել է մաքուր համամասնական ընտրակարգի կիրառմանը, ինչը, իր հերթին, հանգեցրել է կուսակցության ներսում ձայնի համար մրցակցության բացակայության, ինչը, անկասկած, բացասաբար է անդրադառնում ընտրողի և թեկնածուի միջև կապի վրա, իսկ հաշվի առնելով նաև այն փաստը, որ ներկուսակցական մրցակցության խթանման որևէ այլ կառուցակարգեր (օրինակ՝ փրայմերիզ, ներկուսակցական ընտրություններ և այլն) Հայաստանի կուսակցությունները չեն կիրառում, ընտրողներից թեկնածուների հեռվացման միտումը և միայն կուսակցությունների առաձին դեմքերի վրա կենտրոնացումը շարունակվելու է: Դրա մասին խոսում են նաև փորձագետները: «Գազետա.ռու»-ին տրված մեկնաբանությունում ՄՀՄՊԻ եվրասիական հետազոտությունների կենտրոնի ավագ գիտական աշխատակից Վադիմ Մուխանովը նշում է, որ «Հայաստանի՝ որպես ավանդական կովկասյան հանրապետության քաղաքական մշակույթում ուժեղ են հենց անհատական, այլ ոչ թե կուսակցական նախասիրությունները: Այսինքն՝ քաղաքական միավորումները ստեղծվում են որոշակի ուժեղ անհատի շուրջ»¹¹⁶:

¹¹⁶ https://www.gazeta.ru/politics/2021/04/02_a_13544762.shtml

Միևնույն ժամանակ հարկ է ընդունել, որ «ռեյտինգային» համակարգը բավականին բարդ էր և ընտրական գործընթացի ոչ բոլոր մասնակիցների համար հասկանալի, ինչի արդյունքում դժվարանում էր ընտրողի համար գիտակցված ընտրությունը և կուսակցությունների համար ընտրազանգվածի հետ շփման ռազմավարության մշակումը: Պարզեցումը միշտ էլ հանգեցնում է ընտրական գործընթացի մասնակիցների վարքագծի առավել գիտակցմանը և ընտրությունների արդյունքում ձևավորվող իշխանության հենց ներկայացուցչական բնույթի ավելի լավ հասկանալուն: Սակայն հարկ է ընդունել, որ տարածքային ցուցակների վերացման շրջանակներում խորհրդարանում տարածքային ներկայացուցչության մակարդակն էականորեն կնվազի:

Պետք է ընդունել, որ իշխանության ներկայացուցչական բնույթի խնդիրները ներդրված են հենց ՀՀ սահմանադրությունում, որի 89-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Ազգային ժողովն ընտրվում է համամասնական ընտրակարգով: Ընտրական օրենսգիրքը երաշխավորում է կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորումը: Եթե ընտրության արդյունքով կամ քաղաքական կոալիցիա կազմելու միջոցով կայուն խորհրդարանական մեծամասնություն չի ձևավորվում, ապա կարող է անցկացվել ընտրության երկրորդ փուլ: Երկրորդ փուլի անցկացման դեպքում թույլատրվում է նոր դաշինքների ձևավորումը: Քաղաքական կոալիցիա կազմելու սահմանափակումները, պայմանները և կարգը սահմանվում են Ընտրական օրենսգրքով»: Նշված իրավադրույթները պարարտ հող են ստեղծում խորհրդարանի ձևավորման շրջանակներում այնպիսի կառուցակարգերի ներդրման համար, ո-

րոնք ունակ են հանգեցնելու համամասնական ներկայացուցչության էական խեղաթյուրումների և դրանով թուլացնելու իշխանության ներկայացուցչական բնույթը: Մասնավորապես, «հեղհեղուկ» են այդ առումով վերը նշված հետևյալ սահմանադրական պահանջները.

1) կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորման օրենսդրական երաշխավորման պահանջը,

2) կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորման հնարավորությունը քաղաքական կոալիցիայի ձևավորման միջոցով,

3) խորհրդարանական ընտրությունների երկրորդ փուլի անցկացման հնարավորությունը,

4) երկրորդ փուլի քվեարկության շրջանակներում նոր դաշինքների ձևավորման հնարավորությունը:

Իսկ եթե տվյալ դրույթներին ավելացնենք նաև արգելապատնեշի, գենդերային և ազգային փոքրամասնությունների քվոտաների ապահովման պահանջների առկայությունը, ապա ակնհայտ է դառնում, որ դժար թե հնարավոր լինի խուսափել համամասնական ներկայացուցչության շեղումներից:

Ընդհանուր առմամբ կարելի է փաստել, որ վերջին երկու տարիների ընթացքում կատարված ընտրական օրենսդրության փոփոխությունները՝ ձայները մանդատների վերաձելու հարցում, նպաստում են խորհրդարանում բազմակուսակցականությանը և բազմակարծությանը և, մասնակիորեն, «մեղմում են» ընտրությունների արդյունքներով իշխանության ներկայացուցչության «խեղաթյուրման» գործոնները: Ասենք, նման աջակցող իրավակազավորումների թվին վստահաբար կարելի է դասել՝

- կուսակցությունների համար հաղթահարման շեմի նվազեցումը, սակայն ոչ դրա բարձրացումը կուսակցությունների դաշինքների համար,

- կայուն մեծամասնության շեմի նվազեցումը 54 տոկոսից մինչև 52 տոկոս, սակայն ոչ «պարզևատրումների» համակարգի պահպանումը կայուն մեծամասնության ապահովման համար այն դեպքում, երբ որոշ հանգամանքներում խորհրդարանական փոքրամասնության «պարզևատրումները» վերացվել են,

- 2 տոկոսանոց արգելապատնեշ հաղթահարած կուսակցությունները մանդատների բաշխման մասնակից դարձնելու հնարավորությունը, եթե հաղթած կուսակցությունը ստացել է մանդատների 2/3-ից ավելին՝ ձայների 2/3-ից պակաս ստանալու դեպքում, սակայն ոչ նման հնարավորության բացակայությունը, եթե կուսակցությունը ստանում է մանդատների 2/3-ից ավելին՝ ձայների 2/3-ից ավելին ստանալու դեպքում,

- կռալիցիա կազմելիս կուսակցությունների համար քանակական սահմանափակումները վերացնելը, սակայն ոչ նման հնարավորության արգելափակումը մանդատների նախնական բաշխման շրջանակներում առաջին տեղը չզբաղեցրած կուսակցությունների համար,

- քաղաքական կռալիցիա ձևավորելու ժամկետը երկարացնելը, սակայն ոչ տարբերակված մոտեցումը կռալիցիա ձևավորելու ժամկետի հարցում, եթե կռալիցիան ձևավորվում է առաջին տեղը զբաղեցրած կուսակցության և բոլոր այլ կուսակցությունների կողմից և այլն:

Վերոգրյալը թույլ է տալիս եզրակացնելու, որ ժամանակակից ընտրական օրենսդրությունում ամրագրված են համա-

մասնական ներկայացուցչության «իրավաչափ շեղումներ», և օրենսդրի խնդիրն է այդ առումով նախատեսել ձայները մանդատների վերաձեւու այնպիսի կառուցակարգեր, որոնց պարագայում այդ շեղումները կհասցվեն նվազագույնի և կբացառեն «անթույլատրելի» շեղումները: Հայկական ընտրական օրենսդրության վերջին տարիների փոփոխությունների լուսիներքո վերը նշված վերլուծությունից բխում է, որ նման հավասարակշռված կարգավորմանը հանգելը ծայրահեղ բարդ է, հատկապես, եթե ամբողջ վերոգրյալին գումարենք նաև այսպես կոչված «պոզիտիվ խտրականությունը» (գենդերային քվոտավորումը, ազգային փոքրամասնությունների համար նախատեսված քվոտաները և այլն):

Այս տեսակետից ձայները մանդատների վերաձեւու կառուցակարգերի իրավակարգավորումները տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների շրջանակներում շատ ավելի հավասարակշռված են, նախնառաջ, կայուն մեծամասնության սահմանադրական կամ իրավական պահանջի բացակայությամբ պայմանավորված՝ դրանից բխող բոլոր հետևանքներով (մեծամասնության «պարզևատրում», կոալիցիայի ձևավորում, քվեարկության երկրորդ փուլ): Եվ չնայած համայնքի ավագանու ընտրությունների արդյունքներով ներկայացուցչության խեղաթյուրման առկա գործոններին, օրինակ, սեռային և տարածքային ներկայացվածության «պոզիտիվ խտրականության» շրջանակներում, այնուամենայնիվ, նոր գործող իրավակարգավորումների շրջանակներում համայնքի ավագանիում իշխանության ներկայացուցչության որակն ավելի բարձր է, քան ՀՀ խորհրդարանում:

Չափսը 60×84^{1/16}: Թուղթը օֆսեթ:

19 տպագրական մամուլ:

Տպաքանակը՝ 200:

ISBN 978-9939-887-19-7



9 789939 887197